ՅՈՒ. Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ

# ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՅՈՒՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

# ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԲՆԱԳՐԵՐ
ԲԱՌԱՑԱՆԿ

ԵՐԵՎԱՆ • 2011

Հրատարակվում է ՀՀ սփյուռքի նախարարության աջակցությամբ

Հրատարակության են երաշխավորել
Երևանի պետական համալսարանի սփյուռքագիտության և
ժամանակակից հայոց լեզվի ամբիոնները

ՀՏԴ 809.198.1(07)
ԳՄԴ 81.2Հ g7
Ա791

Խմբագիր՝ **Ս. ԳԱԼՍՏՅԱՆ**
բանասիր. գիտ. դոկտ., պրոֆ.

Գրախոսներ՝ **Կ. ԱՌԱՔԵԼՅԱՆ** (Բեյրութ)
**Հ. ԶԱՔԱՐՅԱՆ** (Երևան)
**Մ. ՖԵԼԵՔՅԱՆ** (Երևան)

**Ավետիսյան Յուրի Սրապիոնի**

Ա791 **ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿ: ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԲՆԱԳՐԵՐ, ԲԱՌԱՑԱՆԿ** /Յու. Ավետիսյան.– Եր.: Զանգակ–97, 2011.– 216 էջ:

Ձեռնարկը բաղկացած է երեք բաժնից: Առաջինը ներառում է վարժություններ և գործնական առաջադրանքներ արևմտահայերենի քերականության, մասնավորապես ձևաբանության վերաբերյալ: Երկրորդում տրվում են բնագրեր արևմտահայ և սփյուռքահայ գրականությունից: Երրորդ բաժինը բառացանկն է, որում ընդգրկված բառաշարքը և համապատասխան բացատրություններն ու նշումները օգնում են առաջադրանքների լուծմանը:

Ձեռնարկը նպատակ ունի նպաստելու արևմտահայերենի գործնական յուրացմանը: Նախատեսված է բանասիրության ֆակուլտետի, սփյուռքագիտության մագիստրատուրայի ուսանողների և բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրվում են արևմտահայերենով:

ՀՏԴ 809.198.1(07)
ԳՄԴ 81.2Հ g7

ISBN 978–99941–1–866–3

© Ավետիսյան Յու. Ս., 2011 թ.
© «Զանգակ–97», 2011 թ.

# ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Արևմտահայերենի նկատմամբ վերջին տարիներին ակնհայտորեն մեծացել է հետաքրքրությունը: Հայաստանում և Սփյուռքում գրվել են տեսական աշխատանքներ, հրատարակվել են բառարաններ, ստեղծվել են նոր դասագրքեր: Արևմտահայերենը այսօր դասավանդվում է ՀՀ բուհերի առանձին ֆակուլտետներում: Հանրակրթական դպրոցի հայոց լեզվի ծրագիրը ավագ դպրոցում նախատեսում է որոշակի ծանոթություն արևմտահայերենին:

Ցանկացած լեզվի կամ դրա տարբերակի բավարար չափով յուրացումը անհնար է առանց գործնական հետևողական աշխատանքի: Տեսական գիտելիքները պետք է յուրացվեն ու ամրապնդվեն վարժությունների միջոցով:

Արևմտահայերենի գործնական աշխատանքների և վարժությունների առանձին ձեռնարկ ստեղծելու փորձ մեզանում եղել է[1]: Վարժությունների կամ առաջադրանքների մաս զետեղվել է արևմտահայերենի դասագրքերում[2]: Այնուամենայնիվ, գործնական աշխատանքների նոր ժողովածուներ կազմելու անհրաժեշտությունը մշտապես կա:

Այս ձեռնարկը մի նոր փորձ է գործնական աշխատանքների միջոցով ամփոփ կերպով յուրացնել տալու արևմտահայերենի քերականությունը: Այն կազմված է արևմտահայերենի քերականության տեսական դասընթացի սկզբունքներին համապատասխան: Վարժությունների համար նյութ ընտրելիս օգտվել ենք հիմնականում արտերկրում հրատարակված գրականությունից[3]:

---

1 **Ռ. Սաքապետոյան**, **Յու. Ավետիսյան**, Արևմտահայերենի գործնական աշխատանքների և վարժությունների ձեռնարկ, Երևան, 1997:

2 **Զ. Մելքոնեան**, Գործնական քերականութիւն արդի հայերէն լեզուի, Պէյրութ, 1981, **Ս. Աբրահամեան**, **Բ. Վերդեան**, **Վ. Քոսեան**, Հայերէն լեզուի դասագիրք, Երեւան, 1966, **Ռ. Սաքապետոյան**, Արևմտահայերենի դասագիրք, Երևան, 2006 ևն:

3 Տե՛ս **Յովհ. Գազանճեան**, Նոր քերականութիւն արդի հայերէն լեզուի, Կ. Պոլիս, 1910, «Արդի հայ գրականութիւն», կազմ. **Մուշեղ Իշխան**, հ. Ա, Բ, Գ, Պէյրութ, 1975–1980, «Հայ գրականութիւն», կազմ. **Յ. Օշական**, Երուսաղէմ, 1966, **Յ. Քիւրքճեան**, Հայ կեանք եւ գրականութիւն, Ա, Բ, Գ, Աթէնք, 2004–2007, **Յ. Քիւրքճեան**, Նոր քերականութիւն հայերէն լեզուի, Աթէնք, 1989, **Կ. Առաքելեան**, Արդի հայերէնի քերականութիւն, Գիրք 1, 2, 3, Պէյրութ, 1998, **Պ. Հաճեան**, Պարզ քերականութիւն, Ա, Բ, Գ, Պուէնոս Այրէս, 1988, **Յ. Չոլաքեան**, Հայերէնի աւանդական ուղղագրութիւն, Հալէպ, 2000, **Զ. Մելքոնեան**, Գործնական քերականութիւն արդի հայերէն լեզուի, Պէյրութ, 1987 ևն:

Ձեռնարկում զետեղված բառացանկը և արևմտահայ ու սփյուռքահայ գրականությունից ընտրված բնագրերը օժանդակ նյութ են լեզվական գիտելիքները ամրապնդելու համար: Բնագրերի կետադրական, մասամբ ուղղագրական անմիօրինակությունը մեղմելու համար կատարել ենք սրբագրական կարգի որոշ փոփոխություններ:

Յնարավոր վրիպումների և բացթողումների վերաբերյալ սիրով կընդունենք ձեր առաջարկներն ու դիտողությունները:



# ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

## ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

**1. Ընդգծել քերականական այն ձևերը, որոնք կազմված են՝**

ա) **օժանդակ կամ սպասարկու բառերով**.

Մի՛ փախչիր, կնքահօր, արիւնով, ըսեմ, մի՛ տար, կ'ըլլայ, կը բռնէր, Պոլսոյ, ամէնէն լաւ, ըսեր եմ, երթալու է, ինկած են, ալ աւելի կանուխ, իմ խօսքս, շարժումի, օրուան, անոր, ընկերը, աւելի համոզիչ:

բ) **ներքին փոփոխությամբ կամ հերթագայությամբ**.

Ոսկիի, գարնան, հօրեղբօր, մարդիկ, պիտի երթամ, լաւագոյն, ուրախութեան, Ռշտունեաց, Ռուսիո, հայեր, տղոց, երթամ, գացի, գիրք մը, մեզմէ, ասոր, իմ, կու գայ, մի՛ դպչիր // մի՛ դպիր, որո՞ւ (որուն):

գ) **մասնիկավորմամբ կամ մասնիկների կցումով**.

Ը'ըսեր, նուռեր, խօսքերնիս, մօրմէ, որդիի, զոր, գացէ՛ք, հարց մը, ալ աւելի խոշոր, տուներնիդ, իմիններս, աւելի մեծ, ըսածներէդ, սուգի, ծնողաց, տուեցի, կու լայ, մարդերու, որուն, զինք, երբուընէ // երբէն, զանոնք:

դ) **տարարմատությամբ**.

Վարդանանց, կը թողում, մօր, ծովու, այգիի, մէկզմէկէ, ինչերու, ինկած, պիտի չերթանք, եղած, խել մը, աւելի գէշ, չխորհինք, սորվեցաւ, գնաց, քու, ձեզի, կերաւ, հարցո՛ւր, չ'ըլլար:

ե) **բացասական կամ զրո ձևով**.

Դուն, աղուոր, խօսք մը, տուաւ, կանուխ, զարկի, դպչէի, թողուցէ՛ք, սուրեր, չուտէր, երէկ, տիրոջմէ, ասիկա, ուռիլ, չեմ, ա՛ռ, կամ, գնա՛, եղի՛ր, տո՛ւր:

2. Ընդգծված բառերը (կամ բառիմաստները) գործածվում են միայն արևմտահայերենում կամ առավելաբար բնորոշ են արևմտահայերենին. դուրս գրել դրանք, ճշտել իմաստները (Բառացանկ՝ էջ 174) և նշել դրանց խոսքիմասային պատկանելությունը.

ա) «Մեղրամոմէ **անդրիանդի** մ'է հանգոյն, ի՜նչ դալկահար... կարծես **հաջաղը** վառէ **Պատան** մ'է նուրբ ներա վարդիցը տժգոյն» (Պ. Դուրյան), «Ինչ տրամաբանական յենակներ կան ոտանաւորի մը բոլոր տողերն ալ **գլխագիրով** սկսելուն մէջ» (Մ. Մեծարենց), «Ըսաւ թէ հայ ազգին չյառաջադիմելու պատճառներէն մէկն ալ ազգին **աղէկութեան** համար խօսողները մեր **մտիկ չընելն** էր... և առաջարկեց նպարավաճառին, որ իր խօսքը **մտիկ ընէ** եւ պանիրը իր ուզած գինովը տայ ի սէր ազգային յառաջադիմութեան» (Յ. Պարոնյան), «Անոր **աներ–մայրը** ձեռագիրները ձեռքին կը վազէր խմբագրատուները, խնդրելով, որ ընդունին իր յանճարեղ փեսային գործերը» (Զ. Որբունի), «Եւ առանց րոպէ մը **ատեն տալու**, սկսաւ բառերը իրարու ետեւ արձակել արագօրէն, խիստ արագօրէն, **գոց** ձայնով մը», «...**Աճապարեցի** հաստատել, թէ զարհուրելի դրուագ տեղ գտած էր **հոն**» (Շ. Շահնուր), «Վայրագ կը սուլէ ցուրտ ձիւնը ձմրան. Աստուա՜ծ, այս ի՜նչ **հով**, հիմեր կ'երերան» (Ռ. Սևակ):

բ) «Շատ անգամ գործնական համարուած մարդիկ սխալներ կ'ընեն այս մասին, որ **սուղի կը նստի** իրենց» (Ե. Օտյան), «**Գործատուներու** եւ ելեկտրականութիւններու մէջ կ'աշխատի, **հանրակառք** կամ **մէթրօ կ'առնէ** գործին երթալու եւ դառնալու համար» (Ն. Սարաֆյան), «**Պաղ սառակոյտ** մը կը սահէր **կռնակս** ի վար», «Պիէր մօտեցաւ երկու քայլ, կանգ առաւ, թեւերը բացուեցան կարծես գիրկընդխառնումի մը համար, մարմինը տատանեցաւ **կթոտ** ծունկերուն վրայ» (Շ. Շահնուր), «Օրիորդը կը **խնդար** ու պզտիկ ապտակ մը կուտար անոր բաց մնացած **ակռաներուն**», «Որոնց համար բանաստեղծութիւնը... հասարակ **տեղիքով խամաճիկօրէն** սպառազէն բողոք մը չէ կեանքին կամ երկինքին դէմ» (Յ. Օշական), «Այս սիւներէն ո՞ր մէկը ծռած էր վերջերս. եւ այս կամաւորներէն ո՞ր մէկը **շտկած** էր զայն», «Անշնորհք հովիւը մի՛ դներ գործի վրայ. հօտը **շիտակ** գայլին դուռը կը տանի» (Յ. Քյուրքճյան), «Ու վաճառականները կը սիրէին այս **պապա** մարդը, որ ուրիշներու պէս աներես չէր...» (Գ. Զոհրապ):



գ) «Առանց **բանաւոր** պատճառի խաղաղեցաւ ու իր ժպիտը աչքերուն խորը աւելի անուշ էր՝ քան արեգակի առաջին շողերը անձրեւէն վերջ» (Վ. Շուշանյան), «Բանաստեղծը քանի բարձրացնէ իր ձայնը, մենք այնքան **գէշ** կը լսենք զինքը, բանաստեղծը՝ որ ամէն ինչ է, բայց ո՛չ՝ երեխայ» (Շ. Շահնուր), «Կռուելո՛ւ կ'երթամ որպէսզի ամէն մարդ խաղաղութեամբ ուտէ իր **աշխատութեան** պտուղը» (Յ. Գազանճյան), «Ասոնք բոլորը **պարապ** բաներ չէին» (Յ. Օշական), «**Անջրպետային** ճամբորդութեան պատրաստուող հրթիռը կանգնած էր արձակումի աշտարակին **քով**», «...Արեւը անխնայ այրած էր իրենց մարմնին **մորթը**», «Մայրս պարզ ու **տգէտ** կին մը, գիտէր շատ սիրել իր զաւակները», «Երբ թիկնաթոռէդ կը բաժնուիս եւ աչքերդ շփելով դուրս կ'ելլես, ո՛ր երկրի պողոտան ալ ըլլայ ոտքերուդ տակ՝ **կ'անդրադառնաս**, որ հեռաւոր, շատ հեռաւոր աշխարհէ մըն է որ վերադարձար» (տե՛ս Յ. Քյուրքճյան), «Այս տետրակին **կողքը** սեւ է», «Դասընկերներս **պտոյտի** գացած են» (Կ. Առաքելյան), «Կը սիրեն Յայ **ընկերային** հարցերով զբաղիլ, այդ ալ նուիրումով» («Մարմարա»):

դ) «Տեւաբար **ինքնաշարժներ** կ'անցնէին. օդը կը թրթռար **ճչակներէն**, մինչ անոնք ճամբայ կը փնտռէին **խճողումին** մէջ...» (Յ. Քյուրքճյան), «**Բարեւտուքին** սովորական բանաձեւերէն **ետք**, Աբգար էֆենտի յանկարծ հարցուց» (Երուխան), «Իրաքի մէջ լարուած կացութիւնը յատկանշական բարելաւում չարձանագրեց **շաբաթավերջին**», «Այդ երկիրը **կորիզային** ուժը կը զարգացնէ եւ ունի կորիզային պատրաստ զինամթերք» («Ասպարեզ»), «Յամօն լուսանկար մը բերած էր **մրցանքին**», «Կ'անձրեւէր. անհրաժեշտ էր, որ վրաններուն շուրջ **խրամներ** փորէինք», «Տնօրէնութիւնը ղրկեց **հրաւիրագիրը**» (Զ. Մելքոնյան), «Մշակուած է միջին հզօրութեան **հիւլէակայանի** կառուցման տարբերակը», «Յայերէն լեզուի մը **դասապահին**, ...երբ փափաքեցանք իմանալ **անուն մականունները** աշակերտներուն, հաստատեցինք թէ մեծամասնութիւնը անոնց կը կրէին օտար անուններ, **ա՛լ** չենք խօսիր **մականուններու** շուրջ» («Մարմարա»):

ե) «Առանց **հեռածայնելու** մի՛ գար մեզի», «Ջանոնք մեր **բարեկամին կառատունը** տարին նորոգութեան» (Յ. Քյուրքճյան), «Ապա սկսաւ կրաֆիթի օգտագործումը մատիտներու **շինութեան** մէջ», «**Փակուղին** անցնելով՝ տուն հասանք» (Կ. Առաքելյան), «Խանութպանները **կարգով** թէյ կը խմցնեն անոր՝ բերելիք յաճախորդներու հաշիւէն», «Եւ որովհետեւ դիւցազներգութիւնը հողին հետ եւ հողին մէջ առաջին պայքարն է, ժողովուրդի մը զայն պաշտպանող բազուկներուն **ապաստանարանը**, կը հետեւի, թէ դիւցազնաշունչ ամէն յօրինում պէտք է պաշտպանուի անով» (Յ. Օշական), «Պանդոկէն **կը հեռախօսէ** Արմինէն, ըսելով թէ մեզ սպասողներ կան» (Թ. Թորանյան), «Թղթակից շատ աւելի հեզնական էր, երբ այդ նիւթին մասին խօսեցաւ **պատկերասփիւռի** 10րդ կայանէն» («Զարթօնք»), «Թէ ի՛նչ կը նշանակէ խանութներուն առջեւ **պոչ բռնել, կարգի մտնել**, մենք զանոնք **հոս**՝ Իսթանպուլի մէջ սորվեցանք», «Մխիթարեան վարժարանի շէնքին գրեթէ կից բժիշկ ու գրող Վարդ Շիկահերին **դարմանատունն** է» («Մարմարա»), «Արուսիկն ու իր մօրը **զարմիկը** Յալէպէն Պէյրութ վերադարձեր են երեկոյեան՝ ճեպընթաց **շոգեկառքով**» (Զ. Մելքոնյան):

զ) «Ես բնաւ անոր **անուշ** եփելը չեմ տեսած» (Ե. Օտյան), «Լոնտոնի մէջ բաւական **մեծկակ** հայ գաղութ մը կար», «Գլխարկաւոր **օրիորդներուն քովիկէն** աւանդական սեւ շալին մէջ լաչակուած պառաւներ, գլխահակ կը մտնեն մեծ դռնէն, բարի աչք մը պտտցնելով երկաթէ դուռները եզերող մուրացիկներուն», «Ուրեմն այդ ածականին ներկայութիւնը **կը ձգէ** զիս ոչ միայն անտարբեր, այլ կ'ընէ **քիչիկ** մըն ալ անտրամադիր», «Իր նշանակութիւնը խուճապահար ըրաւ պահուողները, որոնք կաքաւի ձագերուն նման **տարտղնուեցան**՝ զէնքերնին իսկ փախցնելու **ատեն** չգտած», «Բանաստեղծը **ատօնք** երկնելէ վերջ, բաւական արի էր եղած նոյն մատներով ալ, **մինակուկ**, անոնց գիրը շարելու մետաղեայ տախտակին վրայ», «1890էն յետոյ ազգային երգերը առին ուրիշ **գնացք**՝ յեղափոխական, ռազմաշունչ» (Յ. Օշական), «Բազմութիւններն **անսըւաղ**, Աչքերն իրենց **անօթի** կ'ըմպեն լոյսը ոսկեզօծ» (Բ. Թոփալյան), «**Կորդերու սառնային անջրպետին** մէջ երկարաձգուող ողբաձայն երազանքը...» (Ինտրա), «Այցելուս այն **յիմարաբոյժն** էր, որ եկած էր զիս **խենթանոց** առաջնորդելու» (Շ. Շահնուր):



ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

**3. Տրված բառաշարքից դուրս գրել առարկա կամ առարկայացված հասկացություն անվանող բառերը, բացատրել իմաստները.**

ա) Անգայթ, անդոհ, աներևույթ, անկուտի, անձնեայ, անճառ, ատակ, բանդուլ, բունձ, գուճ, ծովամոյն, տակաւ, տեսլական, տխրունի, տմոյն:

բ) Անթրոց, թասուն, ինքնեկ, թեքնիք, ժամաւոր, խաչբուռ, լայնշի, լազուարթ, խոկ, կարգաւ, կիրակմուտք, կմախք, ստուգանմոյշ, վարիչ, վարնոց:

գ) Ընկերվար, կրողչէք, կօշկածիգ, հանգանակ, հեռատեսիլ, կառատուն, հուսկ, ծայնասփիւռ, մանրկեկ, մրցատեան, անկարգել, բոլորակ, սուղ, ստակ:

դ) Յափրանք, յայրատ, նարտ, նամէտ, շառայլ, շահարիկ, ուծանալ, պակուցիչ, պաղարան, պապա, պահուըտուք, պողովատ, պիստակ, սառնանոյշ, անյեղլի:

ե) Բանավոր, բաբէ, բժշկարան, գրագէտ, գօս, դաբիր, եղեւին, երկվայրկեան, երկայն, թնճուկ, կաճառ, կրկներեւոյթ, հայկակ, հոսհոս, յեղակարծ:

զ) Սեպել, վերաքաղ, տուրեւառ, ստորակայ, ոգեվար, ուսուցչարան, նշանտուք, տուրմ, շարժակ, շիտակ, մելան, հոս, հաջաղ, համայնավար, կնքամայր:

է) Ալեհաւաք, օդակայան, բեկաբոյժ, արտօսր, երթեւեկ, մեծկակ, հնչեակ, մարդամեքենայ, ոճրագէտ, ուր, վերամուտ, կաղանդչէք, սակարան, համարկում, նաւախել:

ը) Վերացապաշտութիւն, տագր, կռնակ, տպաւորապաշտ, բարկօղի, ցաւորդ, փողպատ, մրցանիշ, նայ, շատոնց, դրամատուն, ճատրակ, թռքատապ, ուժանակ, դասիչ:

**4. Կարդալ Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպից բերված հատվածները (Բնագրեր՝ էջ 161), դուրս գրել հոգնակի թվի՝ արևելահայերենից տարբեր և միայն արևմտահայերենում գործածվող կազմությունները:**

**5. Կազմել տրված գոյականների հոգնակիները.**

ա) Անյիշութիւն, անուշ, մարդ, տիկին, հարս, արժենիշ, խումբ, շուն, դուռ, լեռ, ծառ, ուստր, խարբերդցի, ուղեծիր, հեռագիր:

բ) Ռուս, ծնող, գրագիր, արժեթուղթ, դրամատէր, վճռագիր, սպի, աստղ, դաշտամուկ, նուռ, գառ, այծամարդ, կին, ժամացոյց, ծունկ:

գ) Յայտագիր, դրամատուն, բնագիր, նստացոյց, վիպագիր, սիրերգ, դրամանենգ, դուստր, անգղ, տղամարդ, միսիոնար, յածում, յանձնախումբ, նարօտ, յիմարաբոյժ:

դ) Յանկերգ, հանրաքարշ, հեծելանիւ, հեռացոյց, հիւլէաբան, հրապարակագիր, բառգիրք, դեղագիր, բռնագաղթ, անջրպետ, անցագիր, բանախօս, բնալոյծ, գամ, գործատուն:

ե) Գլխագիր, գետնախնձոր, գրադատ, գուպար, գուարճատուն, էրիկմարդ, ընթացաւարտ, լամբար, խաչբուռ, ծխնի, կառախումբ, կնքապապ, հայկակ, ձեռնադաշնակ, մախր:

զ) Յողաթումբ, ժողովուրդ, ձեռք, թիապարտ, երգչախումբ, ֆետայի, ոտմուկ, ստորակէտ, հողագործ, աշխատավարձ, վարսակալ, աղօթք, ոտնաձայն, դասապահ, վերաքաղ:

է) Յենապատ, յետակողմ, յետաշրջում, նաւակայք, շնորհանդէս, դասընթացք, շրջափակ, ուրուագիծ, չակերտ, գործատուն, ծառաբուն, պատան, սգատուն, ծրագիր:



**6. Կարդալ՝ փակագծում տրված բառերը գործածելով ստացական հոգնակիի ձևերով.**

«Եւ ահա կմախակերպ սիւներուն առջեւ կանգ առին, մահը (ոտք) տակ եւ (հայեացք) աստղերուն, եւ որոտումին պէս խօսեցան, իրենց բռունցքին մէջ կայծակներ ծրարած եւ (բառ) հետ ապառաժներ շարժելէն... Դո՛ւն, որուն բերանէն դեռ մեր ցեղին արիւնն է, որ (աչք) առջեւ վար կը կաթկթի...» (Սիամանթո), «Անոնք (գլուխ) ճոճելով իրենց ամօթխածութեան մէջ այդպէս զարնուած սա ամբարիշտ տունէն, դուրս ելան», «Երկու կիները մտրակուած իրենց խղճմտանքէն..., (թուք) կուլ տալով ու (քիթ) մռմռալէն, համակերպեցան անխուսափելիին» (Յ. Օշական), «Ուսուցիչներ կը բարեւէին գիրար ինչպէս երեկ..., բայց (աչք) մէջ կասկածի խուսափուկ ակնարկ մը... Եվ կը խօսակցէին վերապահ, երկդիմի, գիրենք համակած խռովքէն (դէմք) մռայլ» (Ա. Անդրեասյան), «...Կը խառնեն ժիր (թեւ) եւ (սրունք) պաղպաջուն, եւ (պորտ) կօշարայ՝ Ուրկէ մուշկի հատիկներ, տարրալուծուած կը բուրեն» (Դ. Վարուժան), «Մութ է (չորսիդի). հսկայ ծառերուն շուքը վերահաս գիշերին սեւութեամբը կը բարձրանայ» (Գ. Զոհրապ), «Մաքրութեան առաւօտ մը պիտի բացուի (վրան)»: (Վ. Շուշանյան)

**7. Կազմել տրված բառերի և բառաձևերի ստացական հոգնակիները.**

ա) Ձեռք, աչք, միտք, հաւատք, ընկեր, երթալ, զէնք, սորվիլ, երես, գրասեղան, աշակերտ, գինուոր:

բ) Երախայ, ամըչնալ, բանակ, խօսիլ, խնդալ, սուր, խոստում, կմախք, գործաւոր, ճանչնալ, հրահանգ, մուճակ:

գ) Տարեթոշակ, դեղագիր, ոտք, միտք, տուն, լեռն, օճախ, ծրար, կռնակ, քով, խաղալ, դաշխուրան:

**8. Ընդգծել հոդի գործածության (կամ չգործածության) միայն արևմտահայերենին հատուկ դեպքերը, բացատրել.**

ա) ...Եփուն կնիկ մըն էր արդէն, երբ որ առած *պախչիշ*ներէն եւ ամսականէն աւելցուած ստակովը Երուսաղէմ գնաց, ով գիտէ ուխտի՞, թէ

մեղքերուն թողութիւն ուզելու համար: Վերադարձին՝ Յաճի Տիրիկ, սպասաւորութիւնը թողուց, ինք իր գլխուն գործի սկսաւ, ծանօթ տուներու համար կին ծառաներ գտնելու ձեռք զարկաւ, *բէլլալ* կին եղաւ: Իսկոյն յաջողեցաւ աս գործին մէջ. պատրաստաբան եւ զուարճախօս կին էր. էֆէնտիներուն՝ վրան բաց կատակներ կ'ընէր. հանըմներուն՝ օրուան գայթակղութիւնները կը բերէր: Ամէնքը գոհ էին իրմէ: Իր տեղաւորած ծառաները տարիներով կը կենային գտնուած տեղերնին: Մեծ տուները, հարուստ տուները, իրեն կը դիմէին. անոնք որ իր յաճախորդներն էին՝ իր անունովը կը պարծենային: (Գրիգոր Զոհրապ)

բ) Յետոյ բերին մեր հանդարտ գիւղէն հեռաւոր, եօթը կոյսեր վեցտասնամեայ...

Ու հորիզոններուն ու հողերուն բոլոր գօտիներէն, Այսպէս, վայրագօրէն ու քինայոյզօրէն ու յաղթականօրէն, եկա՜ն, եկա՜ն, եկա՜ն Անոնք իրենց դռոյթովը դժոխային:

Այսպէս՝ փառաբանութիւնը կը տաճարուի... հիւսիսէն հարաւ եւ արեւելքէն արեւմուտք, Ամէն ցեղի, ամէն կարգի, ամէն դասի, ամէն դաշտի եւ ամէն հունձքի առատութեանը համար:

Ես գինին երգեցի իր ոսկեվառ բաժակին մէջ հրակայլակ, Եւ պլպուլին հայրենացաւը տաւիղիս թելերէն սրտիս մէջը կաթկթեց... (Սիամանթո)

գ) 20–րդ դարու սեմին յայտնուած ուրիշ մեծագոյն բանաստեղծ մը, Սիամանթոյէն ետք՝ Դանիէլ Վարուժանն է: Վարուժան ծնած է Բրգնիք գիւղը, Սեբաստիոյ մօտ 1884–ին: Համիտեան ջարդերուն կը հասնի Պոլիս մօրը հետ, փնտռելու հայրը, զոր կը գտնէ բանտին մէջ «ստօրէն ամբաստանուած»: Այդ տխուր դէպքին արձագանգը կ'ըլլայ «Հօրս բանտին մէջ» բանաստեղծութիւնը «Ցեղին սիրտը» հատորին մէջ:

դ) Լեւոն Շանթ 1899–ին կը ձգէ Եւրոպան եւ կ'անցնի Կովկաս, ուր կ'ապրի տասը տարի: Կը դասաւանդէ Թիֆլիսի աղջկանց վարժարանին եւ Երեւանի թեմական դպրոցին մէջ: Կովկաս ապրած շրջանին ոչ միայն ուսուցչութեամբ զբաղած է, այլ նաեւ արեւելահայ անուանի գրողներուն հետ սերտ գործակցութիւն հաստատած՝ Յ. Թումանեանին ստեղծած «Վերնատուն» գրական խմբակին մէջ:



Ան կը լսէ նաեւ ցեղին արձագանգը... Կը տառապի իր հայութեամբը: Կը տառապի նաեւ Սփիւռքի ճակատագրովը:

**9. Կարդալ Երվանդ Օտյանի «Ընկեր Փանջունի» վիպակից բերված հատվածը (Բնագրեր՝ էջ 89), դուրս գրել սեռական–տրականի՝ միայն կամ գերազանցապես արևմտահայերենին հատուկ ձևերը:**

**10. Կարդալ՝ փակագծում տրված բառերը դնելով սեռական–տրական հոլովաձևով.**

«Անցնելով (շահ) բաժնին՝ ես պիտի վերագրեմ այդ (հանգանակ) բոլոր գլուխ–գործոցները մեր նոր (քերթողութիւն)» (Յ. Օշական), «...Վերածնունդի մարդը ճեղքեց (միջնադար) խաւարամած ու միսթիքական ամպերը՝ վերադառնալու համար մարդ (էակ) արարչագործ ու կենսաբախ երակին ու տիեզերքի մարդակեդրոն (ըմբռնում)...», «Վարուժանի (յորդում) մէջ կար չափ եւ իր տաղանդին (կատաղութիւն) մէջ՝ կշիռ. ան բուռն էր իր (բախումներ) մէջ եւ աղաչականօրէն նկուն՝ իր սիրոյն ու աղապատանքին մէջ... Այնքան երիտասարդ էր ան մեր (միտք) մէջ՝ իր ստեղծագործ (կիրք) առոյգ յորդումով», «Սարոյեանի «Հայ մուկը» պատմուածքը այլաբանական զուարթ հեքիաթ մըն է՝ *փխուր* (նիւթ) մը մասին — հայ (ժողովուրդ) գոյատեւման պայքարին մասին» (Ե. Ազատյան), «Հայ գրող մըն եմ եւ խորապէս կը սիրեմ հայ (գրողներ) մեծ (ընտանիք) պատկանելու պատիւը» (Վ. Սարոյան), «Գիրքը կրնայ (ուրախութիւն) ու ցաւի բոլոր յոյզերով համակել որեւէ (լեզու) ընթերցող, ամէն ցամաքի վրայ ու (երկինք) տակ: Եւ կրնայ (մարդ) խիղճերը ցնցել (ուրիշներ) տառապանքին վիշտով, եւ նոյն ատեն լուսաւորել անոնց միտքերը, համամարդկային (իտէալներ) ցոլքերով»: (Ա. Անդրեասյան)

**11. Կազմել տրված բառերի և բառաձևերի արևմտահայերեն սեռական–տրական հոլովաձևերը, բացատրել տարբերությունները արևելահայերենից.**

ա) Խաղաղութիւն, Աստուած, հայ, հայր, տիկին, նաւ, երդում, Կարօ, կով, արջ, շոգենաւ, տէր, ձուլում, ամառ, ընել:

բ) Նախագահ, միջնորդ, արեւելահայ, աղջիկ, միջնադար, աներ, անհետիլ, Ափրիկէ, Կարին, հանգիստ, տղայ, մարդ, մայրուղի, հայորդի, այգի:

գ) Բամբիռ, օր, տուն, ձուկ, մահ, հոգի, ուսում, մարդեր, աստուածուհի, շահ, կատու, տնօրէնուհի, լեզու, սեր, ամիս:

դ) Սպասում, սէր, հոգի, պապ, հօրեղբայր, դար, յարութիւն, սիրտեր, անուն, սիւն, տարիներ, Ֆրանսա, Ռումանիա, Արաբիա, Հայք:

ե) Զարգացում, Մոսկուա, Բզնունիք, առտու, ընկեր, սուգ, տղաք, վայրկեան, զգացում, հրաբուխ, Դանիա, գործեր, դարմանատուն, գագաթ, արեւ:

զ) Ամուսին, յոգնիլ, օթօ, գահ, թռչիլ, եկեղեցի, ձեւեր, խօսուածք, ծով, ուսուցչուհի, գիրեր, սուրբ, դուռ, Մարօ, ձմեռ:

է) Իրիկուն, ծնունդ, կայսր, Կիլիկիա, տագր, շրջան, խումբ, ժամանակ, մշակութիւն, հասկնալ, նաւաթի, օտարում, դպրատուն, նախնիներ, ոգի:

**12. Ընդգծել այն հոլովձևերը և կապային կառույցները, որոնք արտահայտում են ներգոյական հոլովի իմաստ.**

ա) Եղիա Տէմիրճիպաշեան ծնած է Հասգիւղ 1851, Մայիս 8ին: Իր ուսումներն ըրաւ նախ Հասգիւղի Ներսէսեան վարժարանը, ապա Նուպար–Շահնազարեանի մէջ: Ուսումնառութեան ընթացքին ան կորսնցուց կարելիութիւնը իբրեւ դաստիարակ–ուսուցիչ ունենալու Թովմաս Թերզեանը: Անէն պարագայի Եղիա կրցաւ բաւարար չափով ուսումնառութիւն ունենալ Մարսիլիա, ուր երկու տարի նուիրուեցաւ գրական աշխատանքներու:

բ) 1901ին Մեծարենց կը դառնայ Սվազ. այս շրջանին Սարգիս եղբօրը եւ հօրեղբօրորդի Վարդանին հետ կը զբաղէր առեւտուրով: 1907ի գարնան վերջերը լոյս կը տեսնէ «Ծիածան» հատորը, որուն ձեռագիրը նախընթաց տարին արդէն պատրաստ էր: Նոյն տարին լոյս կը տեսնէ



բանաստեղծութիւններուն երկրորդ հատորը՝ «Նոր տաղեր»ը: Զոյգ հատորներէ ետք ուրիշ բանաստեղծութիւններ եւս լոյս տեսան իրմէ՝ թերթերու մէջ, «Տո՛ւր ինծի, տե՛ր», «Համրը», «Տեսիլ» եւ այլն:

**13. Դուրս գրել միայն արևմտահայերենին բնորոշ սեռական–տրական, բացառական, գործիական հոլովձևերը, բացատրել դրանց շարահյուսական կիրառությունները.**

ա) Սփիւռքը կամ սփիւռքահայութիւնը եւս, վերջին քսան տարիներու ընթացքին գէթ, երբ Լիբանանեան քաղաքացիական պատերազմի բռնկումին որպէս հետեւանք Լիբանանը դադրեցաւ Հայութեան համար նախկին ապահով, կայուն եւ ինքնավստահութիւն ներշնչող կեդրոնը ըլլալէ, ենթարկուած է որոշ ցնցումներու եւ կորսնցուցած է իր կենսունակութիւնը: Ատկէ առաջ հայկական Սփիւռքը իր գոյութիւնը պահպանած էր մասամբ, սկզբնական շրջանին խարխափումի եւ անորոշութեան փուլէ մը անցնելէ ետք: Որեւէ ժողովուրդ, որ բռնութեամբ կը հեռացուի իր հայրենական հողերէն ու կը հարկադրուի կայք հաստատել օտար եւ անհիւրընկալ ափերու վրայ, դատապարտուած է անխուսափելի ոչնչացումի:

բ) Հայաստանի վերջին կառավարութեան հրաժարումէն ետք Ա. Խատիսեան ՀՀ անունով ստորագրած էր Ալեքսանդրապոլի նուաստացուցիչ դաշնագիրը 2 Դեկտեմբեր 1920ին, ուր ոչ միայն Հայաստան կը հրաժարէր Սեւրի դաշնագիրէն, այլեւ կը կորսնցնէր Կարսի նահանգը, Սուրմալուն, Նախիջեւանը, թէեւ Թուրքիա կը խոստանար ջարդերով հայաթափ եղած այդ շրջաններուն վերջնական պատկանելիութեան համար հանրաքուէ կայացնել, եթէ Հայաստան ցանկար այդ կատարել: Անգարայի եւ Երեւանի մէջ դաշնագիրը չվաւերացուեցաւ եւ հուսկ կորսնցուց իր օրինական–իրաւական հանգամանքը, սակայն գետնի վրայ կացութիւնը մնաց անփոփոխ:

գ) Առտուընէ անոր կը սպասենք:

Գործատուներէն ներս, շուկայի վրայ եւ իրենց ընտանեկան օճախներուն շուրջ, մարդիկ ու կիներ կլանուեր էին առօրեայ կարիքներու, վիշտերու եւ վէճերու յորձանքին մէջ:

Անորոշ խօսքեր մրմնջալէն անիկա ամէն օր կ'անցնէր այդ ճանապարհը:

Յաջորդ պողոտայէն անդին կը տարածուէր միջին դասակարգին թաղը՝ լուացուած ու շպարուած գրաւչութեամբ:

Ան բացաւ դասարանի մը դուռը ու նայեցաւ ներս, եւ թախիծի ստուեր մը իջաւ իր դէմքին. երեք ծանօթ պատկերներ կախուած էին պատերէն:

Եւ աւելի հանդարտած կը խորհէր միւս աղջիկներուն ու տղոց մասին, որոնք վճիտ աչքերով, սորվելու տենդէն բռնուած՝ խոնարհ ուսանողներ էին:

**14. Դուրս գրել միայն կամ գերազանցապես արևմտահայերենին բնորոշ հոլովաձևերը, բացատրել տարբերությունները արևելահայերենից.**

ա) Զապէլ Եսայեանի «Աւերակներու մէջ» վիպակը նկարագրութիւնն է Կիլիկիոյ քաղաքներուն եւ գիւղերուն վրայէն անցած ահաւոր հրդեհին ու կոտորածին. ցաւի զգացումը եւ յուզումը աղէտին ու մարդկային բշուառութեան՝ իրապաշտ գոյներով արտայայտուած են: Հոն չեշտուած զգացումի անկեղծութիւնը ու յորդուն թափը սրտի գալարումին՝ կը կազմեն գեղեցկութիւնը այդ գործին: Հոն կը փաստուի նաեւ անոր ճշմարիտ հայրենասիրութիւնը, ուղղակի կամ անուղղակի արտայայտութեամբ իր քաղաքական ու ազգային գաղափարաբանութեան՝ նկատմամբ հայրենիքի ըմբռնումին եւ ժողովուրդներու բարօրութեան: (Յակոբ Ճանաշյան)

բ) Երբ ուսանող կ'ըսեմ, կ'երեւակայէք անմիջապէս քակով թեթեւ, յոյսով հարուստ, զուարթ, լքեալ ու անհոգ էակ մը. ոչինչ աւելի հետաքրքիր է, քան գոյութիւնն այս արարածին, որ ուսման խստութիւնն իր անսպառ զուարթութեամբ կը թեթեւցնէ ու շատ անգամ անողոք ճակատագրի դառնութեան դէմ կը մաքառի:

Ընկերական արդի դիրքին մէջ ուսանողի կեանքը յատուկ գոյութիւն մ'է խորին ուսումնասիրութեան արժանի. այս տարօրինակ կեանքն ընկերային պայքարին մէջ առաջին պատերազմի դաշտն է այսուհետեւ: Ուսանողն՝ ամէն բանի փափաքող ու ամէն բանէ զուրկ՝ հեգնող ու դժգոհ անձնաւորութիւն մը: (Երվանդ Օտյան)

գ) Ձեր աչքերը հողին հովիտներուն գեղեցկութիւններէն կ'արցունքոտին,

Եւ ծարաւի բերաննիդ հայրենական աղբիւրներու յստակ ջուրին կը մօտենան...



Ցորեանի դաշտերն, ծով առ ծով, ձեր աչքերուն տակ, կեանքին հացը կ'ալեծփեն...

Եւ ձեր այգին իր առատ աչուըներուն քաղցրութիւնը ձեզի կ'ընծայէ...

Լռութիւն մը մահասարսուռ: Երկու քայլ եւս եւ արեւնե՜ր, արեւնե՜ր, արեւնե՜ր պիտի ծագին...

Արիւննիդ կ'եռայ: Տեղ մը կարօտ համբոյր մը ուրիշ համբոյրի մը կը սպասէ: (Սիամանթո)

դ) Խճուղիին աջին ու ձախին կ'երկարաձգուին ընդարձակ արտեր հունձքով բեռնաբարձ:

Այդ մինակութիւնը, մարդու, կենդանիի, շունչի այդ պակասը բնաւ չխռովեց հովիվը:

Հայաստանի մէջ փետրուարեան դէպքերու պատճառաւ վարչաձեւի փոփոխութիւն տեղի կ'ունենար, եւ իշխանութեան գլուխ կու գար Ս. Վրացեանի գլխաւորած «Հայրենիքի փրկութեան կոմիտէն»:

Դեկտեմբեր 20ի վերջերը հաւանաբար հեռաձայնային խօսակցութենէն ետք, արձանագրուեցան հայկական բանակի բոլոր սպաները:

**15. Փակագծերում տրված բառերը դնել համապատասխան հոլովաձևերով՝ ըստ անհրաժեշտության ենթարկելով փոփոխությունների.**

ա) Թռչուն մը կ'անցնի (գլուխ) վրայէն:

Վա՜յ այն (հոգիներ), որոնց մէջէն չէ անցած անհանգիստ ոգի մը:

Ալիքները շուրթէ շուրթ երգեցին, ջրանուշները (աստուածուհի) գրկեցին, համբուրեցին, կրկին համբուրեցին:

(Ասիա) մէջ դարերը դանդաղ կը քալեն, եթէ երբեք կը քալեն:

(Արեւմտահայ) բանաստեղծութեան այդ շրջանին արդիւնքները կը տարբերին մերիններէն:

Նոր ժամանակներու (գրականութիւն) մէջ ամէնէն աւելի ծաւալ ստացաւ վէպը:

(Քննադատ) պարտքն է ամբոխը վարել ու ոչ թէ ամբոխին իջնել:

բ) Այդ (հովիտ) մէջ արեգակը (առտու) մինչեւ իրիկուն կը խաղայ, (առտու) Բարձունք (լեռ) վրայ բարձրանալէ յետոյ կը թօթուըի, կը տարածուի բլուրն ի վար:

Կու լամ որովհետեւ կարօտցա՜ծ եմ քեզ, կարօտցա՜ծ եմ (տուն): Գիտե՞ս, հիմա գիւղ ալ չունիմ, տուն ալ չունիմ:

Կենդանիներն ալ, (մարդ) նման, զարմանալի յարմարութիւններ կը փնտռեն:

Յարաւային (պատ) կախած եմ օրացոյց մը. (Աստուած) (գիրք) պէս սիրելի է: Ես շատ կը սիրեմ (կիրակիներ). կիրակին սէ՜ր է, կիրակին տա՜ք է (աղջիկ) մը շողակաթ աչքի՜ն պէս:

Ո՜վ իմ ըղձալի հայերէնս, առաւօտեան պէս թարմ եւ (գիշեր) պէս խորունկ, (մանուկ) պէս զուարթուն եւ (տարեց) մը պէս իմաստուն, (սէր) պէս հաճելի եւ (գարուն) պէս գեղեցիկ: (Շավարշ Նարդունի)

գ) Այն (օր) ի վեր փրփրած է լիճը: Ալիքները կը զարնեն (ափեր), եւ փրփուրը ճերմակ ամպի մը պէս կը տատանի (լիճ) հսկայ (տաշտ) մէջ: (Ալիքներ) կատաղութեան (մէջ), կ'ըսեն մօտակայ գիւղին բնակիչները, դեռ կը լսուի ղօղանջիւնը ջրամոյն (ժամ) ջուխտ (զանգակներ):

(Ապակի) պէս ջուր մը ունի այս ձորը, որ (գիւղ) (եզերք) կ'իջնէ վար, եւ կը ցատկէ Ջաղջին (ձոր) մէջ, ճիշդ (կենդանի) մը նման...

Հեռուէն, (ծառեր) մէջէն, կը տեսնէի (ժամ) փորը, որ գառան պէս ճերմակ էր, եւ կը կանչէի.

— Արմա՜... ա՜...շ...

Ձայնս կը վազէր (անտառներ) վրայէն, (գօտի) պէս կը քակուէր այգիներուն մէջ, եօթն անգամ կը համբուրէր (վանք) պատերը, (շուն) մը պէս, հեւիհեւ, կը դառնար ետ, ականջս կը մտնէր ու կը մտմտար: Եւ ես կը սարսռայի: (Շավարշ Նարդունի)

**16. Ռոպեր Հատտեճյանի «Առաջին բախտաւորութիւնը» գործի վերջին պարբերությունից (Բնագրեր՝ էջ 171) դուրս գրել գոյականները, որոշել դրանց թիվը, հոլովը, հոլովումը և շարահյուսական պաշտոնը:**

**17. Ի՞նչ շարահյուսական պաշտոններով են հանդես եկել ընդգծված բառաձևերը.**

ա) Պետրոս Դուրեանի սիրային տաղերը կը ներկայացնեն զգայուն ***պատանիի*** մը առաջին ***խռովքները***:



Բանաստեղծը կը ցնցէ մեզ ճակատագրին դէմ մղած իր ողբերգական ***պայքարով***: Սրբուհի Տիւսաբ ծնած է ***Պոլիս*** հայ կաթողիկէ ընտանիքէ: Սրբուհի Վահանեան 1871ին կ'ամուսնանայ ֆրանսացի ***երաժիշտի*** մը հետ եւ անոր ***անունով*** կը կոչուի Տիւսաբ: Ունի երեք ***վէպեր*** («Մայտա», «Սիրանուշ», «Արաքսիա կամ վարժուհի»), երեքն ալ նուիրուած հայ կնոջ ***դատին***: Տիւսաբ ***զարթօնքի*** սերունդին մէջ երեւոյթ մը կը հանդիսանայ իբրեւ առաջին ***կին*** գրագիտուհին:

բ) Յատորին ***վերջաւորութեան*** ծանօթագրութիւնները կը նշեն հրատարակութեան ***տեղն*** ու ***թուականը***:

Մեր սերունդը յստակ յիշատակ մը անգամ չունի ***հայրենիքէն***:

Մենք չենք ուրանար ***ոճին*** գեղեցկությունը եւ անոր ***անհրաժեշտութիւնը***:

Ոչ մէկ բան փոխուած է հին ***մտայնութենէն***:

Այս ժողովուրդը ծարաւը ունի ***նորութեան***:

Ո՞վ պիտի փնտռէ այսպիսի ***տղաքը*** ու գնահատէ զիրենք:

Երեւանի ուսանողական ***տարիներու*** առիթը ունեցայ այցելելու ***Իսահակեանին***:

Մարդերը ***խօսքով*** կը կերակրեն, իսկ ***խոզերը*** գետնախնձորով:

Մի՞թէ կարելի է հոսող ***ջուրին*** կողպէք դնել:

Նոյն ***թուականներուն*** Պէյրութ եկան ***խումբ*** մը լրագրողներ:

## ԱԾԱԿԱՆ, ԹՎԱԿԱՆ ԵՎ ԴԵՐԱՆՈՒՆ

**18. Ընդգծել ածականները՝ բացատրելով որակական ածականների համեմատության աստիճանների կազմությունը.**

ա) Ճշմարտութեան լոյսը աւելի փայլուն ու յաւեժ կը շողայ հոն, ուր խաբեկանքին ու նենգութեան մութը կը տիրէ:

Լոյսը լաւագոյն է խաւարէն, եւ քարին աւելի վսեմ է, քան չարը, ճշմարիտը աւելի ազնիւ է ստէն, եւ կեանք մը փրկելը առաջինի արարք է, զայն սպաննելու մեղքին դէմ:

Ապրող արարածներուն մէջ ամէնէն ստոր, վայրագ եւ չարագործ էակը մարդն է, որովհետեւ գազաններու ոչ մէկ տեսակ իր նմանը այնքան կ'անիրաւէ, կը չարչարէ ու կը բզքտէ, որքան բանաւոր մարդը:

Ամէնէն անզգամ ոճրագործն անգամ պիտի չկրնայ ամէնէն մանրուք յանցանքը գործել, երբ խզուած է ուրիշ մարդկային էակներէն:

Կը դառնայ իր շուրջիններուն ու կը հարցնէ, թէ ասկէ աւելի իսկական հերոսութիւն կ'ըլլա՞յ:

Իմ քոյրս շուտով մեկնելու է, եւ լաւագոյն առիթ մը եղաւ այդ՝ այս հատորս փութով Երեւան հասցնելու համար:

Անոր աղջիկները ծեռքէ ծեռք կը խլուին... ու կը տեղաւորուին էն հարուստ տուները:

բ) «Վէրք Հայաստանի» վէպը ամէնէն ուշագրաւ գրուածքներէն մէկն է արեւելահայոց մէջ: Ասկէ առաջ արեւելահայ աշխարհաբարով ուրիշ գործեր չկայի՞ն: Այո՛, կային եւ աւելի մաքուր լեզուով, բայց ասիկա եղաւ առաջին գեղարուեստական վէպը, որ իր շօշափած նիւթով եւ ժողովրդական լեզուով կը խօսէր ժողովուրդի սրտին: Աւելի դիւցազներգութիւն է, քան թէ վէպ: Այս գործին ազդեցութիւնը շատ մեծ է եղած իրմէ ետք եկող սերունդին վրայ:

Ռոմանթիք գրականութիւնը ամէնէն աւելի կը յատկանշուի գրողի անհատականութեան շեշտումով:

Յակոբ Պարոնեան մեր մեծագոյն երգիծաբանն է, որ մինչեւ այսօր կը տիրապետէ մեր գրական կեանքին: Պարոնեան թերեւս արեւմտահայ գրականութեան ամէնէն հարազատ արտայայտութիւնն է:

Վիեննական դպրոցի գործունէութիւնը հայագիտութեան ասպարէզին մէջ արժանի է խորագոյն յարգանքի:

Ընկերուհիին նուիրեց էն աղուոր ծաղիկներէն, զորս շատոնց կ'աճեցնէր իր պարտէզին մէջ:

Դասական գործերու ամենագլխաւոր յատկանիշներէն մէկն է բանականութեան տիրապետութիւնը զգացումներուն վրայ:

**19. Ընդգծել թվական խոսքի մասի այն կազմությունները, որոնք գործածվում են միայն արևմտահայերենում.**

ա) Եօթնական գրիչ, եօթը տարի ուսանելէ ետք, եօթներորդ լսարանին մէջ, երկերկու մեկնեցան, տաս տետր գնեցի, առաջին օրէն ի վեր,



ընկերներէդ երկուքը, տասը առ հարիւր, մէկ չորրորդ մասը, մէյմէկ խնձոր տուաւ, տասնութ տարեկանին, տասնէն աւելի են:

բ) Գնահատուեցաւ զերո միաւոր, միլիառ տարի առաջ, երկուքական զինուոր, տասնչորսերորդ դարուն, երեսունութ տարի շարունակ, եօթանասուն առ հարիւր, 10–րդ շինութիւնը, երկու–երկու շարքերով, եօթը սուրբ թիւ է, ութսուն տարեկանին, տասներրորդ հանդիպումին առիթով, ութը հոգի, եօթանասուն ամեակին, վաթսունմէկ օր:

**20. Ընդգծել՝**

ա) **առարկայի հատկանիշ ցույց տվող (ածականանիշ) դերանունները.**

Ասանկ, ատիկա, դուն, մէկզմէկ, զինք, զով, զորս, ասիկա, սա, հոս, երբ, ուր, ամէնքը, քանի մը, քու, մենք, ինչ–ինչ, ատանկ:

բ) **գործողության հատկանիշ ցույց տվող (մակբայանիշ) դերանունները.**

Ես, իրենք, անոնք, հոն, ամէն ոք, ոեւէ, այն, որ, ինչ, որքան, երբ, ուր, հոդ, զիրար, քանի, ինչ, որչափ, ասանկ:

գ) **առարկա ցույց տվող (գոյական) դերանունները.**

Որեւէ, սա, անիկա, զայն, դուն, մերինները, ինքզինք, ոչ մէկ, այս, ոչինչ, մէկ քանի, ուրիշ, միւս, ով, ամէն ինչ, այսպէս, միեւնոյն, ոմն:

**21. Լևոն Շանթի «Հին աստուածներ» դրամայից (Բնագրեր՝ էջ 136) դուրս գրել գոյական դերանունները, նշել դրանց քերականական հատկանիշները:**

**22. Ընդգծել դերանունների՝ միայն արևմտահայերենին հատուկ ուղիղ կամ թեք ձևերը. նշել դրանց արևելահայերեն տարբերակները.**

ա) Ինքզինք, ինծի, մէկզմէկ, հոս, ասանկ, այնպէս, այնքան, իրարու, զինք, զով, զորս, ոեւէ, ամէն, ոչ մէկ, մէկը, ատկէ, ասիկա, մէկ քանի, դու, քու:

բ) Ձանոնք, զայն, զիս, ուրկէ, որտեղ, երբ, ով, ովքեր, որու, ոչ ոքի, ոչինչի, ինչերու, մի քանի, քանի մը, ամէն ինչ, ոչ մի, ինչպէս:

գ) Ոչ ոքին, ո՞րչափ, իրարմէ, մէկմէկու, մէկզմէկով, որոնց, երբէն, երբուան, մէկմէկի, իմս, ամէնքին, իրեն, մեզ, քեզնով, սրանով, ատով, որով, ում, դուք, իրենք իրենց:

**23. Անդրանիկ Ծառուկյանի «Եթէ տրուէր...» հատվածից (Բնագրեր՝ էջ 150) դուրս գրել բոլոր այն դերանունները, որոնք բնագրում ուղիղ կամ թեք ձևերում տարբերվում են արևելահայերենից, բացատրել տարբերությունները:**

**24. Փակագծերում տրված դերանուններն ըստ անհրաժեշտության փոխարինել արևմտահայերեն համապատասխան թեք ձևերով.**

ա) Բան ունիմ (դուք) ըսելու: Այս եկեղեցին նուիրուած չէ (մենք) Աստծուն: Եւ ձգէ հանգիստ (մենք) ու (մենք) եկեղեցին: Վա՜յ, ինչպէս վախցուցիր (ես): Ըսէ՛, հաւնելո՞ւ է (դուն) եկեղեցիդ ծովուն ծայրը: Սուրէն կեցած էր անշարժ ու քարացած՝ (ինք) պատռուած նկարին դէմ: Ի՞նչ ունիս, ի՞նչ եղաւ (դուն): Այդ ինչուն մութն էր տղուն համար, (որ) ծալքերուն տակէն (ան) բնազդը կը զգար, որ դիմացի այդ աղջկան մէջ արթնցեր էր կինը: Կը սիրէր (ես) ու շատ կը հետաքրքրուէր (ես): (Դուն) ոչինչ կ'ուզեմ, միայն թէ մի՛ մոռնար (այն):

բ) Պայուսակդ (ես) կու տաս, (ինքն) թեւը փրթաւ: Վահանը (իրենք) տուն հրաւիրեց եղբայրս և (ես): Ատիկա անորն է, (դուն) չէ: (Այս) վերցո՛ւր քեզի հետ, օգտակար են: Ես (այդ) տասը հատ գնեցի: Անիկա կը սիրէր (ինքզինք) հպարտանալ: (Ասոնք) պիտի խաղամ ֆուտպոլ, քանի որ (ատոնք) շատոնց արդէն շարքէ ելած են: Դուն (ատ) մի՛ ուտեր, համեղ չէ: Անոնք (իրար) կը զբաղին, (իրար) կը սիրեն ու (մէկզմէկ) մշտապէս հոգ կը տանին: (Ոչ մէկ) (մենք) ճանչցաւ: (Ուրիշներ) խօսքին մտիկ մի՛ ըներ: Տասը տարիներու ընթացքին (ոչինչ) կրցաւ հասնիլ:

գ) Մուշը կը յիշե՞ս. քանի՞ տարի է (ան) հեռանալը: Այդ քանի մը օրը, սակայն, արեւը մութ ցաթեց (ան) վրայ, աչքերը (ոչինչ) տեսան. խենթութեան տանող բան մը (ինք) հոն թռցուց: Եթէ մենք կը տգեղցնենք, կ'աղճատենք լեզուն, մե՛նք կ'ընենք (այն), (մենք) անփութութիւնը կ'ընէ: Երկար չենք սպասցներ (ինք): Ամէն բանի վրայ մարդ բանաստեղծութիւն կրնայ ընել. գեղեցկացնողը մարդն է. (մենք) միտքէն չանցածը, անսպասելի՞ն կրնայ տալ (մենք). մենք այդ կը սպասենք (ինք): Հայաստանի բնութիւնը կախարդած է (ինք): Յուսախաբ սէրը եւ (ան) բխող վիշտը Իսահակեանի բանաստեղծութեանց գլխաւոր նիւթը կը կազմեն: (Դուն) աւելի հարազատ մէկը չունիմ: Ո՞վ պիտի տայ նաեւ պատասխանը, թէ ինչու խորենացի եւ (ինք) ժամանակակիցները հալածեցին (մենք) աչքին հիմա այնքան ազգային երեւցող հեթանոսական մնացորդները:

**25. Հոլովել տրված դերանունները.**

ա) Ինք (ը), ասիկա, դուն, անոնք, որ, ոչ մէկը:

բ) Մենք, իրենք, ես, սա, քուկդ, այստեղ:

գ) Դուք, մէկը, ոչինչ, ոչ ոք, ամէնքը, ինչեր:

դ) Քանի՞, միւսը, իմս, ով, մէկզմէկ, ինչ:

ե) Որոնք, երբ, մերինները, մէկ քանին, այսքան, այն:

**26. Դերանունների տրված հոլովաձևերով կազմել նախադասություններ, նշել արևելահայերեն զուգաձևերը.**

ա) Մեզմէ, ասկէ, քեզի, անոր, իմիններէս:

բ) Քեզմով, որուն, զով, զայն, զինք:

գ) Անով, ինծի, զոր, իրմէ, ինքզինք:

դ) Ձիս, ձեզի, անիկա, ատոր, իրմով:

ե) Մէկ քանիին, իրենցներուն, զիրար, ատոնցմով, երբուան:

զ) Իրարմով, որով, ինծմով, երբուընէ, ինք:

## ԲԱՅ

**27. Հետևյալ անունների դիմաց դնել դիմավոր բայեր.**

Դասախոսը ……: Որսորդը ……: Ուսանողները ……: Աստված ……: Բնությունը ……: Ծաղիկները ……: Արագիլը ……: Արևը ……: Առավոտը ……: Եղանակները ……: Ողիմպական խաղերը ……: Հայաստան ……: Գետերը ……: Հեռատեսիլը ……: Յակոբ ……: Աստվածաշունչը ……:

**28. Նշել ընդգծված բայերի կազմությունը և լծորդությունը.**

ա) Ո՜վ մարտնչումներու եւ զօրութեան արքայակերպ Յսկայ,
***Ներէ՛*** որ ակնածութեամբ եւ եղբօր մը պէս դէպի քեզ ***յառաջանամ***,
Եւ իմ ***տառապողի*** եւ տարփաւորի կարմիր քնարովս այս իրիկուն,
Քու ջատագովանքդ ու փառաւորումդ ***երգեմ*** քեզ ***պաշտողներուն*** համար:
Թէեւ իմ շունչս կարող ***չըլլայ*** քու յաղթականի փառքդ ***շեփորելու***,
Թէեւ իմ ***ընկճուածի*** մտածումս քու անունիդ կատարներուն երբեք ***չբարձրանայ***,
Թէեւ հոգիս անարժան ըլլայ քու հերոսի հոգիդ ***խորասուզելու***…
Թէեւ խորհուրդներս ըլլան աղքատ եւ ձեւերս անպաճոյճ,
Թէեւ քեզի համար ***կառուցած*** խորանս ըլլայ անսուրբ եւ ծխած խունկս օտար: (Սիամանթօ)

բ) ***Չգիտե՞ս։ Յաղթե՛ր*** ես, ***բարձրացեր*** ես գագա՛թը, դուն կա՛յսր ես: Մարդկային ծածուկ ու խորունկ ատելութիւն է ատիկա ամէ՛ն բանի դէմ, ամէն մարդու դէմ, որ ***յաջողեր*** է, որ ***հասեր*** է, որ գագաթն է: ***Չյաջողածներու*** վրէժն է ատիկա, ե՛տ ***մնացողներու*** անքուն ատելութիւնը: Յանգիստ չե՛ն ***տալու, խայթելո՛ւ*** են, եւ մութին մէջ արմատները ***կրծելու: Նայէ՛***, դուն ***զայրացար, լացիր, պոռացիր*** եւ ***թեթեւցար***: Իսկ ե՞ս, ես ի՞նչ ***ընեմ***, ո՛չ կին եմ, ո՛չ ***լալ կրնամ***, ո՛չ ալ ***մնալ*** անտարբեր: Կը կարծես դիւրի՞ն է ինծի: Երբեմն այնպէս ծանր վայրկեաններ ***կու գան*** վրաս, նե՛րսը, այն ընդարձակ ննջարանիս առանձնութեան մէջ: Ա՜յ, մանաւանդ այսպէս խօլ ու դիւահար գիշերները, պատերուն ցայտերն ու քիւերն անգամ կարծես կեանք ***կ'առնեն*** մոմիս դողդոջ լոյսին տակ, եւ մոլեգնոտ հովը պատուհանիս ճեղքերէն գիտե՞ս ինչ սեւ դաւեր ***կը պատմէ*** ինծի: (Լեւոն Շանթ)



**29. Արշակ Չոպանյանի «Ա. Չօպանեան ինքը իր մասին» շարադրանքի երկրորդ պարբերությունից (Բնագրեր՝ էջ 88) դուրս գրել բայերը, նշել դրանց լծորդությունը, կազմությունը:**

**30. Հետևյալ հիմքերին կցել տրված լծորդական համապատասխան բաղադրիչները՝** ***–չիլ, –նիլ, –նել, –ուլ, –նալ, –անալ, –ուիլ, –իլ, –ել, –ենալ.***

ա) Խօս –, սորվ –, ամչ –, գր –, աշխատ –, վազ –, ապր –, հագ –, թող –, թռ –, սառ –, խփ –, ծն –, մոռ –, մերձ –, աղօթ –, աշխատակց –, ծռ –, ճանչ –, մօտ –, փախ –, գիտ –, յոգ –, հանդիպ –, հեռ –:

բ) Ապրեց –, ուռ –, կորս –, դպ –, կպ –, նեղ –, գող –, յիշ –, խառն –, փայլ –, գիր –, այր –, խորհ –, կոտր –, պայթար –, աղաչ –, զանգահար –, հի –, քնն –, խորասուզ –, գնահատ –, ապշ –, պայթ –, տիրապետ –, ցուց –, վրիպ –:

**31. Առանձնացնել ներածանցավոր բայերը՝ բացատրելով դրանց կազմությունը.**

ա) Իջնել, մերձենալ, պահուըտիլ, հիննալ, ընել, խօսիլ, մսիլ, յագենալ, բաղդատել, ամրանալ, փախչիլ, թռչիլ, կորսուիլ, յանդգնիլ, սորվիլ:

բ) Սառիլ, ուռիլ, մօտիկնալ, խօսցնել, վարել, վառնել, կոտրատել, աւելնալ, աւելցնել, հուրհրալ, մոռնալ, ծնիլ, կանգնիլ, իյնալ, գտնել:

գ) Յասնիլ, հատնիլ, դպչիլ, պատառոտել, տապլտկիլ, երթալ, մտնել, մեկնել, խոստանալ, թողուլ, քքնել, ճանչցնել, յաղթել, կառչիլ, անօթենալ:

դ) Ընդհատիլ, զբաղիլ, անդրադառնալ, մտիկ ընել, մեկնիլ, հոգալ, ժպտիլ, բնակիլ, յաղթել, յաջորդել, սպառել, սպառնալ, անհետանալ, խածնել, լռնալ:

ե) Քարանալ, կանգնիլ, հասուննալ, դրկել, մարել, գրուիլ, երգեցնել, փայլատակել, թաքնուիլ, հասցնել, տարուիլ, անցընել, արիւնիլ, կոտրիլ, շրջել:

**32. Վերականգնել տրված բայերի սկզբնաձևերը (անորոշ դերբայը).**

ա) Պիտի փորձէ, սպառէր, չենք ունեցած, զետեղուած են, պիտի հետապնդէ, խօսեցաւ, կը համադրեն, կը զգամ, չի յատկանշեր, խորհեցանք, վերցո՛ւր:

բ) Կ՚ապրինք, կանչուած է, ընդունեցայ, ընդունեցի, ընդունունեցանք, կը խոստովանինք, պիտի աւարտէր, ունինք, պիտի չանցնէր, մի՛ հաներ, կ՚արժեցնէ:

գ) Կազմակերպուած, կորսնցնէ, կը գործածեմ, կը հակակշռէ, արգիլուած են, մի՛ նկատեր, ունինք, դիտուած, չէր հանդուրժեր, շահագործած է, պիտի չկարենային, կը միջամտէ, սպասեցի:

**33. Վերականգնել տրված բայերի սկզբնաձևերը (անորոշ դերբայը), որոշել դրանց կազմությունը.**

ա) Մարեցան, կը սուղնայ, վարգեցին, կը տոչորուի, պիտի փրկեն, փտեցան, մի՛ պատահիր, չէի յայտներ, կը մրրկի, չեմ մոլորիր, ծեփէ, նետող, խորհելէն:

բ) Անսա, կակուղցաւ, կարդացուեցաւ, հատաւ, յորդորեցի, շփոթեցայ, յօժարեցան, յիշատակէք, կը ներծծուիրինք, մեռած է, չէինք մաքրեր, ծծեր է, ներխուժած:

**34. Ընդգծել**

**ա) ներգործական սեռի բայերը.**

1. Խնայել, յաղթել, վնասել, վազել, լայնցնել, ապրիլ, կարդալ, հոսիլ, վառել, ազատիլ, բնակիլ, մօտենալ, գրաւուիլ, ծպտիլ, թռչիլ, զբօսնել, աճապարել, նստիլ, ծռել, մարել:



2. Դիտել, աղմկել, արգիլել, ճամբորդել, մեծարուիլ, որսալ, դաստիարակել, վաճառել, գթալ, համոզել, հալածել, վտարուիլ, յաջորդել, խնդալ, ապաստանիլ, ապպրել, նշաւակել, ցաւիլ, չորնալ, խեղճանալ:
3. Ծածկել, կատարել, ստորագրել, հետեւիլ, ըմբոստանալ, այցելել, ամչնալ, ծանօթանալ, վերադառնալ, արթննալ, անէանալ, եռալ, սահիլ, կանչել, պաշտպանել, կշտամբել, ընել, զբօսնել, մաքրել, կերցնել:

**բ) չեզոք սեռի բայերը.**

1. Յագեցնել, ներել, խառնել տալ, օգնել, թուիլ, դառնալ, ըլլալ, աւարտել, կաթիլ, հնձել, տրոհուիլ, թափել, ընդունիլ, կռահել, գգուել (փաղաքշել), խռովիլ, գերազանցել, համրանալ, խոնջանալ, հեռաձայնել:
2. Սորվիլ, անցընել, բարեկամանալ, կանգնիլ, ջրուիլ, վառիլ, հեռանալ, հասկցուիլ, բռնկիլ, սուզուիլ, շրջել, ծռել, ծակել, թափիլ, ազատել, թաղել, յուզել, բացայայտել, ծռիլ, մարիլ:

**գ) կրավորական սեռի բայերը.**

Ժողովել, հոսիլ, նզովուիլ, խպնիլ, վախնալ, միացուիլ, յարձակիլ, կառուցուիլ, պատկերուիլ, գրկախառնուիլ, ընդունուիլ, լուծուիլ, հիասթափիլ, վերլուծուիլ, խռովիլ, կենալ, կազմուիլ:

**35. Վահան Թեքեյանի «Եկեղեցին հայկական» բանաստեղծությունից (Բնագրեր՝ էջ 131) դուրս գրել բայերը, որոշել դրանց սեռը և կազմությունը:**

**36. Որոշել ընդգծված բայերի սեռերը.**

ա) ***Գիտէ՞ք*** որքա՛ն թախիծ ***կայ***
Յոգիին խորն այդ տղուն.
***Մի՛ դպիր***, թող ***թրթռա՛յ***.
Խենթին քրքիջն է բեղուն...
Ահ, մի՛ դպիք այդ տղուն.
Խենթը միայն ***կը թողուն***...: (Մատթեոս Զարիֆյան)

բ) Հիմա երբ ինձ ***կ'երազես*** պատուհանիդ դէմ ***նստած***
Գուցէ անցորդն եմ տրտում, որուն վրայ ***կը խղճաս***,
Կամ ծովերո՞վ ***բաժնուած*** օտարական մը անյայտ: (Մուշեղ Իշխան)

գ) Այսքան մինա՛կ, մեկուսի՛, ինքզինքս երբե՛ք *չեմ գտած*:
*Յուսացի* թէ երազներս գէթ քիչ մ'երկայն *կը տեւեն*,
Բայց *թողուցի՛ն, հեռացա՛ն*: Մենարանիս ալ յանկարծ
Դուռերն ամէն *փակուեցան* մէկը միւսին ետեւէն: (Վահէ–Վահյան)

դ) Տարիներ վերջ, *զարթնելով* պատրանքներէն, զոր *տուին*
Մեծ ոստաններն՝ *յանձնելով* զիս իրենց խօլ արշաւին,
*Եկեր, գտեր էի* տունն, ուր մանկութիւնս *էր անցեր*:
Ցիսուն մղոն ծիւն *կտրած*՝ ոտքերուս կրակ ու խոց էր: (Նիկողոս Սարաֆյան)

ե) *Ունկնդրէ՛* դուն քնարիս եօթ լարերուն՝
Որոնք *կ'երգեն* եօթն հրաշալիքն աշխարհի.
*Ե՛լ*, քեզ համար *պիտի յարեմ* եօթնադի
Քնարիս վրան շքեղ լար մ'ալ անանուն:

*Ելի՛ր*, քեզի հետ *պարենք* պարն այն վայրի՝
Որ եղեններ *պիտի տանի* մեզ ցնծուն.
Որպէս զի դուն *հասնիս* մինչեւ աստղերուն,
Ելի՛ր, քերթո՛ղ, թէ՛ւ *պիտի տամ* ես քեզի: (Յակոբ Սիրունի)

**37. Հետևյալ նախադասություններում ավելացնել համապատասխան՝**

ա) **չեզոք սեռի բայեր**.

Մարդ մը ......: Հայերը ...... իրենց ազատութեան համար: Վահան Թէքէեան ...... Պէրպէրեան եւ Կեդրոնական վարժարանները: Երազիս մէջ մամաս խորհրդաւոր ժպիտով մը իմ քով ......: Գրիգոր Պըլտեան (ծնած 1945ին, Պէյրութ), Համազգայինի ճեմարանի իր ուսումնական երկրորդական շրջանէն ետք ...... Փարիզ, եւ հոն ամբողջացուցած ուսումը՝ փիլիսոփայութեան ճիւղին մէջ:

Վարդը......: Եթէ ես ......, դուն մօտիկ ազգականներ ունէիր Գանատա: Վարուժանով կը հարստանանք, Դուրեանով......, Մեծարենցով կ'անուշնանք, վահան Թէքէեանով կը զգաստանանք:



բ) **ներգործական սեռի բայեր**.

Լուռ դարձանք փոքր հրապարակին անկիւնը եւ, առանց կանխամտածութեան, մեր քայլերը ...... կէս–դաշտային արահետի մը, որ ոլորապտոյտ կը բարձրանար դէպի մերձակայ բլուրը. բարակ հով մը գրկած ...... մեզ: Պատանի տարիքը ...... իրեն յատուկ խռով հոգեվիճակներ, դժուարին պահեր, ինքզինք ճանչնալու տագնապ, զգացական դժուարութիւններ: Իր «Համապատկեր արեւմտահայ գրականութեան» հսկայ գործով վիպագիր եւ քննադատ Յակոբ Օշական ...... հայ գրականութեան արեւմտահայ ճիւղը գրական խոր վերլուծումներու ծեւին տակ:

**38. Ռուբեն Զարդարյանի «Ծովակին հարսը» պատկերի Ա հատվածից (Բնագրեր՝ էջ 118) դուրս գրել բայերը, որոշել դրանց սեռը, ներգործական սեռի բայերը վերածել կրավորականի:**

**39. Տրված բայերից կազմել կրավորական սեռի բայեր. դրանք գործածել մեկական նախադասության մեջ.**

ա) Հիւրասիրել, յանդիմանել, վառիլ, յարգել, պատժել, սեւցնել:

բ) Խախտել, բուժել, հուզել, հաւաքել, փնտրել, մօտեցնել:

**40. Արտագրել՝ ընտրելով ճիշտ տարբերակը.**

ա) Դիմաւորել (ընկերը, ընկերոջը), օգնել (մեզ, մեզի), սկսիլ (աշխատանքը, աշխատանքին), այցելել (ծնողքը, ծնողներուն), կանչել (զիս, ինծի), ձերբակալել (յանցագործը, յանցագործին), վիրավորել (իրար, իրարու), սիրել (ինքը, զինք), կշտամբել (զիս, ինծի), հալածել (զինք, իրեն):

բ) Ձեռնարկել (գործ մը, գործի մը), հիւրասիրել (քոյրը, քրոջը), խաբել (զայն, անոր), դիմադրել (թշնամին, թշնամիին), պատուել (ուսուցչուհին, ուսուցչուհիին), յաջորդել (մեզի, մեզ), բռնել (մեղաւորը, մեղաւորին), սպաննել (թուրք մը, թուրքի մը), յարգել (մեծերը, մեծերուն), ճանչնալ (քեզի, քեզ):

գ) Վարձատրել (գործաւորները, գործաւորներուն), դաստիարակել (երեխաները, երեխաներուն), համբուրել (ուսուցիչը, ուսուցիչին), արգիլել (ձեզի, ձեզ), նշանել (աղջիկը, աղջկան), թագադրել (Արշակը, Արշակին), մօտենալ (զայն, անոր), մոռնալ (զինք, ինքը), պատրաստուիլ (մեկնիլ, մեկնելու), խնամել (հօրը, հայրը):

դ) Կը սպասեմ (քեզի, քեզ), (մեզ, մեզի) կը խօսի, պիտի գամ (ձեզ, ձեզի), տուն կը տանի (ձեզ, ձեզի), կը պատմէ (ինձ, ինծի), դասը մի՛ բացատրեր (անոր, զայն), զննեցի (զանոնք, անոնց), նման են (իրար, իրարու), կը պախարակեն (զինք, ինքը):

**41. Միսաք Մեծարենցի «Ձմրան պարզ գիշեր» բանաստեղծությունից (Բնագրեր՝ էջ 105) դուրս գրել բայերը, բացատրել դրանց լծորդության և կազմության տարբերությունները արևելահայերենից:**

**42. Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» վէպի «Ի՞նչ պէտք, ի՞նչ պէտք... բացառութիւններն ալ» հատվածից (Բնագրեր՝ էջ 161) դուրս գրել սահմանական ներկայի ձևերը:**

**43. Դուրս գրել անկանոն և պակասավոր բայերը.**

ա) «Գացի Զուարթնոց. այնտեղ մարդ մը տեսայ, շատ հին հրացան մը ուսին. ըսի ո՞վ ես — պահակն եմ պատասխանեց: Ըսի՝ ներողութիւն, հայրի՛կ, Պիբլիս ուրտե՞ղ է... ոտքի ելաւ, ձեռքը պարզեց այսպէս, մէկ *ինչ* այս կողմ, այն կողմ տարաւ բերաւ, այսպէս, յետոյ համատառն կէտի մը վրայ ձեռք կանգնեցուց. այսպէս՝ եւ ըսաւ.

— Ճիշդ այսպէս կ'երթաս, այսպէս ուղիղ, եօթ օր, եօթ գիշեր կ'երթա՞ս, կ'երթաս, կը հասնիս Պիբլիս: Գնա՛»: «Երբ կը գրէի «Օր մը աշխարհի յետմիջօրէին» գիրքս, ես իսկապէս որոշած էի պառկիլ անկողին ու փակել աչքերս: Երեսուն տարի ունիմ տակաւին, ես կը կարծեմ որ 97 տարեկանիս պիտի հանգիստ փակեմ իմ աչքերս. բայց մօտեցած եմ արդէն այդ ժամանակին, ուր մահը շարունակ աճող ու մեծցող իրականութիւն է... ես լաւ ընկերներ ունեցած եմ, որոնք լացած են մեռնելէ առաջ: Ե՞ս ալ պիտի լամ արդեօք. թերեւս, բայց ինչպիսի՜ նուաստացում է լացը մեռնելէ առաջ...»: (Վ. Սարոյան)



բ) Ուրկէ՞ առիր թուաբանութեան այս գիրքը: Չեզմէ անդին մարդ պիտի չանցնի, տղաք. ամէն մարդ ձեզի պէս ճամբուն եզերքը պիտի կենայ: Ծերունի մը, գլուխը կուրծքին ինկած, կը քնանայ: Ճամբայ ելած ատեն հետդ գիրք չառիր: Ձեռք մը հագուստ ընտրեցինք անոր համար. իր միւս նուէրները Կաղանդ պապան պիտի բերէ: Չէ՛, մինչեւ տուն պիտի չքալեմ. ճամբուն կեսին հանրակառք պիտի առնեմ: Է՜, օրէնքը յաճախ ոստիկան չեղողներո՛ւն համար է, չե՞ս գիտեր ատիկա: Չ'ըլլար, կիրակի մեզի պիտի գաք. կը սպասենք: Բոլորն ալ նոյն գործիքներով նոյն աշխատանքը կ'ընէին: Գալ ամառ Իտալիա եւ Յունաստան պիտի երթամ: Երբ առաջին անգամ զինք դպրոց տարինք, ուզեց որ մաման իր քով մնայ, տուն չդառնայ: Ծնունդի շաբաթը շատ կը սիրեմ Երեւան գալ եւ պտոյտ ընել քաղաքին մէջ:

**44. Ընդգծել անկանոն և պակասավոր բայերը.**

ա) Թքնել // թքել, պագնել, խածնել, դնել, կանչել, կորսուիլ, ընել, սրբել, պահուըտիլ, նայիլ:

բ) Ուտել, գալ, ըլլալ, տանել, տեսնել, զարմանալ, ձգել, ճանչնալ, հաղորդուիլ, հասցնել:

գ) Զարնել, եմ, կամ, ունիմ, առնել, զարմացնել, այցելել, զուգորդուիլ, խմցնել, յարգուիլ:

դ) Թռչելու, յարգուեր, սպասել, վազեր, աղօթելէն, տալու, գիտեմ, արժեմ, երթալով, լացած:

**45. Վերականգնել տրված անկանոն և պակասավոր բայերի սկզբնաձևերը (անորոշ դերբայը), նշել դրանց կազմությունը.**

ա) Տուած են, ըսուեցաւ, զարկաւ, ընեն, լեցո՛ւր, գացի, չ'ըսեր, մի՛ երթար, դարձած էր, ինկի՛ր, բերաւ, տուինք, ըլլալու ենք, եկանք, մի՛ գիտնար:

բ) Ինկեր են, թո՛ղ, գացէ՛ք, կու գայ, պիտի ըլլար, մի՛ ըներ, կե՛ր, դրաւ, զարկինք, յուսայինք, մի՛ թողուր, կ'երդնում, եկո՛ւր, գիտցայ, առինք:

**46. Երվանդ Օտյանի «Ընկեր Փանջունի» վիպակի առաջին երեք պարբերությունից (Ընագրեր՝ էջ 89) դուրս գրել անկանոն և պակասավոր բայերը, բացատրել դրանց տարբերությունները արևելահայերենից:**

**47. Կազմել տրված բայերի անցյալ կատարյալի հիմքը, բացատրել տարբերությունները արևելահայերենից.**

ա) Երթալ, ըլլալ, նայիլ, ապրիլ, երգել, տալ, փախչիլ, նախատակուիլ, արտայայտել, հասցնել, զանահարել:

բ) Թողուլ, ուռիլ, իյնալ, կախել, դնել, տանիլ, ազատել, արժանանալ, բաւել, բռնանալ, գալ:

գ) Ներել, գնուիլ, զտել, ուտել, թռցնել, յարծակիլ, կարդացուիլ, սրբտել, լեցնել, լայնցնել, գունատուիլ:

**48. Խոնարհել տրված բայերը սահմանական եղանակի անկատար ներկա, անկատար անցյալ և վաղակատար ներկա, վաղակատար անցյալ ժամանակաձևերով.**

ա) Աղօթել, բնակիլ, ըլլալ, բերուիլ, նուազեցնել:

բ) Կրնալ, հեգնել, վերադարձնել, զարնել, տալ:

գ) Կորսնցնել, իյնալ, դպչիլ, խաղալ, պակսիլ:

դ) Յագնիլ, ելլել, ապրիլ, փախչիլ, արթննալ:

**49. Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» վիպակի բերված հատվածներից (Ընագրեր՝ էջ 74) դուրս գրել անցյալ կատարյալ ժամանակաձևերը:**

**50. Տրված բայերը խոնարհել անցյալ կատարյալ ժամանակաձևով.**

ա) Ըլլալ, խնդրել, յոգնիլ, կազմուիլ, ծաղկիլ, տալ:



բ) Յսկել, բերել, սորվիլ, մոռնալ, թափել, մարիլ:

գ) Զարնել, հրաւիրել, թափիլ, մարել, խօսեցնել, գրաւուիլ:

**51. Տրված նախադասությունների ընդգծված բայերը վերածել ժխտականի.**

ա) Վահան քալելով դպրոց ***կ'երթայ***: Աստղերը յաւերժ ***պիտի պսպղան***: Տղաք ընդարձակ բակին մէջ ***կը խաղային***: ***Պիտի*** կանուխ ***քնանամ***, եթէ դասերս ***պատրաստեմ***: Ձայնագրիչով ***կ'արձանագրենք***: Ձայնասփիւռով ***պարած են***: Դուն ***կ'ապրիս*** միայն հացով: Անոնք ***մասնակցած են*** հանդիսութիւններու:

բ) Յեռաձայնով և անթելով ***կը խօսակցինք***, իսկ լսափողով սրտի տրոփը ***կը լսենք***: Առիւծը կորիւն ***ծնաւ***: Սուտին ոտքերը կարճ ***կ'ըլլան***: Ո՞ւր է թռնիկս, երկար ատենէ ի վեր տեսած չեմ զինք, ***կարօտցած եմ***: Կիրակի օր եկեղեցի ***երթալու եմ***: Ամպեր ***կը դիզուին*** լերան գագաթին վրայ: Կը հաւատամ, որ Արտաւազդ օր մը անպայման ***լոյս աշխարհ պիտի գայ***:

**52. Կազմել տրված բայերի ժխտականը.**

ա) Կը լսէի, կ'ըլլար, գրուած է, երթային, ուզէր, կու գար, պիտի տամ, տուած է, սորված էք, կ'ուզէ, կը սորվիմ, շրջագային:

բ) Կ'ընէ, պիտի լար, գրելու է, ունինք, կը մոռնամ, կը մտնէր, գրած եմ, եղեր, կարդացած ենք, եղաւ, կ'իջնէ, կ'իջնէր, որակազրկած են:

գ) Կը նմանէր, ունիմ, օգնէր, կային, կը թողում, սորված պիտի ըլլամ, կը նմանին, կը լսէ, կը հնչեն, կ'ընթերցուին, կ'ընթերցէ, կը խօսինք:

**53. Սիամանթոյի «Մահուան տեսիլը» բանաստեղծությունից (Ընագրեր՝ էջ 99) դուրս գրել դրական խոնարհման դիմավոր բայերը, կազմել դրանց ժխտականը:**

**54. Տրված նախադասությունների հրամայականի ընդգծված ձևերը վերածել ժխտականի.**

***Մօտեցէ՛ք*** իմ ընկերոջը: ***Լսէ՛***, որդի՛ս, ***լսէ՛*** անոր, անիկա ծերունի մարդ մըն է: ***Կարդա՛*** ինքդ: ***Եկո՛ւր*** հոս, քու հոգիդ թռիչք ունի: ***Հեռացէ՛*** իմ խորհուրդներուս: եւ վերջապէս հիմա ինչո՞ւ ես կեցեր. ելի՛ր, զա՛րկ, ***սարկեցո՛ւր***: Փոխեմ հագուստս, կու գամ. դուն ***գնա՛***: ***Մոռցի՛ր*** ըսածներս: եթէ կրնաս՝ ***բարձրացի՛ր***: ***Դպի՛ր*** այդ տղուն: ***Պատմեցէ՛ք*** ձեր լսածներու մասին:

**55. Կազմել տրված բայերի եզակի և հոգնակի հրամայականի ժխտական ձևերը.**

ա) Խօսեցէ՛ք, թո՛ղ, գացէ՛ք, գնա՛, ա՛ռ, մտի՛ր, ըսէ՛, պապակէ՛, ինկի՛ր, զա՛րկ, խմեցէ՛ք:

բ) Գրեցէ՛ք, մօտեցի՛ր, կարդա՛, դի՛ր, ըրէ՛, պահպանէ՛, պապանձէ՛, կե՛ր, եկո՛ւր, հալածեցէ՛ք:

**56. Կազմել տրված բայերի եզակի հրամայականի դրական և ժխտական ձևերը.**

ա) Լսել, կուրնալ, կղպել, կլորնալ, կարդալ, պագնել, առնել, իջնել, տանիլ, բռնել:

բ) Ճերմկնալ, հոսիլ, լայնցնել, լեցնել, խնայել, բանալ, բերել, ջրել, ըսել, թողուլ:

գ) Անցջել, մտնել, հագնիլ, իյնալ, զարել, դնել, ներել, ներկուիլ, սորվիլ, գիտնալ:

դ) Փախչիլ, մօտեցնել, հանգստանալ, պարապիլ, սպաննել, ելլել, երթալ, հարցնել, փթթիլ, սիրուիլ:

ե) Մաշիլ, մօտիկնալ, իջեցնել, բանիլ, յառաջանալ, յածիլ, շատնալ, շտկել, չորնալ, ցուցնել:



**57. Կազմել տրված բայերի հոգնակի հրամայականի դրական և ժխտական ձևերը.**

ա) Ելլել, պառկիլ, ածալ, սիրել, սիրտը առնել, յիշատակել, սփռուիլ, առնել քալել, վստահիլ, տապալիլ, թռչիլ:

բ) Տալ, թողուլ, սիրտը լայն բռնել, սղագրել, սկսիլ, վառել, վշտացնել, տապանել, տառադարձել, երթալ, զարնել, դպչիլ:

գ) Երդուիլ, սիրտը բանալ, սրբել, մտերմանալ, սփոփուիլ, տաքնալ, տիրանալ, տուայտիլ, փախչիլ, կորսուիլ, հագնիլ, մերձենալ, գինովնալ:

**58. Ռուբեն Սևակի «Երթա՛լ» բանաստեղծությունից (Բնագրեր՝ էջ 117) դուրս գրել բոլոր այն ձևաբանական իրողությունները, որոնք տարբերվում են արևելահայերենից, բացատրել տարբերությունները:**

**59. Պետրոս Դուրյանի «Տրտունջք» բանաստեղծությունից (Բնագրեր՝ էջ 67) դուրս գրել բայական բոլոր այն ձևերը, որոնք տարբերվում են արևելահայերենից, վերածել արևելահայերենի:**

**60. Դանիել Վարուժանի «Յունձք կը ժողվեմ» բանաստեղծությունից (Բնագրեր՝ էջ 127) դուրս գրել բոլոր դիմավոր ձևերը, վերլուծել:**

**61. Տրված բայաձևերը վերածել արևելահայերենի.**

ա) Փրկէ՛, ա՛ռ, տանիմ, կրնանք, կը հաղորդուին, կը պատմէինք, եկած է, ըսուեր է, չ'երթար, չըլլար, կը կարծէի, ինկի՛ր, կը քալէր, չի մոռնար, պիտի չըներ:

բ) Մի՛ իյնար, չի գիտեր, կը տանին, տուի, բերաւ, երթալու է, շատնայ, մի՛ կարդար, կու տար, չեղաւ, դրինք, առի, կը խռովէր, չի տանիր, գիտեմ:

գ) Լեցուած է, բերեր էր, կը դիմաւորէ, կ’ըսես, քնացած էին, չէր կոտրած, խաղցած էր, գրուեցան, ըրաւ, կ’երազես, կը վազէր, չէի թողուր, կը նկատուին, սպասարկէ, չըրաւ:

դ) Փլաւ, պիտի ընդունի, չկրցայ, խուսափեցանք, երթալու ըլլալու եմ, կ’անցընէիր, չաւարտեցաւ, գտնէ, չէի հետեւեր, լոգանք առի, մտած էք, չեմ հրաժարիր, կ’արգիլեն, կրնայ, կը թուէր:

**62. Տրված բայաձևերը վերածել արևմտահայերենի.**

ա) Գնա՛, ասա՛, առա, խոսե՛ք, չէր կարդում, չգնանք, հասկացե՛ք, մրցում ենք, կորչում են, սառչում էին, չտեսնեմ, չասեր, պակասեն, չզսպվեց, սիրե՛ք:

բ) Արի՛, տվեցի, ասացե՛ք, ընկավ, պիտի հանդիպի, հնացել է, չի պատասխանում, չէր ասում, նշագրվեց, նմանեցրի, թողեցինք, դրեցի, ուռչում է, մի՛ փախիր, հսկե՛ք:

գ) Մի՛ գնացեք, բերեցինք, փրկեցե՛ք, գնաց, մոռանում ես, ապրեմ, նստել են, մոռացել էին, չի մրսելու, ուռեցին, իջե՛ք, իջեցրե՛ք, սառեցրո՛ւ, մարեցի (հանգցրի), երգե՛ք:

դ) Նմանվեցին, նմանեցրի, ընկել է, գնալու են, գնացել են, քնի՛ր, սառան, մարեցի (գիտակցությունս կորցրի), պսակվեցին, պտտեցի (շրջագայեցի), մի՛ կեր, ուսանեմ, պիտի թողնեմ, ոռնում են, գրե՛ք:

**63. Տրված բայաձևերով կազմել մեկական նախադասություն, բացատրել դրանց տարբերությունները արևելահայերենից.**

ա) Մարեցաւ, շրջեցանք, հաւնեցայ, կը պտըտէի, շարժեցինք, լմնցած է:

բ) Մարեց, հաւանեցայ, կ’անցնէի, կը պտըտցնէ, հիւծեցայ, սպառեցան:

գ) Շրջեցինք, անցուցի, կ’անցընէի, շարժեցանք, մտի՛կ ըրէ, արթնցի՛ր:

դ) Կ’ուսանիմ, չմարեցայ, նորոգէ՛, ներդրաւ, չեմ յիշեր, քնացեր է:



**64. Արտագրել տեքստը՝ փակագծում եղած բառերը ըստ անհրաժեշտության ենթարկելով համապատասխան փոփոխությունների.**

ա) Շատոնց կ’ուզէի (դուն) գալ: Սեդան գլուխը (խոնարհեցնել): Այս իրիկուն մեր (հիւր) ճամբեցի: Լռութեան այդ (պահ) անոնցմէ (մէկը) ձայնը (հարցնել). «Յայրի՛կ, կը հաճիս ըսէ՜, հիմա ի՞նչ (ընել)»: Այդ յառաջխաղացումին նպատակակէտը հեռու է (մարդ) անսահմանօրէն, անհունօրէն, որովհետեւ այդ նպատակակէտը մօտիկ է (մարդ), ինչպէս ոչ մէկ բան կեանքին մէջ: Մարդիկ (տառապիլ), այլ (ինքզինք) կը տառապեցնեն: Արթնցի՛ր, մանկի՛կ, ու (ժպտիլ):

բ) Բաւական ուշ էր, ժամը տասին մօտ, երբ Վահան (զարնել) անոնց դրան (զանգ): Վէճ մը կայ մութ եւ պայծառ այդ երկու (գրող) միջեւ. անոնք (երկու) ալ ունին իրենց արդարացի փաստերը: Այդ (գիրք) մէջ կար Սփիւռքի հոգեվիճակը, որ չկար հայերէն (գրել) շատ (գիրք) մէջ: Իրականութիւնը տեսնելը ահաւոր վտանգ (մը) է. կ’ամլացնէ հոգիները, (ջլատել) (անոնք): Վարուժան՝ մեծ ու սիրելի բանաստեղծ, կը յաջողի բանաստեղծութեան մէջ, բայց աղօտ պատկեր մը (տալ) միայն մեր հեթանոս շրջանի ընդհանրական (ոգի):

գ) Նահապետ Ռուսինեանի «Կիլիկիա» քերթուածը գիտական կառուցման մը չափ կանոնաւոր յօրինում մը (ըլլալ) զատ, տիրական զգացումներու մը եւ վիճակներու ալ քաղցր, զուսպ, արդար շաղապատում մըն է: Շատ (տեսնելը) լեզուին քիչ մը խորդուբորդ, գրաբարով սպառազէն հանգամանքները: Այդ (օր) մարդիկ շատ աւելի անտանելի (իբրեւ լեզու) կտորներ (վարանել) հրապարակ նետելէ:

**Աստղերու անալի սանդուխքը** — Դուրեանը սրբագրող վարժապետ Սիմոն Ֆէլէկեան հայկաբանը *անալի*ն (վերածել) *ահալի*՝ սպաննելով շքեղ պատկերը բանաստեղծին երեւակայութեան: Թեւ քիչ մը դժուար, բայց ո՛չ անկարելի է հետեւիլ Դուրեանի մտքի (թռիչք)՝ աստղակառոյց սանդուխին, որ երկինքն է իր (գլուխ) վերեւ, ուր միջոցին խաղաղութիւնը, անալի վիճակը թերեւս (գալ) աստուածային ներդաշնակութեան հսկայ (ճնշում) այդ (ամէն) վրայ: (Յակոբ Օշական)

դ) **Է՜, մընաք բարով, Աստուած եւ արեւ** — ***Աստուած***. տարօրինակ է քիչ մը այս բառը այդ տողին մէջ: Յաւանական է, որ (գիշեր) մէջ գրուած

այդ քերթուածը սկզբնական մեկնում ունի (պատուհան) տեսնուած աստղակառոյց երկինքը. այնպէս որ *աստուած* բառին կէսը՝ *աստ*, գրեթէ մարմինն է *աստղ* բառին, որոնց, ինչպէս նաեւ *արեւին* (ամբողջ քերթուածը մսող, առողջ (մարմին) պաղատանքն է դէպի արեւը) *մնաք բարով* մը հասկնալի է: Թերեւս բանաստեղծը մտածած ըլլայ աստղերուն եւ գրած ըլլայ *աստուած* բառը, որ նոյնքան հզօր իրականութիւն մըն է այդ (պահ) անոր մտքին վերեւ տիրական: (Պատահիլ) այս վիճակը, իր մտածումին ճիշդ հակառակը գրելու, ծանր տագնապներու մէջ տառապող մտքին համար: Եթէ ներուի (մենք) կարդալ այդ տողը «է՜, *մնաք բարով աստղեր եւ արեւ*», այս անբնականութիւնը ինքնին լուծուած (ըլլալ), քանի որ յաջորդ տողին տիրական բառը՝ *պլպլալը*, (աստղ) լոյսը յատկանշող բացատրութիւն մըն է: Եթէ նկատի առնենք երրորդ տողին մէջ *աստղ մ՚ալ* յաւելումը, վերի ենթադրութիւնը (թուիլ) աւելի քան հաւանական: Այսպէսով (լուծուիլ) հակասութիւնը, որ կայ Աստուծոյ ուղղուած *մնաս բարով*ին մէջ: Մարդ *մնաս բարով* (ըսել) անո՛ր՝ (որ) քովը (երթալ): Անշուշտ այս բացատրութիւնը (մենք) համարձակութիւն (տալ) սրբագրել բանաստեղծին բառը: (Յակոբ Օշական)

ե) **Յրանդ Ասատուր**: Յրապարակագիր եւ ուսուցիչ: (Վարել) հանդէսներ: Իր գրական գործունէութիւնը, հակառակ սեղմ (ինք) ծաւալին, վաւերագրական արժէք ունի: Մեր գրողներու (կեանք) իր դրուագումները այդ (տեսակէտ) առաջին կարգի աշխատութիւններ են: Իր (դասագիրք)՝ իր կնոջ՝ Սիպիլի հետ աշխատուած, նպաստած են արդի աշխարհաբարին:

**Լեւոն Բաշալեան**: Խմբագիր եւ վիպասան: Գրական լուրջ (շարժում) մը ստեղծիչներէն ու (տարածել): Արփիար Արփիարեանի հետ աշխատած է (մենք) ռոմանթիք գրականութեան մէջ մտցնել իրապաշտ շունչը: Խմբագրի իր գործունէութիւնը նոյնպէս (ըլլալ) իրապաշտական, այսինքն՝ օգտապաշտ: Իրապաշտ սերունդը՝ մեր նոր գրականութեան ամէնէն պատկառելի անունները (համրել) իր մէջ: Ու Բաշալեան արժանաւոր իր տեղը ունի (խումբ) մէջ: (Յակոբ Օշական)

զ) **Արշակ Չօպանեան**: Արեւմտահայ գրագէտ եւ քննադատ: Գրել (սկսիլ) շատ կանուխ, դպրոցի (սեղան), փորձելով քիչ մը ամէն բան — բանաստեղծութիւն, երգիծանք, վէպ, թատերգութիւն, գրական քննադատութիւն, հրապարակագրութիւն եւ այլն: Թարգմանած է (ֆրանսերէն) հայ հեղինակներէ եւ աշուղներէ ընտրուած էջեր: Այդ (ուղղութիւն) իր աշխատանքը ունի քաղաքական մտահոգութիւններ: Բազմաթիւ են (ինք) հրատարակութիւններն ու վարած հանդէսները: Չօպանեանի արձակը նոր է եւ գունաւոր: Լեզուն դասական: Արեւմտեան գրականութիւնները մեզի (ծանօթացնել) իր աշխատանքը եւ իր հաւատաւոր ոգին (չինել) անոր համբաւը: (Յակոբ Օշական)

է) (Ընդունիլ) սիրով, մեծազօր Աստուա՛ծ,
(Աղաչանք) դառնացած (սիրտ),
(Ամօթահար) (մօտենալ) մեծիդ (բարեգթութիւն),
(Փարատել) խպառ, ամենապարգեւ,
Տխրութիւնն (ես) այս նշաւակելի,
Այս անտանելի ծանրութիւնները
(Վերցնել), թօթափէ՛ (ես), ողորմա՛ծ,
Աւարի (մատնել), մշտապէս (յաղթել),
Յրապոյրները մոլորապատիր: (Գրիգոր Նարեկացի)

**65. Դուրս գրել այն ձեւերը, որոնք արեւմտահայերէնում ունեն քերականական համանուններ, բացատրել՝ համեմատելով արեւելահայերէնի հետ.**

ա) Յարցում, մօտեցնելու, օրերս, խաղեր, նկարել, սպասում, ջարդեր, ջուրեր, գրեր, գրէ:

բ) Գործում, խոստացել, կարեր, վարձէր, երգեր, սրեր, խաղայ, այրի, չ՚երթար, ձեւեր:

գ) Ձերթար, չ՚ըներ, կերեր, կարդա՛, չըսէր, փորձում, այրի, շահի, պաղեր, երգէք:

**66. Մատթեոս Զարիֆյանի «Արհամարհանք» բանաստեղծությունից (Բնագրեր՝ էջ 134) դուրս գրել բայերը, վերլուծել ձեւաբանորեն:**

**67. Համաստեղի «Տափան Մարգար» պատմվածքից (Բնագրեր՝ էջ 155) դուրս գրել միայն արևմտահայերենին հատուկ մակբայները, կապերը, շաղկապները:**

**68. Ընդգծել ճիշտ տարբերակը.**

(Մեզի, մեզ) նկատմամբ, (քեզ, քեզի) համար, (իրար, իրարու) մասին, երկու օր (ետք, ետքը), (մեզի, մեզ) հանդէպ, (իրար, իրարու) նկատմամբ, (ձեր, ձեզի) փոխարէն, (իր, իրեն) մասին, (մեզի, մեզ) չափ, (մեզմէ, մեզի) առաջ, (իրար, իրարու) հետ, (ձեր, ձեզի) չափ, (մեզ, մեզի) վերաբերեալ, բացի (մեզի, մեզմէ), ի վնաս (քեզի, քեզ), ի հեճուկս (ձեզ, ձեզի):

**69. Երվանդ Օտյանի «Ընկեր Փանջունի» վիպակի բերված հատվածից (Բնագրեր՝ էջ 89) դուրս գրել միայն արևմտահայերենին հատուկ վերաբերականներն ու ձայնարկությունները:**

**70. Ընդգծել միայն կամ գերազանցապես արևմտահայերենում գործածվող մակբայները, շաղկապները, վերաբերականներն ու ձայնարկությունները.**

Շատոնց, մոտ, վրայ (մասին), նման, զերդ, ետք, վասնզի, մէկէն, հեշտ, դիւրաւ, աղէկ, զաղտ, համար, աւտեն, առաջ, ո՜հ, դէմ, միջոցաւ, վեր, խօսք է, վար, հոն, արդարեւ, այլուր, արդեօք, շատոնց, կանուխ, քա՜, գաղտուկ, ընթացքին, ալ, ուստի:

**71. Արտագրել տրված մակբայները, կապերը, շաղկապները, վերաբերականներն ու ձայնարկությունները՝ դրանց դիմաց գրելով տարբերակներ, որոնք գործածվում են միայն արևմտահայերենում.**

ա) Առայժմ, ծածուկ, լավ, այժմվանից, այլևս, նախապես // սկզբից, հետո (>կապ), այս կողմ, առավոտյան, ժամանակով, ժամանակ առ ժամանակ, միանգամից:

բ) Կողք կողքի, շուտ, փոքրուց, օրերից մի օր, վաղուց ի վեր, մի անգամ, սկզբում, ընթացքում, դեպքում // պարագայում, մոտ, ժամանակ, հետո:

գ) Մի կողմ, կամաց, նորից, առջևից, վաղուց, էլ, իրոք, երանի՜ թե, ափսոս, վա՜խ, այն կողմ, պատճառով:

**72. Լրացնել շարադրանքը՝ տեղադրելով համապատասխան շաղկապը.**

Պէտք է … հնազանդած ըլլայ մարդ … արժանի ըլլայ հրամայելու: Դանդա՛ղ եղիր խրատ առնելու մէջ, … փութկոտ՝ գործադրելու մէջ: Արդարութեան անիւը … յամր կը դառնայ … մանր կ՚աղայ: Կեանքը ո՛չ տօնի օր մըն է, … սուգի, … աշխատութեան օր մըն է: Լաւ է լողալ ծովու … պարտքի մէջ, բայց զգուշացէ՛ք խեղդուելէ … մէկուն, … միւսին մէջ: Հին բարեկամները հին հագուստներու պէս են. հաճելի են, … մեր ծալքերուն ձեւն առած են: Մահամերձն ուրիշ բան չ՚ուզեր … լացող մը իր վրայ: Պարտիս միշտ գործել … աշխատիլ, … կը ժանգոտիս … կը ժանգոտի չբանող երկաթը: (Տե՛ս Հ. Գազանճյան)

**73. Դուրս գրել միայն արևմտահայերենին բնորոշ մակբայները, կապերը, շաղկապները, վերաբերականները և ձայնարկությունները կամ դրանց՝ միայն արևմտահայերենին բնորոշ կիրառությունները.**

ա) Իմ մասիս խօսած էր այնպէս, ինչպէս ատենօք կը խօսէր Պետրոս Դուրեանի վրայ: Ահա թէ ինչու համար կը սիրեմ գիւղը: Ուրիշներու պէս մենք ալ մեր կրօնքը ու հաւատը թաղեցինք պատերազմի ընթացքին: Վասնզի անոնք շատոնց ա՛լ չեն խօսի՛ր, մեծ հայր: Մէյ մըն ալ նայեցայ, դիմացը դուք յանկարծ ուշադրութիւնս գրաւեցիք: Ի՞նչ բանի վրայ կ՚ուզէք որ խօսինք: Ծօ՛, ինչո՞ւ կոտրեցիր գաւաթը: Ո՜հ, ի՜նչ անուշ է վարդին բոյրը: Նաւաստիները քովնտի դուրս ելան փողոցէ մը: Բոլոր ուսանողները մէկդի կեցած էին եւ բանախօսը մտիկ կ՚ընէին: Ով գիտէ՝ իմ մասիս ինչե՛ր խորհեցաք: Սենեակին մէջտեղ դրուած է սեղան մը:

բ) Ընթրելէ ետք կամացուկ մը դուրս ելայ տունէն: Լեռներէն ասդին կայ պաղպաջուն գետակ մը: Անդին թիթեռնիկ մը կը թռչկոտէր լոյսին շուրջ ու կը վայելէր լոյսին ջերմութիւնը: Անխոհեմ կենդանի, եթէ քիչ մըն ալ լոյսին մօտենաս, թեւերդ պիտի այրին, ուստի պիտի մեռնիս: Ասանկ մարդիկ ալ կ'ըլլան. շատ անգամ ուրիշներուն խրատ կու տան, սակայն չեն տեսներ իրենց սխալները, այս ձեւով վնասելով թէ՛ իրենց, թէ՛ ուրիշները:

գ) Մեր կիրքերը կը նմանին մեր զաւակներուն. կը սիրենք եւ կը շոյենք զանոնք՝ երբ տղայ են, բայց երբոր մեծնան՝ կը նեղուինք անոնցմէ: Յարստութիւն ու երջանկութիւն մեզի կ'այցելեն կրիայի քայլերով ու մեզմէ ալ կը բաժնուին եղնիկի գնացքով: Ծերունին կը նմանի այն անձին որ ճաշելէ ետք՝ ուրիշներուն ճաշելը կը դիտէ: Վտանգին դէմ մի՛ երթար, բայց երբոր ներկայանայ ան, գիտցի՛ր կռուիլ անոր դէմ: Ճշմարտութիւնը միշտ կը յաղթանակէ. արդարեւ, ոչինչ կրնայ զայն ընկճել: (Տե՛ս Յ. Գազանճյան)



## ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

**74. Տրված նախադասություններում գտնել միայն արևմտահայերենին բնորոշ շարահյուսական կառույցները և նախադասության անդամների ձևավորման տարբերությունները արևելահայերենից. բացատրել՝ ինչով են պայմանավորված այդ տարբերությունները.**

ա) Սէրը անմահ է, ատելութիւն կը մեռնի ամէն վայրկեան:
Ինք արդէն չէր խորհեր իսկ վարդապետութեան մը վրայ:
Դուն այդ գործին մէջ ոչինչ ունիս կորսնցնելիք:
Ո՛չ մէկ կուսակցութիւն, ո՛չ մէկ տեսաբանութիւն կրցաւ գրաւել զինք:
Ահա այսպիսի խումբ մըն են կազմած սա մարդերը, որոնց ապահովաբար վերջին հաւաքոյթն է այսօրուանը:
Վահանը կանչուեցաւ տնօրէնէն:
Իմ ընկերս մեծ ակնածանքով անծանօթը բարեւեց:

բ) 1909ին տեղի կ'ունենայ Կիլիկիոյ ջարդը՝ յուսախաբ ընելով հայ եւ թուրք գործակցութեան եւ արդարութեան հաւատացող հայերը. թուրքը խորքին մէջ կը մնայ նոյնը:
Այնուհետեւ Թուրքիա կը ձեռնարկէ հայութեան զանգուածային տեղահանութեան ու կոտորածներուն:
Ոճային տարազներու փնտռտուքը այնքան առաջ կ'երթայ գեղապաշտ սերունդին մօտ, որ երբեմն կը վնասէ խորքին ու բովանդակութեան:
Եղբայրը յանդիմանուեցաւ Վարուժանէն:
Սիրվարդ ժամացոյց մը նուիրեց եղբօրը:

**75. Յակոբ Օշականի «Մատմազէլ Եւա» պատմվածքի բերված հատվածից (Բնագրեր՝ էջ 146) դուրս գրել արևմտահայերենին բնորոշ շարահյուսական իրակությունները, բացատրել տարբերությունները արևելահայերենից:**

76. Տրված նախադասությունները վերածել արևելահայերենի.

Վաղը՝ մէկ ու կէսին, հոն կ'ըլլամ:

Թիավարեցինք դէպի նաւը, որ խարիսխ նետած էր դէմի նաւամատոյցի երկայնքին:

Ըսէ՛ք անոր, որ ինքն ալ կրնայ մասնակցիլ մեր նախաձեռնութեան:

Ոչ ոք հասկցաւ՝ ինչու անիկա եկած էր մեր քով:

Թերեւս հոս է բանալին իր տաղանդին մեծութեան:

Ինչո՞ւ չէ շեշտուած դրամին դերը այս պատկերին մէջ:

Հերոսութիւնը կը հրապուրէ ժողովուրդները:

Անիկա աշխատած է մանուանդ ազգային գրականութեան ստեղծումին:

77. Շարահյուսական տրված կառույցները վերածել արևմտահայերենի.

Ամեն օր մտածում եմ քո մասին, Փարիզի իմ բարեկամների մասին:

Ոչ ոք իր չափ չէր զգացել հայրենի լեռների ու հողի հմայքը:

Ես ոչ մի տեղից նամակ չեմ ստանում այլևս:

Այստեղ՝ քսաներորդ դարում, ոչինչ չի փոխուել այդ կարգերից:

Յոյսը երջանկացնում է մարդկանց:

ՀՀ սփիւռքի նախարարը ընդունեց ՀԲԸՄ–ի պատուիրակութեանը:

78. Տրված նախադասությունները վերլուծել շարահյուսորեն:

ա) Պայրըն հայերէն սորված է Մխիթարեաններէն:

բ) Մի՞թէ մարդու մը լաւ կամ գոռալ պէտք է՝ բարձրաձայն իր զգացածը յայտնելու համար:

գ) Կ'ապրինք այդ երկրին մէջ, բայց կ'երազենք մեր հայրենիքը:

դ) Եղնիկը պիտի չսպաննուէր որսորդէն:

ե) Յաջողած ես, եթէ ծոյլ չես:

զ) Եթէ սիրես ընտանիքդ, եթէ ծառայես հայրենիքին, կը վարձատրուիս պատիւով:



# ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ
## ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻՑ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻՑ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆ

79. Փոխադրել արևելահայերենի.

ա) Աւելի քան երկուքուկէս դարու կեանք ունի հայոց նոր գրականութիւնը: Անիկա 1850էն ետք կը տարբերի հինէն լեզուով, որ ներկայ գրական աշխարհաբարն է, եւ ձգտումով, որ ժողովրդական է՝ ըլլալով մօտ ժողովուրդին, արտադրուած անոր ծոցէն ելած գրագէտներով:

Գաղութները՝ ենթակայ ուծացումի, ապապարէզ կը կազմեն գրական արտադրութիւններու:

Վենետիկ **Մխիթարեան Միաբանութեան** վերջնական կայանը կ'ըլլայ 1717ին Ս. Ղազար կղզին՝ շնորհուած Վենետիկեան հասարակութենէն, կը դառնայ կեդրոնը հայ մշակոյթի:

Ղեւոնդ Ալիշանի հմայքին տակ են իրմէ ետք եկող կարգ մը արեւմտահայ եւ արեւելահայ բանաստեղծներ:

Հ. Թումանեան գրական գործունէութիւնը կանուխէն սկսած է: Սիրուած ժողովրդական դէմք մ'էր, զուարթ՝ ընկերութեան մէջ, բուռն հայրենասէր, տարուած իր ազգին ցաւերով ու միշտ հնարամիտ՝ խորհելու անոր ազատութեան միջոցներու վրայ:

բ) **Մկրտիչ Խրիմեան**: Մեր մեծ կաթողիկոսներէն մէկը: ժողովրդական դէմք: Սովոր են զինքը կոչել *Հայոց Հայրիկ*: Կը մտնէ եկեղեցական ասպարէզ կնոջը մահէն ետք: Գործունեայ ու խանդավառ, կ'աշխատի լուսաւորել գաւառի հայութեան կեդրոնը՝ Վանը՝ հիմնելով հոն տպարան, թերթ, դպրոց: Կը գործէ նոյն ոգիով Տարօնի մէջ: Պոլիս կ'ընտրուի պատրիարք: Յետոյ կը հրաժարի: Քաղաքական պատճառներ Երուսաղէմ կ'աքսորեն զինքը, ուրկէ կ'երթայ Էջմիածին՝ իբր կաթողիկոս: Խրիմեան ունեցած է նաեւ գրական օգտաւէտ աշխատանք: Հրատարակած է հանդէսներ, գիրքեր: Իր ոճը եղած է պարզ, ժողովրդական, ինքնատիպ: (Յակոբ Օշական)

գ) **Մկրտիչ Պէշիկթաշլեան**: ԺԹ դարու մեր մեծ քնարերգակներէն մէկը: Վենետիկի մէջ ստանալով իր ուսումը, դարձած է Պոլիս ու նուիրուած վերազարթումի գործին: Գրած է քերթուածներ, թատրերգութիւններ, ճառեր եւ այլն: Պէշիկթաշլեան իր վրայ կը միացնէ գրողի եւ գործիչի կրկին հանգամանքները: Հայ կաթոլիկ եւ լուսաւորչական հատուածներուն միջեւ աշխատած է միութեան կապ մը ըլլալ: Իր ոտանաւորներէն ոմանք (լաւագոյնները գրաբար) ունին դասական յղկում, ժուժկալ ու ազնուազգի ներշնչում, անկեղծութիւն եւ ջերմութիւն. կարեւոր թիւ մը իր աշխարհաբար քերթուածներէն երգուած են այդ շրջաններուն: Պէշիկթաշլեան ամէնէն շատ ուսումնասիրուած դէմքն է մեր բանաստեղծներէն: (Յակոբ Օշական)

դ) **Պետրոս Դուրեան**: Արեւմտահայ բանաստեղծութեան ամէնէն տաղանդաւոր բանաստեղծներէն մէկը: Երգած է ցաւը, երիտասարդութիւնը, սէրը, հայրենիքը: Գրած է նաեւ թատրերգութիւններ, գրեթէ բոլորն ալ զգայնական շունչով: Դուրեանի մէջ կը տիրապետէ հզօր քնարականութիւն մը, որուն արտայայտութեան կը ծառայէ իր անհաւասար, բուռն, սակայն կենսագործող արուեստը: Ինքն է որ արդի լեզուին առաջին անկեղծ ոտանաւորները գտեց: Իր նամակները խորունկ յուզումի, արուեստագէտ զգայնութեան, գիտաւոր բացատրութեան գլուխգործոցներ են: Անկէ կը սկսի մեր նոր քնարերգութիւնը: (Յակոբ Օշական)

**80. Յակոբ Պարոնյանի «Իմ ձեռատետրս» գրության «2 հունիս», «7 հունիս» և «2 հոկտեմբեր» հատվածները (Բնագրեր՝ էջ 69) փոխադրել արևելահայերենի:**

**81. Պետրոս Դուրյանի «Թրքուհին» բանաստեղծությունը (Բնագրեր՝ էջ 65) փոխադրել արևելահայերենի:**

**82. Փոխադրել արևմտահայերենի.**

ա) Մեծապես զոհ եմ ձեզ հետ ծանոթանալուս համար: Փոքր քույրս շատ է վախենում փողոցի շներից: Անռան ամիսներին բուն ունում է ավելի քան հազար դաշտային մուկ: Երջանիկ օրերը հաջորդում են իրար: Մայրս շուկայից երկու կիլոգրամ բանան էր գնել: Պարտեզում՝ ծառի մոտ, հավաքված էին գյուղացիները: Նույն օրը՝ առավոտյան, մենք մի պտույտ կատարեցինք մեր սիրած վայրում. այդ Պոլսի Սկյուտարի գերեզմանատունն էր: Եթե մեր զավակներին չենք կարող հայերեն սովորեցնել, հանցավորը մենք ենք: Սփյուռքի հայ համայնքներում սովորաբար ծնողները և երեխաները հայերեն են խոսում, բայց երեխան դպրոց է գնում թե չէ, սկսում է խոսել տեղական լեզվով:

բ) Գույների նրբությամբ, ինչպես նաև արտահայտության կենդանությամբ մեր մի շարք ավետարանների մանրանկարներն ու զարդագրերը հայ հոգու խորունկ զգայնությունն են հայտնաբերում և փաստում, թե մանրանկարչության հայ ոճը հաջողել է ինքնուրույն մի արվեստ ստեղծել մանավանդ 13–րդ և 14–րդ դարերում Կիլիկիայում: Ծաղկող և նկարազարդող տաղանդավոր նկարիչներ են եղել Թորոս Ռոսլինը, Սարգիս Պիծակը և ուրիշներ:

գ) 18 տարեկանում Հ. Թումանյանը, դպրոցից հեռանալով, դառնում է Թիֆլիսի հայոց առաջնորդարանի քարտուղարը, բայց մի որոշ ժամանակ հետո եկեղեցականների մասին գրած իր երգիծական մի ոտանավորը պատճառ է լինում, որ այդ պաշտոնից հեռացվի:

Ա. Իսահակյանը գրականությանը նվիրվել է փոքր տարիքից: 17 տարեկանում լույս է ընծայել իր առաջին քերթվածը: Ինը տարի հետո, այսինքն՝ 26 տարեկանում, նա իր բանաստեղծությունները հավաքեց մի հատորում և հրատարակեց «Երգեր ու վերքեր» անունով: Այս հատորով նա ճանաչվեց իբրև տաղանդավոր բանաստեղծ:

դ)

1. Քո կյանքի ժամերն ապրի՛ր այնպես, որ այդ քաղցր ժամերին ո՛չ քեզ, ո՛չ էլ կողքիդ ապրողներին չդիպչեն ապականությունն ու մահը: Ամենուր փնտրի՛ր բարին ու հայտնաբերելուն պես իր թաքստոցից հանի՛ր լույս աշխարհ, թող բարությունը լինի անկաշկանդ ու չամաչի ինքն իրենից: Աչքի լույսի պես պահի՛ր, փայփայի՛ր մարդկայնության ամենաչնչին նշույլներն անգամ, քանի որ դա է, որ ընդդիմանում է մահվանը, թե՛ անցավոր է: Ամեն բանի մեջ գտի՛ր լուսավորը, այն, ինչ չի կարող արատավորվել: Եթե մեկնումեկի սրտում առաքինությունը պահ է մտել ահով ու կսկիծով՝ արար աշխարհի ծաղր ու ծանակից մազապուրծ եղած, քաջալերի՛ր նրան: Մի՛ խաբվիր արտաքին տպավորությամբ,

քանզի դա վայել չէ պայծառատես աչք ու բարի սիրտ ունեցողին: (Վիլյամ Սարոյան)

2. Ոչ մեկին մի՛ ենթարկվիր, բայց ոչ մեկին էլ քեզ մի՛ ենթարկիր: Հիշի՛ր, որ ամեն մարդ քո նմանակն է: Ամեն մեկի մեղքը նաև քո մեղքն է, և բոլոր անմեղներն իրենց անմեղությունը կիսում են քեզ հետ: Արհամարհի՛ր չարիքն ու անազնվությունը, բայց ոչ չար ու անազնիվ մարդկանց. հասկացի՛ր այս: Մի՛ ամաչիր բարի ու քնքուշ լինելուց, բայց հենց որ քո կյանքի որևէ ժամի վրա հասնի սպանություն գործելու պահը, գործի՛ր այդ սպանությունն ու մի՛ զղջա: Կյանքիդ ժամերն այնպես ապրիր, որ քեզ բաժին ընկած ժամերին չավելացնես աշխարհի վիշտն ու տառապանքը, այլ ժպիտով ընդունես նրա անսահման լույսն ու խորհուրդը: (Վիլյամ Սարոյան)

3. Իմ տատը Ամերիկայում էլ Բիբլիսում էր ապրում: Նա առանձին աստված ուներ, կրոն չգիտեր, նրա աստվածը ուրիշ էր, նա ամենից շատ մարդու խելքին ու գութին էր հավատում ու չէր վհատվում ու չէր հուսահատվում:

Մայրս պատմում էր. մի օր տունը ո՛չ ալյուր կար, ո՛չ բրինձ, ո՛չ յուղ: Վաթսունհինգ սենթ դրամ կար: Հայրս վերցնում է այդ դրամը, գնում է, որ մի քիչ ալյուր, մի քիչ բրինձ, մի քիչ յուղ բերի: Գնում է, երեկո է լինում, գալիս է տուն. ո՛չ ալյուր է բերել, ո՛չ բրինձ, ո՛չ յուղ…

— Ի՞նչ արիր դրամը,— հարցնում է մայրս:

— Մի մարդ տեսա,— ասում է,— ձեռքը պարզել էր ինձ, տվեցի նրան:

— Է՜, վեց սենթ տայիր, տասը սենթ տայիր, տասնվեց սենթ տայիր, ինչո՞ւ բոլորը տվեցիր…

— Ինչ գիտեմ, բոլորը տվեցի:

— Հոգ մի՛ արեք,— ասում մայրս,— տանը մը քիչ ալյուր, մը քիչ բրինձ, մը քիչ յուղ կգտնեմ: (Վիլյամ Սարոյան)

4. Եղավ, որ գժվեցի… Պատերազմի ժամանակ էր: Երեսուներեք օրից «Վեսլի Ջեկսոնի արկածները» գրեցի ու գժվեցի: 72 ժամ գիժ եղա, խենթություն եկավ վրաս… Մարդ չիմացավ: Ես ու իմ աստվածը կռվեցինք, կռվեցինք, ու ես հաղթեցի… Ոչ, իմ աստվածը հաղթեց, իմ աստվածն ես եմ: Ամենամեծ խայտառակությունը, ամենամեծ չարիքը պատերազմն է… Այդ ինչ խայտառակություն արին, ժողովրդին ջնջեցին: Սա-



սափել էի աշխարհի դեմ: Պատերազմից հետո մի տարի մի տող իսկ չկարողացա գրել: Հետո այդ գժությունը, այդ մելամաղձոտությունը օգտակար եղավ ինձ, շատ բան հասկացա… (Վիլյամ Սարոյան)

ե) …Ցրի՛ր, վերնայի՛ն, գայթակղության մառախուղն անհետ.
Խափանի՛ր, Փրկի՛չ, հարձակումները կորուստ նյութողի,
Ջնջի՛ր, ծածկատե՛ս, որոգայթներն այն նենգ ու պատրական.
Խոյացումներն այս՝ խռովարարի, խորտակի՛ր, հզո՛ր:
Կնքի՛ր անունովդ լուսնացույցն հարկիս,
Պարփակի՛ր ձեռքովդ առաստաղն իմ տան,
Օծի՛ր քո արյամբ մուտքն իմ սենյակի,
Սուրբ նշանը քո դրոշմի՛ր անուր
Մաղթողիս բոլոր ճամփեքի վրա:
Աջովդ ամրացրո՛ւ խշտիկս հանգստյան.
Կամքովդ պահպանի՛ր հոգիս տառապյալ.
Եվ մարմնիս շունչը, քեզնից շնորհված, անարատ պահի՛ր
Սուրբ Աստվածածնիդ և ընտրյալների բարեխոսությամբ՝
Շնորհի՛ր նիրհիս այս մահահանգույն
Խորին գիշերվա մեջ բերկրալի հանգիստ: (Գրիգոր Նարեկացի)

զ) Նայադների՜ նման, նայադների՜ նման,—
Կարոտներիս կանչով կանչում ես ինձ,
Եվ կանչելու ես ինձ, քանի կյանքում դեռ կամ՝
Խոստանալով ինձ սեր, տալով կսկիծ… (Եղիշե Չարենց)

է)
1. Տնեցիների պառկելուց հետո քաշվում էի մեր տան վերի հարկը՝ իմ սենյակը, և սպիրտի լամպի վրա մի գավաթ սուրճ պատրաստելուց ու մեծ հաճույքով խմելուց հետո ավելի մեծ հաճույքով բացում էի տետրակս՝ նախորդ գիշեր ընդհատված տեղից գրությունս շարունակելու: Ինչպես կեսգիշերին սուրճ եփելն ու խմելը, այնպես էլ կեսգիշերին վեպ գրելու նստելը բոլորովին անսպասելի և իր նախորդը չունեցող երևույթ էր ինձ համար: Եվ բոլորովին էլ ինքնիրեն սկսվեց: Նախ կարծեմ պարզ ժամանցի համար, իբրև խաղ, իբրև կատակ, գրի առնված մեկ–երկու էջեր էին առևտրական մի հաստ տետրակի մեջ, որի առաջին թերթերի վրա հնացած հաշիվներ կային: Ես նախ կարծում էի, որ հաջորդ գիշերը

կամ ամենից շատը երկու գիշեր հետո գրելիքս լրացած էր լինելու արդեն: (Լևոն Շանթ)

2. Վերջում էլ, երբ երկու շաբաթը լրացել էր և խոշոր ու հաստ տետրակի մի մեծ մասը լցված էր գրությամբ, սկսեցի քիչ–քիչ ըմբռնել, որ ինչ ուզում է լինի, այլևս այդ նշանավոր տետրակը չէր կարելի կիսատ թողնել: Հասկացա, որ այս «գրել» ասածս էլ իսկապես օդի, սիգար կամ օփիում քաշելու պես մի փործանք էր, գիշերային ծածուկ մի մոլություն, որ չգիտեմ որտեղից էր եկել վրաս: Արդյոք Երևանի՞ց հետս բերեցի կովկասյան վարակումով, թե՞ այդ ծածուկ հիվանդության մանրէները դեռ մանկությունիցս էի ծծել Պոլիս Մոդա–Բուռնուի օդի հետ մեր տան ծովահայաց լուսամուտներից: (Լևոն Շանթ)

ը) Դարերի ընթացքում հայերի, ինչպես և այլ ժողովուրդների արտագաղթը հայրենիքից պայմանավորված է եղել երեք հիմնական գործոններով՝ տնտեսական, կրոնական և քաղաքական, որոնք ինքնուրույն պետականության բացակայության պայմանների պատճառով մշտապես ուղեկցվել են օտար իշխանությունների կողմից իրականացվող հալածանքներով: Սփյուռքի բոլոր համայնքներում գործող ազգային հաստատությունների շարքում հատկապես կարևորվում է Հայ առաքելական եկեղեցու դերը, որի հետևորդն է սփյուռքահայերի գերակշիռ մեծամասնությունը: Հայ սփյուռքում տակավին չեն ստեղծվել ընտրովի ներկայացուցչական մարմիններ, որոնք իրավասու լինեին հանդես գալու ամբողջ սփյուռքահայության, տվյալ երկրի կամ նույնիսկ տվյալ քաղաքի հայության անունից:

թ) Հայերը Կանադայում սկսել են բնակություն հաստատել 19–րդ դարի 80–ական թվականներից: Հայտնի է առաջին հայ ներգաղթողի անունը՝ Կարապետ Ներկարարյան, որը 1887–ին հաստատվել է Օնթարիո նահանգի Փորթ Հոփ գյուղաքաղաքում: Ներկայումս Կանադայում բնակվում է շուրջ 60–65 հազար հայ: Նրանք կենտրոնացած են Մոնքրեալ և Տորոնտո քաղաքներում: Այժմ այստեղ գործում են ամենօրյա վեց հայկական վարժարաններ: Հայ գաղութը համախմբող եկեղեցական կառույցները սկսել են կազմակերպվել 1940–50–ականներից: Հայ համայնքների կազմակերպման առաջին օրերից հիմնվել են ազգային քաղաքական կուսակցությունների (ՍԴՀԿ, ՀՅԴ) տարբեր կոմիտեներ,



խմբեր, հայրենակցական, բարեգործական, մշակութային կազմակերպություններ:

ժ)

1. ՀՀ մշակույթի նախարարությունը, Արմենական–Ռամկավար ազատական կուսակցությունն ու Թեքեյան մշակութային միությունը միասնաբար կազմակերպել էին համերգ Մեծ եղեռնի զոհերի հիշատակին: Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ և «Հովեր» կամերային երգչախմբերի կատարմամբ Մոցարտի «Ռեքվիեմ» ստեղծագործությունը հնչեց ապրիլի 23–ի գիշերը հայոց ցեղասպանության նահատակների հիշատակի համար:

ՄԱԿ–ի զարգացման ծրագրի տարեկան զեկույցն այս անգամ վերաբերում էր գաղթին: 1991–ից ցայսօր Հայաստանից արտագաղթել է 700 հազարից մինչև 1 միլիոն 300 հազար մարդ, մասնավորաբար՝ քաղաքային բնակավայրերից: Գործոն տարրի հեռանալն ի հայտ է բերել և արմատավորել է քաղաքական, տնտեսական և սոցիալական բնույթի մի շարք բացասական երևույթներ: Միաժամանակ նշվում է նաև, որ արտասահմանում աշխատողների՝ իրենց ընտանիքներին ուղարկած դրամական միջոցները դրական ազդեցություն են ունեցել սոցիալական, կրթական և այլ խնդիրներ լուծելու համար: (Մամուլ)

2. *Թուրքիա–Հայաստան օդային կապերը խզելու կոչ.* Լրատվական գործակալությունները հաղորդում են, թե ադրբեջանցի պատգամավոր Հասան Գյուլիևը պահանջել է, որ Անկարան ավելի խիստ միջոցներ գործադրի Հայաստանի դեմ: Պատգամավորի ասածների համաձայն՝ Թուրքիան պետք է անմիջապես փակի Թուրքիա–Հայաստան միջև օդային գիծը. նաև այն թուրք առևտրականները, որոնք Ադրբեջանում են աշխատում, և որոնք Հայաստանի հետ նույնպես գործ են անում, պետք է պատժվեն: Նա նաև անդրադարձել է Թուրքիա–Հայաստան արձանագրությունները սառեցնելու մասին Հայաստանի նախագահի որոշմանը՝ ասելով, որ այդ որոշման նպատակն էր Միացյալ Նահանգների նախագահ Բարաք Օբամային պարտադրել, որ «ցեղասպանություն» բառը արտասանի, սակայն այդ փորձը ևս չի հաջողել: (Մամուլ)

3. *Վետերանները պարգևատրվեցին «Հոբելյանական» մեդալներով.* Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 65–ամյա հոբելյանի առի-

թով մայիսի 6–ին Հայաստանում Ռուսաստանի արտակարգ և լիազոր դեսպան Վյաչեսլավ Կովալենկոն Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդևի հրամանով պատերազմի մասնակից 23 հայ վետերանների պարգևատրել է «Հոբելյանական» շքանշանով: «Խորհրդային զինվորը 65 տարի առաջ տարավ մեծ հաղթանակ, որ խաղաղություն բերեց ոչ միայն Խորհրդային Միության, այլ նաև ողջ Եվրոպային. մենք միշտ հիշում ենք ձեզ և ձեր հաղթանակը: Այն միշտ կմնա բոլորիս սրտերի և պատմության մեջ»,— հայտնել է Ռուսաստանի դեսպանը՝ խոսքը ուղղելով հայ վետերաններին: Ըստ նրա՝ հիտլերյան Գերմանիայի դեմ հաղթանակը կերտվել է շնորհիվ ԽՍՀՄ 15 պետությունների ժողովուրդների արյան, որոնց մեջ նաև հարյուր հազարավոր հայ զինվորների: (Մամուլ)

ժա) **ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԸ**

Ի՞նչ գեղեցիկ է, ինչքան ճկուն է պոլսահայերէնը (Արեւմտահայերէնը):

Թեթեւ է, վերասլաց, ջութակի սուր ձայների նման թրթռուն, գեղեցիկ կնոջ ոսկեթել հիւսուած շղարշ, որի վրայ լուսինը թիթեռնիկներ է բանտարկել: Ածականները թիավարուող նաւակների նման առաջ են սահում, մինչ բայերը, գրեթէ անշարժ, գեղեցիկ ափից հեռացող տեսարաններ են դիտում:

Նախադասութիւնը նուագաւոր է եւ ներդաշնակ: Նապոլիտեան երգի նման նա շունչ է առնում շրթունքների ծայրին, ոլորւում բերնի մէջ, պտտւում կոկորդի մօտ, շոյում առաստաղը եւ դուրս գալիս՝ ինչպէս թեթեւ հառաչանք:

Կերպընկալ է եւ հոսուն:

Ռազմական ոչ մի շեշտ կայ: Օրգանական ոչ մի միութիւն, ոչ լոյս, այլ լոյսի խաղ, ոչ ծով, այլ կոհակների ծփծփանք: Այստեղ բառը, ինչպէս արարատեան լեզուի մէջ (Արեւելահայերէն), չի կառչում մտքին սուր ակռաներով, գաղափարի ուսերի տակ տնկուած փայտ չէ, այլ թեթեւօրէն թեւարկող նշան, բոցի վրայ սլացող անտեսանելի ծուխ:

Կիլիկեան թագուհիների հագած Վենետիկեան թեթեւ կերպասների նման, բառերը մեղմօրէն սեղմում են ներդաշնակ մարմինը եւ երկար ծալքերով վայր ընկնում գետին: Խաղում են անցնող հովի շնչի տակ, փայլփլում ջահերի անհանգիստ բոցերում, շոյում պալատի զարդերը, ծփում Արեւմուտքից եկած ասպետների արծաթէ սաղաւարտների վրայ:



Պոլսահայ լեզուն քաղցր է: Նա պտուղ չէ, մրգերի բնական, հիւթեղ եւ անմիջական համը չունի: Երկարօրէն, բարակ ու նուրբ մատներով պատրաստուած անուշ է, որի համեմները հեռաւոր երկրներից են գալիս: Մատուցում են ոսկեզօծուած պնակների մէջ, փղոսկրէ դգալով, ու չգիտես՝ ուտե՞ս, թէ՞ նայես:

Բառը հնչում է, սիրուն ժպիտով կանգ առնում եւ, լաւագոյն պարուհիների նման, ոտքի մատների վրայ պտոյտ գալիս, նորից պտոյտ գալիս եւ բարեւում: Ածականների երամը աննշմար կերպով ներս է մտնում ու բեմի ներքնախորը, արհեստական, գոյնզգոյն լոյսերի տակ հազար ձեւեր առնում:

Ջութակները թաւշեայ ճպոտների տակ հառաչում են, մինչ սրինգները մելանուշ երգեր են երգում: (Կոստան Զարյան)

## ԲՆԱԳՐԵՐ
### ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԵՒ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ


**ՆԱՀԱՊԵՏ ՌՈՒՍԻՆԵԱՆ**
Կիլիկիա .....57

**ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ**
Լուսնկայն գերեզմանաց հայոց (հատուած) .....58

**ՄԿՐՏԻՉ ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆ**
Գարուն .....60
Մահ քաջորդւոյն .....61

**ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ**
Լճակ .....63
Իմ մահը .....64
Թրքուհին .....65
Տրտունջք .....67

**ՅԱԿՈԲ ՊԱՐՈՆԵԱՆ**
Իմ ձեռատետրս .....69
Մեծապատիւ մուրացկաններ (հատուածներ) .....74

**ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ**
Ճիտին պարտքը .....80

**ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ**
Ա. Չօպանեան ինքը իր մասին .....87
Կովը .....88

**ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ**
Ընկեր Փանջունի (հատուած՝ «Կենսագրական նոթեր ընկեր Փանջունիի մասին») .....89

Ողջո՜յն ձեզ .....96

**ՍԻՊԻԼ**
Անցնելու մօտ (հատուած) .....97

**ՍԻԱՄԱՆԹՕ**
Մահուան տեսիլք .....99
Ես երգելով կ'ուզեմ մեռնիլ .....100
Սուրբ Մեսրոպ («Գիտին փառքը»՝ հատուած) .....101

**ՄԻՍԱՔ ՄԵԾԱՐԵՆՑ**
Ջմրան պարզ գիշեր .....105
Իրիկուան իղձ .....106
Կիրակմուտք .....107
Ըլլայի՜, ըլլայի՜ (Իրիկունը) .....107
Յիւղը .....109
Տո՜ւր ինծի, տէ՜ր... .....110
Իրիկունս .....112
Սիրերգ .....113
Աքասիաներու շուքին տակ .....113

**ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ**
Զանգակնե՜ր, զանգակնե՜ր .....115
Երթա՜լ .....117

**ՌՈՒԲԷՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ**
Ծովակին հարսը .....118

**ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ**
Կարմիր հողը .....120
Արմենուհին (հատուածներ) .....122
Հասուն արտ .....126
Հունձք կը ժողվեմ .....127
Կալերու գիշեր .....128
Անդաստան .....129

ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ
Տաղ հայերէն լեզուին ....131
Եկեղեցին հայկական ....131
Հաշուեյարդար ....132

ՄԱՏԹԵՈՍ ԶԱՐԻՖԵԱՆ
Որոշում ....134
Արիամարիանք ....134

ԼԵՒՈՆ ՇԱՆԹ
Հին աստուածներ (հատուածներ) ....136

ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆ
Մատմազէլ Եւա ....146

ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆ
Մանկութիւն չունեցող մարդիկ (հատուած «Եթէ տրուէր...») ....150

ՀԱՄԱՍՏԵՂ
Տափան Մարգար ....155

ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐ
Նահանջը առանց երգի (հատուածներ) ....161

ՌՈՊԷՐ ՀԱՏՏԷՃԵԱՆ
Ինչո՞ւ կը գրենք ....170
Առաջին բախտաւորութիւնը ....171



ՆԱՀԱՊԵՏ ՌՈՒՍԻՆԵԱՆ

## ԿԻԼԻԿԻԱ

Երբոր բացուին դռներն յուսոյ,
Եւ մեր երկրէն փախ տայ ձմեռ,
Չքնաղ երկիրն մեր Արմենիոյ
Երբոր փայլէ իւր քաղցրիկ օրեր,
Երբոր ծիծառն ի բոյն դառնայ,
Երբոր ծառերն հագնին տերեւ,
Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
Աշխարհ որ ինձ ետուր արեւ:

Տեսի դաշտերըն Սիւրիոյ,
Լեառն Լիբանան եւ իւր մայրեր,
Տեսի զերկիրն Իտալիոյ,
Վենետիկ եւ իւր կոնտոլներ.
Կղզի նման չիք մեր Կիպրեայ,
Եւ ոչ մէկ վայր է արդարեւ
Գեղեցիկ քան զիմ Կիլիկիա,
Աշխարհ որ ինձ ետուր արեւ:

Հասակ մը կայ մեր կենաց մէջ
Ուր ամենայն իղձ կ'աւարտի.
Հասակ մը ուր հոգին ի տենչ
Յիշատակաց իւր կարօտի.
Յորժամ քնարս իմ ցրտանայ,
Սիրոյն տալով վերջին բարեւ.
Երթամ ննջել յիմ Կիլիկիա,
Աշխարհ որ ինձ ետուր արեւ:

ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ

## ԼՈՒՍՆԿԱՅՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՑ ՀԱՅՈՑ

**(հատուած)**

Այ իմ լուսնեակ գեղեցիկ, աստուածավառ դու լապտեր,
Զոր առաջնորդ գիշերոյ դըրաւ յերկինս ինքըն Տէր.
Կոյր մըթութեան ա՛չք անփակ, սըրտիս այլ դու աչք կու տաս,
Երբ շողշողուն շըղթայով կախուած շարժիս յիմ վըրաս.
Քո թելն երկնից արծաթէն հիւսած, պատրոյգդ ալ ոսկի,
Ադամանդէ կայծակներ սփռես զաստղերըդ չորս դի.
Եղի մեղրի նըման կաթ մի յամանէդ յիս թափած
Կու խաղաղէ կըրքերս զինչ ալիք լըճիս հանդարտած:
Ո՜հ, ո՞նց պայծառ էիր դուն կենացդ երկրորդ գիշերին՝
Երբ նոր քաշուած Աստուծոյ ճախարակէն ընդ երկին,
Ո՜հ, ո՞նց փայլուն էր քո լոյսն՝ երբ առաջին այն անգամ
Գիշերազուարճ պըլպուլիկըն ձըգեց ձայն երկնահամ,
Շունչըն պայծառ քեզ նըման հովտէ հովիտ կու խաղայր.
Յեզիկ հովով թունդ ելած մաքուր առուակըն հեւայր.
Չըկար ականջ հողեղէն որ զայն լըսէր ու փառք տար.
Միայն հրեշտակք լսէին եւ շարժէին ըզքեզ վայր.
Եւ դուն լըռիկ չափեցիր զանամպ երկնից կէս բոլոր,
Ծով ու ցամքի վարագոյր բացիր, ներքեւ մտար խոր,
Երբ արեգակըն կու գար հրեղէն ոտօքն յօդս ի վազ,
Զարշալուսոյ ցօղ սփռէր եւ զառաւօտն հըրամազ…
Կացի՛ր արեւ, յետ կացի՛ր, մ'ելնե՛ր յերկինքըդ կապոյտ
Թող լուսնեկիդ ի ման գալ դեռ ի մէջ թուխ ամպերոյդ.
Կա՛ց, կա՛ց լուսնակ դու յառաջ, լեռնէ ի լեռ, սարէ սար
Մէջ ձորերուս խորերուս անցիր յուշիկ հաւասար.
Յետ քեզ ունիմ ես գանգատ, քեզ նահապետն ունի բան,
Սիրտըն երկուս է ճըղքած, եւ ցաւերն, ո՜հ, զանազան.
Պայծառ լուսնակ, մի՛ փախչիր թէ տրտմութեան լըսես ձայն,
Ցաւած սրտի մխիթարանք ես դու կանգնել յերկինք այն.



Ման գաս յերկիրն Եդեմայ, բայց ոչ ի հինն այն գիշեր
Երբ երջանիկ էր դեռ մարդ, լոկ սէր ու զկեանքն յիշէր.
Ճերմակ ճաճանչըդ յայնժամ տաք էր ջրերուն ու ծաղկանց,
Ուր որ կաթէր քո շաղիկ կենդանութիւն էր անանց…
Դարձիր նայէ՛ հիմ ի վայր, նայէ՛ ի փէշ սարերուս,
Նայէ ի տափ տաճարիս, եւ ի հողրանք գեղերուս…
Ա՜հ, գերեզմանքն են Յայոց, որ ոչ եւս են յաշխարհի.
Մաշած նըշխարք մեր հարանց՝ թաղուած ի խոր խաւարի:

ՄԿՐՏԻՉ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

## ԳԱՐՈՒՆ

Ո՜հ, ի՜նչ անուշ եւ ինչպէս զով
Առաւօտուց փչես, հովի՛կ,
Ծաղկանց վրայ գուրգուրալով
Եւ մազերուն կուսին փափկիկ,
Բայց չես, հովի՛կ, իմ հայրենեաց,
Գնա՛, անցի՛ր սրտէս ի բաց:

Ո՜հ, ի՜նչ աղու եւ սրտագին
Ծառոց մէջէն երգես, թռչնի՛կ,
Սիրոյ ժամերն ի յանտառին
Զմայլեցան ի քո ձայնիկ.
Բայց չես, թռչնի՛կ, իմ հայրենեաց,
Գնա՛, երգէ՛ սրտէս ի բաց:

Ո՜հ, ի՜նչ մրմունջ հանես, վտա՛կ,
Ականակիտ ու հանդարտիկ,
Քու հայելւոյդ մէջ անապակ
Նային զիրենք վարդն ու աղջիկ.
Բայց չես, վտա՛կ, իմ հայրենեաց,
Գնա՛, հոսէ՛ սրտէս ի բաց:

Թէպէտ թռչնիկն ու հովն հայոց
Աւերակաց շրջին վրայ,
Թէեւ պղտոր վտակն հայոց
Նոճիներու մէջ կը սողայ,
Նոքա հառաչք են հայրենեաց,
Նոքա չերթան սրտէս ի բաց:



## ՄԱՀ ՔԱՋՈՐԴՒՈՅՆ

Դու զո՞վ խնդրես, մա՛յր իմ անուշ.
Ե՛կ, մի՛ դողար, մօտեցի՛ր հոս,
Անլաց աչօք դիտէ՛ զորդիդ,
Ու իւր վէրքերն արիւնահոս.

Թրքաց մայրեր թող լան, ու դուն
Ուրախ լուրեր տա՛ր ի Զէյթուն:

Ինչպէս երբեմն օրրանիս մէջ
Կակուղ ձեռքով փայփայելով
Մանկիկ մարմնոյս հանգիստ տայիր
Իբրեւ հրեշտակ նըւագելով.

Զիս հանգչեցուր, ի հող, եւ դուն
Ուրախ լուրեր տա՛ր ի Զէյթուն:

«Նորէկ որդւոյս կենացն արեւ
Զեզի համար փայլի՛, հայե՛ր»:
Այսպէս յայնժամ դու կ՚երգէիր՝
Օրօրոցիս նըստեալ քովեր.

Անոնց համար շիջաւ, եւ դուն
Ուրախ լուրեր տա՛ր ի Զէյթուն:

Կարմիր կայլակք ցայտին վէրքէս,
Սակայն, մա՛յր իմ, նայէ՛ չորս դին,
Զարիւնըռուշտ թուրքերըն տես
Յազարներով փըռուած գետին.

Կերաւ զանոնք սուր մեր, ու դուն
Ուրախ լուրեր տա՛ր ի Զէյթուն:

Մըռընչեցին ինչպէս վիշապ
Ու մեր վըրայ յարձակեցան.

Ո՜վ հայրենիք, ի հուր, ի բոց
Քո համար մեր սիրտք վառեցան.

Կարմիր ներկան ծորք մեր, ու դուն
Ուրախ լուրեր տա՛ր ի Զէյթուն:



ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

## ԼՃԱԿ

Ինչո՞ւ ապշած ես, լըճա՛կ,
Ու չեն խայտար քու ալեակք,
Միթէ հայլւոյդ մէջ անձկաւ
Գեղուհի՞ մը նայեցաւ:

Եւ կամ միթէ կ'ըզմայլի՞ն
Ալեակդ երկնի կապոյտին,
Եւ այն ամպոց լուսափթիթ,
Որք նըմանին փըրփուրքիդ:

Մելամաղձոտ լճա՛կ իմ,
Քեզ հետ ըլլանք մըտերիմ,
Սիրեմ քեզի պէս ես ալ
Գրաւուիլ, լըռել ու խոկալ:

Ո՛րքան ունիս դու ալի՝
Ճակատս ա՛յնքան խոկ ունի,
Ո՛րքան ունիս դու փըրփուր,
Սիրտս ա՛յնքան խոց ունի բիւր:

Այլ եթէ զոգդ ալ թափին
Բոյլքն աստեղաց երկընքին,
Նըմանիլ չե՛ս կըրնար դուն
Յոգւոյս՝ որ է բոց անհուն:

Յոդ աստղերը չե՛ն մեռնիր,
Ծաղիկներն հոդ չե՛ն թոռմիր,
Ամպերը չե՛ն քըրջեր հոդ,
Երբ խաղաղ էք դու եւ օդ:

Լըճա՛կ, դո՛ւ ես թագուհիս,
Չի թ' հովէ մ'ալ խորշոմիս,
Դարձեալ խորքիդ մէջ խըռով
Չիս կը պահես դողդղալով:

Շատերը զիս մերժեցին,
«Քընար մ'ունի սուսկ» — ըսին.
Մին` «դողդոջ է, գոյն չունի» —
Միւսն ալ ըսաւ.— «կը մեռնի»:

Ոչ ոք ըսաւ.— «Հէ՛ք տըղայ,
Արդեօք ինչո՞ւ կը մըխայ,
Թերեւս ըլլայ գեղանի,
Թէ որ սիրեմ, չը մեռնի»:

Ոչ ոք ըսաւ` — «Սա տըղին
Պատռե՛նք սիրտը տըրտմագին.
Նայինք ինչե՞ր գրուած կան…»
— Հոն հրդեհ կայ, ո՛չ մատեան:

Հոն կայ մոխիր… յիշատակ…
Ալեակըդ յուզին թող, լըճա՛կ,
Չի քու խորքիդ մէջ անձկաւ
Յուսահատ մը նայեցաւ…

### ԻՄ ՄԱՀԸ

Եթէ տժգոյն մահու հրեշտակ
Անհուն ժպտով մ'իջնէ իմ դէմ,
Շոգիանամ ցաւքս ու հոգիս,
Գիտցէ՛ք որ դեռ կենդանի եմ:

Եթէ սընարըս իմ տկպար
Մոմ մը վըտիտ ու մահադէմ,



Ո՜հ, նըշուլէ ցուրտ ճառագայթ,
Գիտցէ՛ք որ դեռ կենդանի եմ:

Եթէ ճակտովս արտօսրազօծ
Չիս պատանի մէջ ցուրտ գերթ վէմ
Փաթթեն, դընեն սեւ դագաղը,
Գիտցէ՛ք որ դեռ կենդանի եմ:

Եթէ հնչէ տխուր կոչնակ,
Թըրթռուն ծիծաղն մահու դժխեմ,
Դագաղս առնէ իր յամր քայլ,
Գիտցէ՛ք որ դեռ կենդանի եմ:

Եթէ մարդիկն այն մահերգակ,
Որք սեւ ունին ու խոժոռ դէմ`
Համասըփռեն խունկն ու աղօթք,
Գիտցէ՛ք որ դեռ կենդանի եմ:

Եթ' յարդարեն իմ հողակոյտ,
Եւ հեծեծմամբ ու սըգալէն
Իմ սիրելիքը բաժնըւին,
Գիտցէ՛ք որ դեռ կենդանի եմ:

Իսկ աններշան եթէ մնայ
Երկրի մէկ խորշն հողակոյտն իմ,
Եւ յիշատակս ալ թառամի,
Ա՜հ, ա՛յն ատեն ես կը մեռնիմ:

### ԹՐՔՈՒՀԻՆ

Երեկոյ է. բոցավառ է հորիզոն,
Կառք մը կ'անցնի դագաղի պէս յամրընթաց,
Գեղուհի մը ընկողմանած տրոփէ հոն,
Վերջալոյսի աղջի՞կ մ'է սա, ո՛վ Աստուած.
Եթէ նայի,
Կ'ըսես.— «Հիմա կը մարի»:

Մեղրամոմէ անդրիանդի մ'է հանգոյն,
Ի՜նչ դալկահար... կարծես հաջաղը վառէ
Պատան մ'է նուրբ ներա վարդիցը տժգոյն.
Աստուած զնէ զոյգ մ'աչերովն կը վառէ.
Եթէ ժըպտի,
Կ'ըսես.— «Ո՜հ, հիմա կ'անցնի»:

Նայիլ կ'ուզէ, բայց աւելի կը նուաղի,
Սիրտը խունկի պէս կը մխա՜յ սիրավառ,
Նէ շողերու, բոյրերու է թագուհի,
Խոնջ թիթեռնիկ մ'որ կը խնդրէ ծաղկէ թառ.
Եթէ շարժի,
Կ'ըսես.— «Հի՜մա կը թռչի»:

Լանջն է յուզեալ Ովկէանի մը նման.
Կ'ուզէ, սիրել... համբոյրի մ' հետ նուաղիլ,
Մաշիլ, խամրիլ, խոնջած ընկնիլ գերեզման,
Քամել սիրոյ կրակէ բաժկին հուսկ կաթիլ.
Եթէ շիկնի,
Կ'ըսես.— «Հի՜մա կը բռնկի»:

Սրտի մեղո՛ւ, ինչպէս կոչեց Լամարթին՝
Որուն ծըծած ծաղիկը՝ սիրտ, մեղրն է սէր,
Ես կոչեմ զնէ կո՛յս՝ որուն սիրտն է երկին
Անհուն սիրոյ, որ հորիզոն չունի դեռ.
Եթէ խօսի,
Կ'ըսես.— «Հի՜մա կը հատնի»:

Նէ կը վառի, մի՜շտ կը վառի, չի հատնիր
Տընանկ կընոջ տաճարն վառած ճրագին պէս,
Աստղերու նման գիշեր սիրէ՝ փողփողիլ,
Կրակ մ'է փրթած կողէն սիրոյ բոցացէս...
Իսկ թէ մեռնի,
Կ'ըսես.— «Հի՜մա կը ծնի»:



## ՏՐՏՈՒՆՋՔ

Է՜, մընաք բարով, Աստուած եւ արեւ,
Որ կը պըլպըլաք իմ հոգւոյս վերեւ...
Աստղ մ'ալ ես կ'երթամ յաւելուլ երկնից.
Աստղերն ի՞նչ են որ եթէ ոչ անբիծ
Եւ թշուառ հոգւոց անէ՛ծք ողբագին,
Որք թըռին այրել ճակատն երկնքին.
Այլ այն Աստուծոյն՝ շանթերո՜ւ արմատ՝
Յաւելուն զէնքերն ու զարդերն հըրատ...
Այլ, ոհ, ի՞նչ կ'ըսեմ... շանթահարէ՛ զիս,
Աստուա՛ծ, խոկն հսկայ փշրէ՛ հիւլէիս՝
Որ ժպրհի ձգտիլ, սուզիլ խորն երկնի,
Ելնել աստղերու սանդուխքն անալի...:
Ողջո՜յն քեզ, Աստուած դողդոջ էակին,
Շողին, փըթիթին, ալւոյն ու վանկին,
Դու որ ճակտիս վարդն ու բոցն աչերուս
Խըլեցիր թրթռումս շրթանց՝ թռիչն հոգւոյս,
Ամպ տըւիր աչացս, հեւք տըւիր սրտիս,
Ըսիր մահուան դուռն ինձ պիտի ժըպտիս.
Անշուշտ ինձ կեանք մը պահած ես ետքի,
Կեանք մ'անհուն շողի, բոյրի, աղօթքի.
Իսկ թէ կորնչի պիտի իմ հուսկ շունչ
Յոս մառախուղի մէջ համր անշշունչ,
Այժմէն թո՛ղ որ շանթ մ'ըլլամ դալկահար,
Պըլլուիմ անուանդ, մռնչեմ անդադար,
Թո՛ղ անէծք մ'ըլլամ ու կողըդ խըրիմ,
Թո՛ղ յորջորջեմ քեզ. «Աստուա՛ծ ոխերիմ»:

Ո՜հ, կը դողդոջե՜մ, տժգոյն եմ տժգո՜յն,
Փըրփըրի նե՛րսըս դըժոխքի մ' հանգոյն...
Յառա՜չ մ'եմ հեծող նոճերու մէջ սեւ,
Թափելու մօտ չոր աշնան մէկ տերեւ...:
Ո՜հ, կայծ տըւէք ինձ, կա՛յծ տըւէք, ապրի՜մ...
Ի՜նչ, երազէ վերջ գըրկել ցուրտ շիրի՜մ...
Այս ճակատագիրն ի՛նչ սեւ է, Աստուա՜ծ,

Արդեօք դամբանի մրուրո՞վ է գըծուած…
Ո՜հ, տըւէ՛ք հոգւոյս կրակի մի կաթիլ,
Սիրե՜լ կ՚ուզեմ դեռ ՚ւ ապրիլ ու ապրի՜լ.
Երկնքի աստղե՛ր, հոգւոյս մէջ ընկէ՛ք,
Կա՛յծ տըւէք, կեանք՝ ձեր սիրահարին հէք:
Գարունն ո՛չ մէկ վարդ ճակտիս դալկահար,
Ո՛չ երկնի շողերն ժըպիտ մ՚ինձ չե՛ն տար.
Գիշերն միշտ դագաղս, աստղերը ջահեր,
Լուսինն յար կու լայ, խուզարկէ վըհեր.
Կ՚ըլլան մարդիկ, որ լացող մը չունին,
Անոր համար նա դրաւ այդ լուսին.
Եւ մահամերձն ալ կ՚ուզէ երկու բան.
Նախ կեա՜նքը, վերջը լացող մ՚իր վրան:
Ի զո՜ւր գրեցին աստղերն ինձի «սէր».
Եւ ի զո՜ւր ուսոյց բուլբուլն ինձ «սիրել»,
Ի զո՜ւր սիւքեր «սէր» ինձ ներշնչեցին,
Եւ զիս նորատի ցուցուց ջինջ ալին,
Ի զո՜ւր թաւուտքներ լըռեցին իմ շուրջ,
Գաղտնապահ տերեւք չառին երբեք շունչ,
Որ չը խռովեն երազքըս վըսեմ,
Թոյլ տըւին որ միշտ ըզնէ երազեմ,
Եւ ի զո՜ւր ծաղկունք՝ փըթիթներ գարնան,
Միշտ խնկարկեցին խոկմանցըս խորան…
Ո՜հ, նոքա ամէնքը զիս ծաղրեր են…
Աստուծոյ ծաղրն է աշխարհին ալ արդէն…



ՅԱԿՈԲ ՊԱՐՈՆԵԱՆ

## ԻՄ ՁԵՌԱՏԵՏՐՍ

Պարոննե՛ր, այս վերնագիրը կարդալով չկարծէք, թէ սնանկացած վաճառական մըն եմ եւ կու գամ հաշիւներս հասարակութեան ներկայացնելու: Պատիւ ունիմ յայտարարելու, որ կեանքիս մէջ վաճառական եղած չեմ երբեք եւ լինելու ալ տրամադրութիւն չունիմ, վասնզի խիղճս չի ներեր մէկ ու կէս ոսկւոյ ուրիշի վաճառել այն ապրանքը, զոր ես մէկ ոսկւոյ գնած եմ:

Առանց վաճառական լինելու, որոշեցի սակայն ձեռատետր մը ունենալ, անոր մէջ նշանակել օրուան դէպքերը եւ երբեմն, այս դէպքերուն առթիւ, մահկանացուներու թերութիւններուն վրայ ծիծաղիլ: Թո՛ղ Հերակլիտի աչքերէն հոսած արտասուքով գետեր ձեւանան, թո՛ղ ազգային բանաստեղծներ Եփրատն ու Տիգրիսը Հայաստանի երկու աչքեր ներկայացնեն եւ լան, թո՛ղ Պ. Զուխաճեանին ալ եղանակներ յօրինել տան եւ եղանակով լան, ես, պարոննե՛ր, ես կը ծիծաղիմ եւ ծիծաղելու համար ո՛չ եղանակի կարօտութիւն ունիմ եւ ոչ դաշնակի: Թերութիւններու վրայ լալը թերութիւններու մեծագոյնն է. խեղճութեան վրայ արտասուք թափելն ապացուցանել է, թէ արիւն չունինք թափելու: Արտասուքը մանուկներու եւ կիներու բաժինն է. կ՚աղաչեմ, մի՛ դպիք անոնց բաժնին:

Եւ չէք կարող երեւակայել, թէ ո՜րչափ բերկրութիւն պիտի զգամ, եթէ յաջողիմ ձեզմէ ծիծաղներ առնել այն դէպքերուն, իրերուն եւ անձերուն վրայ, որոնց պիտի հանդիպիք ձեռատետրիս մէջ: Մոլութիւններու վրայ ծիծաղիլն առաքինութեան ճամբուն մէջ գտնուիլ կ՚ենթադրէ եւ այս հաշուով, ո՛րչափ շատ ծիծաղ քաղեմ, այնքան նուազ մոլութիւն պիտի գտնեմ: Պէտք չէ մոռնալ սակայն այն դաս մը մարդերն, որոնք ուխտ եւ երդում ըրած են բնաւ չխնդալու: Այդպիսիներուն հետ գործ չունիմ, վասնզի անոնց երեսէն ժպիտ քաղելն աւելի դժուար է, քան թուրք կառավարութենէն բարենորոգում յուսալը, մանաւանդ երբ նկատողութեան առնէք որ ճնշում բանեցնելու համար չունիմ ես ո՛չ ծանուցագիր, ո՛չ դեսպանածողով եւ ո՛չ նաւատորմիղ:

Անկողմնակալութեանս վրայ վստահեցնելու համար, կը յայտնեմ թէ այնպիսի կացութիւն մը ունիմ, որ չի ստիպեր զիս աչառութիւն ընելու: Փա՛ռք նախախնամութեան, բարեկամ չունիմ որ աչառութիւն ընեմ, բայց մի՛ կարծէք թէ կիրքով պիտի խօսիմ, քաւ լիցի...: Փա՛ռք սատանային, թշնամի ալ չունիմ: Մի՛ զարմանաք, պարոննե՛ր, աշխարհիս երեսը այնպէս կ'ապրիմ, ինչպէս դուք կ'ապրիք երբեմն թատրոնի մէջ. միայն հանդիսատես կը լինիմ ներկայացման, առանց դերասաններու գործին խառնուելու: Ընկերութիւններէ ընդհանրապէս հեռի կ'ապրիմ, եւ այս է միակ պատճառը իմ երջանկութեանս:

2 ՅՈՒՆԻՍ

Ես ալ այսօր համոզուեցայ, որ թատրոնը մեծ մարդերու դպրոց մըն է: Բայց մեծ մարդիկ ի՞նչ կ'ուսանին այդ դպրոցին մէջ: Խնդիրը հոս է: Թող ուրիշները պնդեն, թէ բարոյականութիւն կ'ուսանին հոն. ես կը պնդեմ եւ եթէ հարկ լինի՝ երկու տաճիկ վկայ ալ կը բերեմ — որովհետեւ քրիստոնէի վկայութիւնը ընդունելի չէ — որ թէպէտ եւ բարոյականութիւն դաս կը տրուի հոն, բայց աշակերտները մարմնակազմութեան դաս կ'առնեն, վասնզի հանդիսատեսները դերասանուհիի մը աւելի թեւերուն, պարանոցին, սրունքներուն կը դարձնեն իրենց ուշը, քան թէ անոր արտասանած խօսքերուն. եւ եթէ դերասանուհիին թեւերը գեղեցիկ գտնեն՝ կ'ըսեն.

— Շատ սքանչելի ներկայացում մըն էր:

Խե՜ղճ հեղինակներ... կը կարծեն, թէ իրենց գործը կը ծափահարուի... մինչդեռ շատ անգամ դերասանուհիին հեղինակն է որ կը ծափահարուի...:

7 ՅՈՒՆԻՍ

Անատոլուի սովելոց համար վիճակահանութիւն մը պիտի լինի...գալ տարի:

Յիշեալ վիճակահանութեան գործադիր ժողովն շրջաբերական պիտի ղրկէ գաւառները՝ յորդորելու համար սովեալները, որ համբերեն եւ անօթութենէ չմեռնին, մինչեւ որ իրենց հաց ղրկուի:

Կը յուսանք որ մեր ազգայիններն կը համակերպին այս շրջաբերականին: Քաջ գիտեն արդէն անոնք, որ այս սովն եթէ Եւրոպա լինէր՝ շատ աւելի զոհ կը տանէր իր հետ: Փառք տալու ենք, որ թուրք բարեխնամ կառավարութիւնը շատ տարիներէ ի վեր նախատեսած լինելով այս սովն՝ ազդու միջոցներ ձեռք առած էր հաւատարիմ հպատակներն անօթութեան վարժեցնելու:

9 ՅՈՒՆԻՍ

Այսօր կը տեսնեմ որ կերակուրները մեծ ազդեցութիւն ունին մարդուս կարծիքներուն վրայ: Կը ճանչնամ մէկն, որ տարի մը առաջ իւր կեանքը պանիր–հացով կ'անցունէր եւ ամէն օր ազգային գործերուն վրայ կը խօսէր, իսկ հիմա որ կովու միսով կ'ապրի՝ ազգային խնդիրներու վրայ խօսողները կը մեղադրէ:

5 ՕԳՈՍՏՈՍ

— Ժը մանժ, դիւ մանժ, իլ մանժ, նու մանժոն, վու մանժէ, իլ մանժ...

— Այդ ի՞նչ է, Կարապե՛տ աղա, քառասունէն ետք նոր բանե՞ր կը հանես:

— Ի՞նչ ընեմ, Յակո՛բ աղա, Հայաստանի մէջ բարենորոգումներ պիտի ըլլան եղեր, թերեւս մենք ալ պաշտօն մը ձեռք անցունենք...

— Ի՞նչ կը սերտես:

— «Ուտեմ» բային ֆրանսերէնը կը կարդամ:

— Ֆրանսերէն ե՞րբ սկսար:

— Ժամ մը առաջ:

Մէկէն ի մէկ այդ բային ի՞նչպէս եկար հասար:

— Առաջին դասս է այս, Յակո՛բ աղա: Ի՞նչ ընեմ, Թուրքիոյ մէջ պաշտօն վարողներն ամենէն առաջ այս բայը կը սորվին:

2 ՅՈԿՏԵՄԲԵՐ

Միայն կիները չեն, որ միշտ նոր ձեւով հագուիլ կ'ուզեն, հրապարակի վրայ ալ կը գտնուին քննադատներ, որ նոր ձեւով խօսիլ կ'ուզեն:

Կը ներկայացնեմ ձեզ Պ. Գրասէր Ատոմն, որ «Մասիս»ի մէջ նոր կամ հին հրատարակութիւններ քննադատելու պաշտօն կը վարէ: Ճաշակը կիրթ է եւ քննադատի մը հարկ եղած դրամագլուխն ունի. բայց շատ անգամ գիրք մը քննադատած միջոցին կը սկսի իր ցաւերը մեզի պատմել:

երբեմն ալ ինքը խօսած ատեն Լիթրէն ալ խօսքի մէջ կը նետուի: Սա խօսքը չլմնցուցած Վիքթօր Հիւկօ, Վոլթէռ, Լամարթին եւ ուրիշ հարիւրաւոր հեղինակներ կու գան խօսքին մէջ կը խառնուին, այնպէս որ ընթերցողը կը ստիպուի ըսել.

— Կամ ամէնքդ ալ լռեցէք, կամ մէկիկ մէկիկ խօսեցէք որ հասկնանք:

Քանի քանի անգամներ ըսած եմ Պ. Գրասէր Ատոմին. «Պ. Ատոմ, թող տուր սա մարդերուն օձիքը եւ դու խօսելիքդ ըսէ»:

Օրինակի համար՝ ես կ'ըսեմ.

«Արշալոյսին արթնցայ, հագուստներս հագայ եւ քիչ մը հաց կերայ»:

Տուր այս տողը Պ. Ատոմին եւ հետեւեալ օրը քեզի պիտի ըսէ.

«Արթնցայ Արշալոյսին, զոր Վարդամատն կ'անուանեն դասականք, եւ հագայ հագուստներս՝ որոնք տձեւութիւն ծածկելու միայն ծառայելու են, կ'ըսէ Ժան Ժագ Ռուսօ, եւ կերայ քիչ մը հաց՝ թէպէտ եւ Աւետարանը կ'ըսէ, թէ ոչ միայն հացիւ կեցցէ մարդ, այլ բանիւ Տեառն»:

Ինչո՞ւ համար մտքին ուղղութեանը դէմ ապստամբիլ եւ ընթերցողներդ չարչարել, ո՛վ Ատոմս. շիտակ ճամբադ գնա, ի՞նչ հարկ կայ ամէն քայլափոխիդ մէյ մէկ հեղինակի դուռը ափ առնելու:

## 13 ՆՈՅԵՄԲԵՐ

Ուրախառիթ լուր մը...:

Պէշիքթաշի մէջ խումբ մը երիտասարդներ ընկերութիւն մը կազմած են իրենց մէջ՝ նպատակ ունենալով մէկ դահեկան տուգանք վճարել ամէն անգամ, որ իրենց խօսակցութեանը մէջ օտար բառ խառնեն:

Այս տուգանքէն գոյանալիք հասոյթը ազգօգուտ ընկերութիւններէն մէկուն պիտի նուիրեն:

Հապա ի՞նչ տուգանք առնելու է այն հայերէն, որոնք իրենց խօսակցութեանը մէջ երբեմն հայերէն բառեր կը խառնեն եւ շատ անգամ հայերէն բառ բնաւ չեն խառներ:

Այս միջոցը շատ լաւ է ազգային լեզու կոկելու համար, եւ եթէ այսպիսի ընկերութիւն մըն ալ ազգային խմբագիրները կազմեն, ընկերութիւնները բաւական օգուտ կը քաղեն ռուսահայոց լրագիրներէն, նամանաւանդ «Մշակ»էն:



## 30 ՆՈՅԵՄԲԵՐ

Երբ որ բան մը ի բնէ գեղեցիկ է, անոր որչափ ալ զարդ տրուի՝ կը վայլէ:

Օրինակի համար, «Արեւելեան մամուլ»ի թղթակցին՝ Շահնուրի լեզուն, որ գեղեցիկ է եւ պճնասէր:

Ես ալ օր մը փորձեցի լեզուս պճնել, բայց վերջէն յուսահատեցայ, տեսնելով տգեղ կին մը՝ զոր զարդերը աւելի տգեղցուցած էին:

Ինչո՞ւ համար խել մը տգեղ լեզուներ պարզութիւնը կը թողուն եւ պճնասիրութեան մէջ կ'երթան զիրենք զզուելի ընելու...

Ե՞րբ պիտի դադրինք լրագիրներու մէջ կարդալէ այնպիսի յօդուածներ, որոնց մէջ խօսք չկայ եւ միայն զարդ կայ:

Խմբագիրներուն ուշադրութիւնը կը հրաւիրեմ այս կէտին վրայ:

### ՊԶՏԻԿ ԲԱՌԱՐԱՆ ՄԸ

**Մարմին** — բժիշկներուն կալուածքը:

**Զգեստ** — ածական մը որ մարդուս որպիսութիւնը ցոյց կու տայ:

**Հանգանակութիւն** — մուրացկանութեան ազնուականութիւնը:

**Շուկայ** — սուտերու գործարան:

**Յոյս** — ինքզինք խաբելու արուեստը:

**Գինովութիւն** — առժամեայ յիմարութիւն:

**Գաճաճ** — մարդուն համառօտութիւնը:

**Քաւարան** — մեռելներու քարանդինան:

**Հաւատափոխութիւն** — խղճի գաղթականութիւն:

**Բարիք** — մայր ապերախտութեան:

**Համբոյր** — սիրոյ քերականութեան միջակէտերը:

**Որոշում** — նաւահանգիստ, ուր խարիսխ կը նետէ միտքը:

**Պար** — պաշտօնական գրկախառնութիւն:

**Գրկախառնութիւն** — բարդ բառ մը:

**Գամ** — չէնքերու շաղկապը:

**Այցետոմս** — տոմսերու այցելութիւն:

**Պատմութիւն** — ետեւդ նայէ որ առջեւդ տեսնես:

**Խանձարուր** — պատանքին թոռը:

**Գերեզման** — անդիի աշխարհը բանող գետնուղիին կայարանը:

**Երազ** — մտքին նաւարկութիւնը առանց կողմնացոյցի ու ղեկի:

**Հայհոյութիւն** — փաստերու սով:

**Լուսանկար** — շողոքորթ մը՝ որ ամէնէն տգեղին իսկ գեղեցիկ ես, կ'ըսէ:

**Տղու մը աշխարհ գալը** — միեւնոյն գրքի նոր տպագրութիւնը:

## ՄԵԾԱՊԱՏԻՒ ՄՈՒՐԱՑԿԱՆՆԵՐ
**(հատուածներ)**

Աբիսողոմ աղային ներկայացաւ երիտասարդ մը, որ վաճառականի չէր նմանէր, սեղանաւորի ալ չէր նմանէր, արհեստաւորի ալ չէր նմանէր, գործաւորի ալ չէր նմանէր, եւ վերջապէս անանկ բանի մը կը նմանէր, որուն նմանը չկայ: Հազիւ երեսունըերկու տարեկան կը թուէր: Կապոյտ աչերով, դեղին մազերով զարդարուած ըլլալով՝ ունէր նաեւ երկու մատ մօրուք, որ մայրաքաղաքիս մէջ կամ ազոյ նշան է եւ կամ չքաւորութեան: Հագուստներն այնքան հին էին, որ հնախոյզները զանոնք գնելու համար մեծաքանակ գումար մը կու տային: Սակայն եթէ հագուստի մասին վանողական էր, դէմքի մասին քաշողական զօրութիւն ունէր այս անձը:

— Ծառայ եմ մեծապատուութեանդ, մեծապատիւ տէ՛ր,— պոռաց այս երիտասարդն սենեակէն ներս մտնելով եւ մօտենալով Աբիսողոմ աղային:

— Ի՞նչ կայ, ի՞նչ կ'ուզէք,— հարցուց Աբիսողոմ աղան վախնալով:

— Վսեմափա՛յլ տէր, ձե՛ր գալուստն լսելով փութացի հոս գալ, իմ խոնրին մեծարանացս հաւաստին ձեր ոտքերուն տակը դնել:

— Ոտքերո՞ւս տակը. շատ աղէկ. դի՛ր,— ըսաւ Աբիսողոմ աղան, որ կը կարծէր, թէ մուճակ բերած էր իրեն:

— Շնորհակալ եմ, բարձրապատի՛ւ տէր,— ըսաւ երիտասարդը, գլուխը բացաւ եւ սեղանին վրայ ելաւ, կանգնեցաւ:

Աբիսողոմ աղա այս տեսարանին առջեւ բոլորովին շուարած՝ անհամբեր տեսնել կ'ուզէր, թէ ի՞նչ պիտի ընէր այս պարոնը սեղանին վրայ:

Երիտասարդն ծոցէն թուղթ մը հանեց եւ աչերն Աբիսողոմ աղային տնկելով՝ բոլոր ձայնովը պոռաց.

— Տիա՛րք եւ տիկնա՛յք…

Աբիսողոմ աղա այս ահարկու ձայնէն վախնալով՝ նստած տեղէն երկու կանգուն վեր ցատկեց եւ չկրնալով ինքզինքը զսպել՝ պոռաց.



— Ո՞վ է այս մարդը, յիմարանոցէն փախած խե՞նդ է, թէ՞ յիմարանոց երթալու յիմար:

— Հայ ազգն,— շարունակեց երիտասարդը ձայնը քիչ մը իջեցնելով,— այսօր այնպէս հանդէս մը կը կատարէ, որ մեր հայրենեաց ամէնէն քաջ դիւցազնին նուիրուած է…

— Միտքդ ի՞նչ է, եղբա՛յր…

— Կար ժամանակ մը, ուր խաւարը լուսոյ դէմ կը կռուէր, տգիտութիւնը գիտութեան դէմ, անցեալն ապառնիին դէմ, հրամայականը սահմանականին դէմ, սուրը գրիչին դէմ, ատելութիւնը սիրոյ դէմ, կրակը ջուրին դէմ, միսը բանջարեղէնին դէմ. իսկ հիմա անցան այն ժամանակները. անոնք անցեալ են, մենք՝ ապառնի, անոնք խաւար են, մենք՝ լոյս, անոնք տգէտ են, եւ մենք՝ գիտուն, անոնք սուր են, մենք՝ գրիչ. անոնք ատելութիւնն են, մենք՝ սէր, անոնք կրակ են, մենք՝ ջուր, անոնք միս են, մենք՝ բանջարեղէն, անոնք վարունգ են, մենք՝ խնձոր, անոնք փուշ են, մենք՝ վարդ. անցան, անցան այն դարերը, ուր մարդկութիւնը տգիտութեան օրօրոցին մէջ մէյ մը ասդին, մէյ մը անդին կ'երթար, կու գար…

— Միտքդ ի՞նչ է, եղբա՛յրս, ես քեզի բան մը չըրի, ի՛նչ կ'ուզես ինծմէ, գնա քեզի բարկացնողին զրուցէ այդ խօսքերը…

— Այո՛, մարդկութիւնը կը չարչարուէր, կը նախատուէր անգութ բռնաւորներու ձեռքէն եւ չէր գիտեր ուր երթալ եւ ուր բողոքել:

— Տէր ողորմեա՛… Տէր ողորմեա՛,— ըսաւ ինքնիրեն Աբիսողոմ աղա.— քաշելիք ունինք եղեր… ես կրնամ հիմա զինքը սեղանէն վար առնել, բայց կը վախնամ, որ ծոցէն ատրճանակ մը հանէ եւ զարնէ ինծի, վասնզի խիստ բարկութեամբ կը խօսի:

— Իսկ երբ գիտութիւնն եկաւ,— շարունակեց ատենաբանը,— եւ վանեց տգիտութիւնն, ինչպէս լոյսն՝ խաւարը, սէրն՝ ատելութիւնը, գրիչն՝ սուրը, ապագան՝ անցեալը, այն ատեն, ա՜հ, այն ատեն… այո՛, այն ատեն, այո՛, կ'ըսեմ, այն ատեն միայն հասկցուեցաւ, որ մարդկութիւն, ազգ եւ հայրենիք բառերը բառարանները լեցնելու համար շինուած բաներ չէին, այլ ամէն մարդու մտքին մէջ, սրտին մէջ, հոգւոյն մէջ երկաթեայ տառերով եւ անջինջ կերպով դրոշմելու բառեր էին…

— Եղբա՛յր, կ'աղաչեմ, վար իջի՛ր եւ այնպէս զրուցէ՛ ցաւդ…

Ատենաբանը կայնած տեղը այնպէս կը դողար, որ Աբիսողոմ աղային սիտը կը հատնէր, թէ կազը գետինը պիտի իյնար:

Ուստի չուզելով այլեւս համբերել՝ պոռաց ինքնակոչ ատենաբանին երեսն ի վեր.

— Վա՛ր իջիր սրկէ:

— Կ'աղաչեմ, մի՛ սաստեր զիս:

— Վա՛ր իջիր. ապա թէ ոչ...

— Մի՛ կոտրեր իմ սիրտս, որ ազգին համար կը բաբախէ:

— Ի՛նչ ըսելիք ունիս, եկուր քովս, մարդու պէս նստէ եւ ըսէ. հոն տեղուանքը ելնել ի՞նչ պիտի ըլլայ:

— Կ'աղաչեմ, թո՛ղ տուր վերջացնեմ, ա՜հ, չես գիտեր, թէ որչա՛փ կը յուզուիմ, երբ ճառ կը կարդամ:

— Վա՛ր իջիր:

Ատենաբանը բեմէն կ'իջնէ եւ կ'երթայ աթոռի մը վրայ կը նստի:

— Հիմա զրուցէ ինծի, միտքդ ի՞նչ է, կ'ըսէ Աբիսողոմ աղա բարկութեամբ...

— Խնդիրքս սա էր, որ կ'ուզէի տպել տալ քիչ մը առաջ կարդացած ճառս...

— Գնա տպել տո՛ւր, քու ձեռքէդ բռնող կա՞յ:

— Պիտի խնդրէի ձեր մեծապատուութենէն, որ տպագրութեան ստակը դուք տայիք:

— Ինչո՞ւ... ի՞նչ պատճառ կայ, որ քու ճառիդ համար ես դրամ տամ: Լսուա՞ծ բան է, որ մէկը իրեն շահուն համար գիրք տպէ եւ ծախքն Աբիսողոմը տայ...

— Կը խնդրեմ, սիրտս արդէն խոցուած է, դուք ալ նոր վէրք մը մի՛ բանաք հոս:

— Ինչո՞ւ վէրք պիտի բանամ եղեր. գնա՛ բանդ, եղբա՛յր, փորձանք եղար գլխուս:

— Գիտէ՞ք՝ որքան ծանր է գրագէտի մը ասանկ խօսքեր լսելը...

— Չեմ գիտեր եւ գիտնալ ալ չեմ ուզեր:

— Բանաստեղծի մը սիրտը շատ փափուկ է, ամենաթեթեւ խօսքէ մը կը վիրաւորուի: Այս նիւթին վրայ ոտանաւոր մը գրած ունիմ, կարդամ, մտիկ ըրէք:

— Ոտանաւոր մտիկ ընելու ժամանակ չունիմ:

— Կ'աղաչեմ, ոտանաւորիս հետ խստութեամբ մի՛ վարուիք. այն ոտանաւորին համար, զոր դուք չէք ուզեր մտիկ ընել, երկու ամիս աշխատած եմ ես եւ երբ որ անոր նախատուիլը տեսնեմ, արժանապատուութիւնս կը վիրաւորուի: Կ'աղաչեմ, ոտանաւորիս համար գէշ մի՛ զրուցէք... Կը խնդրեմ, թոյլ տուէք ինծ կարդալ զայն անգամ մը...

— Ես ոտանաւոր մտիկ ընելու չեկայ հոս:



— Շատ լաւ. ողբերգութիւն մը գրած եմ, անոր վրայէն անցնինք:

— Չեմ ուզեր. ես անօթի եմ հիմա, կերակուր պիտի ուտեմ:

— Շատ լաւ. ուտելիքի վրայ ատենաբանութիւն մը ընեմ:

— Ժամանակ չունիմ մտիկ ընելու:

— Կ'աղաչեմ, այդ խօսքը ուրիշ անգամ մի՛ ըսէք, ասկէ աւելի ծանր խօսք չկայ հեղինակի մը համար, որ իր մէկ աշխատասիրութիւնն ուրիշի կարդալու փափաք կը յայտնէ: Կը խնդրեմ, բարձրապատիւ տէր, քաղցրութեամբ վարուեցէք հեղինակներու հետ:

— Գլխուս վրա՞յ նստեցունեմ քեզի:

— Ոտքդ պագնեմ, մի՛ ծաղրէք զիս, ինչո՞ւ ձեր գլխուն վրայ նստեցունէք:

— Ի՞նչ ընեմ հապա, քանի քեզի՞ տամ՝ հեղինակներու հետ քաղցրութեամբ վարուած ըլլալու համար:

— Ո՛չ, միայն ճառիս տպագրութեան ծախքը:

— Քանի՞ ոսկիով կը լմննայ գործը:

— Չորս ոսկիով կը լմննայ, բան մը չէ, իմ մեկենասս պիտի ըլլաս, ես ալ քու անունդ ոտանաւորով մը գրքոյկին ճակատը պիտի դնեմ:

— Ճակա՞տը դնես պիտի:

— Այո՛:

— Ինչո՞ւ համար:

— Որպէսզի ամէն մի մարդ գիտնայ, թէ ձեր ստակովը տպուած է այն գիրքը:

— Շատ լաւ,— պատասխանեց Աբիսողոմ աղան եւ քսակէն չորս ոսկի հանեց, տուաւ: Հեղինակն հազար յարգանք մատուցանելով՝ դուրս ելաւ:

Աբիսողոմ աղան ետեւէն կանչեց զինք եւ հարցուց.

— Չի կրնա՞ր ըլլալ, որ գրքին ճակատը սպասաւորներուս ալ անունները դնես եւ իմացունես ազգին, որ Աբիսողոմ աղան կովեր, ոչխարներ, էշեր եւ ագարակներ ունի իր քաղաքին մէջ:

— Այդ ձեր ըսածները հովուերգութեան ճիւղին կը վերաբերին:

— Չեմ հասկնար:

— Ատոնց վրայ ոտանաւորներ կը գրուի, եթէ փափաքիք, ոտանաւոր մը շինեմ:

— Ի՞նչ ընեմ ոտանաւորը:

— Լրագրի մը մէջ տպել կու տաք:

— Կը տպե՞ն:

— Ինչո՞ւ չպիտի տպեն. եթէ կէս ոսկի տալու ըլլաք, քառասուն անգամ կը տպեն:
— Շատ աղէկ. ադ ըսածդ գրէ՛:
— Գլխուս վրայ:
— Բայց աղուոր բան մը ըլլայ:
— Շատ լաւ:
— Այնպէս, որ տեսնողը հաւնի:
— Յարկա՛ւ:
— Վաղը առտու կը բերէ՞ք:
— Վաղը առտո՞ւ... ի՞նչ կ'ըսէք... մէկ ամիսէն հազիւ կրնամ պատրաստել:
— Մէ՞կ ամիսէն:
— Յազիւ. ոտանաւորը կարդալը դիւրին է, բայց գրելը՝ դժուար: Գեղեցիկ ոտանաւորի մը համար քիչէն քիչ երկու ամիս պէտք է:
— Ի՞նչ կ'ըսէք...
— Այո՛, բայց ես կ'աշխատիմ ամիսէ մը լմնցնել:
— Ատ ի՞նչ դժուար բան է եղեր:
— Ի՞նչ կարծեցիք հապա. երկու ամիս պիտի սպասեմ, որ մուսաս գայ եւ ներշնչէ ինծի, որպէսզի գրեմ. առանց մուսայի ոտանաւոր չի գրուիր:
— Եթէ այդ մուսան գալու չըլլա՞յ...:
— Անպատճառ կու գայ:
— Չի՞ կրնար ըլլալ, որ նամակ գրես եւ աղաչես իրեն, որ շուտ մը գայ, եւ դուն ալ երկու ամիս չսպասես:
— Անիկա ինքնիրեն կու գայ, նամակի պէտք չունի, մեծապատիւ տէր:
— Ո՞ւր կը նստի... շա՞տ հեռու է:
— Այո՛, շատ հեռու է, բայց կու գայ:
— Ցամաքէ՞ն, թէ՞ ծովէն:
— Չէ՛, մեծապատի՛ւ տէր, չէ՛:
— Ո՞վ է ուրեմն սա գետնին տակն անցնելիք մարդը... ուսկի՞ց պիտի գայ... ըսէ, որ ճամբայ մը մտմտանք ու բերել տանք... Եթէ մէկ–երկու ոսկի տանք, այս շաբաթ կու գա՞յ:
— Այո՛, երկու ոսկի տալուդ պէս գործը կը դիւրանայ, եւ մուսաս այս շաբաթ վազելով կու գայ, պատասխանեց անմուսա բանաստեղծը ոսկի բառը լսելուն պէս:



— Գրէ՛ ուրեմն իրեն, իմ կողմէս ալ յատուկ բարեւներ ըրէ եւ ըսէ՛, որ Աբիսողոմ աղան քեզ տեսնել կ'ուզէ:
— Գլխուս վրայ: Մնաք բարեաւ, տէ՛ր, շնորհակալ եմ ձեզմէ, ծառայ եմ ձեր մեծապատուութեանը եւ կ'աղաչեմ ընդունիք...
— Ո՛չ,— ըսաւ Աբիսողոմ աղա բարկութեամբ,— ա՛լ երկար ըրիր. ահա ինչ որ ըսիր, ընդունեցի եւ դեռ ի՞նչ կ'ուզես, որ ընդունիմ...
— Խորին յարգանացս հաւաստիքը, տէ՛ր... որով մնամ ձեր մեծապատուութեան ամենախոնարհ ծառայ:
— Շատ աղէկ:
Մեկնեցաւ բանաստեղծն՝ երկու ոսկիով բերել տալ խոստանալով մուսան, զոր ոմանք աւելի աժան գնով բերել կու տան:

ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ

# ՃԻՏԻՆ ՊԱՐՏՔԸ

## Ա.

Սեւ կաշիէ մեծկակ պայուսակ մըն էր, զոր առտու իրիկուն իր ծեռքը բռնած կ'երթար փողոցներէն: Իր կեանքին անբաժան ընկերն էր այս տոկուն կաշիէ պարկը, որով ամէն իրիկուն իր տան պիտոյքը, հացն ու միսը կը տանէր, կամ պտուղը իր երկու փոքրիկ զաւակներուն, որոնք դրան առջեւէն կը բոլորուէին խոստմնալից ու խոստմնապահ այս պայուսակին շուրջը:

Այս մարդուն բոլոր յոգնաջան վաստակը ու քրտնաթոր գործունէութիւնը անոր մէջն էր, դանայեան տակառ՝ զոր կը լեցնէր շարունակ երեսուն տարիներէ ի վեր առանց յաջողելու: Իր կեանքի պայքարը հոն էր ամբողջ, ապրուստի խնդիր, օրական հացի խնդիր, որուն արհաւիրքովը լեցուն էր միշտ այդ կաշիէ պահարանը իր մշտնջենական պարապութեամբը. իր ուրախութիւնները ու ցաւերն ալ հոն էին, իր յիշատակներն ալ: Աղէկ օրեր ու գէշ օրեր ունէր այս տոպրակը. տիրոջը պէս ճակատագիր մը յարափոփոխ, եւ անոր պէս հոգի մըն ալ ունէր կարծես: Ո՞վ էր տէրը այս երկուքին մէջ. երեսուն տարի վերջը, երբ ծախորդութիւնը իր երկաթի շրջապտոյտ օղակներով զինքը կը պաշարէր, այս մարդը կը հասկնար որ այդ անզգայ տոպրակը իր տէրը եղած էր միշտ:

## Բ.

Հիմա միջակ հասակով, մօրուքով, ալեւորած մէկն էր Յուսէփ աղան որ վաճառականութենէ, խանութպանութենէ հետզհետէ իջնելով իջնելով առուտուրի միջնորդութեամբ կ'ապրէր ալ, խանութէ խանութ, դռնէ դուռ տանելով պասմայի ու ճերմակեղէնի մատուցումներու եւ պահանջումներու անհամաձայնելի ու հակառակորդ հաւաքածոները:

Ո՞վ ըսեր էր որ այս երկուքին մէջ ներդաշնակութիւն մը կայ. Յուսէփ աղան ի զուր օրն ի բուն իր հաշտարարի դերը կը կատարէր, ողոքիչ, համոզիչ փաստերով, առնողին ըսելով թէ ապրանքը աժան էր այդ գնով, ու ծախողին՝ թէ իր վաճառքը պահանջած գինէն շատ պակաս կ'ընէր. ո՛չ. երկուքն ալ կը յամառէին եւ Յուսէփ աղան յուսակտուր ծեռնթափ կ'ըլլար ա՛լ. առեւտուրի տագնապը, զոր իր վաճառական եղած ատենէն այնքան լաւ կը ճանչնար, նորէն իր վրայ, իր համեստ միջնորդի ապրուստին վրայ ալ կ'իշխէր ու փճացնել կը սպառնար զինքը:

Ո՜հ, թէ որ մինակ ըլլար, ի՜նչ փոյթ. բայց երկու աղջիկ զաւակներ իրենց պատանութեան ամէն հրապոյրներովը, ամէն պատրանքներովը իրեն կը նայէին. առջի մանկուհիները չէին, այլ խելահաս պատանուհիներ՝ կեանքի վայելքի արդար ու անմեղ ըղձանքներով, ակնկալութիւններով ծարաւի:

Այս զաւակները, իր բոլոր երջանկութիւնը, հիմա կը ճնշէին զինքը իրենց 14 –15 տարւոյ աղջկան անմեղութեան ժպիտովը, որ յանդիմանութիւնով լեցուն կ'երեւար իր հայրական աչքին: Յանցաւորի պէս կը մտնէր ներս, զրկանքներու դատապարտուած այս երկու հոգիներուն առջեւ, մեղաւորի նման գլխիկոր կը դառնար տուն, երեսին միշտ պահելով զուարթութեան կեղծաւոր երեւոյթը ու այս դիմայլակին տակ պարտկելով իր ապիկար ու շուարած մարդու կսկիծը:

## Գ.

Սկիւտարի բարձունքին վրայ Իճատիյէի կողմն է իրենց փոքրիկ տունը, ուր երկու հարիւր դրուշ ամսական վարձքով կը բնակին երեքը, հայրը ու երկու աղջիկները, որոնց մայրը շատոնց մեռած է. փողոցի վրայ նայող փոքրիկ սենեակին պատէն կախուած երիտասարդ կնոջ պատկերը անորն է. էրկանը աղէկ օրերուն մեռած էր կուրծքի հիւանդութենէ մը, որ պատկերին մէջ տեսնուող սպիտակ ու անարիւն երեսէն կը գուշակուի: Բայց իր յիշատակը կ'ապրի եւ օր չըլլար որ իր խօսքը չընեն. գիշերները, երբ աղջիկները կը քաշուին, ամուսինը կը մնայ դեռ իր վաղամեռիկ կնոջ պատկերին դէմը, անխօսուկ ու առանձին. ու իր ոսկեզօծ շրջանակէն նայող այդ անքարք աչքերէն աղքատացած վաճառականը քաջալերութիւն մը կ'ակնկալէ, գերեզմանի միւս կողմէն սպասուած զօրավիգ մը:

Վասնզի բարոյական կորովը կը պակսի իրեն օր օրի. իր երբեմնի նիթական դրամագլխին պէս, հիմա կը զգայ որ սրտին քաջութիւնը կը սպառի ու կը հատնի քիչ քիչ: Դեռ առտուները իր դողդոջուն ծեռքին

մէջն է պայուսակը, զոր առանց ամբողջապէս լեցնելու կը դառնայ շատ հեղ. ու առտուն, նաւամատոյցին վրայ, այն վաճառականներուն՝ որոնք մուրացիկի մը ողորմութիւն տալու պէս երբեմն գործ կու տան իրեն, կը սլքտայ, երբեմն կը համարձակի անոնց խօսքին խառնուիլ, կարծիք տալ, միշտ խօսողին նպաստաւոր կարծիք մը…

Ու վաճառականները կը սիրէին այս պապա մարդը, որ ուրիշներու պէս աներես չէր, ու իր միջնորդչէքը իրաւունք մը պահանջելու եղանակով չէր ուզեր եւ առաջարկուած ամէն զեղչի գլուխ կը ծռէր։

Դ.

*Պասմայ*ի ջոջերը կը քալէին տոտիկ տոտիկ, ճամբուն վրայ խօսելով, իրենց ծախելիք ապրանքներուն հողերովը բեռնաւորուած ամէնքն ալ։ Պարսիկ վաճառականները, գլխաւոր յաճախորդները, աչքերնին կը սկսէին բանալ. գունաթափ կերպասներու, կշիռէն ու չափէն պակաս ամերիքաններու վրայ առջի շահերը չէին մնացած ա՛լ. եւ վաճառականները խնայողութեան նոր միջոցներ կը խորհէին. մաքսէն ետքը, գրասենեակի ծախքէն վերջը, միջնորդչէքները ծանր կը թուէին իրենց։ Ի՜նչ հարկ միջնորդի, անձամբ չէի՞ն կրնար առնել կամ ծախել ապրանքները. այնուհետեւ, ուրիշ պատճառներ կու գային զօրացնել այս որոշումը. միջնորդը միջնորդ մըն է վերջապէս եւ ոչ ապրանքին տէրը. ոչ անոր արժէքը կրնար բացատրել տիրոջը չափ եւ ոչ անոր հոգը տանիլ միշտ, ու Յուսէփ աղան որ ետեւնուն կու գար, իր սեւցած պայուսակը ձեռքը, կը դողար հիմա։

— Յուսէփ աղա, քեզի համար չենք, կ՚աւելցնէին վաճառականները, դուն մեր մարդն ես։

Շունչ կ՚առնէր խեղճ մարդը. բայց գործերը կը պակսէին աւուրչէքը շահիլը տաժանելի տառապանք մը կ՚ըլլար ու պարտքերը կը դիզուէին շուրջը, գիւղը, չարշին, ամէն կողմ։ Հագուստը տակաւին մաքուր կոկիկ էր ու իր արտաքին տեսքէն ոչ ոք պիտի գուշակէր իր զարհուրելի անկումը։

Ու պայուսակը կը շարունակէր կրել ձեռքը, անօգուտ տարուբեր մը հիմա, բայց ամչնալով թողուլ, մէկդի նետել զայն, յուսահատութիւնը խոստովանիլ աշխարհքի առջեւ, վասնզի ի՞նչ պիտի ըսէր աշխարհք ձեռնունայն տեսնելով զինքը այսուհետեւ։

Յետոյ՝ ճարահատած՝ այն վաճառականէն որուն արբանեակն էր, երկու ոսկի փոխ ուզեց ու մերժողական պատասխան ստացաւ. հինգ ոսկի



պարտք ունէր. պէտք էր նախ այդ պարտքը վճարել։ Այն իրիկունը իր պղինձէ փոքրիկ ժամացոյցը ծախեց երեսուն դրուշի ու պայուսակը մասամբ գոնէ կրցաւ լեցուիլ նորէն։

Ե.

Տունը՝ ուրախ ու զուարթ էր. աղջիկները իր վիճակին վրայ տեղեկութիւններ կ՚ուզէին երբեմն. գուշակութիւններ, նախազգացումներ ունէին իրենց ներսիդին։

— Գործերը ինչպէ՞ս են, հայրի՛կ,— կ՚ըսէր անդրանիկը։

Ու կրտսերը՝ կապոյտ աչուի, շուշանաթոյր աղջիկ մը, որ ճիշդ մօրը պատկերն էր։

— Այսչափ ուշ մի մնար։

Հայրը կը խնդար. ո՛չ, գործերը գէշ չէին երթար. Աստուծով ասկէ վերջը աւելի պիտի բացուէին։

— Վաղը կանուխ եկուր, եւ մեզ պտտցնելու տար։ Ու ողորմելի հայրը կը խոստանար, կանուխ պիտի գար ու պտտցնելու պիտի տանէր այս հէք զրկեալ որբերը, որոնց էն աղուոր տարիները չքաւորութեան մէջ կ՚անցնէին. երեւակայեցէք ուղեւորութիւն մը, որուն էն գեղեցիկ տեսարանը թիւնէլի մը անցքը ըլլայ, մութ ու քարակոփ պատեր, եւ որուն միւս ծայրէն սպասուած լոյսի շառաւիղը չտեսնես երբեք։

Եւ առտուն, կանուխ կանուխ, առջի շոգենաւով կ՚երթար Պոլիս, իր ուժաթափ թեւին տակ սեղմելով իր պարպուած պայուսակը, այս յաւիտենական թշնամին ու յաւիտենական անկուշտը, որ չէր յագեցած երբեք երեսուն տարիէ ի վեր. ու հոն, թեւին տակը, խեղդելու պէս կը սեղմէր զայն, այդ պարպուած փորը ու չքացնել կ՚ուզէր։

Պոլիս գործ չկար. ժամացոյցին ստակէն մնացորդը երթեւեկութեան ծախքին մէջ սպառեցաւ ու վայրկեանը կը մօտենար ահաւոր արագութեամբ մը խոյանալով իր վրայ, ուր վերջին երեսուն փարան Գուզկունճուքէն Պոլիս իջնելու, յոյսի մը ետեւէն վազելու ծախքը՝ — վասնզի հիմա յոյսի ետեւէն երթալն ալ ծախքով է — պիտի հատնէր։

Այն ատե՞ն. այս հարցումը զոր միտքը կ՚ընէր, որուն պատասխանելու հարկէն չէր կրնար խուսափիլ, իր դէմը կ՚ելլէր, խոշոր, հսկայ տառերով կը դրուէր օդին մէջ, ու իր առջեւէն կը քալէր իր նայուածքին փակչելով ամէն տեղ։

Զ.

.........................................................................................................

Է.

Այն առտուն իր առջինեկ աղջիկը տուաւ պայուսակը ձեռքը.— «Երէկուան պէս միսը չմոռնաս. քիչ մըն ալ պտուղ բերես. պանիր ալ»:

Ու փախստական հօրը ետեւէն, որ կ'աճապարէր հեռանալու, կը շարունակէր իր չնչին խնդրանքներուն անհատնում շարքը:

Զառիվայրէն իր ընդոստ աճապարող քալուածքին հետ պայուսակը կ'երերար, պարապ որովայնի ձայներ, հեծկլտուքներ կը հանէր:

Երեք մեթալիք տասնոցները, զորս իր գրպանին մէջ յուսահատօրէն կը սեղմէր, չկորսնցնելու սարսափով, Պոլիս պիտի տանէին զինքը. ի՞նչպէս պիտի վերադառնար իրիկունը. ու կը զղջար, ո՜րքան կը զղջար բնակելուն Սկիւտար ուր ոտքով չերթցուիր, ու չի բաւեր բարի կամեցողութիւն կամ աշխարհիս մեծագոյն քաջութիւնը ունենալ՝ նոյնիսկ պարապ ձեռքով տուն դառնալու համար:

Շոգենաւին մէջ ծանօթներէն հեռու նստաւ, ծայրը, հոն ուր *մեկքի* չկար, ոչլոտ մարդերու մօտիկ: Լաւ մը իր քովը տեղաւորեց պայուսակը. խնամքով, հոգածու ձեռքով անոր փոթերը շտկեց: Յետոյ անիւներուն բօֆ բօֆը իր ուշադրութիւնը գրաւեց. այս եղանակը իր հետաքրքրութիւնը շարժեց. անիւները իրենց շրջանին մէջ, տեղ մը հասնելնուն, միշտ վարանումի պէս բան մը ունէին նոր շրջան մը սկսելէ առաջ. ասով մասնաւոր եղանակ մը կը ձեւանար. բօֆ, բօֆ, բօֆ, բօֆ...բօֆ. մտքէն այս տարօրինակ նուագին կը հետեւէր, հաճոյք մը կը զգար: Այդ վայրկեանին իր հոգւոյն ու մտքին մէջ այդ խորհրդաւոր ձայնէն զատ բան մը չկար. ո՞վ էր ինքը, ի՞նչ կը փնտռէր այս շոգենաւին մէջ, ո՞ւր պիտի երթար. չէր գիտեր. իրա՛ւ որ չէր գիտեր:

Պոլիս իր վաճառականներուն հանդիպեցաւ. խոժոռ ու դաժան դէմքեր գտաւ միայն որոնց տեսքը անգամ իր լեզուն պապանձեցուց. քաջութի՛ւն. ըսէ՛ սա երկաթէ բացան խորխտօրէն բացող ու գոցող մարդուն որ զաւակներուդ ուտելիք տանիլ խոստացած ես այս իրիկուն. ո՛չ. չկրցաւ ըսել:



Շուկան թափառեցաւ առանց բան մը ըսելու մէկու մը. խանութներէ ներս նայեցաւ քիչ մը. յետոյ, ոսկերիչներու կրպակներուն դէմը կեցաւ քառորդ ժամի մը չափ, ադամանդէ զարդերուն վրայ զմայլած. իր աղջիկներուն երբեք չէր կրցած հատ մը տալ ասոնցմէ, ու յիշեց որ իր երկու աղջիկները կը սպասէին իրեն: Ժամը հարցուց: Իրիկուն էր. այն ատեն վազել սկսաւ. ուշ մնացեր էր. պարապ վարանումներու ու մեծսրտութեան ատեն չէր. հաց պէտք էր ու պիտի ուզէր առջի դէմը ելլող ծանօթէն: Զարմանք. ինքը որ այնքան շատ մարդ կը ճանչնար, անոնցմէ մէկուն չէր հանդիպեր: Սա դէմի կողմէն քալողը կը ճանչնար անշուշտ. ատենով իրեն մրցակից եղող վաճառական մըն էր, բայց շատոնց բարեւը կտրած էին, իր աղքատանալէն ի վեր. սա միւսը, որ արագ քայլերով իր քովէն անցաւ հիմա, ան ալ կը ճանչնար, ատենով երաշխաւոր եղած էր անոր, բայց քանի մը օր առաջ մեճիտիէ մը փոխ տալ մերժած էր եւ հիմա ալ փախչելու պէս, երեսը պահելով իր քովէն կ'անցնէր: Ծերուկ մը, մինակ, բարեւեց զինքը. իրմէ աւելի դժբախտ մը:

Կամուրջը հասած կեցաւ. չկրցաւ անցնիլ. տասը փարա չունէր. այդ պահուն զգաց որ բան մը կը պակսէր: Ինքզինքը հարցուփորձեց ու պատճառը գտաւ. պայուսակը մոռցեր էր տեղ մը. ետ դարձաւ, վազեց, ի՞նչ ընելու համար:

Ը.

Ծովուն վրայ կը ծփար, կ'օրօրուէր, կը տատանէր, կռնակին վրայ պառկած, բոլոր հասակովը ջուրին երեսը. գէր մարդ մըն էր ասիկա, մեծ մեծ բացուած, կարծես թէ զարմացած աչքերով ու անթարթ, յամառ նայուածքով մը դէպի երկինք՝ ուր լուսինը, իր տասնըհինգին մէջ, արծաթէ կլոր ու հսկայ դրամի մը պէս կը փայլէր:

Ու մարդուն վզին սերտիւ կապուած սեւ կաշիէ պայուսակի մը մէկ մասը, ջուրէն դուրս մնացած, կը ծփար անոր հետ, ատեն ատեն գլուխը սուզել տալով քիչ մը դէպի վար. յետոյ այդ գլուխը վեր կ'ելլէր իսկոյն, ազատելու ճիգով մը պայուսակին ծանրութենէն:

Ծովուն հայելիի պէս արծաթած երեսին վրայ՝ այս մարմինը, իր ճիտէն կախուած պայուսակովը, մակոյկը ետին ձգած նաւու մը կը նմանէր, հեռուն, խիստ հեռուն. ջուրին մէջ երկուքն ալ կապուած էին ինչպէս կեանքին մէջ ալ զատուած չէին իրարմէ: Կապը անեղծ կը մնար ամէն տեղ: Քար լեցուած այս կաշիէ տոպրակը ալ պարպուելու վախ չունէր այսու-

հետեւ. յագեցած ու կշտացած փորն էր, գիրգ եւ ուռեցուրած. իր տեղը՝ մարդոց թեւին տակը չէր ուր այդքան տարի ծալլուած, սեղմուած շնչահեղձ մնացած էր, ո՛չ. այդ պայուսակը՝ իր անողորմ յամառութեամբը, իր յուսահատեցուցիչ դատարկութեամբը, մարդոց ճիտին պարտքը կը մարմնացնէր անշուշտ. իր ճշմարիտ տեղը, ուրեմն, անոր վզին վրայ էր, ճիշդ հո՛ն ուր հաստատուած էր հիմա:

Եւ երեսուն տարիէ ի վեր, վտարուածի մը նման՝ որ առջի անգամ իր բուն տեղը գտնելուն ու բազմելուն համար կ'ուրախանայ, քէյֆ կ'ընէ, ծռվուն ամէն ծփանքին հետ՝ պայուսակը՝ իր կոպիտ մորթովը մարդուն երեսը կը գգուէր ու կը շոյէր:



ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ

## Ա. ՉՕՊԱՆԵԱՆ ԻՆՔԸ ԻՐ ՄԱՍԻՆ

Ժամանակս մեթոտիկ ու մեքենական կերպով մը իմ զանազան աշխատանքներուս բաժնելու անկարող եմ. ատոնցմէ իւրաքանչիւրին կը նուիրեմ, երբ ատոր տրամադրութիւն կը զգամ, եւ կամ երբ հանգամանքները կը մղեն զիս մէկ կամ միւս աշխատանքին առաջնութիւն տալ: Իմ բաւական շատ գրած ըլլալէս ոմանք կը հետեւցնեն, թէ ուզած ատենս կրնամ ուզածս գրել, այդպէս չէ սակայն, առանց տրամադրութեան մէկ տող չեմ կրնար գրել. օր կ'ըլլայ, որ նամակ մը իսկ գրելու անկարող կը զգամ զիս: Այդպիսի օրեր, ընթերցման աննման հաճոյքին կը նուիրուիմ, կամ ընդօրինակութիւններ կ'ընեմ, կամ նիւթական ուրիշ սեւ աշխատանքներու կը յատկացնեմ ժամերս, կամ միտքս կը հանգչեցնեմ բարեկամներու հետ շաղփաղփելով: Կան օրեր ալ, ուր մէկ քանի օրուան աշխատանքը, մէկ քանի ժամուան մէջ կատարելու ուժը կը զգամ:

Գալով իմ աշխատանքի մեթոտիս, պէտք է ըսեմ, որ ատենով գրական սկզբնաւորութեանս առաջին շրջանին, նիւթ մը գտնելէ, մտքիս մէջ զայն որոճալէ եւ մերթ անոր ամփոփումը թուղթի մը վրայ ուրուագծելէ յետոյ, կ'աշխատէի շարադրել մէկ անգամէն, իւրաքանչիւր տող իր վերջնական ձեւով յղանալու եւ թուղթին յանձնելու համար ճիգ մը ընելով, ճիգ մերթ դիւրասահ, բայց յաճախ տաժանելի: Ատիկա սխալ ու յոգնեցուցիչ մեթոտ մըն էր եւ արդէն, նոյնիսկ այն ատեն, գրեթէ միշտ դժգոհ մնալով յառաջ եկած գրուածքէն, կը սրբագրէի զայն մէկէ աւելի անգամներ կամ մերթ ամբողջութեամբը նորէն կը գրէի: Շատոնց ի վեր, տարբեր մեթոտ մը որդեգրած եմ ո՛չ միայն զուտ գրական էջերու, այլեւ յաճախ որեւէ յօդուածի, ճառի կամ բանախօսութեան համար. նախ նիւթին գլխաւոր գիծերը կը նոթագրեմ, սկզբնաւորութիւնն ու վերջաւորութիւնը կը ջանամ գտնել, յետոյ կը սկսիմ՝ ուրուագծիս հետեւելով, ու մերթ ճամբուն ընթացքին՝ զայն բարեփոխելով՝ շարադրել շատ արագ, առանց մանրամասնութիւնները խնամելու, ամբողջութեան ինքնեկ, բնական, կենդանի ցայտքն ունենալու համար: Օր մը կամ օրեր յետոյ, կը կարդամ գրածս իբր օտարի մը արտայայտութիւնը, քննադատի աչքով, կը

սրբագրեմ, կը կոկեմ, կը յապաւեմ, կը լրացնեմ, մերթ ամբողջ հատուածներ նորէն կը գրեմ, յետոյ՝ այդ երկրորդ աշխատանքիս արդիւնքը մաքուրի կ'առնեմ, ընդօրինակած ատենս՝ նորէն բարեփոխութիւններ մտցնելով, տպուելու համար շարուելէ յետոյ՝ փորձին վրայ դարձեալ ուղղումներ ընելով յաճախ: Եւ չեմ յաւակնիր մտածել, որ այդ եռապատիկ արդիւնքը հասած է այն լիութեան ու կատարելութեան, որուն կը ձգտիմ:

### ԿՈՎԸ

Եզերուած թա՛նձր փուշերով մացառներու թաւարծի,
Պըզտիկ քարուտ դեղին ուղի մը կը բացուի՝ կարճ ու նեղ,
Ուր ոչ ըստուե՛ր մը կ'երերայ, ոչ էակ մը կը յածի,
Եւ ուր արե՛ւը կը փռէ իր ճերմակ լոյսն հըրազեղ:

Խիտ ցախերուն մէջտեղէն, կով մ'յաղթամարմին եւ խաղաղ՝
Յամրաբար վեր կ'ելլէ, գըլուխը ծօծելով ծանրօրէն,
Ու վեհութեամբ մը մեծաշուք, արձակելով աջ ու ձախ
Քաղցր նայուածք մը զոր կարծես վըճիտ խոհեր կ'օրօրեն:

Կանգ կ'առնէ պահ մը ճամբուն վրայ զոր կը լեցնէ իր պարարտ
Հըզօր մարմնով, ու կը նայի հեռուն, ծովին, երկընքին.
Հեռ մ'իր ռունգովը կը ծըծէ սուլող հովիկը զըւարթ,
Ու բառաչիւն մ'իր թոքերէն կը բարձրանայ՝ լայն, խորին...

Յետոյ, նորէն տատանելով կոտոշները գալարուն,
Իր կողերը կը մըտրակէ կարճ ագիովը բարակ,
Ու կը քալէ կը հեռանայ, երերցնելով իր լեցուն
Ճերմակ ծիծերն որ կը կախուին իր լայն ուժեղ փորին տակ:



ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

### ԸՆԿԵՐ ՓԱՆՋՈՒՆԻ
### (հատուած՝ «ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՆՈԹԵՐ ԸՆԿԵՐ ՓԱՆՋՈՒՆԻԻ ՄԱՍԻՆ»)

Կեանք մը որ տակաւին իր ամբողջ շրջափոխութիւնները չէ կատարած եւ իր գործունէութեան ամենէն եռանդուն փուլին մէջ կը գտնուի, կարելի չէ լիակատար կերպով ներկայացնել, եւ նոյնիսկ անխոհեմ յանդգնութիւն մըն է այդպիսի կեանքի մը վրայ դատաստան կտրել կամ կարծիք յայտնելը:

Ուստի, ապագայ կենսագիրներու թողլով ընկեր Փանջունիի վարքն ու արարքները իրենց ամբողջութեամբը ներկայացնելու այնքան դժուար, որքան անհրաժեշտ աշխատութիւնը, ես պիտի գոհանամ կցկտուր ծանօթութիւններ տալով միայն Ընկերվարական նամականիի հերոսին վրայ, պարզապէս նիւթեր՝ ապագայ կենսագիրներու գործը դիւրացնելու նպատակով եւ կամ սանկ ըսեմ՝ ատաղձներ այն յիշատակարանին համար, զոր երախտագէտ հայութիւնը օր մը պիտի կանգնէ իր հերոսներուն ի պատիւ:

Ընկեր Փանջունի կրտսեր զաւակն է տրապիզոնցի ընտանիքի մը, ու ծնած է 1875ին: Մայրը տղաբերքի հետեւանքով մեռած է, առանց կարենալ սնուցանելու իր երախան, զոր մեծցուցած են այծի կաթով: Ուրիշ կենսագիր մը գուցէ հետեւութիւններ հանել փորձէր այս աննշան դիպուածէն՝ ընկեր Փանջունիի ունայնամտութիւնն ու թեթեւութիւնը վերագրելով իր առած այդ սկզբնական սնունդին: Ես, ինչպէս ըսի, չեմ ուզեր որեւէ դատաստան ընել, այլ կը բաւականանամ իրողութիւնները արձանագրելով:

Փանջունի շատ ուշ լեզու ելած է, բայց անգամ մը խօսիլ սկսելէ ետքը, ա՛լ բերանը դիւրաւ չէ գոցած: Քանի կը մեծնար ա՛յնքան կ'աճէր իր խօսելու կատաղութիւնը, այն աստիճան որ խեղճ հայրը ստիպուեցաւ բժիշկի մը դիմել այդ անսովոր երեւոյթին դարման մը գտնելու համար: Բժիշկը քննեց տղան, լեզուն նայեցաւ, կոկորդը նայեցաւ, աչքերուն նայեցաւ եւ վճռաբար ըսաւ հօրը.

— Ճար ու դարման չկայ, այս տղան միշտ պիտի խօսի:

— Բայց տանը մէջ ա՛լ դիմացուելիք բան չէ:
— Բամպակ թխեցէք ականջնիդ, այս է միակ միջոցը,— պատասխանեց բժիշկը:
Յակառակ իր խօսելու մարմաջին՝ փոքրիկ Փանջունի յաճախ սխալ կը գործածէր բառերը, բոլորովին աղաւաղելով անոնց նշանակութիւնը: Օր մը սեղանի մը վրայ դրուած արժէքաւոր անօթ մը կ'առնէ ու գետին նետելով ջարդ ու փշուր կ'ընէ:
Հայրը, իրիկունը գործէն վերադարձին, կը տեսնէ եղածը, եւ տղան կանչելով ու անօթին կոտրուանքները ցոյց տալով կը գոչէ.
— Ծօ՛, ի՞նչ ես ըրեր անօթը:
— Շինեցի, հայրի՛կ,— կը պատասխանէ փոքրիկ Փանջունի միամիտ համոզումով մը:
— Ծօ ի՞նչ շինել, կոտրեր ես, շա՛ն զաւակ:
— Չէ՛, հայրի՛կ, շինեցի,— կը պատասխանէ տղան:
Ի զուր հայրը երկար բարակ կը բացատրէ թէ՝ երբ առարկայ մը գետին նետելով կտոր կտոր կ'ընենք, այդ գործողութիւնը «շինել» բայով չի բացատրուիր՝ այլ «կոտրել»: Անկարելի եղաւ բառագիտական այդ նրբութիւնը, հասկցնել Փանջունիին, որ շարունակեց տանը մէջ գտնուած գաւաթները, պնակները, շիշերը կոտրտել եւ ամէն անգամ որ «ի՞նչ կ'ընես կոր» ըսելով զինքը կը յանդիմանէին, անդրդուելի ու անխռով կը պատասխանէր.
— Կը շինեմ կոր:
Դպրոցին մէջ Փանջունի ընկերներուն հետ վիճելով ու ճառ խօսելով ժամանակ կ'անցընէր, իսկ դասերուն բնաւ չէր հետեւեր, չաւնելով կա՛մ դասագրքին, կա՛մ դասարանին եւ կամ տետրակին ու ծայրին:
Օր մը թուաբանական խնդրի մը մասին վէճ ունեցաւ իր դասընկերներէն մէկուն հետ:
— Յինգ անգամ հինգ՝ քսանըհինգ կ'ընէ,— կ'ըսէր ընկերը որ ողջամիտ տղայ մըն էր եւ որ յետոյ հարուստ վաշխառու մը եղաւ:
— Չէ՛,— կը յամառէր Փանջունի,— հինգ անգամ հինգ՝ յիսուն կ'ընէ:
— Ո՛չ, քսանըհինգ կ'ընէ:
— Յիսուն կ'ընէ:
Միւսը տեսնելով որ դժուար,— ի՞նչ կ'ըսեմ՝ անկարելի է,— խօսք հասկցնել Փանջունիին եւ չուզելով անօգուտ կռիւի մը տեղի տալ, հաշտարար ոգիով մը պատասխանեց.



— Լա՛, ես թո՛ղ այնպէս գիտնամ թէ՝ քսանըհինգ կ'ընէ, դուն ալ այնպէս գիտցիր թէ՝ յիսուն կ'ընէ, ու ա՛լ չխօսինք այդ մասին ու երթանք միասին գնդակ խաղանք:
— Չ'ըլլար,— պնդեց Փանջունի,— պէտք է որ նախ համոզուիս թէ հինգ անգամ հինգ յիսուն կ'ընէ:
— Այդ անկարելի է:
— Անպատճառ պէտք է որ քեզ համոզեմ,— շարունակեց մեր հերոսը հետզհետէ բորբոքելով:
— Երբեք չեմ կրնար համոզուիլ եւ դուն ալ երբեք չես կրնար ապացուցանել ըսածդ,— պատասխանեց ապագայ վաշխառուն:
— Չեմ կրնար ապացուցանե՞լ, չեմ կրնար ապացուցանե՞լ,— մռնչեց Փանջունի,— ա՛ռ քեզի համոզիչ ապացոյց մը:
Եւ գետնէն քար մը առնելով իջեցուց խօսակցին գլխուն:
Գլուխը վիրաւորուեցաւ թեթեւապէս, բայց տղան կրկին համոզում չգոյացուց թէ՝ հինգ անգամ հինգ կրնայ յիսուն ընել, եւ լալով գնաց բողոքել վարժապետին:
Վարժապետը խսկոյն կանչեց Փանջունին եւ՝
— Ինչո՞ւ ընկերոջդ գլուխը պատռեցիր,— գոչեց ձայնով մը, որով Եհովա ըսած էր Կայէնին. «Ի՞նչ ըրիր քու եղբօրդ»:
— Զինքը համոզելու համար,— պատասխանեց ապագայ փրոփականտիսթը հանդիսաւորապէս:
Հայրը տեսնելով իր զաւկին այս տարօրինակ ընթացքը, յաճախ ականջները կրծտելով կը պոռար.
— Փորձա՞նք պիտի ըլլաս, փորձա՞նք...
Խեղճ մարդը կը սխալէր իր լաւատեսութեանը մէջ: Փանջունի փորձանք պիտի չըլլար, այլ յեղափոխական գործիչ:

* * *

Տասնեօթ տարեկան պատանի մըն էր Փանջունի երբ իր հայրը կորսնցուց: Երէց եղբայրը, որ իրմէ տասը տարեկան մեծ էր, արդէն իսկ ամուսնացած, տուն տեղ եղած վաճառական մըն էր, բաւական լաւ դիրքի տէր: Իր հօր մահուընէ հազիւ ամիս մը ետքը Փանջունի արդէն գժտուած էր անոր հետ եւ տունը թողած՝ պահանջելով իր ժառանգութեան բաժինը: Եղբայրը, առանց դժուարութեան, անմիջապէս յանձնեց 300 ոսկիի մօտ գումար մը, որ Փանջունիի ամբողջ ժառանգութիւնը կը ներկայացնէր:

Մեր պատանին դրամն առնելով Պոլիս եկաւ, երեք տարի անձնդիւր կեանք մը վարեց եւ օր մըն ալ տեսաւ որ փարա մը չէ մնացած գրպանը: Այն ատեն եղբայրասիրական զգացումները արթնցան իր մէջ, գորովալից նամակ մը գրեց Տրապիզոն եւ իր կարօտակէզ սէրը յայտնելով՝ ճամբու ծախք մը ուզեց իր հայրենի երդիքը վերադառնալու համար:

Եղբայրը «կորուսեալ էր եւ գտաւ»ի տպաւորութեան տակ՝ իսկոյն պէտք եղած գումարը ղրկեց Փանջունիի, որ շաբաթ ետքը հասաւ Տրապիզոն ու ինկաւ եղբօրը թեւերուն մէջ:

Փանջունի տեսաւ, որ երեք տարուան միջոցին իր անդրանիկը կրկնապատկած էր հարստութիւնը եւ շնորհիւ իր գործունեայ աշխատասիրութեան, քաղաքին մէջ առաջնակարգ դիրք մը գրաւած. միւս կողմէ տեսաւ նաեւ, որ այդ ժամանակամիջոցին ինք փճացուցած էր ամբողջ իր ժառանգութիւնը եւ այսօր փարա մը չկար գրպանը: Այս երկու տեսողութիւնները իրարու մօտեցուց, իրարու խառնեց, բաղադրեց, քննեց, տարրալուծեց եւ այդ քիմիական գործողութիւններէն իր մէջ ծնաւ Ընկերվարութիւնը:

Այն ատեն ըմբռնեց թէ ի՜նչ դժոխային անարդարութիւն էր քափիթալիսմը, եւ թէ ի՛նչ հրամայողական պահանջք էր հարստութեան հաւասար բաժանումը: Փանջունի գտած էր իր Դամասկոսի ճամբան, «Եղիցի Լոյս»ը հնչած էր մտքին մէջ:

Ընկերվարական էր:

Ու ա՛լ Տրապիզոնի խաղաղիկ սրճարաններուն մէջ, առտուընէ մինչեւ իրիկուն, կը լսուէր Փանջունիի ձայնը, որ կը գոռար կ'որոտար ընկերային անիրաւութեանց դէմ, որ կը սպառնար կործանել, բնաջինջ ընել ամէն բան: Վեհերոտները սարսափահար մտիկ կ'ընէին իրեն, միամիտները ապշահար կը նայէին այդ անդադար խօսող մարդուն, իսկ խելացիները քիթերնուն տակէն խնդալով՝ կ'երթային իրենց գործին:

Իսկ ա՛ն կը խօսէր, կը խօսէր ու կը խօսէր:

Խեղճ եղբայրը՝ շուարած, շլմորած՝ չէր գիտեր ինչպէ՞ս ազատիլ այս փորձանքէն:

Վերջապէս օր մը ըսաւ Փանջունիի.

— Եղբա՛յր, բան մը մտածեցի:

— Զարմանալի՜ բան,— պատասխանեց մեր հերոսը:

— Ինչո՞ւ, ի՞նչ բան զարմանալի կը գտնաս,— հարցուց միւսը շփոթած:

— Զարմանալի է որ բան մը կրցած ես մտածել,— ըսաւ Փանջունի,— որովհետեւ դուք վաճառականներդ, քափիթալիստներդ մտածելու կարողութիւն չունիք:



Փանջունի այսպէս սիրուն խօսքեր շատ ունէր եւ եղբայրը վարժուած էր անոնց, ուստի առանց բարկանալու իր խօսքը շարունակեց.

— Մտածեցի, որ փոխանակ հոս պարապ ժամանակ անցնելու, քեզ Մարսիլիա Վաճառականական դպրոցը ղրկեմ, ուր երեք տարի մնալով կրնաս վկայականդ առնել եւ հոս վերադառնալ, ուր միասին կը շարունակենք իմ գործս:

Եւրոպայի մէջ ուսանող ըլլալու գաղափարը ժպտեցաւ Փանջունիի, որ անմիջապէս պատասխանեց.

— Շատ լաւ գաղափար է եւ սիրով կ'ընդունիմ:

Ամիս մը վերջը Փանջունի երկու ծեռքը մէյմէկ պայուսակ ժոլիէթի քարափը կը դնէր ոտքը:

Շաբաթ մը մնաց Մարսիլիոյ մէջ, Վաճառականական դպրոցը այցելեց, ծրագիրը աչքէ անցուց, գործին չեկաւ ու շոգեկառք նստելով գնաց Ժնեւ, ուր արձանագրուեցաւ իբրեւ Սոցիալ Գիտութիւններու ազատ ուսանող:

Սոցիալ Գիտութիւններու ազատ ուսանողի կեանքը չորս տարի տեւեց եւ այդ չորս տարուան միջոցին Փանջունի հինգ անգամ գնաց այն համալսարանը, ուր արձանագրուած էր:

Առաջին անգամ՝ սուլելու համար պատմութեան դասախօսը, որ ֆրանսական Մեծ Յեղափոխութիւնը գովաբանած էր, պախարակելով սակայն Պապէօֆի եւ իր կուսակիցներուն յախուռն գաղափարները: Երկրորդ անգամ գնաց ցոյց մը ընելու համար ընկերվարական դասախօսի մը դէմ, որ քննադատած էր ռուս ոչնչականութիւնը: Երրորդ անգամ գնաց բողոքելու իմաստասիրութեան ուսուցչին դէմ՝ որ պէտք եղած խանդաւառութիւնը ցոյց չէր տուած Քրոփոթքինի վարդապետութեանց: Չորրորդ անգամ՝ ծմեռ ատեն՝ գնաց համալսարան, որովհետեւ իր սենեակին մէջ ցուրտ էր ու վառելանիւթը կը պակսէր եւ գարեջրատուն երթալու դրամ չունէր քովը: Եւ վերջապէս՝ հինգերորդ անգամ գնաց սպանացի ուսանողներու հետ ծեծ մը քաշելու ուսուցիչի մը, որ Պարսելոնի անիշխանական արարքները քննադատած էր: Այս վերջին այցելութիւնը պատճառ եղաւ, որ զինքը արտաքսեն համալսարանէն եւ անունը ջնջեն ուսանողներու արձանագրութեան տետրակէն:

Համալսարան յաճախած այս սուղ վայրկեաններէն դուրս, Փանջունի իր ժամանակը կ'անցընէր հայ եւ ռուս յեղափոխական ընկերներու հետ վիճաբանելով ընկերային հարցերու մասին: Գարեջրատուները,

որոնց մէջ կը լուծուէին մարդկային ընկերութիւնը տանջող բոլոր խնդիրները, իր գլխաւոր կայաններն էին, իր անառիկ մարտկոցները, ուրկէ կը ռմբակոծէր աշխարհի բոլոր կեղտոտ պուրժուաները, կեղեքիչ քափիթալիստները, չխնայելով նոյնիսկ եղբօրը՝ որ կը շարունակէր ամսական երկու հարիւր ֆրանք ղրկել, ո՛չ թէ խեր մը սպասելով Փանջունիէն, այլ որպէսզի ականջը տինճ ըլլայ:

Եւ սակայն 95ի ջարդերը վրայ հասեր էին, եղբօրը գործերը աւրուեր, ինք հալածուեր, բանտարկուեր, փճացեր էր եւ օր մըն ալ ստիպուեր էր ամէն բան թողլով կինն ու զաւակները առնուլ եւ հեռանալ Տրապիզոնէն դէպի արտասահման:

Նամակ մը ստացաւ Փանջունի, որով իրեն իմաց կը տրուէր թէ այլեւ եղբօրմէն տասը փարա յուսալու չէր:

— Կեղտո՜տ արարած,— գոչեց Փանջունի, բռունցքը սպառնագին դէպի վեր բարձրացնելով:

Այսպիսի ժեսթեր յաճախ ունէր մեր հերոսը, որ իր ըմբոստ խառնուածքը կը յատկանշէին:

Ամսական 200 ֆրանքի այս յանկարծական դադարումը խանգարեց իր Սոցիալ Գիտութիւններու ազատ ուսանողի հանգստաւէտ կեանքը, որով կը յուսար տակաւին երկար տարիներ ապրիլ: Կամաց կամաց չքաւորութիւնը իր ժանտ երեսը ցուցուց եւ Փանջունի իր անձին վրայ ճանչցաւ *paupérisme*ը իր ամէն անհաճոյ երեւոյթներովը:

Իր ուսանող բարեկամները ժամանակ մը օգնեցին իրեն. բայց օր մըն ալ երթաս բարովը դրին, թէեւ շատ փափկօրէն:

— Ինչպէ՞ս այս վատ դրութենէն դուրս պիտի ելլեմ,— ըսաւ այդ յուսահատական օրերուն իր բարեկամներէն մէկուն, որ ուսանող, յեղափոխական եւ խմբագիր էր միանգամայն:

— Եկո՛ւր քեզ յեղափոխական գործիչ շինենք,— ըսաւ բարեկամը,— խօսելու դիւրութիւն ունիս՝ այդ բաւ է:

Ծովը ինկողը օձին կը փաթթուի, կ՚ըսէ առածը, մեր մէջ ալ կարելի է ըսել թէ՝ անօթի մնացողը յեղափոխական կ՚ըլլայ:

Փանջունի ընդունեց առաջարկը:

Ամիս մը ետքը մեր հերոսը ճամբայ ելաւ դէպի Պուլկարիա «կենաց բանը» քարոզելու, յետոյ անցաւ Յունաստան, յետոյ՝ Եգիպտոս եւ ի վերջոյ Պարսկաստան եւ Կովկաս: Իր տաք, համոզուած, եռանդուն ու անխոնջ պերճախօսութիւնը կը հրդեհէր սառած հոգիները, կը պրկէր, կը զօրացնէր թուլցած ջիղերը եւ կը խանդավառէր միամիտ էութիւնները:



Իր պաշտօնն էր ֆետայիներու հրոսախումբեր կազմակերպել ու զանոնք երկիր ղրկել, ինք մնալով արտասահմանի մէջ:

— Մենք ժամկոչներու կը նմանինք,— կ՚ըսէր յաճախ,— զանգակահարութեամբ ուրիշները կը հրաւիրենք ու եկեղեցի կը մտցնենք, իսկ մենք դուրսը կը մնանք:

Ազնի՜ւ անձնազոհութիւն:

Փանջունի յեղափոխական այս տենդոտ գործունէութեան մէջ էր պարսկական սահմանագլխին վրայ, երբ յանկարծ լուր ստացաւ թէ Սահմանադրութիւնը հռչակուած է Թուրքիոյ մէջ, բանտարկեալներու ընդհանուր ներում եղած է, մամուլի ազատութիւն տրուած է եւ թէ ամէն մարդ ազատօրէն կրնայ Թուրքիա մտնել:

Այս անակնկալ եղելութիւնները ափ ի բերան թողուցին մեր հերոսը:

— Մեր գործը պրծաւ,— մտածեց մելամաղձոտ մտատանջութեամբ մը:

Սակայն Փանջունի իր յստակատեսութեանը մէջ կը սխալէր: Բուն գործը հիմա պիտի սկսէր:

Երբ քանի մը շաբաթ ետքը ստացաւ Կ. Պոլսոյ հայ թերթերը, երբ տեսաւ կուսակցութիւններու խելայեղ արշաւանքը հնոյն Բիւզանդիոնի վրայ, երբ կարդաց խօսուած ճառերը, պոլսեցիներու միամիտ խանդավառութիւնը, «Ազատութիւնը մենք բերինք»ի հրաշալի գիւտը, աւելի սահմռկեցուցիչ քան Մառքոնիի անթել հեռագիրն ու Ռէօնթկէնեան ճառագայթները, այն ատեն մեր գործիչը լայնեցր գլխարկը գլուխը դրաւ, պայուսակը ձեռք առաւ եւ օր մըն ալ օդաքարի մը պէս ինկաւ Պոլիս, ինքն ալ իր կարգին քիչ մըն ալ ճաթեցնելու համար տրամադիր գլուխները:

Բայց տեղերը բռնուած էին, ուշ հասած էր Օֆէնպախի *brigands*երու զինուորներուն պէս: Իրա՛ւ է որ ութը տասը «դասախօսութիւններ» ըրաւ թաղերու մէջ, իրա՛ւ է որ Բարիզի Կոնկրէսին հրաշքները հագներգեց Վոսփորի երկու ափերուն վրայ բայց, ափսո՜ս, ականջները ա՛լ սկսած էին յափրանալ: Բայց աստի, իր պերճախօսութիւնը չէր հասնէր Ակնունիներու եւ Շահրիկեաններու պերճախօսութեան կրակին, որուն վարժուած էին Պոլսեցիները, ինչպէս անշուշտ մենք՝ մեղաւորներս ալ՝ օր մը պիտի վարժուինք դժոխքի կրակին. ուստի իր խօսքերը յաճախ ցուրտ տպաւորութիւն մը կը թողէին ունկնդիրներուն վրայ:

Այն ատեն Փանջունի վճռական որոշում մը տուաւ:

Պոլսէն աւելի՝ հարկ անհրաժեշտ էր գաւառը զարթեցնել, լուսաւորել, յեղափոխել:

Ու մեկնեցաւ Արաբկիր, անկէ Ծապլվար, ուր հաստատեց իր գործունէութեան կեդրոնը:

Յետագայ նամակներուն մէջ պիտի տեսնենք այդ գործունէութիւնը, որ զուրկ չէ տեսակ մը վեհափառութենէ, գոնէ ոմանց համար:

## ՈՂՋՈ՜ՅՆ ՁԵԶ...

«Ողջո՜յն քեզ Հայ ժողովուրդ,— մեղա՜յ, Ողջոյն ձեզ Հայութեան մնացորդներ,— հեռուէն, շա՜տ հեռուներէն կու գամ:

Տէր–Զօրէն կու գամ՝ որուն կամուրջէն երեք հարիւր հազար հայեր անցան եւ որոնցմէ այսօր միմիայն հազար հինգ հարիւր կիներ ու որբ տղաք ողջ մնացին:

Կու գամ Օսմանիէէն, ուրկէ տեղատարափ անձրեւով մը վաթսուն հազար հայեր խարազանի հարուածներու տակ քշուեցան լեռնէ լեռ:

Կու գամ Բուզանդիէն դէպի Թարսուս տանող աղտալի ճամբայէն, ուր նորածին հայ մանկիկները եղեւիններու ներքեւ իրենց մայրերէն լքուած, մեր աչքերուն առջեւ բորենիներու եւ շուներու կեր կ'ըլլային:

Կու գամ Հալէպէն դէպի Տէր–Զօր երկարող այն անիծեալ անապատներէն, ուր տասնեակ հազարներով հայեր, երեք տարի վրաններու տակ, կոտորուեցան տենդէն, թիֆուսէն ու քանջքէն:

Կու գամ Մէպիլի վրաններէն, ուր անօթի ծնողքներ իրենց զաւակները անուրդի հանեցին եւ ուր տասը տարեկան աղջիկներ վաթսուն փարայի վաճառուեցան:

Կու գամ Սուրիայէն, ուր հարիւր հազարէ աւելի հայեր, բնաջինջ ըլլալու սպառնալիքին տակ, իրենց Աստուածը ուրացան:

Կու գամ Համայէն ու Հոմսէն, Մէսքէնէէն, Համմամէն, Միատոիինէն, Էլ Պուէբրայէն, Սուլթանիէէն ու Գոնիայէն, ուր երեսուն քառասուն հազար հայ որբուկներ մայրի՜կ մայրի՜կ կը ծըւան թուրք բնակարաններու խաֆեսներուն ետեւէն:

Կու գամ եղեռնի այն դժոխային վայրերէն, ուր Զօհրապներ, Ակնունիներ, Խաժակներ, Զարդարեաններ, Վարուժաններ, Քէլէկեաններ, Սեւակներ, Տաղաւարեաններ — վերջապէս ամբողջ ազգի մը ուղեղը ջարդ ու փշուր եղաւ Ճէնկիզ խաններու եւ Լէնկ Թիմուրներու արժանաւոր յաջորդներուն ձեռքով:

Ողջո՜յն ձեզ, Հայութեան խլեակներ»:

*«Ժամանակ», Կ. Պոլիս, 1918, 22–ը նոյեմբերի*



ՍԻՊԻԼ (ԶԱՊԵԼ ԱՍԱՏՈՒՐ)

## ԱՆՑՆԵԼՈՒ ՄՕՏ
**(հատուած)**

Մենք չենք սիրեր կեանքն յորդաշունչ, կենդանի,
Անցնելու մօտ իրերն ըզմեզ կը կարթեն.
Ու կը ցաւինք, երբ բախտն հեռու կը տանի
Ինչ որ երէկ արհամարհած ենք արդէն:

Մենք կը սիրենք, երբ արեւը ծիրանի՝
Հալած, հատած մոմի նըման ոգեվար՝
Ալիքներուն գոգն իյնալով շիջանի
Սողոսկելով խարակներէն զառ ի վար:

Ծաղիկները, զոր կը թողունք որ ցամքին
Թօնուտ օդին, ցուրտ արեւուն տակ աշնան,
Ծառաներու յանձնած կոպիտ խնամքին,
Թոռմելու մօտ՝ կարծես յանկարծ կ'անուշնան:

Սըրուակները, որոնց բոյրը կը հատնի,
Ա՛լ աւելի մեզ սիրելի կը դառնան,
Ինչպէս դեղնած սիրոյ քըղթիկ մը գաղտնի,
Զոր կը պահենք գուրգուրանքով անսահման:

Եւ մեր սէրը, ոսկեփետուր թըռչուն բիլ,
Զոր անսըւաղ կը լըքանենք շատ հեղ մենք,
Երբ թեւ կ'առնէ կ'ուզէ մեզմէ խուսափիլ,
Դողդըղալով մեր հոգւոյն մէջ կը սեղմենք:

Մըրմունջները, որոնք հեռուն կը մարին՝
Կոչնակները, հաչիւնն անգամ շուներուն,

Գորշ ամպերն իսկ փակած կապոյտ կամարին,
Մեկնելու մօտ՝ հըմայք մ'ունին օրօրուն:

Յուզմունքներն ալ կը վըրդովե՞ն մեր հոգին
Եթէ չըլլան երազի պէս թեւաւոր.
Եւ կեանքն արդեօք կ'ըլլա՞յ այնքան թանկագին,
Այնքա՜ն անուշ, երբ չըսպառնայ մահն անոր:



ՍԻԱՄԱՆԹՕ (ԱՏՈՄ ՅԱՐՃԱՆԵԱՆ)

## ՄԱՀՈՒԱՆ ՏԵՍԻԼՔ

Կոտորա՜ծ, կոտորա՜ծ, կոտորա՜ծ...
Քաղաքներուն մէջ եւ քաղաքներէն դո՜ւրս,
Եւ բարբարոսներն արիւններով կը դառնան,
Մեռելներուն ու ոգեվարներուն վրայէն,
Ագռաւներու բազմութիւններ կ'անցնին վերերէն,
Արիւնոտ բերաններով ու գինովի քրքիջներով...
Ցամաքահով մը կիսամեռները զայրոյթով կը խեղդէ,
Ու պառաւներու անձայն կարաւաններ
Շտապով կը փախչին լայն ճամբաներէն...:
Գիշերին մէջէն արիւններուն ալիքը կը բարձրանայ,
Ծառերուն հետ չատրուաններ ուրուագծելով,
Ու ամէն կողմէ սոսկումով կը սուրան հալածուած՝
Նախիրները հրդեհուող ցորեաններուն մէջէն...
Փողոցներուն մէջ մորթուած սերունդներ կը տեսնեմ
Եւ ամբոխներ անպատմելի սրածութենէ դարձող,
Արեւադարձային տաքութիւն մը կը բարձրանայ
Հրդեհի տրուած ազնուական քաղաքներէն...
Ու մարմարի ծանրութիւնով իջնող ձիւնին տակ
Աւերակներուն եւ մեռելներուն մենութիւնը կը մսի.
Օ՜, մտիկ ըրէ՜ք սա սայլերուն ճռնչիւնն ահաւոր,
Իրենց վրայ դիզուած դիակներուն տակ,
Ու սգաւոր մարդերուն աղօթքներն արցունքոտ,
Որ կածանէ մը դէպի համայնափոսերը կ'երկարին.
Մտիկ ըրէ՜ք հոգեվարքներուն ձայները վերջին,
Յովին հարուածներուն մէջ, որ ծառերը կը ջարդէ,
Օ՜, մի՛ մօտենաք, մի՛ մօտենաք, մի՛ մօտենաք,
Չըլլայ որ մօտենաք գերեզմանոցներուն եւ ծովուն,
Կարմիր ջուրերուն վրայ նաւեր կը նշմարեմ հեռուն,
Մեռելներու կուտակումներ անոնց մէջ կան,

Ու ցաւէն գալարուող ալիքներուն վրայ
Գանկեր ու սրունքներ ինծի կ'երեւան…
Մտիկ ըրէ՛ք, մտիկ ըրէ՛ք, մտիկ ըրէ՛ք
Փոթորիկին գոչը ծովուն ալիքներուն մէջ,
Կոտորա՜ծ, կոտորա՜ծ, կոտորա՜ծ…
Մտիկ ըրէ՛ք, մտիկ ըրէ՛ք, մտիկ ըրէ՛ք
Մահածայն ոռնումը զարհուրեալ շուներուն,
Յովիտներէն ու գերեզմաններէն ինծի հասնող,
Օ՜, պատուհանները փակեցէ՛ք ու աչքերնիդ ալ,
Կոտորա՜ծ, կոտորա՜ծ, կոտորա՜ծ…:

## ԵՍ ԵՐԳԵԼՈՎ Կ'ՈՒԶԵՄ ՄԵՌՆԻԼ

Սպասումիս եւ Յոյսիս քաղցրութեանը հետ մինակ էի այդ իրիկուն.
Եւ Փրկութեան ու Տառապանքի նժարովը՝ Յայրենիքիս բախտը կը կշռէի…:
Երբ՝ հեռակայ տանս դուռը գիշերուան սարսափին մէջէն, ուժգնապէս բախեցին.
Եւ ժպտուն՝ ընկեր մը ներս մտաւ, շքեղօրէն գեղեցիկ, եղբայրաղէմ եւ ահաւոր…
Երիտասարդ էր: Աչուըներուն կայծը երկնքի աստղերէն էր որ կը ծորէր…
Եւ հասակին ձեւերը մարմարներու զօրութիւններէն էր կերտուած…
Մտածումը մարդկային արդարութեան էջերէն յստակօրէն ջահավառեալ…
Ճակտին վրայ իրենց ցաւի եւ բարութեան ծաղկըներն ունէին:

Մտերմաբար քովքովի, Յայրենիքին տառապանքէն կը խօսէինք,
Իր ծանրախոհ գլուխը սգաւոր կիսաստուածի մը արիւնոտ սրտին կը նմանէր…
Նայուածքները նայուածքներուն մէջ, նոյն ճակատագրին խորհրդանիշը փնտռեցին…
Եւ մեր սրտում ժպիտները հոգիէ հոգի մեղմօրէն ճառագայթուեցան:

Ժամերով լռին էր: Լռին էի: Յիշատակի հեծեծանքներ մեր աչքերը թրջեցին…



Եւ լամբարիս կապոյտ լոյսը, սեղանիս վրան, այլ եւս արիւններու նման վար կը թորար…
Տժգունեցայ ես՝ ինչպէս երազ մը որ առաւօտին երեւումէն կ'անհետի…
Բայց ինք՝ հերոսատիպ եւ հպարտ, ձեռքս ձեռքին մէջ՝ ոտքի ինծի ըսաւ…

— «Այս իրիկուն՝ հաւատքի եւ հրաժեշտի իրիկունս է, ընկե՛ր,
Երիվարս թամբած եմ արդէն՝ եւ կեանքի՛ ու կռիւի տենդէն՝ դուռիդ առջեւը կը վրնջէ…
Եւ տե՛ս հասակէս վար անբիծ սուրս մերկ է, մերկութեամբը գերմարդկային վճիռներուն:
Ճակատդ շրթունքիս մօտեցո՛ւր… հաւատքի եւ հրաժեշտի իրիկունս է, ընկե՛ր:

«Եւ դուն սա՛ մաքրափայլ թերթերուդ վրան, ցեղին ցաւը եւ ցեղին ուժը բանաստեղծէ,
Ապագայ սերունդներուն եւ մեր անցեալին տխրութեանն ի նուէր.
Ես որբ մըն եմ եւ ըմբոստ մը, մնա՜ս բարեաւ, կորուսեալներս փնտռելու կ'երթամ…
Քու երգերէդ երգ մը տո՛ւր ինծ, երգ մը, ես երգելո՜վ կ'ուզեմ մեռնիլ…»:

## ՍԻՐԲ ՄԵՍՐՈՊ

### «ԳԻՏԻՆ ՓԱՌՔԸ»

**(հատուած)**

ՄԵՍՐՈ՜Պ, հայ դարերու դիմաց կեցող՝
Դուն ադամանդեայ ապառաժ,
Դուն, մանուկներու մերկ ուղեղէն
Մինչեւ հանճարը ցոլքեր ցանող,
Գիտակցութեանց անգիւտ փարոս…
Դուն որուն կոփիւնը կռանին,
Ժամերուն պէս, րոպէին հետ անդադար,
Իմացական թանգարանին արձանները մեզ կը ձուլէ…
Դուն աննինջ հսկող, դուն տիտանեան Տեսանող,

Դուն օրօրոցէն մինչ գերեզման,
Մեր մէն մի խօսքին, մէն մի շունչին
Գեղեցկածայն բացատրիչ...
Դուն բարբառի արարիչ, Բանի իշխան,
Դուն անբաւ բաւիղ տեւողութեան,
Դուն գոյացութեան արգաւանդ հայր,
Դուն լոյսի անիւ, դուն հաւատքի հրաւէր,
Դուն հայրենի հողին վրայ մրրիկին պէս բարձրացող
Անտառ անհուն, անտառ սրտի,
Որուն մէն մի հաստատաբուն ծառերն հսկայ
Մէկ մէկ քնար, մէկ մէկ փանդիռ են մեր շունչին...
Մէկ մէկ շեփոր մեր հագագին ռազմական,
Մէկ մէկ պատնէշ ճակատագրի պատուհասին...
Դուն անվատնելի ցորեանի դաշտ, դուն ծրի՜ հաց,
Դուն հունձք հարուստ, եւ դուն հնձան հրաշէկ,
Դուն արբեցութեանց եւ գինիի աւազան,
Որուն մէջ ես ալ ոսկի սափորս եմ մխրճեր...
Արեւներու ծարաւէս խենթ...

Դուն մեծաթափանց նայուածքներով առաքեալ,
Դուն էիր որ զքեզ երգող ցեղդ այսօրուան,
Հէլլէններէն ե՛ւ հանճարեղ ե՛ւ հրավառ,
Ու աշխարհակալ, մեծ Հռովմի որդիներէն
Ու հրապաշտ Պարսիկներէն դրացի,
Մայր–բարբառիդ հիմնաքարովը յակինթ,
Հայկազունեաց մեր շառաւիղն ազատեցիր...:
Դուն երկրո՛րդ Աստուած,
Եւ մտածման Դուն առաջի՛ն արարիչ...:
Դուն բեղուն բարիք, սրտի աղբիւր,
Գոյներու գանձ, գթութեանց գահ,
Դուն թռչող դարերն մէկզմէկու կամարող՝
Կամուրջ անգիծ, ուրկէց ցեղդ միլիոններով՝
Կամ պերճօրէն կամ վատաքար...
Կեանքէն ի մահ կու գայ կ՚անցնի...:



Դուն Հէլլէններէն հռչակուած
Մեծատիտղոս Ակումիդ,
Ո՜վ մենակեաց, ո՜վ Մագիստրոս, ահաւասիկ,
Երկու Հայքերն «Ովսաննա՜յ քեզ» կը գոռան...
Եւ ովսաննայ Վաղարշապատի Հայրապետին,
Սահակ Պարթեւ զուգակշիռ արքանեակիդ,
Եւ Վռամշապուհ Արքային,
Որովհետեւ քու մեծ գիտիդ զօրավիգ,
Մէկն իր Խաչին, միւսն իր Սուրին համազօր
Քու քայլերուդ հետ՝ քալելով՝
Արարատեան արշալոյսին,
Դպրութեանց դուռը մեզ բացին...:

Եւ անուրջին մէջ ծնանող ծաղկի ծիլէն,
Ու բողբոջէն դեռ անբոյս,
Դուն մարող լոյսէն, դուն տեսլական ստուերէն,
Անգոյն գիծէն եւ երազի վսեմ վարդէն,
Դուն ոլորտէն, անձայն շեշտէն, անգոյն բառէն,
Դուն ծածանող եւ անարմատ ծուէններէն
Դաշնակութեանց Ալփափետան ստեղծեցիր...
Եւ Չորրորդ դարու Ոսկի Սեմէն,
Մինչեւ մեր օրը, մեր արիւնովը մթին՝
Ահաւասիկ Հայ Հանճարը բազմալար
Քու ձեւերուդ մէջ կը ձուլուի...:

Եւ այսօր, քու սրբութեամբդ սնած՝
Ես ապաժաման քնարահար,
Եւ անվճար ու անարժան երախտագէտ,
Ես քու ցեղիդ հոգիին՝ հայելին քեզ կը բերեմ...
Աչքերուս մէջ անոր աչքէն հուր առի...
Ու իմ խօսքերս անոր սրտէ՛ն եմ քաղեր.
Եւ ի՛նչ որ կարդաս ճակտիս վրան,
Ի՛նչ որ կարդաս ժպիտիս մէջ,
Անոր Յոյսո՜վն եմ ես գրած...
Եւ թոյլ տուր այսօր, ո՜վ Մեսրոպ,

Որ՝ Հայոց հողէն մինչեւ աստղերը հասնող,
Քու ոսկիէ սանդուխէդ վեր բարձրանամ,
Եւ հաստատաքայլ, աստիճանէ աստիճան
Ու պսակէ ի պսակ եւ լոյսէ ի լոյս,
Իբր զաւակ մը մտածումիդ,
Ես ի քե՛զ գամ, իմ այս երգս երգելու...:



## ՄԻՍԱՔ ՄԵԾԱՐԵՆՑ

### ՁՄՐԱՆ ՊԱՐԶ ԳԻՇԵՐ

Համբոյրիդ, գիշե՛ր, պատուհանս է բաց,
Թո՛ղ որ լիառատ ծծեմ՝ հեշտագին
Կաթը մեղմահոս լոյսիդ տարփանքին՝
Ու զով շաղերուդ կախարդանքը թաց:

Պարզ, լուսածածան, հրաշալի՛ գիշեր,
Հոսէ՛ սրտիս մէջ դիւթանքիդ ալիք.
Ճերմակ երազիդ ցայտքերէն մեղրիկ
Պուտ պուտ կաթեցո՛ւր հոգւոյս սիրաջեր:

Կ՚ուզեմ որ դադրին ծայներն այս պատիր,
Ու ճեկտարիդ դողն ըմպեմ ես անյագ.
Կ՚ուզեմ որ մեռնի՜ն տիւ ու ժամանակ
Ու դաբիրներուդ հյնամ ծնրադիր:

Ու դաբիրներո՛ւդ հյնամ ծնրադիր,
Այս պաղատագին շարժուձեւիս մէջ,
Ու մինչ կ՚ողողեն զիս ցոլքերդ անշէջ,
Աչքերս ալ մոռնան տակաւ այս նատիր:

Ցնորաբե՛ր գիշեր, ա՛հ, ընդունէ՛ զիս,
Ընդունէ՛, միստիք ո՛վ անդորրութիւն,
Իմ աղերսակոծ շունչիս սօսաւիւն,
Եւ համբոյրն անանց՝ զոր կու տայ հոգիս:

Սեմեակս է լեցուն յուշքերովն ադի
Երէկի հովին վայրագ տարփանքին.
Ու դեռ կը հծծեն խորշերն ողբագին
Վախը գրգանքին անոր կատաղի:

Նե՛րս խուժէ ուժգին, նե՜րս պատուհանէս
Ու լեցուր խցիկս, մինչեւ կաթոգին
Քու սրբութիւնով իր խորշերն յորդին,
Եւ ես արթննամ վաղնջուց քունէս:

Համբոյրիդ, գիշե՜ր, պատուհանս է բաց,
Թո՛ղ որ լիառատ ծծեմ՝ հեշտագին
Կաթը մեղմահոս լոյսիդ տարփանքին՝
Ու զով շաղերուդ կախարդանքը թաց:

## ԻՐԻԿՈՒԱՆ ԻՂՁ

Իրիկուան մէջ անհետելու յոյսն ունենալ,
Եւ յանձնըուիլ նուրբ կածանի մը քըմայքին.
Խորխի մը պէս թողո՜ւլ ձանձրոյթն ու հափրա՜նքն ալ,
Եւ անդորրով պատմուճանե՜լ հիւանդ հոգին:

Ու լոյսերով պարածածկել հիւանդ հոգին.
Քոյր ունենալ ջուրին կարկաջն ու կապոյտ բալ,
Եւ ունկնդրել ճամբուն քովերն երգող սիւքին,
Մեծ քաղցրութեան մը խառնըուիլ, ու մենանա՜լ:

Ընկե՜րն ըլլալ ցորեններուն. մրգաստանին
Դուռը բանալ զաւկի մը պէս, մըտերմօրէն,
Ու թողուլ որ շահարիկներ ըզքեզ տանին

Թեւապարփակ՝ լայն լըռութեան մը համօրէն:
Հոն շրջասփիւռ ծառերուն հետ եղբայրանա՜լ.
Տարփո՜ղն ըլլալ ծաղիկներուն. ծովածաւալ

Իրիկուան մէջ՝ անհետելու յո՜յսն ունենալ...



## ԿԻՐԱԿՄՈՒՏՔ

«...եկեալքս ի մտանել արեգականն տեսաք զլոյս երեկոյիս...»

Յուշիկ փախչող իրիկուան ծիրանի լոյսն է զըւարթ...
Ոսկի թելեր՝ պլլըւած խունկի թաւիշ մըշուշին.
Կապոյտ ծոպեր, ծիածան, ծփուն ծայներ, միստի՜ք վարդ,
Լոյսէ արցունք մոմերու՝ որոնք հանդարտ կը մաշին:

Խունկի ծարաւ իմ հոգիս կը ծըծէ պահն այս հանդարտ,
Ոսկեկըրակ աչքերով բուրվառներն երբ կը ճօճին.
Պակուցում մը հոգեգրաւ հոն կը թողու զիս անթարթ,
Կը զգամ համբոյրն իմ հոգիս պարուրող բիլ մարմաշին:

Մեղեսիկի երանգներ կ'օծեն պարոյրը խունկին.
Խորհուրդին եմ ծնրադիր բազուկներըս խաչանիշ՝
Ու կը սպասեմ որ ծագի հոգւոյս պայծառ Կիրակին...

Ձահերն հիմակ կ'երազե՜ն համակ զիւմրիւթ ու թարշիշ...
Կամարներէն, խորանէն կը ծագին լոյս ու ծիծաղ.
Հոգիս քիչ քիչ կը թաղուի անուրջին մէջ այս չքնաղ:

Յուշիկ փախչող իրիկուան ծիրանի լոյսն է զըւարթ...

## ԸԼԼԱՅԻ՜, ԸԼԼԱՅԻ՜

### ԻՐԻԿՈՒՆԸ

Սա իրիկունն ըլլայի ես,
Եւ հըպէի ճակտին ամէն անցորդի.
Չքնաղագեղ ու նըւաղուն, յամուրդի
Սա իրիկո՜ւնն ըլլայի ես:

Սա իրիկունն ըլլայի ես,
Լի երգովը թռչուններուն, մարդերուն,
Ու տարրերուն աղաղակովը տրոփուն՝
Սա իրիկո՜ւնն ըլլայի ես:

Սա իրիկունն ըլլայի ես,
Թոյլ, նազենի, շըղարշային, վարդաբոյր,
Ու ծըփայի զերթ ոսկեսար վարագոյր
Վըրան ամէն հոգիի:

Սա իրիկունն ըլլայի ես,
Լի զանգակին ղօղանջներովը երկնաճեմ.
Խնկապատար, օծուն, ջահուած ժամի պէս
Սա իրիկո՜ւնն ըլլայի ես:

Սա իրիկունն ըլլայի ես,
Իմ անդորրիս մէջ ոգեւար աղջըկան
Մարող ծրագին բոցեր տալու իմ ցոլքէս.
Սա իրիկո՜ւնն ըլլայի ես:

Սա իրիկունն ըլլայի ես,
Լի գոռ ծափովն ովկիանի ջուրերուն.
Սիւքին ծաղիկ մեղեդիքովն ականձուն,
Սա իրիկո՜ւնն ըլլայի ես:

Սա իրիկունն ըլլայի ես,
Որ կը մարի սատափ բարձին վրայ ցայգուն.
Թօթափող վարսքը գունագեղ ու ծըփուն,
Սա իրիկո՜ւնն ըլլայի ես:

Սա իրիկունն ըլլայի ես,
Համայնական, չքնաղ, քաղցրիկ լուսագէս՝
Եւ ամէնուն տայի հուրքէս, ոսկիէս:
Սա իրիկո՜ւնն ըլլայի ես:



## ՀԻՒՂԸ

Դաշտի ճամբու մը վըրան,
Կամ ստորոտը լերան,
Ուղեւորին ժամանման
Սպասող հիւղն ըլլայի:
Ու գգուանքիս կանչէի
Ես ճամբորդներն անժաման,
Ու ճամբուն վրայ մենաւոր,
Ու ճամբուն վրայ ոսկեման,
Եկուորներուն դիմաւոր՝
Ծխանիս ծուխն ամպէի:

Ու գրգանքիս կանչէի
Ուղեւորներ պարտասուն,
Ու բարեւի մը փոխան
Հազար բարիք ես տայի,
Հազար բարիք ես տայի
Գոլը կրակին ճարճատուն,
Կուքքը բերրի դաշտերուն,
Բոլոր միրգերն աշունի,
Ու մեղր ու կաթու գինի...

Ու լսէի ես ցայգուն,
Քովը կրակին ճարճատուն՝
Երգն իրիկուան եկուորին.
Ու ջամբէի ես ցայգուն
Երազներով պատարուն
Նինջ՝ իրիկուան եկուորին:

Ու լսէի ես այգուն,
Սրտապատառ ու տրոփուն
Գովքն իրիկուան եկուորին.
Ու դիտէի ես այգուն,
Ու խոնկայի օրն ի բուն
Երբն իրիկուան եկուորին...

Ու ձմեռներն ալ համբուն,
Յրաւիրակ գուարթուն,
Կանգնէի քովը ճամբուն
Ու ձիւնապատ հէք մարդուն
Ես հայրօրէն, լայնաբաց
Երկու թեւս պարզէի.
Մի՛շտ քաղցրագին, նիւթացած
Յրաւէ՛րն ես ըլլայի։

Ա՛հ, ըլլայի՛, ըլլայի՛,
Դաշտի ճամբու մը վրան
Կամ ստորոտը լերան,
Ուղեւորին ժամանման
Սպասողն հի՛ւղն ըլլայի։

## ՏՈ՛ՒՐ ԻՆՁԻ, ՏԷ՛Ր…

Դուրեան Սրբազանին

Տո՛ւր ինծի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնական.
ծաղիկներու պէս զայն ժողվեմ ճամբուս վրան՝
նայուածքներուն մէջ ամէնուն եւ ամէն օր։

Տո՛ւր ինծի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնական.
եւ ես հանգոյն երփնալուցկի վառող մանկան՝
զայն գունաժպիտ տեսնեմ ուրիշ դէմքի մը վրան։

Տո՛ւր ինծի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնական.
զանգակներո՛ւ պէս զայն կախեմ ամէն դըրան՝
ու զերթ նարօտ ամէն դըրան զայն պըսակեմ։

Տո՛ւր ինծի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնական.
ճրագներու պէս զայն բոցեմ բազմաստեղնեան՝
խաւարին մէջ ամէն երդ ու խրճիթներու։



Տո՛ւր ինծի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնական.
զայն սրբասաց իմ հոգեակիս ընեմ խորան՝
զայն իմ մտքիս ծըխեմ՝ զերթ խունկ բազմաբուրեան։

Տո՛ւր ինծի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնական.
ու չըլլա՛յ որ ուրիշներու կոծն ու կական
խեղդել ուզեմ ջըրվէժին մէջ դափիս ձայնին։

Տո՛ւր ինծի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնական.
ու չըլլայ որ ծափիս ձայնին երգը՝ գուժկան
եսիս սենեա՛կն ունենայ՝ ցո՛ւրտ առանձնարան։

Տո՛ւր ինծի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնական.
ու սեղանիս վըրայ դրուած մէն մի նըկան՝
զոյգ մը խինդե՛ր գէթ ունենայ թող խաչանիշ։

Տո՛ւր ինծի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնական.
ու բախեմ զայն սրտիս ժայռին՝ իբրեւ մական՝
որ բխեցնէ ջուրն աներկմիտ երանութեան։

Տո՛ւր ինծի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնական.
զայն ջուրերուն վըրայ ձըգեմ իբրեւ ուռկան.
զայն իբր արօր ակօսներո՛ւն ձըգեմ վըրան։

Տո՛ւր ինծի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնական.
զայն իբր անձրեւ ցօղեմ ամէն դաշտի վըրան,
զայն իբր արեւ բաշխեմ ամէն հորիզոնի։

Տո՛ւր ինծի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնական.
զայն ընդգրկած՝ իտէալի՛ն ըլլամ որսկան.
զայն լաստ ըրած ես Լոյսերու նաւո՛րդն ըլլամ։

Տո՛ւր ինծի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնական.
ժողվել՝ հոգւոյն մէջ ծերերուն, կոյսին, մանկան,
պարզ մարդերուն՝ գեղջուկներուն ու բանուորին։

Տո՜ւր ինծի, Տէ՜ր, ուրախութիւնն անանձնական.
ժողվել՝ հոգւոյն մէջ ամէնո՜ւն, համայնական
հոգւոյն ամէն մասնիկներուն մէջ՝ ամէն ժամ:

Ճամբաներէն, ու գետերէն, ու դաշտերէն,
անտառներէն, ու լեռներէն, ու ձորերէն,
տանիքներէն, ու տուներէն, ու դուռներէն՝

Տո՜ւր ինծի, Տէ՜ր, ուրախութիւնն անանձնական:

## ԻՐԻԿՈՒՆՍ

*Բանաստեղծ Վահրամ Թաքուլին*

Իրիկունս է բարի՜, բարի՜, ու լիաձեռն ու հոտեւան.
Ոսկի ուղ մը՝ կամուրջ եղած ընդմէջ տիւին ու գիշերուան:
Վարսադիտակ ծառերուն տակ կը կղկաթիմ լոյսին համար.
Արեւին պերճ լոյսին համար՝ որ կը փաղփի քրքմանըկար
Մէջն հոտեւան ծայրիներու ծայրածաւալ ծաղիկներուն՝
Ուր դիցանուէր բաժակներու քամեց ամբրոսն անյագ մեղուն:
Ծառոց ետին ճաճանչաւուխտ պաստառ մըն է արեւն ոսկի,
Ուր ծաղկածին ուղեշներու ճամուկ հիւսքը կը սողոսկի:
Ու գեփիւռն ալ, կայտռուն համբոյր, մանկութիւն մ'է վերադարձած.
Ու ջրցայտքն ալ՝ փսփսուքն է բարեկամին՝ մըտերմասաց:
Սիւքն աղջընակ՝ որ հիւսիսէն կը քնքշանայ հոգւոյս վըրան.
Ու ջրցայտքն՝ որ լաջակ կ'ըլլայ նարկիսներու գլխուն դեղձան,
Կամ արտասուք՝ աչքերուն մէջ շահպրակներու հոյլին ցիրցան
Ու քաղցրութեամբ կ'օծէ մենիկ ծաղիկներուն այդ լըռարան:
Ու թերթիկներ՝ շահարիկի շընորհք՝ կ'իյնան ափերուս մէջ,
Բաց ափերուս՝ որ կ'երկարին լոյսի խուրձին փողփողենէջ:
Ահա՜ կ'անցնի, մըշուշուած բիլ կազով տեսիլ մ'ալ զերթ ալիք.
Զարմանուհի մ'է վարսագեղ, կաթ ու վարդի՜ հըրաշալիք…
Յաւերժահարս կաթ ու վարդէ, ծաղիկ, ճաճանչ, ջուր ու գեփիւռ…
Շա՜տ էր լեցուն հոգւոյս, ո՜վ Տէր, բազմագեղումն այս շրջափիւռ…



## ՍԻՐԵՐԳ

Գիշերն անոյշ է, գիշերն հեշտագի՜ն,
Յաշիշով օծուն ու բալասանով.
Լուսեղէն ճամբէն ես կ'անցնիմ գինով՝
Գիշերն անոյշ է, գիշերն հեշտագի՜ն…:

Յամբոյրներ կու գան հովէն ու ծովէն,
Յամբոյր՝ լոյսէն որ չորս դիս կը ծաղկի,
Այս գիշեր Տօն է հոգւոյս՝ Կիրակի՜,
Յամբոյրներ կու գան հովէն ու ծովէն:

Բայց լոյսն իմ հոգւոյս քիչ քիչ կը մաշի՜.
Շրթունքս են ծարաւ միակ համբոյրին…
Ցնծագին գիշերն է լոյս ու լուսին՝
Բայց լոյսն իմ հոգւոյս քիչ քիչ կը մաշի…:

## ԱՔԱՍԻԱՆԵՐՈՒ ՇՈՒՔԻՆ ՏԱԿ

Ծաղիկներէն յուշիկ թերթեր կը թափէ
Բուրումներով օծուն հովիկն իրիկուան
Յոգիներուն կ'իջնէ երազ մը բուրեան,
Ի՜նչ հեշտին է մըթնշաղն այս սատափէ:

Աքասիաներ, գինով լոյսէ ու տապէ,
Օրօրուելով մաքուր շունչ մը կը հեւան.
Մինչ կը ծիւնէ ծաղիկն իրենց հոտեւան՝
Ջոր խօլաբար հովը գրկել կը շտապէ:

Ու լոյսն անոնց, անխօս հուրի՜ դիւթական
Յըմայագեղ ու վարսքերով արծաթէ,
Շատրուանին կ'իջնէ գուռին մէջ կաթէ:

Ջուրը ցայտքէն ծաղիկ ծաղիկ կը կաթէ.
Վրճիտ, ինչպէս լոյսէ արցունքը մանկան,
Նուագն անոր կը հեծեծէ հեշտական:

Ծաղիկներէն հովը թերթեր կը թափէ…:



ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ

## ԶԱՆԳԱԿՆԵ՜Ր, ԶԱՆԳԱԿՆԵ՜Ր…

Զանգակնե՜ր, բարի՜, բարի՜ զանգակներ,
Ի՞նչ բան կասեցուց ձեր գուժկան լեզուն.
Խօսք ելլել կ'ուզէ արիւնը վազուն…
Կը լռէ՞ք, բարի՜, բարի՜ զանգակներ:

Արդեօ՞ք ձեր միսթիք հագագն արոյրէ,
Ուր կեղե՜ւ կապեց աղօթքի փոշին
Եւ ուր կ'երազէ՜ր խունկի գոլորշին,
Յեղակարծ ցաւէն՝ անզօ՜ր կը լռէ:

Ո՛չ: Ձեր դարաւոր հոգին պղնձի
— Որ շա՜տ, շա՜տ յաճախ տեսեր է Բարին
Յաղթուած Չարէն — այժմ իր բարբառին
Ու իր Աստուծոյն վրայ կը կասկածի…:

Ա՜խ. որովհետեւ տեսա՜ք ձեր բարձրէն,
Յաւատաւորներ հազարով, բիւրով,
Ինկա՜ծ հեթանոս տապարով, բիրով,
Ձեր ոտքերուն տակ, երկիւղածօրէն…:

Ու ձեր գմբէթէն դիտեցէք անձա՜յն,
Թէ ինչպէ՜ս խնկոտ տաճարներու մէջ,
Ո՛րբ, կի՛ն, ծերունի՛, բոցերով անշէջ,
Իրենց Աստուծոյն գահին զոհուեցան:

Բա՜յց…: Գիտէք նաեւ թէ մեր դարաւոր
Դիակներու բուրգն ամպերէն անցա՜ւ.
Ու մեր արիւնին ժահրէն նեխեցաւ
Սրբութիւններու ծո՜յլ գունդն երկնաւոր…:

Արդ, ո՞ւր էք չքնաղ խոստումներ խաչին.
Եղբայրութեան զո՛ւր բարբառներ, ո՞ւր էք:
Կրակ կը փսխէ հողն ամէնուրեք…
Գետերն արիւնո՛վ, դիակո՛վ կ’ուռչին…:

Ու կ’հյնայ այն որ կը ծնկէ վախով.
Չի թուրն աւելի արդար է խաչէն,
Չի կեանքն անո՛նց է միայն որ քա՛ջ են,
Անո՛նց որ կ’ապրին ուրիշի մահով…:

Որովհետեւ դեռ հեռո՛ւ է օրն այն
Երբ գայլ ու գառնուկ սիրո՛վ կ’արածին…:
Թէ ապրիլ կ’ուզէ գառնը նորածին՝
Պէտք էր իր ակռան սրէ լռելեայն…:

Լռ՞ւռ էք, զանգակնե՛ր. Աստուա՛ծն է մեռեր:
Գո՛յժ տուէք Վաղուան. իր հա՛սկը մեռաւ:
Գո՛յժ տուէք Յայուն. զի ա՛զգը մեռաւ:
Զանգակներ, ծերո՛ւկ, բարի՛ զանգակներ…:

Ինչպէ՛ս կ’ուզէի ձերին պարանին
Կախուիլ ու ցնցել երկա՛թ բազուկով.
Անո՛նք որ ինկան բիւրո՛վ, քովէ քով,
Ձեր ղօղանջին հետ՝ լալու պէտք ունին…:

Յոգիիս հազա՛ր խուլ զանգակներով,
Գոռացէք, զանգե՛ր. ու կատաղօրէ՛ն
Գահավիժեցէք ձեր երկաթ թառէն,
Ուրկէ միա՛յն լա՛լ գիտցաք դարերով…:

Օ՛, ղօղանջեցէ՛ք. Աստուա՛ծն է մեռեր…:

**ԵՐԹԱ՛Լ**

Երթա՛լ, երթա՛լ, երթա՛լ անձայն, անհանդէս.
Երթա՛լ առուի՛ն պէս՝ մարգերու տակ անտես.
Կապոյտին մէջ՝ հեզ, հողմնավար ամպին պէս…

Երթա՛լ՝ առա՛նց գիտնալու թէ դէպի ո՞ւր.
Երթա՛լ՝ հեռու ոստաններէն այս տըխուր.
Երթա՛լ՝ խաւար գիշերին մէջ թաքթաքուր…

Երթա՛լ, երթա՛լ, երթա՛լ առանց ծըրագի.
Երթա՛լ՝ առա՛նց սուգի, լացի, փափաքի.
Երթա՛լ՝ առա՛նց սովի, պապակի…

Երթա՛լ՝ մարդոց կոյտին մէջէն լըռելեայն.
Օտար մընալ իրենց ցաւին, Գիտութեան.
Երթա՛լ՝ տըգէ՛տ, խուլ, հա՛մըր, կո՛յր յաւիտեան…

Չըգիտնա՛լ որ հոս Իտէալը չի կա՛յ…
Ուխտագընա՛ց երթալ ափերն հեռակայ,
Դէպի ուղին Երջանկութեան մշտակայ…

Աննիւթանա՛լ, անրջանա՛լ, վըսեմ, վէ՛ս.
Երթալ անցա՛յգ, անա՛յգ, երթա՛լ վերջապէս
Աչքերը գոց՝ ցայգաշրջիկ խենթին պէս…

Երթա՛լ, երթա՛լ, չը ճանչնալ Մարդ ու Աստուած,
Ձո՛յգ երթալ՝ ձեռքըդ քո՛յր ձեռքի մէջ դըրած,
Անրջանքի՛ն ու Սիրոյն պէս — Աքսորուա՛ծ…

ՌՈՒԲԷՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ

## ԾՈՎԱԿԻՆ ՀԱՐՍԸ
**(հեքիաթ)**

Ա.

Ծովակին երկու ափերուն վրայ, դէմ առ դէմ, երկու գիւղեր կային. մէկը մինչեւ հիմա կը մնայ դեռ, միւսը կորսուած է ջուրերուն տակ:

Այն գիւղին մէջ, որ ա՛լ հիմա չ'երեւար, մանկամարդ կին մը *ծովուն հարսը* կը կոչուէր. ամէն առտու արեւը ծագելէն շատ առաջ երբ ծովակը հովուն համբոյրներուն տակ իր ափերը կը զգուէ ու ալիքները հեռաւոր ծփանքներ կ'ոլորեն՝ ծովուն հարսը՝ հեռո՜ւն անորոշ լողացող սեւ թռչունի մը կը նայի որ կ'երթայ՜ կ'անհետի ու ծովուն մէջ կը կորսուի մանրացած:

Իր երեսներէն ծաթած շառաւիղները ջուրերուն մէջ կը թափէին, ու հասակը ուռիի մը կը նմանէր գետերուն ափունքն ի վար բուսած երկա՜յն ուռիներուն պէս, մազերը՝ բարտիներէն վար սողացող լուսնի շողեր կարծես՝ ուսն ի վար, աչքերն ալ լեռները փախչող եղնիկինը: Ու երբ ծովուն հարսը առտուանց ծովակէն կը հեռանար, ծուկերուն մէջ մոլեգին հուզում մը կ'իյնար: Այսպէս կը պատմէին ծերերը, որ հիմա իրենք ալ չկան:

Բ.

Ամէն գիշեր, կէս գիշերին ուշ ատեն՝ ծովակին ափունքին վրայ առկայծ լոյս մը կը դողդղայ ու անքթի՜թ ծովուն նշմար կու տայ. յանկարծ ջուրերուն մէջէն փրփուրի շառաչներ կը լսուին ու ճերմակ պղպջակի մէջ փաթթուած՝ ծովէ՜ն տղայ մը կ'ելլէ, գեղեցի՜կ, փրփուրներէն ծնա՜ծ կարծես: Ու ամէն գիշեր՝ միայնա՜կ, ծովի խիճերուն ու գորտերու քով, ամայութեան մէջ՝ ծովուն սիրահարները իրար կը սիրեն մինչեւ լոյս. մութ խաւարին մէջ՝ լռութիւնը կ'ընդհատուի միայն գորտերու կրկռուքներով, որոնք կ'երկարին ու ծովուն մէջ կը մարին:

Ու երբ արուսեակը ծայր կու տայ դիմացի գիւղին վրայ՝ լերան ետեւէն, ծովակի տղան զայն նշան կը բռնէ աչքով, ու թեւերը ալիքներուն



կ'երկարէ. սիրականը ետեւէն կը նայի ու կը նայի՜ երբ լողացողը կը պզտիկնայ, սեւ թռչուն մը կ'ըլլայ, յետոյ կէտ մը ու ա՛լ չ'երեւար:

Առտուանց լուսուն դէմ երբ ծովուն հարսը քայլերը կը դարձնէ ու տուն կը դառնայ, ալիքները ափերուն կը զարնեն ու ծուկերուն մէջ տարօրինակ հուզում մը կ'իյնայ:

Գ.

Օր մը դրացի պառաւ մը եղելութիւնը կը հասկնայ ու էրիկը իր կնոջը՝ ծովու հարսին գաղտնիքը կ'իմանայ:

Ճրագը իր տեղը այն գիշեր նորէն անկասկած իր նշանը կու տար. ու երբ տղան ծովակին կէսը հասած է ա՛լ՝ յանկարծ մութին մէջէն մոլեգնած ձեռք մը ճրագը գետին կը նետէ ու ծովու հարսին մազերը թեւը կը պլլէ. արցունք, աղերսանք, անգութ էրկանը մոլեգնութիւնը չեն կրնար իջեցընել. ու քարերուն վրայ մեռած միջոցին՝ հարսը կ'անիծէ էրիկը, կ'անիծէ պառաւը ու գիւղը՝ վերջին անգամ:

Միւս օրը, առտուանց, երբ արուսեակը կը ծաթէր հեռակայ լերան ետեւէն, ուր ամէն անգամ ծովուն սիրահարները կը բաժնուէին, իրիկունը լեռը պառկող հովիւը երբ գիւղ դարձաւ, ո՛չ գիւղ կար, ո՛չ մարդ. ջուրը կլլած էր ամէնքն ալ:

Հիմա ջուրին մէջ ամէն գիշեր, կէս գիշերին՝ նոյն գիւղին տեղը աղօտ ճրագ մը կը վառի կ'ըսեն. ու առտուան դէմ՝ արուսեակին ծաթելու պահուն՝ ճրագը կը մարի, ծովը տարօրինակ յուզում մը կ'ունենայ, ու երկու ճերմակ ճերմակ թռչուններ կարմիր կտուցով՝ յանկարծ այնտեղ կ'երեւան, մեղմիկ, հանդարտ ջուրը կ'ակօսեն՝ պզտիկ ալեակներ հանելով, յետոյ նորէն կ'անհետին, ու երբեք ցորեկները չեն տեսնուիր:

Ծովա՛կ, անոնց անունը մարդու մի՛ ըսեր:

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ

## ԿԱՐՄԻՐ ՀՈՂԸ

Գրասեղանիս վրայ, սա
Սկաւառակին մէջ կայ բուռ մ'հող, բերուած հոն
Հայրենիքի դաշտերէն:
Նուէր է ան. զայն ինծ ծօնողը կարծեց
Սիրտն իր տրուած, առանց երբեք գիտնալու
Թէ կու տար իր պապերունն ալ միասին:
Զայն կը դիտեմ.— մերթ ժամեր
Բիբերս անոր վրայ յառած կը մնան
Լուռ եւ թախծոտ, իբր այդ հողին մէջ յուռթի
Նայուածքս արմատ արձակէր:—
Կը մտածեմ.— Գուցէ իր գոյնը բոսոր
Չէ պարզեւուած բնութեան ներհուն օրէնքէն:
Վէրքերու սպունգ մ'ըլլալով
Խմած է մաս մը կեանքի, մաս մ'արեւու,
Եւ իբր տարր անպաշտպան
Կարմիր հող մ'է եղած, հայ հող մ'ըլլալուն:
Գուցէ իր մէջ կը բաբախեն տակաւին
Դարերը հին–հին փառքին,
Զայնն ամրակուռ սմբակներու, որոնց գոռ
Արշաւանքն օր մը ծածկեց
Հայկեան վաշտերն յաղթութեան տակ փոշիով:
Կ'ըսեմ.— իր մէջ դեռ կ'ապրի
Ինքնատիպ ուժն այն որ կազմեց շունչ առ շունչ,
Կեանքս իմ, քու կեանքդ, ու տուաւ
Կարծես ձեռքով գիտակից,
Նոյն թուխ աչուին, նոյն եւ նման հոգիով
Կիրք մ'Եփրատէն առնուած,
Սիրտ մը կամշոտ, թաքստոց
Ըմբոստանքի ու նաեւ բուռըն սիրոյ:



Իր մէջ, իր մէջ կը կայծկլտայ հոգի մ'հին
Հին դիւցազնի եղած փոշոր մը գուցէ
Կոյսի մ'աղուոր արցունքով:
Հիւլէ մը կայ Հայկէն, փոշի մ'Արամէն,
Անանիայէն բիբ մը դէտ
Դեռ աստղերու ճաճանչներով թաքաղուն.
Ազգ մը կայ հոն, սեղանիս վրայ ազգ մը հին,
Որ այսօր իր վերաշողշող այգուն մէջ,
Հողի բնատուր մարմնոյն տակ ինծ կը խօսի,
Կ'ոգեղինէ — եւ աստղերու ինչպէս ցանն
Անհունութեան մէջ կապոյտ —
Փոշիներովն իր հրաբորբ
Հոգիս քաղցրիկ փայլակներով կ'ոռոգէ:
Ու այն ատեն լարը ջիղերուս կը դողայ
Սարսուռով մ'յորդ, ա՛ն սարսուռով՝ որ մտքին
Հերկերուն վրայ աւելի՛
Ստեղծիչ է քան գարնան հովն արփազաղջ:
Եւ կը զգամ անցքն ուղեղէս
Նոր յուշերու, հոգիներու դեռ կարմիր
Խոր վէրքերովն իրենց, վրէժի՛ շրթունքներ.
Եւ այդ հողն, այդ փոշին, զոր ես կը պահեմ
Այնքան սիրով՝ որքան հոգիս պիտ չընէր
Եթէ մարմնոյս աճիւնները
Օր մը մահէն վերջ հովերուն մէջ գտնէր.
Այդ պանդուխտ մասն Հայաստանի, մասունքն այդ
Մնացած մեր յաղթ պապերէն,
Բժժանքն ու ծօնն այդ կարմիր,
Սիրտս սեղմած մագիլներով անծանօթ,
Երկինքն ի վեր, գրքի մը վրայ, թանկագին
Ժամու մը մէջ ժպիտներու, սէրերու,
Կամ քերթուածի մը ծնած վեհ վայրկեանին
Զիս հապշտապ կը մղէ
Մերթ լալու, մերթ մռնչելու,
Եւ գինելու բռունցքս, հոգիս բռունցքիս մէջ:

## ԱՐՄԵՆՈՒՀԻՆ
### (հատուածներ)

...Կը խորհի ա՛յսպէս.— երբ հովտէն դուրս յանկարծ
Մայրամուտի բոցերուն մէջ թաթախուած
Կը տեսնուին Արմենուհին՝ թըւելով
Հըսկայ շուշան մ'որ արեւէն կը բռնկի:
Կ'իջնէ մեղմիկ հեղեղատի մը ճամբով՝
Ըսքողուած նուրբ պատմուճանով լոգանքի:

Մերթ աղջիկները թուփերէն տարփատենչ
Երկար քըղանցքն իր կ'ազատեն, կը կըրեն
Իրենց գլխուն վրայ շըքեղ թասի մէջ
Կաւը, հայլին, սանտրը՝ լինդով ոսկեղէն,
Եւ ծամակալն, ու մաքմանն իր թանկագին՝
Զոր ղրկած է Դամասկոսի Խանունին:
.......................................................
Առաջինն այն աղջիկներէն՝ նուրբ լաթով
Մ'ուր Ղուրանէն պատուիրաններ բանուած են,
Կը չորցընէ Կոյսին մարմինն ուսերէն
Մինչեւ սաթի գարշապարներն՝ երգելով.
— «Արմենուհի՛, շատըրուան մ'ես դու մեր մէջ,
Եւ շուրջդ մենք ծըփծըփուն
Նունուֆարներ դալկահար.
Աստղերն ի վեր գեղգեղուն,
Արմենուհի՛, շատըրուան մ'ես դու մեր մէջ»:—

Երկրորդ աղջիկն ոսկի սանտրով կը սանտրէ
Թօնուտ մազերն ամպերու պէս սեւորակ.
Գըլխուն վըրայ կը բանայ խազն ըսպիտակ՝
Նըման վտակի մ'արծաթահոս, ու կ'երգէ.
— «Արմենուհի՛, Ֆիրդուսիի քնարն ես դու,
Երբ քամին զերդ բամբռահար
Կու գայ լեռնէն նըւագել
Մազերուդ մէջ բիւրալար.
Արմենուհի՛, Ֆիրդուսիի քնարն ես դու»:—

Երրորդ աղջիկն իրարու հետ կը զօդէ
Նըրբին յօնքերը թխաբոյր ծարիրով.
Ու թարթիչները մեղմաբախ մըրրելով
Կը յառի պիշ նայուածքին մէջ, ու կ'երգէ.
— «Արմենուհի՛, յօնքերդ են նման *շինա* տառին՝
Գըծուած փետրով ագռաւի.
Աչքերդ կաթի մէջ ինկած
Մեղուներ են ծարաւի.
Արմենուհի՛, յօնքերդ են նման *շինա* տառին»:—

Չորրորդ աղջիկն համեմաջրով կ'օծանէ
Շըրթունքներն իր կանաչ, թուշերն ըզգայուն.
Կը զետեղէ զոյգ փոսին մէջ այտերուն
Զոյգ համբոյրներ գորովական, ու կ'երգէ.
— «Արմենուհի՛, այտերդ են վարդ ու շուշան.
Ու սոխակ մ'է քու լեզուն՝
Ատամներուդ փըղոսկրէ
Վանդակին մէջ գեղգեղուն.
Արմենուհի՛, այտերդ են վարդ եւ շուշան»:—

Եւ հինգերորդ աղջիկն հինայ կը դընէ
Անոր մատերը հինայով հայկական.
Կը ծարուրէ արմուկներուն զոյգ բերանն
Եւ պըտուկներն ըստինքներուն, ու կ'երգէ.
— «Արմենուհի՛, ծիծերդ են զոյգ մ'աղաւնի,
Որ կուրծքիդ վրայ կը նիրհեն.
Թեւերդ ուսէդ վար՝ սողուն
Սաթ ակռայով օձեր են.
Արմենուհի՛, ծիծերդ են զոյգ մ'աղաւնի»:—

Ու վեցերորդ աղջիկն իւղով կ'օծանէ
Կըլորութիւնն որովայնին կըմբանման,
Եւ կ'ոռոգէ հեղուկներով հոտեւան
Կուսափըքիք աղուամազերն, ու կ'երգէ.
— «Արմենուհի՛, պորտըդ ծիւնի մէջ փոս մ'է,
Զոր այծի մ'ոտքն է թողեր.

Ագռմէջդ է հոր մ'ուրտեղ
Իպլիսն իր գանձն է թողեր.
Արմենուհի՛, պորտըդ ծիւնի մէջ փոս մ'է»:—

Ու եօթներորդ աղջիկն ահա կը դընէ
Լուրթ քօղէքներն ու գինդերն իր շողարծարծ.
Կը ծըգէ ուլն, հեղեղ լոյսի, քայռն հիւսուած
Քենտերի լալ մարգրիտներով, ու կ'երգէ.
— «Արմենուհի՛, դու մեծ ջահն ես Մըզկիթին՝
Զոր կանգնեց Շահն Իսպահան.
Գոհարազարդ այդ ծոցդ է
Լիճ մ'ուր աստղեր կը լողան.
Արմենուհի՛, դու մեծ ջահն ես Մըզկիթին»:—

Յետոյ բոլոր եօթ աղջիկներն իրենց մէջ
Պարփակած կոյսը աչքերով թախծալից՝
Ձերդ վարդենւոյ մը շուրջը պարսն ելեւէջ
Մեղուներու, կ'երգեն մէկտեղ, ծայնակից.
— «Ամբողջ չըքնաղ, ամբողջ մաքուր դըշխոյ մ'ես,
Արմենուհի՛: Արշալոյսն ես,
Որ կը ծագի լեռներուն վրայ Իրանի,
Արմենուհի՛. Դու գինին ես
Փատիշահին, թոյնն յաչաղկոտ հարեմի,
Արմենուհի՛:—
Ամբողջ չըքնաղ, ամբողջ մաքուր դըշխոյ մ'ես,
Արմենուհի՛»:—

Կ'ըլլայ լռութիւն եւ ըստուեր...

Կոյսն ոտք կ'ելլէ եւ կ'ըսէ. «Ո՜վ իմ քոյրեր,
Ամբողջ չքնաղ, ամբողջ մաքուր երինջ մ'եմ՝
Զոր պիղծ կուռքի մը զոհելու կը տանին,
Անոր արիւնն ես այս գիշեր պիտ' ընեմ
Փատիշահին թոյնը, գինին հարեմին»:—



Կը հեռանան աղջիկներն յոյլ քայլերով՝
Խոր լըռութիւն մ'իրենց ետեւը թողլով:
Երբ կը մնայ կո՛յսն ըստուերին մէջ առանձին՝
Կը սքողէ դէմքը ձեռքերով մաքրափայլ,
Յուսակըտուր կ'իյնայ խորքին մէջ բարձին,
Եւ կը սկսի արտասուաբուխ հեծկըլտալ...
..........................................................
Կը դիտէ շուրջն.— հոն զինք մարդ չի լըրտեսեր:
Վըրաններուն վերեւէ մերթ ասուպներ՝
Կը սահին նման հողմահալած հիրիկներուն.
Մերթ ալ ձիու մ'յանկարծ խըրխինջը կու գայ,
Զոր կ'արածէ վըտառապահ մը հեռուն...

Փախուստի ժամն, ո՜վ կոյս, ժամն է ասիկա՛...

Գետին մէջ հինգ սեւ խարակներ միաշար
Կըռնակնին ցից նըման մրափող ծովխոզի՝
Կը միացնեն զոյգ ափունքնե՛րն այն իրար.
Անջըրպետէն անոնց՝ ջուրն յորդ կը հոսի՝
Եւ կը նետէ զինք գըլխիվար, փըրփրահեր
Խորխորատին մէջ՝ զոր նոյն ի՛նքն է բացեր:

Արմենուհին իբրեւ արծուիկ նորաթռիչ
Կը չափչըփէ աչքով վիհն այն լայնալիճ,
Եւ իր տեղէն՝ քողը յանձնած քամիին՝
Կը սըլանայ խարակներէն մէկուն վրայ,
Յետոյ միւսին, միւսին յետոյ, չորրորդին.
Սակայն վերջինն, օ՛հ, կը դաւէ քայլն ահա.—

Կոյսին առջեւ մատնըչօրէն տարածած՝
Կանանչ ուռկան մը լօռերու՝ կը բռնէ զայն
Ու կը քաշէ անդունդին մէջ թըխպամած:
Արմենուհին լըպրծուն շեմին վրայ մահուան,
Սարսըռալով՝ թեւերն երկինք կարկառուն՝
Կ'արձակէ ճիչ մ'որ կը հասնի աստղերուն:

Ընդունա՜յն է.— կատղած սագի մը հանգոյն
Ահա վերէն կու գայ ալիք մ'ահարկու,
Եւ խոյացած ծօծրակն ի վեր Յայուհւոյն՝
Ձայն կ'ընդուլնէ եւ կը տանի խառնելու
— Իբր իր տռռնէն կըտըրուած դոյլ մը չըքնաղ —
Վարն աւազին մէջ անդունդին մըքըրնշաղ…
Ու ամէն բան կը լըմընա՜յ…

Վարը հոն

Լոյսն աւասիկ կը ճերմըկէ հորիզոնն,
Ու շոճերուն գագաթներն հիր կ'արիւնին.
Ցուրտ նըշուլին մէջ ագռաւներ սըրաթեւ
Վարդ ամպերուն մըխըրճելով կըտուցնին՝
Կ'երթան առջի ճառագայթին տալ բարեւ…
.......................................................
Ու կը տանի՜ Արագը զինք, կը տանի՜…
Երկու կողմէն երկու զեփիւռ ուղեկից
Լալով կ'երգեն եղէգներուն մէջ դողդոջ.
Տըժգոյն լուսինն երկընքին վրայ՝ թախծալից՝
Յուղարկաւոր կ'ըլլայ մեռած իր քըրոջ…
Ու կը տանի՜ Արագը զինք, կը տանի՜…

## ՀԱՄՈՒՆ ԱՐՏ

Արտըս ոսկո՜ւն է…
Նըման բոցերու
Ցորենն է բռընկեր՝
Առանց այրելու:

Արտըս ոսկո՜ւն է…
Երկինքն է կըրակ.
Յողը խորխուլած
Ծըղոտներուն տակ:



Արտըս ոսկո՜ւն է…
Քառաշար հասկեր
Քառաշար սաքով
Արե՛ւ են հագեր:

Արտըս ոսկո՜ւն է…
Բոռ, մեղու, պիծակ,
Քիստերուն մէջէն
Կ'անցնին զերդ փայլակ:

Արտըս ոսկո՜ւն է…
Մերթ կ'ելլէ, հովէն,
Դեղձանիկ մը, թի՛ռ,
Ոսկեծուփ ծովէն:

Օրո՜ր, ոսկո՛ւն արտ,
Օ՜ր տուր, հասո՛ւն արտ,
Գամ ոսկիդ հընձեմ
Մանգաղով արծաթ:

## ՀՈՒՆՁՔ ԿԸ ԺՈՂՎԵՄ

Յունձք կը ժողվեմ մանգաղով,
— Լուսնակը եարս է —
Ակօս ակօս ման գալով:
— Սիրածըս հարս է:

Գըլխեբաց եմ ու բոպիկ,
— Անո՜ւշ են հովեր —
Արտերուն մէջ թափառիկ:
— Մազեր՜ն են ծովեր:

Ցորեն, կակաչ, կարօտով,
— Կաքաւը կու լայ —

Կապեցի մէ՛կ նարօտով:
— Ձեռքերն են հինայ:

Յասկերուն մէջ, վերեւէն,
— Ասուպը անցաւ —
Աստղեր միւռոն կը ծորեն:
— Դէմքը լուսացաւ:

Քանի՜ խուրձեր շաղերով,
— Վարդենին բաց է —
Ես կապեցի խաղերով:
— Ծոցիկը բաց է:

Արտըս խոզանով մնաց.
— Կ'երթա՜յ լուսնակը —
Դէզերով լեռ եմ շինած:
— Սի՜րտըս է կըրակ:

Մանգաղըս քարին եկաւ.
— Եարըս եա՛ր ունի —
Քարէն լորիկը թըռաւ:
— Լէ՛րդըս կ'արիւնի:

**ԿԱԼԵՐՈՒ ԳԻՇԵՐ**

Ամարուան քա՜ղցր գիշեր, գլուխը կամին վրայ դըրած՝
Աշխատանքի սուրբ Ոգին կալերուն մէջ կը ննջէ:
Կը լողայ մեծ Լըռութիւնն աստղերուն մէջ ծովացած:
Անիունը՝ բիւր աչքերու թարթափով՝ զի՛ս կը կանչէ:

Կ'երգեն, հեռուն, ծղրիթներ: Ջուրերուն մէջ լըճակին
Կ'ըլլայ հարսնիք մը ծածուկ նայադներու՝ այս գիշեր:
Սիւքն յուզելով ուռենին ափերուն վրայ գետակին՝
Կ'արթընցնէ անծանօթ լարերու վրայ նըւագներ:



Ծորրիններու բոյրին մէջ, պառկած կատարը դէզին՝
Ես կը թողում որ սըրտիս դըպչի ամէն մէկ ճաճանչ.
Ու կ'արբենամ գինիովն Անիունի մեծ կարասին՝
Ուր կը ծըմլուին ասուպներ քայլի մը տակ անճանաչ:

Հե՜շտ է մըտքիս ընկըմիլ կապոյտին մէջ լուսալիր,
Նաւաբեկիլ — թէ հարկ է — կըրակներուն մէջ վերին.
Գըտնել աստղեր նորանոր, կորսըւած հի՜ն հայրենիք՝
Ուրկէ ինկած հոգիս դեռ կու լայ կարօտն եթերին:

Վերանալ քա՜ղցր է ինծի թեւերուն վրայ լըռութեան,
Լըսել միա՛յն Միջոցին շընչառութիւնն անխըռով,
Մինչեւ աչքերս գոցուին քունի մը մէջ դիւթական,
Ու կոպերուս տակ մընայ Անիունը իր աստղերով:

Ա՛յսպէս, ա՛յսպէս, կը ննջէն գիւղին մարդիկը ամէն.
Յօտաղն է իր սայլին վրայ, վերմակին տակ լուսածոր,
Յարսն է դէզի կատարին՝ ծոցը բացուած զեփիւռէն՝
Ուր կը պարպէ Յարդգողն իր կաթը սափոր առ սափոր:

Եւ այսպէս՝ օր մը պառկած՝ փողփողումին տակ երկնի,
Իմ ծընողներըս մըշակ՝ զիս յըղացան կաթոգին,
Զիս յըղացա՜ն սեւեռած իրենց աչքերը բարի
Վերն ամենէն մեծ Աստղին, ամենավառ Յըրայրքին:

**ԱՆԴԱՍՏԱՆ**

Արեւելեան կողմն աշխարհի
Խաղաղութի՜ւն թող ըլլայ...
Ո՛չ արիւններ, քըրտինք հոսին
Լայն երակին մէջ ակօսին.
Ու երբ հընչէ կոչնակն ամէն գիւղակի՝
Օրհներգութի՜ւն թող ըլլայ:

Արեւմըտեան կողմն աշխարհի
Բերրիութի՜ւն թող ըլլայ...
Ամէն աստղէ ցօղ կայլակի,
Ու ամէն հասկ ծուլէ ոսկի.
Եւ ոչխարներն երբ սարին վրայ արածին՝
Ծիլ ու ծաղի՜կ թող ըլլայ:

Հիւսիսային կողմն աշխարհի
Առատութի՜ւն թող ըլլայ...
Ոսկի ծովուն մէջ ցորեանին
Յաւէտ լողայ թող գերանդին.
Ու լայն ամբարն աղուններուն երբ բացուի՝
Բերկրութի՜ւն թող ըլլայ...

Հարաւային կողմն աշխարհի
Պըտղաբերում թող ըլլայ...
Ծաղկի՜ մեղրը փեթակներուն,
Յորդի գինին բաժակներուն.
Ու երբ թխեն հարսերը հացը բարի՝
Սիրերգութի՜ւն թող ըլլայ:



ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ

## ՏԱՂ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻՆ

Քեզ, Հայ Լեզո՛ւ, կը սիրեմ մրգաստանի մը նըման...
Մեր անցեալին քանդրախիտ ստուերներուն մէջ կարծես
Մէյ մէկ պըտուղ՝ քու բոլոր բառերդ ինծի կ'երեւան,
Որոնց մէջէն կը քալեմ ու կը քաղեմ զանոնք ես...:

Մրգաստանի մը նըման կը սիրեմ քեզ, Հայ Լեզո՛ւ...
Մեր հայրենի պալատէն, պարտէզներէն մընացորդ՝
Դալարագեղ դուն պուրա՛կ, որ դիմացար դարերու
Եւ կը մընաս միշտ առոյգ, հին աւիշով կենսայորդ...:

Ծառերուդ մէջ հովանուտ կ'երթամ խինդով մ'անսահման,
Արմատներուդ, ճիւղերուդ վրայ նայելով հիացիկ,
Զարմանալով թէ ի՛նչպէս դուն մընացիր՝ երբ սաստիկ
Քամին քու շուրջըդ փըչեց եւ տապալեց ամէն բան...:

Մէյ մէկ պըտուղ գոյնզգոյն՝ ամբողջ բառե՛րըդ ահա,
Հիւթեղ բառերդ՝ զոր որքա՜ն հասունցուցին արեւներ,
Բառե՛րդ որոնք այս պահուս շըրթանցս վրայ եմ բռներ,
Բառե՛րըդ որ քիմքըս կ'օծեն եւ կ'ըսփոփեն սիրտս հիմա...:

## ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ

Եկեղեցին Հայկական ծննդավայրն է հոգւոյս՝
Ինչպէս քարայր մ'ընդարձակ, պարզ ու խորունկ, մութ ու լոյս.
Իր գաւիթով հիւրընկալ, իր լայն բեմով ու հեռուն
Կանգնած իր լուռ խորանով՝ որ կարծես նա՜ւ մ'է ծըփուն...

Եկեղեցին Հայկական ես աչքս գոց կը տեսնեմ
Ու կը շնչեմ. կը լսեմ՝ իր Յիսուսով մանկադէմ,
Իր սեղանէն մրխացող գուլայ–գուլայ խունկերով
Եւ իր պատերը ցնցող աղօթքներով ալեխռով…

Եկեղեցին Հայկական բարձըր բերդն է հաւատքին
Իմ պապերուս՝ որ հողէն զայն քար առ քար հանեցին
Եւ երկինքէն իջուցին զայն ցօղ առ ցօղ, ամպ առ ամպ
Ու թաղուեցա՜ն անոր մէջ հանդարտութեամբ, հեզութեամբ…

Եկեղեցին Հայկական մեծ վարագոյր մ'է բանուած՝
Որուն ետեւ սըկիհին մէջ կ'իջնէ ինքը Աստուած,
Որուն առջեւ՝ ծնրադիր, կու գայ իմ ազգս ամբողջ
Հաղորդուիլ Անցեալին հաց ու գինով կենսառողջ…

Եկեղեցին Հայկական՝ ծովուն դիմաց ալեկոծ
Նաւահանգիստ մ'է խաղաղ. ցուրտ գիշերին՝ հո՛ւր եւ բոց,
Ու տօթակէզ ցերեկին անտա՛ռ մըն է ստուերոտ՝
Ուր շուշաննե՜ր կը ծաղկին Շարականի գետին մօտ…

Եկեղեցին Հայկական մէն մի քարին տակ գետնի
Դէպի երկինք բարձրացող գաղտնի ծամբայ մը ունի…
Եկեղեցին Հայկական Հայ Հոգիին եւ Մարմնոյն
Ջըրահանդերձն է փայլուն՝ մինչ իր խաչերն են դաշոյն

Եւ զանգակներն են բոմբիւն, եւ երգն է մի՜շտ Յաղթութիւն…:

## ՀԱՇՈՒԵՅԱՐԴԱՐ

Հաշուեյարդար. ի՞նչ մնաց, կեանքէն ինծի ի՞նչ մնաց.
Ինչ որ տուի ուրիշին, տարօրինա՜կ, ա՛յն միայն.
Խանդաղատանք մը ծածուկ, օրհնութիւններ անիմաց,
Երբեմն հատնումը սրտիս ու մերթ արցունք մը անձայն…



Ինչ որ գնաց ուրիշին՝ վերադարձաւ անուշցած
Ու զօրացած՝ հոգիիս մէջ մնալու յաւիտեան.
Ինչ որ տարաւ Սէրն ինծմէ՝ չկորսնցուց զայն Աստուած,
Տըւաւ ինծ ետ ու ըրաւ կեանքըս անով միշտ բուրեան…

Եւ այժմ, ո՛վ Տէր, հակառակ իմ տանջանքիս, հակառակ
Ինծի համար սա՛ չորցած երջանկութեան աղբիւրին,
Հին գինիով յորդաբուխ ես կ'արբենա՜մ տակաւին…

Ու չեմ ըսեր «ինչ մնաց…»: Ի՞նչ կը մնայ հողին տակ
Եղէգներէն դիւրաբեկ, կաղնիներէն հաստաբուն,
Արեւն ըմպած ըլլալու մխիթարանքը անհուն:

ՄԱՏԹԵՈՍ ԶԱՐԻՖԵԱՆ

## ՈՐՈՇՈՒՄ

Ոչ իսկ հառա՛չ մը հանել
Ճամբուն վրայ այս անել.

Հրամայել որ ցամքի՛
Վերջին կաթիլն արցունքի.

Ո՛չ ոքի ձեռք երկարել
Որ գայ իրդեհն այս մարել.

Գիշերին մէջ, լուռ, անտես,
Դիտել հեռուն, կուռքի պէս.

Դիտել ծովափն ուր այնքան
Աստղեր սրտէս դուրս ինկան.

Ու ժայռն այն ծեր՝ ուր հոգիս
Վարդի մ'համար լքեց զիս...

Յետոյ ժպտիլ ու քալել
Ճամբուն վրայ այս անել:

## ԱՐՀԱՄԱՐՀԱՆՔ

Ցաւիս խորերէն, տէ՛ս, ճակատագիր,
Անսահման ծիծաղ մ'ունիմ քեզի դէմ.
Գիտցի՛ր որ նորէն քեզ կ'արհամարհեմ,
Չկարծես թէ ա՛լ զիս կործանեցիր...



Ի զո՛ւր կը թափես մոխիր սրրտիս վրայ.
Ճառագայթ կայ հոն՝ իջած անհունէն...
Զոհերն հարուածիդ լոկ ոսկորներս են,
Անոնց պէտք չունի՛ միտքըս որ սուրայ...

Պայծառ է ճակատս՝ արշալոյսի պէս.
Հոգիս՝ միշտ աղուոր, միշտ հպարտ, ժպտուն՝
Դեռ կը սաւառնի անհունէ անհուն...

Ի զո՛ւր սրրտիս վրայ մոխիր կը թափես.
Աստուածներ կան հոն՝ իջած երկընքէն.
Ցաւիս խորերէն, տէ՛ս, անոնք կ'երգեն...:

ԼԵՒՈՆ ՇԱՆԹ

## ՀԻՆ ԱՍՏՈՒԱԾՆԵՐ
**(հատուածներ)**

## ԵՐՐՈՐԴ ԱՐԱՐ

### ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

ՎԱՆԱՀՕՐ ԽՈՒՑԸ

Ճակատը քառակուսի ցած լուսամուտ մը՝ հասարակ տախտակէ փեղկով: Լուսամուտին մէկ կողմը քանի մը շարք դարակ՝ լիքը ամէն մեծութեան ու ձեւի ձեռագիրներով ու մագաղաթներով: Գրադարանին ու լուսամուտին առջեւը փայտէ սեղան մը՝ վրան նորէն գրքեր ու այլ մանր իրեր: Դուռը կողմնակի, գրասեղանին դէմը:

1

Բաց լուսամուտէն արեւի առատ պայծառ ոսկի շերտ մը ինկած է սենեակի յատակին ու սեղանին: Սեղանին առջեւը լոյսի այդ ողողումին տակ նստած է Վանահայրը՝ երկու արմուկը սեղանին ու գլուխը թաղած ափերուն մէջ:

Քիչ մը ատեն լուռ է: Կամաց կը բացուի դուռը ու կը մտնէ Վարպետը՝ աշխատաւորի փոշոտ ու աղտոտ հագուստներով: Քայլ մը կ'ընէ դէպի սեղանը ու կը կենայ:

ՎԱՐՊԵՏԸ — Ինծի կանչեր էիր, վանահա՛յր:
ՎԱՆԱՀԱՅՐԸ — *(Անշարժ է)*:
ՎԱՐՊԵՏԸ — Հա՛յր-սուրբ, կանչեր էիր ինծի:
ՎԱՆԱՀԱՅՐԸ — *(Ծանր կը բարձրացնէ գլուխը ու կը նայի դիմացինին)* Հա՛: *(Քիչ մը լուռ)*: Դէ՜, ըսէ՛ նայիմ հիմա ի՞նչ պիտի ընենք:

.................................................................................................



ՎԱՐՊԵՏԸ — Փակե՞մ, լուսամո՞ւտը:
ՎԱՆԱՀԱՅՐԸ — Այո՛, այո՛, լուսամո՛ւտը:
ՎԱՐՊԵՏԸ — Բայց ի՜նչ ախորժելի արեւ է. ինչպէ՞ս ուրախ ու տաք:
ՎԱՆԱՀԱՅՐԸ — Ու փակես պիտի ճիշդ ատոր համար:
ՎԱՐՊԵՏԸ — Բայց...
ՎԱՆԱՀԱՅՐԸ — Արե՜ւ... Մեզի անպատճառ պէտք է արեւ, ուրախ ու տաք արեւ: Մենք դեռ արեւապաշտներ ենք. արե՜ւ...: Չենք կրնար ապրիլ առանց ախորժելի արեւի, առանց ուրախ ու տաք արեւի: Գոնէ լուսամուտ մը, գոնէ ճեղք մը, գոնէ գողունի ներս սպրդած ճառագայթ մը... *(Յանկարծ բռունցքը զարնելով սեղանին)* Ո՛չ: Գոցէ՛, կ'ըսեմ քեզի, ի՞նչ ես քարացեր:
ՎԱՐՊԵՏԸ — *(Վարանելով կ'երթայ կը գոցէ փեղկը)*:

Սենեակը գրեթէ մութ է:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Այդպէ՛ս: Պէտք է խցուի այդ անցքը, ուրկէ արեւը կը նայի ներս, ուրկէ ցամաքը կը նայի ներս, ուրկէ աշխարհը կը նայի ներս:
ՎԱՐՊԵՏԸ — Բայց բնակարանդ դարձաւ խաւար ու մռայլ, ինչպէս դամբարան:
ՎԱՆԱՀԱՅՐԸ — Ըսէ՛ ինչպէս եկեղեցի:
ՎԱՐՊԵՏԸ — *(Ուսերը կը ցնցէ)*:
ՎԱՆԱՀԱՅՐԸ — Ինչո՞ւ կը վախնաս խաւարէն: Խաւարը խաւար է կարծատես աչքերուն: Բոլոր մեծ յղացումները խաւարի ծոցն են գոյացեր, բոլոր մեծ խորութիւնները միայն խաւարի մէջ կարելի է տեսնել: Եւ այդ ձեր պաշտած լոյսը միթէ ծնունդը չէ՞ խաւարի. ծնունդ մը ու մահկանացու մը: Խաւարն է միայն, որ կայ ու կը մնայ անմահ ու յաւիտենական: *(Ելած է ոտքի. կը խօսի մտածելով)*:

2

Վանահայրը լռած է ու մտասոյզ. լուռ է նաեւ Վարպետը. կը մտնէ Աբեղան ու կը կենայ դրան քովը լուռ ու խոնարհ:

.................................................................................................

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Ի՞նչ տեսար հոն, ճգնարաններուն շուրջը:
ԱԲԵՂԱՆ — Տեսա՛յ այն միւս... հին աստուածներուն արարածները:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Արարա՞ծ...

ԱԲԵՂԱՆ — Կը սխալիս, վանահա՛յր: Քեզի կ'ըսեմ՝ հին աստուածները կ'ապրին. ու հին աստուածներուն հետն ալ իրենց հին կեանքը: Երբ մենք հո՛ս, մեր մութ ու նեղ եկեղեցիներուն մէջ գետնատարած կ'ապաշխարենք, անոնք հո՛ն կ'ապրին ազա՜տ. կ'ապրին տաք ու պայծառ արեւին տակ, կապոյտ ծովուն վրայ, ծփուն օդերուն մէջ, աւազուդ ափին. կ'ապրին իրենց զուարթ ու եռուն կեանքը. լի, շարժուն ու յարափոփոխ: Մենք կ'աղօթենք, անոնք կ'ապրին: Այս ծովը, այս սարերը, այս կղզին. անոնցն է այս բոլորը, մե՛րն է միայն այս խուցերը ու եկեղեցին:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Ո՛չ: Մերը չէ նաեւ ո՛չ այս խուցերը իրենց կեղծաւոր լուսամուտներով, ո՛չ ալ եկեղեցին: Անո՛նցն է. բոլորն ալ անոնցն է:

ԱԲԵՂԱՆ — *(Նախ ապշած, ետքը վախով)* Հա՛յր, ատիկա ըսողը դո՞ւն ես:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Մեր Աստուածը հոս ոչի՜նչ չունի, ոչի՛նչ:

ԱԲԵՂԱՆ — Հա՛յր...

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Անոնցն է այս բոլորը: *(Մօտենալով Աբեղային ու ցած)* Ու քանդըլի՛ պիտի այս բոլորը, աբեղա՛յ: Մինչեւ Աստուածածին հոս քար մը քարի վրայ չի պիտի մնայ ո՛չ այս խուցերէն, ո՛չ եկեղեցիէն:

ԱԲԵՂԱՆ — Հա՛յր, կը ծաղրե՞ս ինծի: Գէշ կատակ է ըրածդ:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Ծաղր մըն է եղեր իմ ըսածներս մինչեւ այսօր ու գէշ կատակ մըն է եղեր ըրածներս մինչեւ հիմա: Բայց ասկէ ետքը ալ լուրջ է: Փոխուի պիտի այս կղզիին վրայ ամէն բան: Ոչի՛նչ, ոչի՛նչ չի պիտի մնայ հոս ո՛չ արդի շէնքերէն, ո՛չ արդի հոգիներէն:

ԱԲԵՂԱՆ — Իսկ հին աստուածնե՞րը, հա՛յր:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Պնդէ՛ գօտիդ, որդի՛ս, կանչէ՛ կամքդ ու դո՛ւրս վանէ մէջէդ բոլոր այդ հին աստուածները: Քանդէ՛, քանդէ՛. եթէ պէտք ըլլայ, քանդէ՛ ամբողջ հոգիդ: Քու հոգիդ ազնիւ է, արժէ այդ աշխատանքը: *(Դուրս)*:

**ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ**

ԵԿԵՂԵՑԻԻՆ ԱՌՋԵՒԻ ՀՐԱՊԱՐԱԿԸ

...........................................................................................

3

ՎԱՆԱԿԱՆ ՄԸ — *(Ներս վազելով)* Վանահա՛յրը, վանահա՛յրը:



Կը լսուին ձայներ, զսպըւած աղմուկ ու մէկ–մէկ. երկու–երկու՝ խառն կը մտնեն վանականները խոժոռ ու մտախոհ: Կու գան ու լուռ կը շարուին իրարու քով: Վանական մը կ'առաջնորդէ Կոյրը:

ԿՈՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ — Բայց ի՞նչ կայ, է՛. ի՞նչ է պատահեր:

ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՎԱՆԱԿԱՆԸ — Ըսի՝ չգիտեմ. վանահայրն է պատուիրեր:

ՎԱՆԱԿԱՆ ՄԸ — Սո՜ւս. եկա՛ւ:

ԴԱՒԻԹ ՎԱՆԱԿԱՆԸ — *(Արքնցընելու պէս)* Ոտքի, աբեղա՛յ. վանահա՛յրն է:

ԱԲԵՂԱՆ — *(Կը նայի շուրջը ու կ'ելլէ ոտքի)*:

4

ՎԱՆԱՀԱՅՐԸ — *(Կու գայ խորքէն ծանր ու տխուր: Բոլորը գլուխ կու տան: Լուռ, երկար նայուածք մը կը նետէ խումբին վրայ)* Բոլո՞րդ էք:

ՁԱՅՆ ՄԸ — Այո՛, վանահա՛յր:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — *(Կը նստի բարձր քարի մը: Սպասողական լռութիւն)* Բան ունիմ ձեզի ըսելու: *(Կը մտածէ)* Կը տեսնէ՞ք այս եկեղեցին, որ գրեթէ աւարտած է արդէն եւ ուր բաւական ժամանակէ ի վեր մեր աղօթքները կը խնկենք մեր Աստծուն. այս եկեղեցին... այս եկեղեցին նըւիրուած չէ՛ մեր Աստծուն:

Ընդհանուր զարմանք ու շարժում:

ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆԸ — Ի՞նչ ըսիր, վանահա՛յր:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Այս եկեղեցին նըւիրուած չէ՛ մեր Աստծուն: Այս եկեղեցին, երբ ես կը շինէի, ես դեռ կտրըւած չէի աշխարհէն... *(Շշուկներ)* Ես կը կարծէի թէ կտրըւած եմ: Մենք բոլորս ալ, որ թողեր ենք աշխարհը ու եկեր անապատ, մեր հոգիին խորքը դեռ մեծ կտոր մը աշխարհք էինք բերեր մեզի հետ, ներքին վայելքի ծածուկ կարօտ մը, քօղարկուած հաճոյքներու բարակ ծարաւ մը, մեր անցած կեանքի, կռուի ու յուզումներու ամբողջ նուրբ ու կպչուն ցանց մը. եւ ակամայ վերյուշներ: Այս բոլորը դեռ մեզի հետ էր, երբ այս եկեղեցին կը շինէինք: Այդ ծածուկ, քօղարկուած յուզումներն են շիներ այս եկեղեցին, աշխարհէն անապատ եկած, մեզի հետ ներս սպրդած աշխարհի այդ կտորն է շիներ այս եկեղեցին: Աշխարհի՛նն է այդ եկեղեցին, մեր Աստծունը չէ՛: Ատոր կամարներուն տակ մենք այլեւս աղօթել չե՛նք կրնար. այդ կամարները պէտք է քանդուի՛ն:

ՁԱՅՆԵՐ — *(Ապշած. սարսափած)* Քանդուի՞ն… քանդուի՞ն:
ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆԸ — Մեր եկեղեցին քանդուի՞:
ԵՐԻՏԱՍԱՐԴ ՎԱՆԱԿԱՆ ՄԸ — Մեր նոր եկեղեցին քանդուի՞:
ՎԱՆԱՀԱՅՐԸ — Այո՛. պէտք է քանդե՛նք ու շինենք նորը:
ՁԱՅՆԵՐ — *(Զարմանք ու հեգնութիւն)* Նո՞րը… նո՞րը…
ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆԸ — Շինենք նո՞րը:
ՎԱՆԱՀԱՅՐԸ — Նո՛րը: Եւ այդ նոր եկեղեցին պիտի շինենք մե՛նք ինքներս: Աշխարհէն եկած դրամը աշխարհիկ զգացումներու նուէրն է, աշխարհէն եկած վարպետները աշխարհիկ հասկացողութիւն է, աշխարհի արուեստը: Մարդս ի՛նք միայն կրնայ շինել իր Աստծուն նուիրուած տաճարը, իր մէջքովը, ի՛ր ձեռքերովը, ի՛ր խելքովը: Թէ ինչ ձեւ է ունենալու մեր նոր եկեղեցին, դեռ ես ինքս ալ որոշ չգիտեմ. ա՛յ, կը նստինք միասին ու կը խորհինք, կը խորհինք ու կ'ըստեղծենք:
ԾԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆԸ — *(Հեգնոտ)* Մենք ի՞նչ արհեստաւորներ ենք, վանահա՛յր. մենք ի՞նչ կրնանք շինել, դիցո՛ւք, եթէ ուզենք ալ:
ՎԱՆԱՀԱՅՐԸ — Կա՛մքը. ծերունի՛, ուզէ ու կը շինես, եթէ մանանեխի չափ հաւատք ունենաս քու կամքիդ:
ԾԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆԸ — Է՛, անցեր են այն ժամանակները:
ՎԱՆԱՀԱՅՐԸ — Ո՛չ, չե՛ն անցեր. դեռ չե՛ն եկեր այդ ժամանակները. իմ նոր եկեղեցիիս մէջէն պիտի երթանք դէպի այդ ժամանակները:
ԾԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆԸ — Լսէ՛, վանահա՛յր, լսէ՛ ինծի, ես ծերունի մարդ եմ: Դուն շատ ես կարդացեր ու խախտեր ես ուղեղդ: Քու բռնած ճամբադ ծուռ ճամբայ է: Մի՛ չարչարեր գլուխդ, այդ ճամբան հերետիկոսներուն ճամբան է:
ՎԱՆԱՀԱՅՐԸ — *(Հպարտ)* Այդ ճամբան առաքեալներու ճամբան է. այդ ճամբով է անցեր ինքը Քրիստոս:
ՂԱԶԱՐ ՎԱՆԱԿԱՆԸ — Ո՛ւ… Կը լսէ՞ք:

Շշուկ ու վրդովում:

ԾԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆԸ — Մի՛ խօսիր այդպէս անմիտ, վանահա՛յր:
ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆԸ — Ո՛չ ալ այդպէս մեծամիտ:
ԱՆՏՈՆ ՎԱՆԱԿԱՆ — Եւ ձգէ հանգիստ մեզի ու մեր եկեղեցին. մեզի պէտք չեն նոր ձեւի շէնքեր. այս ձեւն է մեզի մեր պապերէն աւանդ հասեր:
ՎԱՆԱԿԱՆ ՄԸ — Մենք ո՛չ քարտաշ ենք, ո՛չ վարպետ:



ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆԸ — Եւ չենք եկեր հոս պատեր քանդելու, պատեր շինելու:
ՈՒՐԻՇ ՎԱՆԱԿԱՆ ՄԸ — Մենք եկեր ենք հոս հանգստանալու:
ԶԱՔԱՐԻԱ ՎԱՆԱԿԱՆԸ — Այո՛, հանգստանալու ու աղօթելու:
ԵՐԻՏԱՍԱՐԴ ՎԱՆԱԿԱՆ ՄԸ — Եւ ինչո՞ւ քանդենք մեր նոր շինած սիրուն աղօթատեղին. ոչինչ չեմ հասկնար. մի՞տքն ինչ է, ինչո՞ւ:
ԶԱՔԱՐԻԱ ՎԱՆԱԿԱՆԸ — Որուն վրայ այսքան ծախս է թափուեր, այսքա՛ն աշխատանք:
ՂԱԶԱՐ ՎԱՆԱԿԱՆԸ — Եւ ի՞նչ ըսենք իշխանին, իշխանուհիին, որոնք հոգացեր են բոլոր ծախքը:
ՁԱՅՆԵՐ — *(Խառն)* Իհարկէ՛, իհարկէ՛… իշխանը… իշխանուհին…
ԶԱՔԱՐԻԱ ՎԱՆԱԿԱՆԸ — Եւ ո՞վ կու տայ այն ատեն տասը չափ ցորենը, պարէնը, այսքան նուէրը:
ՁԱՅՆԵՐ — *(Խառն)* Իհարկէ՛, իհարկէ՛… ցորենը… պարէնը…
ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆԸ — Հանգիստ թո՛ղ մեզի ու մեր ապրուստը:
ԶԱՔԱՐԻԱ ՎԱՆԱԿԱՆԸ — Քու շինելիք եկեղեցիդ հաց կու տա՞յ մեզի:
ԴԱՒԻԹ ՎԱՆԱԿԱՆԸ — Որքան ալ ըլլայ մեր սեղանը սակաւ, բայց հաց պէտք է, որ ապրինք:
ԾԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆԸ — Որ կեանքի հոգը չխեղդէ մեզի:
ՄՈՎՍԷՍ ՎԱՆԱԿԱՆԸ — Որ մեր աղօթքը չխանգարի:
ԾԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆԸ — Ուշքի եկո՛ւր, վանահա՛յր, քանի կանուխ է ու թո՛ղ մեր անապատը խաղաղ ու հանգիստ:
ՎԱՆԱՀԱՅՐԸ — *(Նախ շուարածի պէս է այս պարագային վրայ, երբը գլուխը վեր կ'առնէ, կը նայի շրջապատողներուն լռեալ մը ապշութեամբ)*: Դո՞ւք… հո՛ս իմ շուրջս, ե՞ս… հո՛ս կեցած ձեր մէջը… Ե՛ս ձեր վանահայրը, դո՛ւք իմ միաբանութիւնս, ի՛մ իսկ հիմնած: *(Ժպտուն)* Միաբանութի՜ւն, ի՜նչ միութիւն ձեր ու իմ մէջ… *(Աչքերը շփելով)* Կարծես կապը կ'իյնայ աչքերէս: Ի՞նչպէս է եղեր, որ ես չեմ հասկըցեր այսքա՛ն պարզ բանը, այսքան ակնյայտնի: Մինչեւ հո՛ս, մինչեւ անապատ կրցեր ենք մենք միասին: Մինչեւ հոս ես կրնայի բերել ձեզի, մինչեւ հոս կարելի է բերել մարդը, բայց հոսկէ անդին… հոսկէ անդին մարդ ի՛նքը պիտի երթայ: Ճշմարիտը դո՛ւք էք. այդ եկեղեցին պէտք է, որ մնայ, ա՛ն է ձեր եկեղեցին, գացէ՛ք, գացէ՛ք ներս. ան կու տայ ձեզի անվե՛րջ աղօթքներ ու մխիթարանք. ան կը բանայ ձեզի արքայութեան դռները, կ'ազատէ ձեզի բոլոր սատանաներէն, ան ձեզի ձեր հացն ալ կու տայ ու ձեր հանգիստը. գացէ՛ք, գացէ՛ք ներս ու խաղաղութիւնը թող ըլլայ ձեզի հետ: Իսկ իմ փնտռածս ատիկա չէ. իմ փնտ-

ռածս աշխատա՛նքն է, ներքին անդուլ ու անկաշկանդ որոնումը՝ ներքին անվերջ նուաճումները բարձունքէ բարձունք, պարիսպէ պարիսպ, տարակոյսներու անդունդներուն վրայէն, ելքերով ու անկումներով. անդադար խոյանք մը դէպի ճշմարտութիւնը: Գացէ՛ք, գացէ՛ք ներս դուք ձեր եկեղեցին, ես ալ երթամ շինեմ ի՛մ եկեղեցիս. բայց այս անգամ ե՛ս, մի՛այն ես, եւ կերտըւածք մը, որ վայել ըլլայ իմ Աստծուս բնակութեանը, որու կամարներուն տակ իմ խնկելիք աղօթքիս ո՛չ մէկ բառը կեղծ չհնչէ, ո՛չ մէկ բառի արձագանգը դատարկ չհնչէ:

ԴԱՒԻԹ ՎԱՆԱԿԱՆԸ — *(Ծաղրով)* Ատ ո՞ւր պիտի շինես, վանահա՛յր, քու նոր կերտըւածքը:

ՂԱԶԱՐ ՎԱՆԱԿԱՆԸ — *(Ծաղրով)* Եւ ինչէ՞. կրանի՞դ պիտի ըլլայ, թէ՞ մարմարէ:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Կրանիդ ու մարմար, որձաքար ու ամէն տեսակ քար ես կը թողնեմ աշխարհի աստուածներուն: Իմ տաճարիս հիմքը իմ բանականութիւնս պիտի ըլլայ, սիւները իմ կամքս է, ու գմբեթն ալ ըլլալու է հաւատքս:

ԾԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆԸ — Շատ խախուտ է, վանահա՛յր, նոր շէնքիդ հիմքը:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — *(Անփոյթ)* Խախուտ է՝ կը փլի:

ԴԱՒԻԹ ՎԱՆԱԿԱՆԸ — Եւ այն ատե՞ն...

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Կը շինեմ նորը:

ԾԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆԸ — Բայց ատիկա վե՛րջ չունի:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Կ'ուզէիր որ վե՞րջ ունենար: Քանի կ'ապրինք՝ շինենք պիտի. պիտի շինենք մեր Աստծուն իր տաճարը. շինենք ու փլի, շինենք ու քանդենք. շինենք ու շինենք միշտ, բայց երբե՛ք, երբե՛ք չաւարտենք: Հենց որ աւարտի, ալ տաճար չէ Աստծու, այլ... *(Եկեղեցին մատնանիշ)* կռատուն:

ՂԱԶԱՐ ՎԱՆԱԿԱՆԸ — *(Կատաղի)* Կը հայհոյէ, կը հայհոյէ մեր Աստծուն:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Ամէնէն ստոր հոգիները միայն հայհոյել կրնան այն Աստծուն, որուն երբեմն երկրպագեր են: Բայց կը տեսնեմ՝ ալ մենք իրար չենք հասկնար: Մնաք բարով, ձեր Աստուածը ձեզի հետ:

Կ'ուզէ երթայ՝ Աբեղան առաջ կու գայ ու ճամբան կը կտրէ:

ԱԲԵՂԱՆ — Կեցի՛ր:



ՎԱՆԱՀԱՅՐԸ — Ի՞նչ է: Գուցէ կ'ուզես նորէն ինծի հետ, աբեղա՛յ: Եկո՛ւր, քու հոգիդ թռիչք ունի, ես գիտեմ:

ԱԲԵՂԱՆ — Կեցի՛ր: Ըսէ՛. քու այդ նոր շէնքէդ երեւա՞յ պիտի արեւի ծագումը:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Մոռցի՛ր արեւն ու իր ծագումը, որ ծագի քեզի ծագումներուն ծագումը, որ արեւէ քեզի արեւներուն արեւը:

ԱԲԵՂԱՆ — Կեցի՛ր: Ըսէ՛. քու այն նոր շէնքէդ լսուի պիտի, տե՛ս, այս աղմուկը... *(Խորքը մատնանիշ ընելով)* Կը լսե՞ս:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Ի՞նչ աղմուկ. այդ լսուողը ծովն է ալեկոծ:

ԱԲԵՂԱՆ — Այո՛, ատիկա՛:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Քու փնտռածդ, մանո՛ւկ, մարդու կառուցած առաջին եկեղեցին է, նախնակա՛նը:

ԱԲԵՂԱՆ — Չէ՛, ալ ինծի չես խաբեր քու այդ արհամարհոտ բառերովդ: Խօսէ շիտակ. ըսէ՛. հասնելո՞ւ է քու եկեղեցիդ ծովուն ձայնը:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Իմ եկեղեցիս չէ հասնելու ո՛չ–մէկ արտաքին յուզում, ո՛չ–մէկ արտաքին աղմուկ: Եթէ կ'ուզես ինծի հետ՝ յոյսդ կտրէ՝ արեւէն ու ծովէն:

ԱԲԵՂԱՆ — *(Ճամբայ փակելով)* Անցիր այն ատեն:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — *(Հեռանալով)* Ափսո՜ս, աբեղա՛յ, քու միտքդ երբեմն թեւեր ունէր: *(Դուրս)*:

ԱԲԵՂԱՆ — *(Ետեւէն)* Ափսո՜ս, վանահա՛յր, քու սիրտդ երբեմն թեւեր ունէր:

ԿՈՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ — *(Երկու ձեռքերը առաջ պարզելով)* Ե՜ս... ե՜ս կ'ուզէի քեզի հետ...

ՁԱՅՆԵՐ — *(Շչելով)* Կո՜յրը... կո՜յրը...

**ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ**

ԲԱՐՁՐ ԾՈՎԱՓ

Աջ ու ձախ ժայռեր: Քարքարոտ գետինը քիչ–քիչ կը բարձրանայ ու ճակտին կը կազմէ ծովուն սեպ շրթունքը:

Գիշեր է. ալեկոծութիւն:

## 1

Ժայռի շրթունքին ալիքներուն կատաղի ելեւէջը:

Ալիքները, որոնք կնոջ մարմին ունին, կ'երեւան միայն մինչեւ մէջքը ու կ'աշխատին կախուին ժայռէն, բայց վայրկեան մը միայն, իսկոյն վար կը թափին նորէն շառաչելով:

...Ու քիչ մը ատեն ժայռի շրթունքին լռութիւն կը տիրէ. եւ աւելի որոշ կը լսուի բացերէն փոթորկի խոր ու խուլ աղմուկը:

## 2

ԱԲԵՂԱՆ — *(Կողմնակի ժայռերուն մէջէն կը նետուի ներս. մազերը խռիւ, հագուստը խառնակ, աչքերը մոլար)* Եկա՛յ, եկա՛յ... *(Ու յանկարծ կը կենայ, կը շփէ ճակատը, կը նայի եր ու կ'ըսկսի բարկացած շեշտով մը)* Դէ՛, մնա՛ս–բարով, կղզի՛. մնաս–բարո՛վ, անապատ, մնաք–բարո՛վ դուք ալ մութ–մութ կամարները տաճարին, մնա՛ք–բարով իմ աղօթքներս ու խնկումը հոգիիս. մնաս–բարո՛վ եւ դո՛ւն, ո՛վ անողոք ու վրէժխնդիր Աստուած, որուն ուղղեր եմ իմ տենչերս ու աղօթքներս: Դուն ալ մնաս–բարո՛վ խցի՛կս, իմ մենաւոր ու լռիկ խցիկս, ալ չեմ դառնալու քեզի: Ա՜յ, դեռ կը վառի հոտ՝ ծոցիդ մէջ՝ ճրագիս աղօտ լոյսը. առտըւան դէմ մինակը, մինակը մարի պիտի ու ալ երբեք չի պիտի վառի: Թո՛ղ մարի:

Ձովի ուժեղ թափը:

ԱԲԵՂԱՆ — *(Կը ցնցուի՝ կը դառնայ ծովուն ու թեւերը կարօտակէզ առաջ պարզելով)* Դէ՜, բա՛ց գիրկդ, Սեդա՜, բա՛ց թեւերդ. ահա՜ յոյզքը ջրերուն, ահա՜ վազքը փոթորկին. բա՛ց թեւերդ ու նորէն փարած քու խնկելի մարմնիդ, նորէն շունչդ շնչիս, ալիքներուն մէջէն, անցնիմ այն նո՜ր ու մե՜ծ աննծանօթին, նո՛ր գոյութեան ու նոր կեանքին. ա՛ն, որ խոստացեր ես ինծի: Բա՛ց գիրկդ, Սեդա՛...

## 3

ՍԻՄՕՆ ՎԱՆԱԿԱՆ — *(Վերի ժայռին վրայէն շիտակ անոր առջեւը կը ցատկէ ու կը կտրէ ճամբան հեւալով)* Կեցի՛ր: *(Կուրծքը սեղմելով)* Շունչս... շունչս...

ԱԲԵՂԱՆ — *(Յանկարծակի եկած ու խոժոռ)* Մէկդի՛ ճամբէս:



ՍԻՄՕՆ ՎԱՆԱԿԱՆ — Կեցի՛ր, դժբա՛ղդ, կեցի՛ր: Վախցի՛ր Աստուծմէ:

ԱԲԵՂԱՆ — *(Կռուի պատրաստուելով)* Մի՛ կտրեր առջեւս:

ՍԻՄՕՆ ՎԱՆԱԿԱՆ — Քու առջեւդ մութ է ու անդունդ:

ԱԲԵՂԱՆ — Ետ քաշուէ՛, մա՛րդ:

ՍԻՄՕՆ ՎԱՆԱԿԱՆԸ — Վախցի՛ր այդ մութէն ու անդունդէն:

ԱԲԵՂԱՆ — *(Կատղած)* Է՜, հերի՛ք է, հեռո՜ւ գացէք ձեր անդունդներովը ու մութերովը, հեռո՜ւ ձեր անվերջ վախերովը: Վա՛խ լոյսերէն ու բերկրանքէն, վա՛խ մութէն ու տանջանքէն, վախ աստուածներէն ու դժոխքէն: Հեռո՜ւ, բա՛ց ճամբաս: Հոն ո՛չ մութ կայ, ո՛չ անդունդ: Ծովն է միայն ու փոթորիկը իմ առջեւս:

ՍԻՄՕՆ ՎԱՆԱԿԱՆ — Մահն է քու առջեւդ, թշուառակա՛ն:

ԱԲԵՂԱՆ — Մահն ալ ձեր վախն է ու ձեր վախի հնարածը:

ՍԻՄՕՆ ՎԱՆԱԿԱՆ — Աստուա՜ծ իմ, խելագար է:

ԱԲԵՂԱՆ — Մահը ա՛ս է, հոս, ա՜յ, այս ձեր անապատը այս վախի ու մեռելութեան կեանքը. իսկ հոն ազատն է. յոյզն ու շարժումը. հոն կեանքն է, եւ ես կ'ուզեմ կեանքին գիրկը... *(Յանկարծ ուժով մը կը հրէ, կը նետէ գետին)* Հեռո՜ւ ճամբէս: Ես կ'ուզեմ ապրի՛մ, ապրի՛մ: Սեդա՛... *(Կը նետուի ծովը)*:

ՍԻՄՕՆ ՎԱՆԱԿԱՆ — *(Կէս մը գետնէն բարձրանալով, սարսափահար ու խեղդուած ձայնով)* Կորա՛ւ. կորաւ իր հոգին...

ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆ

## ՄԱՏՄԱՋԵԼ ԵՒԱ

Գեղին մէջ ամէն մարդ գիտէր նոր ծնած տղոց համար անոր ունեցած սէրը: Բոլոր կնունքներուն ժամն էր, պզտիկ փրփուրէ *պողչա* մը թեւին տակը իր անուշ հագուածքին մէջ՝ թեթեւ ժպիտով մը կը կենար մկրտուողին քովիկը, անծամբ կատարելով հարկ եղած գործերը: Առաջին համբոյրը ինք պէտք է տար տղուն աւազանէն ելլելէ վերջը, լաթերը ծեռքովը ինք կը հագցնէր, բարակ, կոկիկ բաներ, բուռ–բուռ կը լըլար անոր վրայ, ու ծիւնի պէս ցուցըլուն շղարշները, մետաքսէ ծփուն ու կոտրտուող սաւաններր, ժապաւէններու գոյն–գոյն, փախչող ցոլքերով կըտոցը ծերմակութիւն մը կը բանային ժամուորներու սրտին մէջ:

Երբ պատճառը հարցուէր.

— *Խերո՛ւս*,— կը պատասխանէր:

Եւա հանըմ շատոնց գեղն էր, քաղքի այն ամուրի կնիկներուն կեանքը կը վարէր, որոնք դուրսէն հանդարտ ու մեռած կը թուին, բաւական աղուոր կը հագուին, թեթեւ մը կապուած հին օրերու հրապոյրին. ժպիտներ ունին ամէն հանդիպողի, մենակուկ կամ շունի մը հետ պտոյտներ կ'ընեն, երիտասարդներէ փախչելու տարօրինակ մենամոլութիւն մը ցոյց կու տան, որ սակայն հրաւէրի պատմութիւնները, տրտմութիւններր կը ծածկէ իր տակ:

Այս ամէնուն հետ Եւա հանըմ աղէկ անուն մըն էր շահած, գովեստները սենեակներէն բակ ու բակերէն փողոց էին ելած ու գեղին շրջանը ըրած քանի մը հեղ: Տաղաւարներուն՝ պզտիկ տղոց սիրուն փանքալոններ կը նուիրէր, նուրբ կօշիկներ կը խոթէր քալել չկրցող պզտիկներու ոտքերը, օրրաններու առջեւ երկար–բարակ կը նստէր, ոսկիներ կը կախէր անոնց կամարներէն, երգեր, հեռաւոր սէրի մը պէս հալելու վրայ եղող երգեր կը թափէր՝ իր անուշ օրօրներուն ակամայ լալկան բան մը տալով:

* * *

Աղջիկներուն էն անուշն էր ան, եթէ ոչ էն աղուորը: Ամէնուն բերանն էր ան պզտիկ գեղին մէջ, ուր տուները գաղտնի բաներ չէին սիրեր պահել ու մարդերուն քիչութիւնը առիթ կու տար մոռցուածներն ալ կեանքի կանչելու: Չունէր միսի ողողուն ծփանքներ, գիծերու կարկառուն ու խուտացող պարոյրներ, իրմէն ծերմակները շատ էին, բայց չկար մէկը, որ անոր փափկութիւնը, շնորհքը ունենար: Մազերուն առատ հրապոյրը, երեսին անուշութիւնը կը փլցնէին ամէնուն հոգին:

Զատկին էն աղուորը կը հագուէր՝ հակառակ ունեւոր մը չըլլալուն: Պրուսայէն ամազոններ ունէր, անանկ ամազոններ, որոնք անոր կուրծքը կը գրկէին դողալով, կռնակը կը տաշէին ու ծիծերուն ճնշումէն ուռած լաթը այնքան կ'աղուորնար, կ'անուշնար, որ փռուածքէն գողնալու խենթ յանդգնութիւնը կու տար շատերուն:

Պզտիկուց Պրուսա գացեր էր: Մետաքսի ընդարձակ մանարաններէն մէկուն մէջ սկսեր էր աշխատիլ հօրքուրի մը շուքին տակ: Առջի դժուարութիւններէն ետք, կամաց–կամաց հանգիստի օրերը եկած էին: Իր գործին հետ հասակն ու մազերը մեծցեր էին քիչ–քիչ ու աղուոր երեսին առաջները շատ խենթ սիրողները հիմա ապտակով մը, գգուող ապտակով մը գոհ ըլլալ պիտի ուզէին:

Եղբայրներ ունէր իրմէ մեծ, որոնք իրեն կարօտ չէին: Իր վաստակը չէր ուտէր ամբողջովին, բայց գեղը *փարա* մըն ալ չէր տանէր, սակայն բանալ կ'արժէր իր սնտուկը: Բոլոր տեղացի աղջիկներուն զարդն ու զարդարանքը սեղմեր էր հոն: *Քորսէ*ներուն տեսակները չէին պակսեր, ոչ ալ սուր ու կոկիկ գլխարկներուն փունջը: Շրջազգեստներուն շատերը թանկագին կերպասներով երեւան եկած՝ կրակէ գիներու նստած էին իրեն: Բոլորն ալ ինք կը կարէր: Փոթերուն ներդաշնակութիւնը կամ լաբուածքին շնորհքը օրերով կը շահագրգռէին զինքը. գոյները յարմարցնելուն մէջ իր ճաշակը խորունկ նրբութիւններ երեւան հանել գիտէր: Ու արուեստին ամէն ծեւերը օտար չէին այդ գեղացի աղջկան, որ մեծ դժբախտութիւնն ունէր իր կարած լաթերը չհագնելու:

Զատկի տօնին գեղ կու գար: Այն ատեն հագիւ կը յաջողէր մօրը հետ երկար ծեծկըլուքներէ ետք քիչ մը նուրբ այն շրջազգեստներէն կռնակը անցընել, որոնք անոր բոլոր կուրծքը ամուր մը աչքի կը բերէին, ուսերուն վրայ թռչող բան մը կը դնէին: Մազերը չէր հիւսէր բնաւ, քաղքի աղջիկներուն նման շրջազգեստին ծալքերը պչրանքով մը երկու մատերուն անցուցած կը քալէր կալին մէջէն ու այդ աղուոր մարմինին քով գեղին միւս աղջիկները կը պղտորէին, կը մութնային:

Ամէն տաղաւարի գեղն էր սովորաբար: Կալերը կ'անցընէր Զատկին երեք արեւով լեցուն օրերը ու տօնին անծրեւոտ օդերուն անգամ ժամ

երթալներ ունէր: Ասոր համար կանուխէն լուր կ'ելլէր գեղին մէջ ու փողոցներուն երկայնքը, պատուհաններուն ետեւէն մեծ ու պզտիկ կը սիրտին այդ բարակ, հովի պէս անցնող բանին նայիլ պահ մը: Ընդհանրապէս մետաքսէ հովանոցի մը տակ իր գլուխը պարզ կը կենար: Մազերը գլխուն գագաթը ժողվուած՝ քանի մը շինծու վարդերու ներքեւ թուլիկ մը կը դողային: Ու կուրծքը միշտ դո՛ւրս վաթելու հակամէտ՝ ամազոնին լայերուն անանկ հրապոյր մը, անանկ աղուորութիւն մը կը հագցնէր, որ ամէնն ալ, մատերնին խածած՝ կը մնային մինչեւ անոր կորսուիլը փողոցի մէկ կտորին մէջ:

* * *

Զատիկ մը նորէն եկաւ ու ա՛լ չգնաց Պրուսա: Իր գեղի տունին մէջ կ'անցընէր օրուան մեծ մասը, կոկիկ պարտէզ մը պատրաստեր էր տունին ետին, ուր ծաղիկներուն է՛ն աղուորներն ու տարօրինակները կրնար բուսցնել, ծառերուն շարքը կանոնաւոր ձեւերու կը խոթէր, կը չափէր, կը կտրէր որպէս թէ մետաքսէ շրջազգեստ մը ձեւելու ելլէր: Իրիկուան վրայ ամէն օր վեր կ'ելլէր, կալերը պահ մը կը պտտէր ու վերջը լեռներուն եզերքն ի վար վերջալոյսներուն հետ գեղ կ'իջնէր ուրախ, հանդարտ, միշտ ձեռքին մէջ բուռ մը կանանչ ու մազերուն վրայ քանի մը ծաղիկ:

Իր երեսները գեղի այդ կեանքին մէջ թեթեւ կարմիրներ ցոյց տուին ու աչքերուն խորունկը նոր լոյսեր վառեցան: Սուսիկ ժպիտներ ունէր, որոնք իր լման մարմինը անուշութիւններու մէջ կը թաթխէին, ու այսպէս իր քսան տարիներու մէջ գեղի այդ աղջիկը, աղջիկներուն է՛ն անուշը, եթէ ոչ է՛ն աղուորը, մէկուն չգնաց:

Տունմնայ եղած էր ա՛լ. այն զարմանալի աղջիկներուն պէս, որոնք չես գիտեր ինչ պատճառով կը հրաժարին կարգուելէ,— ան ալ հիմա՝ միշտ պահելով իր արդուզարդին քաշող պարզութիւնը, կամաց–կամաց թոռմիլ կը սկսէր: Իր կուրծքը միշտ հարուստ՝ կը հիննար կարծես իր չփակին մէջ երկար ատեն բանտուելուն համար ու մազերը միշտ ողորկ կը մնային անոր անուշ երեսը պագնելով: Չկարգուող աղջիկներու յատուկ իր նայուածքը կը պաղէր քիչ–քիչ, դէմքին չգործածուած բաներուն տրտմութիւնը տալով:

Մայրը շատոնց մեռեր էր: Եղբայրները ամէնն ալ կարգուած էին ու տունը լեցուն էր հարսներով: Անոնց հետ հաշտ էր միշտ: Իր ձեռքէն աղային բոլոր հարսնիքի հագուստները միւռոնի սպասներուն չտեսնուած զարդարանքներ գիտէր պատրաստել: Տարին անգամ մը նորէն քաղաք



կ'երթար՝ պզտիկ պողչան միշտ հետիկը, ու ամէն գարուն սնտուկը կը լեփին, որ կը բացուէր — *թը՛նկ* — ու քիչ մը ետք կը գոցուէր:

Տանը մէջ առանձին սենեակ մը ունէր: Սնտուկը, ընկուզէ ընտիր սնտուկ մը, անոր հոգին էր: Սուղ գորգերով յատակուած տախտակամածը կը կտրուէր լայն *սէտիր*ով մը, որուն վրայ կերպասէ վարագոյրներ դալուկ, խունկափուկ բաներ կը տանէին: Անկողինը՝ անգի՛ն, մահճակալին մէջ մինակուկ պառկած, խորհուրդի մը պէս պաղ ու մթին: Ամէն օր անգամ մը կը տեղաւորուէր ան անպայման ճշդապահութեամբ մը: Մէկը չէր քնանար: Սնտուկը — *ճիհէզ* սնտուկը — ամէն օր տաքուկ ջուրով կը սրբուէր:

Օրին կէսը պատուհանին առջեւ կ'անցընէր: Ռահաններ, երկար ու նեղ մոմի սնտուկներուն մէջ իր առջեւ թոփիկ–թոփիկ կ'երերային հովերուն դէմ ու հոտերով իր սիրտը կը բանային: Անոնց ջուր կու տար ամէն առտու արեւին հետ, Խամախենց տունէն ոչխարի աղբ կը բերէր անոնց համար:

Լերան խոշոր ծառերուն փորէն սինայի պէս խաս հող կ'ապսպրէր ու ամէն սնտուկի համար առանձին–առանձին անուններ ունէր: Չաճոյք էր իրեն համար մատները լարել ռահաններուն կլոր ու գողտրիկ գլուխներուն վրայ, թօթուել անոնց կանդին վրայ իր ձեռքերուն կրակը, որ հոդ կը դառնար կարծես ու երկար, երազող աչքերով նայիլ հեռուն մլիկ–մլիկ փայլող լճակին... իր մեքենային հետ — փառաւոր Սինկէր մը–, օրհարսակի սրտնեղութիւնները կը վանէր ու իրիկունները, անվրէպ ամէն իրիկուն կալերէն լեռներուն փէշերը կ'երկննար, աւանդական հովանոցը ձեռքը, մերթ բանալով, մերթ գոցելով:

Գեղը իր վրայ խօսելէ չէր ձանձրանար: Շատ վէպեր կը պատմուէին իր անունին շուրջը. հօրքուրը միայն լեզուն ձիգ կը բռնէր:

— Պրուսայի մէջ մարդ ունի,— կ'ըսէին շատերը:

— Գալ տարի պիտի կարգուի,— վրայ կը բերէին ուրիշները:

— Ա՛լ Պրուսա պի չերթայ եղեր,— կ'աւելցնէր անդիէն ուրիշ մը:

Ու ասանկ չհատնող, չլմնցող խօսքեր, որոնք սակայն միշտ յարգանքով մը կը վերջանային:

— *Լաքին*, ատ ի՛նչ անուշ աչքեր են պէ, մարդ չի դիմանար ատոնց:

* * *

Ու իրաւ եղած էր մէկը, որ չէր դիմացած այդ աչքերուն...

ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆ

## ՄԱՆԿՈՒԹԻՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՐԴԻԿ
**(հատուած՝ «ԵԹԷ ՏՐՈՒԷՐ...»)**

— Եթէ ըսուէր, հոգեվարքի վերջին պահուդ, թէ օր մը եւս կը շնորհուի քեզի այս աշխարհին մէջ, անցուցած կեանքիդ ո՞ր օրը կ'ուզէիր ապրիլ կրկին, է՛յ իմաստուն բարեկամ: Ո՞ր գեղեցիկ օրը անվերադարձ օրերուդ՝ պիտի ուզէիր որ ետ գար ժամանակին խորերէն: Առաջին սիրոյդ առաջին թրթի՞ռը արդեօք, երբ փառքդ դափնիի վերածուեցաւ արժանաւոր ճակատիդ շուրջ... Ո՞ր օրդ պիտի ուզէիր որ ետ գար, երջանիկ օրերով հարուստ ո՛վ երջանիկ մարդ, երբ մայրամուտ է արդէն եւ հորիզոնիդ վրայ մութ ստուերները կ'իջնեն...

— Եթէ տրուէր, օ՜ եթէ տրուէր վերապրիլ օր մը կեանքէս, երազի գոյն աչքերով այն քնքուշ էակը չէր, որ պիտի ուզէի գտնել կրկին, յաղթանակի գինովութիւնս չէր, ներշնչումի մեծ պահս չէր, վայելքի եւ երջանկութեան գիշերներս չէին, առագաստի իրիկունս չէր եւ առաջին զաւկիս առաջին ճիչը չէր... Եթէ տրուէր, օ՜ եթէ տրուէր մահուան առջեւ օր մը եւս ապրելու կեանք, պիտի ուզէի, որ գար ինծի, մանկութի՛ւնս...

Ինծմէ առաջ մէկը ըրա՞ծ է այս հարցումը, մէկը տուա՞ծ է այս պատասխանը: Բայց ես գիտեմ, թէ երկրագունտի երեք քառորդը իր մանկութիւնը կը փնտռէ եւ միւս քառորդը դեռ մանկութիւն կ'երազէ: Ես գիտեմ, թէ բոլոր սրտերը կառչած են իրենց մանկութեան ու բոլոր աչքերը գաղտնի արցունքով ու խանդաղատանքով կը նային ժամանակին մէջ կորսուած մանուկի մը ետեւէն:

Բայց գիտեմ նաեւ, թէ աշխարհի անկիւններուն մէջ մոռցուած բազմութիւն մը կայ, տասնեակ մը հազար ինծի պէս տրտում տղաք, որոնք աշխարհի ամէնէն դժբախտ մարդիկը եղան ու պիտի մնան այդպէս, որովհետեւ մանկութիւն չունեցան: Գիտեմ, թէ անուն չունեցող բան մը եղաւ մեր մանկութիւնը, թշուառութեան ու տառապանքի դժոխային խառնուրդ մը, որուն յիշատակն իսկ, տարիներ ետք, դեռ կը պահէ մեր սրտերը կարծր ու հոգիները խանձուած:



Մանկութիւն չունեցանք, որովհետեւ հայ էինք ու որբ էինք: Մանկութի՞ւն էր կիսամերկ, բոպիկ ու թշուառ մեր գոյութիւնը սալաքարերուն վրայ, ցուրտին ու անձրեւին մէջ, մանկութի՞ւն էր զրկանքը, անօթութիւնը, արցունքը, անտարբերութիւնը օտարին ու դաժանութիւնը հարազատին...

Մանկութի՞ւն է օրդ, հէ՛յ պզտիկ Պետրոս, երբ ամէն գիշեր զարհուրանքի ճիչերով կ'արթնցնէիր ամբողջ որբանոցը ու կ'աղաղակէիր «եկա՛ն, եկա՛ն», որովհետեւ աչքերովդ տեսած էիր մայրիկիդ ու մեծ եղբօրդ մորթուիլը «մեծ ծառին տակէն անցնող ջուրին քով», ու տեսարանը ամէն գիշեր կը յածախէր մղձաւանջներով լեցուն քունդ ու — «եկա՛ն, եկա՛ն»...

Մանկութի՞ւն էր աչքերուդ մէջ տեւաբար ծփացող մութ մշուշը փուռերուն առջեւ, ռունգերուդ ագահ բացխփումը տաք հացերուն բոյրին դէմ, լեղի լորձունքը չոր կոկորդիդ մէջ, հէ՛յ կակուղ Արթին, որ վեց տարեկանիդ գիտէիր արդէն գողութեան բոլոր ձեւերը եւ մուրացկանութեան դժուար արուեստին բոլոր նրբութիւնները:

Մանկութի՞ւն եղաւ օրդ, գռուզ մազերով Միսա՛կ, երբ խանութին առջեւ դրուած բաց պարկէն կոյտ մը արմաւը առիր փախար բայց կո՛ւտ մը անգամ չկրցար տանիլ, որովհետեւ խանութպանը հասաւ ետեւէդ ու երեք հարուածներուն երկրորդովը ջախջախեց սրունքդ կշիռքին երկաթ թեւով: Կաղ չմնացիր, բայց արմաւը չկերար: Շալկած տարինք քեզ եւ մինչեւ լոյս «մայրի՛կ — մայրի՛կ» կանչեցիր...

Յազար էին, հազարներ էինք, շէնք մը, շէնքեր, ամբողջ թաղ մը ու մեր թաղը քաղաքին վէրքն էր:

Շրջուած էր կեանքը մեզի համար, շրջուած էր ճակատագիրը, շրջուած էին օրերը իրենց իմաստէն ու անունէն: Քրիստոնեայ մանուկներ էինք, բայց Կիրակիին չէր որ կը սպասէինք, այլ Շաբաթին: Կիրակին որեւէ օր մըն էր միւս օրերուն պէս ու հացը մատ մը աւելի չէր այդ օրը, եւ ոչ ալ արեւը քիչ մը աւելի տաք: Բայց Շաբաթը հրեաներուն Կիրակին էր ու մենք հարիւրներով կը թափէինք հրեական թաղամասին նեղ փողոցներուն մէջ ու կը սպասէինք ժամերո՛վ ժամերով, անձրեւին տակ, բոպիկ, դողահար: Կը սպասէինք յամառ, աներկիւղ, աներես: Ասեղէ շինուած օրրաններու պատմութիւնը, իրենց խմորին համար մորթած քրիստոնեայ մանուկներուն արիւնը, հրեաներուն վերագրուած չարչարանքի բոլոր առասպելները արգելք չէին, որ սպասէինք զոց դռներուն առջեւ եւ աղօթէինք որ դռները բացուին, ներս կանչուինք ճրագը վառելու կամ

կրակարանին մոխիրը խառնելու, որպէսզի կտոր մը հաց տան, բուռ մը չամիչ կամ դդումի կուտ…

Կեանքը այսպէս էր մեր մանկութեան օրերուն ու այդ կեանքը մերն էր:

Ետ կը կանչե՞ս մանկութիւնդ, Խլլոտ Աբրահամ, որ շողգամի մը համար մէկ աչքդ վրայ տուիր ու երեք ամիս անթացուպով քալեցիր: Աչքիդ հանդիպած քարէն չէիր կրնար խուսափիլ գուցէ, բայց պարտէզին պատէն ցատկելդ անճարակութեան գլուխ–գործոց մըն էր ու բնական էր որ այդպէս սուղ վճարէիր: Չտեսա՞ր մեր փախուստը, երբ կը շուլլուէինք պատէն վեր եւ միւս կողմը իջնելու համար ամբողջ հասակով կը կախուէինք վար, նուազեցնելով տարածութիւնը ու մեր հասակին չափ զեղչելով պատին բարձրութենէն: Դուն ելար պատին վրայ ու ցատկեցիր մէկէն, իբրեւ թէ ջուր ըլլար տակը: Կոտրած ծունկիդ պատասխանատուն դուն ես, բայց մեղք եղաւ աչքիդ: Պարտիզպանը այնքան չար մէկը չէր, բայց քարը նետած էր անգամ մը ու չէր կրնար ետ դարձնել: Ապակիէ աչք մը տուին յետոյ քեզի ու վայելեցիր հիւանդանոցին բարիքները լման երկու շաբաթ, բայց կ'ուզե՞ս որ ետ դառնան այն օրերը…

Որբ չէինք միայն: Որբութեան տրտում ու խորշակահար դիմակը չկար մեր դէմքին վրայ: Բարութեան եւ գուրգուրանքի պակասը չէինք զգար: Հաւաքական դիմագիծ մըն էր մերինը, բիրտ, դաժան, չար: Կ'ատէինք մարդիկը, կ'ատէինք իրար: Սուտը, կեղծիքը, խարդախութիւնը մեր զէնքերն էին: Բնական օրէնք էր ծեծել տկարը, ծծուիլ զօրաւորէն: Ափի մը մեծութեամբ հացի կտորի մը համար կրնայինք գզուըտիլ, խածնել, արիւնել: Սէրը անբովանդակ բառ մըն էր, ընկերասիրութիւնը մեզի անծանօթ զգացում մը: Հացն էր ընկերը, բարեկամը, սէրը:

Բարձիս տակէն հացը գողցողը ո՞վ էր, սմսեղո՛ւկ Թորոս: Եկար, ինծմէ աւելի ցաւեցար, Ենովքին վրայ կասկածեցար, առաջարկեցիր որ երթանք միասին ծեծենք Ենովքը: Գացինք, ծեծեցինք: Բայց երեսուն տարի ետքն ալ ահա ձայն մը կ'ըսէ ներսէս, թէ ծեծը ուտողը Ենովքը եղաւ թէեւ, հացս ուտողը դո՛ւն էիր սակայն: Գիտե՞ս թէ ինչ չարիք գործեցիր այդ անխիղճ արարքովդ, անզգա՛մ Թորոս: Ամբողջ օր մը անօթի մնալուս հաշիւը չէ որ կը պահանջեմ քեզմէ, այսքան տարի ետք: Անարդար կերպով Ենովքին երեսը ճանկելս չէ, որ խղճի խայթ կու տայ ինծի: Ի վերջոյ արդարութեան պէս բան մը կրնամ նմանցնել ընթացքս, պնդելով, թէ իրաւունք ունէի գողցուած հացիս համար ամէն ինչ ընելու: Բայց այդ օրէն ի վեր գէշ փիլիսոփայութիւն մը բոյն դրաւ մէջս եւ աճելով ու ամրանալով, դարձաւ նեղացուցիչ ունակութիւն մը: Քեզմէ սորվեցայ, թէ բա՛ն



մըն ալ պէտք չէ պահել, քանի որ Ենովք մը կամ Թորոս մը կրնան գողնալ: Դրամին արժէքը, սեփականութեան կշիռը երբեք չգիտցայ, ու սովորութիւն ըրի վաղուան մասին չմտածել: Ու պատահեցաւ, որ երբ դրամ ունենամ, անմիջապէս ծախսեմ կամ ընկերոջ մը գիրքը տպեմ, եւ իմ գիրքս տպելու ատեն թուղթի համար ուրիշներէն դրամ փոխ առնեմ: Ահա թէ ինչ չարիք գործեցիր բարձիս տակէն հացս գողնալով, գո՛ղ Թորոս…

Ո՞ւր ես, ո՞ւր մնացիր: Կրցա՞ր իրականացնել մեծ երազդ, որուն շքեղ պատկերը գծեցիր աչքերուս առջեւ, երբ Ենովքին հաշիւը մաքրեցինք ու նստանք խսիրին վրայ, ես՝ անօթի ու տխուր, դուն՝ պերճախոս ու խանդավառ.— Մեծնալ՝ դրամ շահիլ. դրամ շահիլ՝ հաց գնել. հսկայ տաշտ մը հաց պահել տունիդ մէջ, եւ ուտել մինչեւ իրիկուն, ուտել մինչեւ առաւօտ, ու Ենովքին՝ — Գո՛ղ շուն — ա՛յսչափ չտալ: Ցուցամատիդ ու բթամատիդ եղունգներուն միացած կէտն էր Ենովքին զլացած բաժինդ: Ի՞նչ եղաւ քո՛ւ բաժինդ կեանքէն… Ո՞ւր ես, Թորո՛ս, ո՞ւր է Ենովքը, ո՞ւր են միւսները, կ'ապրի՞ն թէ մեռան, ճերմա՞կ է իրենց հացը թէ սեւ, կո՞ւշտ կը պառկին թէ անօթի:

Լեւոն մը տեսայ Միլանոյի մէջ, Տուոմոյի հրապարակին վրայ: Միգարանին սանդուխներուն տակ կօշիկ կը ներկէր. ճանչցաւ զիս ու տուաւ անունս: Ես չյիշեցի իր դէմքը, բայց պատմածներէն որոշ էր, թէ մեզմէ էր: Օրը տասը ժամ կօշիկ կը ներկէր ու շահածին կէսը տեղվոյն վարձք կու տար: Յստակ կերպով յայտնեց՝ թէ իր ներկայ դիրքը — միգարանին սանդուխներուն տակ…— պիտի չուզէր փոխել որբանոցի ձրի հացին հետ…

Վեց զոյգ ներկելու չափ դրամ տուի իրեն եւ ուրիշ թաղ մը գացի ճաշելու, վախնալով որ կրնայ պահ մը ծակէն դուրս ելլել ու տեսնել զիս Տուոմոյի շքեղ ճաշարանին մէջ…

Ուրիշի մը հանդիպեցայ Փարիզ: Իսկոյն ճանչցանք իրար: Մեր սենեակը, վերջին շարքին ամէնէն ծայրը պառկող Յակոբը: Հարուստ էր, զաւակներ ունէր եւ ֆրանսացի աղուոր կին մը: Հայերէնը գէշ կը խօսէր եւ ֆրանսերէնը աւելի գէշ: Իր բազմաթիւ մօն վիէօներով արտայայտած հիմնական միտքը այն էր, որ երբ պատերազմը ծագի դարձեալ — «կը տեսնե՛ս, մօն վիէօ, անպայմա՛ն պիտի պայթի պատերազմը եւ ինչե՜ր պիտի ըլլան. կէս քիլոյ սուրճը հազար ֆրանքի ծախելու գիտեմ» — եւ ռումբերը սկսին տեղալ, «երանի՛ թէ ամէնէն խոշորը իյնայ մեր որբանոցին վրայ»…

Ամէն տեղ են անոնք, մանկութիւն չունեցող ընկերներս: Մեծահարուստներ կան անոնց մէջ, թշուառներ, արուեստագէտներ, յաջողածներ,

վրիպածներ: Կեանքը գաղտնիք չունի այլեւս անոնց համար, օրերը պատրանք չունին, երջանկութիւնը հմայք չունի, որովհետեւ մանկութիւն չունին:

Մորթուած է անոնց անմեղութիւնը կանուխէն, ցամքած է անոնց զգացումներուն յորդ աղբիւրը հեռաւոր օր մը, պաղ դժոխքի մը յատակը: Կե՛րթան, կու գան, կը վայելեն՝ բայց կոտրուած, խաթարուած բան մը կայ անոնց մէջ, անտեսանելի խարանի մը հետքը՝ անոնց մռայլ ճակատներուն վրայ:

Որբեր են: Հայ որբեր: Այն մարդիկը երկրագունտի մարդոց մէջ, որոնք կատեն իրենց մանկութիւնը...

Այս գիրքը պատմութիւնն է ճմլուած մանկութեան մը:



ՀԱՄԱՍՏԵՂ

## ՏԱՓԱՆ ՄԱՐԳԱՐ

ԴՈՒՔ տեսա՞ծ էք խրտուիլակներն արտերուն: Յարդով ու ցախով լեցուած խրտուիլակներն այլանդակ, գինովի զանազան ձեւերով.— մէկին հասակը ինքն իր վրայ փլած. ուրիշ մը կարծես գինետունէն դեռ նոր ելած՝ մէջքը ծուռ, այլեւս անկարող քալելու. աւելի ուրիշ մը գինետուն նոր մտնողի դիրքին մէջ, ոտքերը փարտ, թեւերը վեր բռնած, իր մէկ ուսին հետ ծռած է նաեւ գլխարկը. խրտուիլակները թզուկ, փայտերուն կռթնած խրտուիլակներն հաշմանդամ, սմքած կամ ուռեցած փորերով, ծալլուած ոտքերով, կախաղանէն դեռ նոր վար առնուած ոճրագործի մը լխկած մարմնով:

Սակայն էն գեղեցիկը մեր այգիի քովի պարտիզպանին խրտուիլակն էր: Հասակը երկար, թեւերը լայն լայն բացած անապատի Յիսուսին պէս առանձին կ'աղօթէր կարծես.— ո՞վ կար, թէ արտերուն ջուրն էր ցամքեր:

*Արթիւր*ը պարտիզպանն էր: Տնկած էր երկար խաչաձեւ ձող մը, հագցուցած էր կապոյտ, զզզուած շալվար մը, կապած էր գօտի մը ծալ ծալ: Թեւերուն, կռնակին անցուցած էր՝ այծի մազերէ շինուած, հինցած շատ հինցած *աբա* մը: Գլխուն տեղ դրած էր պարապ դդում մը. շինած էր քիթ, փորած էր բերան. ակռաներուն տեղ տեղաւորած էր արտերուն մէջ նետուած ու ճերմկցած իշու մը ծնօտին ակռաները. իսկ աչքերու տեղ դրած էր երկու թաւշագոյն չորցած սալորներ:

Օ՜, ի՜նչ այլանդակ էր. ճիշդ ու ճիշդ քիթը մաշած ու աչքերը դուրս ինկած չինական կուռք մը:

Ամէն աշունի, պարտիզպանը, երբ իր գործը կը լմննար, էն վերջը իր ուսին կը նետէր խրտուիլակն ու տուն կը մտնէր:

Ամէն գարունի, երբ լայն ճակատներով փոքրիկ գառնուկները դուրս կ'ելլէին իրենց փոքրիկ տոտիկներով հողին պորտը դրոշմելու, պարտիզպանը կը շալկէր իր խրտուիլակն ու պարտէզ կ'իջնէր:

Խրտուիլակն հոն էր. միշտ անշարժ հէքեաթի այն ճգնաւորին պէս, որուն ափերուն մէջ, կ'ըսեն թէ, թռչուններ իրենց բոյնը դրած էին:

Օր մը սակայն տեսայ խրտուիլակը կը քալէր:

Այն օրերուն հազիւ ութը տարեկան կայի: Մեր այգիին ճամբուն վրայ կը վազվզէի. աղմուկ կ'ընէի. թռչուններուն քարեր կը նետէի. պարապ կամուրջին տակ մտնելով, սարդի առէջները կ'աւրըշտկէի: Ա՜խ, ո՜րքան կը սիրէի հեռաւոր, անծանօթ վայրի մը մէջ՝ պահուըտած արձագանգս արթնցնել: Մօրմէս կը հեռանայի ու կը մօտենայի այնպէս, ինչպէս գեփիւռն անտառէն:

Այն օրը զարմանքս մեծ եղաւ. ձեռքերս իրար զարկի ու պոռացի.—

— Մայրիկ, մայրիկ, խրտուիլակը ո՞ւր կ'երթայ:

Մտածեցի որ մօտի դրացիներուն այցելութեան եւ, կամ, մօտակայ առուէն ջուր խմելու կ'երթայ: Աչքերս զիս չէին խաբեր: Ճիշդ ու ճիշդ մեր այգիին քովի խրտուիլակը, մեզմէ քիչ հեռու թումբին վրայէն կը քալէր յաղթ հասակով, ուսերը լայն ու ծուռ, յարդով լեցուած. ցորեաններու ալիքներու պէս վէտ վէտ, միեւնոյն շալվարը, թաղիքէ միեւնոյն գլխարկը, *ապան*. ծալ ծալ փաթթուած միեւնոյն գօտին: Այս անգամ ուսին աւելցուցած էր միայն բահ մը:

«Այդ խրտուիլակը չէ, զաւակս»,— ըսաւ մայրս խնդալով.— «Այդ մեր գեղին Տափան Մարգարն է»:

Մայրս ճիշդ էր. խրտուիլակը հոն, մեր այգիին քովն էր: Ճաղատ սեխերուն մէջ կ'աշխատէր պարտիզպանը ճաղատ. գիժ երեսով կռաբանջարներուն մէջ՝ դեռ նոր իջած արագիլ մը իր թեւերը կը ծալլէր. իսկ խրտուիլակի շուքին մօտ, պարտիզպանին էշն իր վիզն անընդհատ ծառին կը քերէր:

Խրտուիլակը հոն էր:

Անդին, երկու արտ հեռու կապոյտ պաստառին վրայ գծագրուած, ամպի կտոր մը անութին տակ, կ'երեւէր Տափան Մարգարի նկարը հսկայ:

Վերջալոյսին, բոլոր դաշտի բանուորներուն հետ գիւղ վերադարձանք:

Ճամբայի փոշիներուն խառնուած էր արջառներու բառաչը, բոժոժներու ձայնը. կովերը տուն կ'արտօրային փեթակի պէս լեցուն ծիծերով. կը փայլփլային խոփերը փայլուն, կը լսուէին հնչիւնները խոփերուն: Վերջալոյսային այս խառնիճաղանճին մէջէն, բլուրի ճամբուն վրայ, առանձինն, տեսայ Տափան Մարգարը:

Արտի չափ լայն իր կռնակը մեզի դարձուցած, բահը ուսին՝ գիւղ կ'իջնէր:

Վերջալոյսը՝ ամպերուն մէջ գծած հրդեհի գեղեցիկ նկար մը կ'աւրէր: Վերջալոյսը տժգունեցաւ աշունի գոյնով. Տափան Մարգար տակաւին բլուրին վրայ էր: Վերջալոյսը մարեցաւ. բլուրէն անդին կ'երեւէր Տափան Մարգարի կռնակը, որ հետզհետէ կը թաղուէր. յետոյ ուսերը. էն վերջը բահի ծայրին հետ հատած էին նաեւ արեւուն հիւանդ շողերը վերջին: Տափան Մարգար, վերջալոյսին հետ ու վերջալոյսին պէս, գիւղին մէջ ընկղմեցաւ:

Անկից ի վեր յաճախ կը տեսնէի զինքը: Անգամ մը իրիկնադէմին, իր ջուխտ գոմէշներուն հետ գիւղ կը մտնէր ու ճամբուն վրայ իր խոշոր, ծանր կօշիկներէն արտերուն հողը կը մաքրէր, դըբ, դըբ, ծառին զարնելով: Է՜հ ի՞նչ կօշիկ. այնքան մեծ, որ նապաստակ մը հոն շատ դիւրութեամբ կրնար իր տունը տեղաւորել: Ուրիշ անգամ մը տեսայ շալվարէն չանչուլի պէս կախուած դաշտի սէզերու հետ եկեղեցի կը մտնէր:

Կ'անցնէին տարիներ: Տափան Մարգար միեւնոյնն էր, երկու գոմէշներով, միշտ բահն ուսին. կարծես միեւնոյն ձեւով եւ միեւնոյն տարազով ծնած ըլլար:

Շատ անգամ կը զարմանայի, թէ ինչո՞ւ թռչուններն անոր բահին վրայ չէին թառեր:

Տափան Մարգար ունէր արեւէն այրուած դիմագիծ մը: Քիթը, այտերը, երկար ու փոքրիկ անկիւններով՝ կարծես պղինձէ շինուած ըլլային: Ճակատը միշտ փոթ–փոթ, ինչպէս հերկուած արտ մը: Ունէր տափանի չափ լայն, սերմնացանի թեւեր: Ան միշտ լուռ էր. եթէ պէտք ըլլար, շատ կարճ կը խօսէր: Գիւղացիները, մեծէն պզտիկ, կը յարգէին զինքը, անոր խորհուրդին կը դիմէին: Այս արտին մէջ ցորե՞ն պէտք է ցանել, թէ բամպակ, – Տափան Մարգարին կը հարցնէին: Սերմնցու ցորենները անոր կը ցուցնէին: Երբ մանաւանդ անվարժ ցուլ մը պիտի կրթէին, Տափան Մարգարը կը կանչէին: Ան գիտէր, թէ ականջներուն ո՞ր տեղը պէտք էր շփել, որ ցուլը գառնուկի պէս հանդարտէր:

Անոր կինը, Թամար, քառասունի մօտ, կարմրուկ թուշերով, աղուոր հասակով կին մը, իր էրիկէն կ'ակնածէր այնպէս, ինչպէս նոր հարս մը իր կեսրարէն: Օր մ'օրանց իր կնոջ երեսին չխնդաց. օր արեւ չտեսաւ Թամար:

«Մի՛ մեղադրէք, քուրիկ»,— յաճախ կը գանգատէր Թամար,— «դըժար կրակ է, *սէպէպ* ըլլողին բռըշակը մրեղի: Աղէարձան է քուրիկ, աղէարձան, քարէն ձէն կ'ելլայ իրմէ ձէն չ'ելլար: Նեզենիմ ձեռքերս դայեկի ձեռքեր եղան: Է՜հ խուրպան ըլլամ, Աստուած, տեսէք նիրոջս բախտը. կուժի չափ պոյ մ'ունի. տեսնես իր էրկան հետ իրարու շողինք կը լզեն, գիշեր ցորեկ քսփսնին չի հատնիր: Բա՛խտ է, քուրիկ, բա՛խտ»:

Գիւղացի կիներուն համար գաղտնիք մը չէր, թէ Տափան Մարգար իր կինը չի սիրեր, նոյնիսկ անոր հետ մէկ բարձի վրայ չի պառկիր:

Քիչ տարի չէր: Թամար, իր էրկան սիրտը իրեն դարձնելու համար, շատ սուրբերու գացած՝ շատ բաներ փորձած էր…

Տափան Մարգարի սիրտը կիներուն համար չէր, այլ իր գոմէշներուն, արտերուն, լուծքին, ջրտուքին, այս բոլորին համար: Ան դարձած էր տեսակ մը շարժուն խրտուիլակ, դաշտերու ոգի…

Ան կը սիրէր իր գոմէշները, անոնց հետ կ'ապրէր, անոնց հետ կը խօսէր սրտանց.— զոյգ մեծղի գոմէշներ՝ ճակատներուն վրայ զոյգ սպիտակ նախշեր, փիւնիկ թռչունի նկարին նման, կարծես կարկտնուած լուսնի լոյսեր ըլլային. զոյգ գոմէշներ՝ պարարտ դնդերներով, Տափան Մարգարի կուրծքին չափ լայն ճակատներով, ամբողջ լեռ մը իրենց ետեւ քաշելու չափ հուժկու վիզերով:

Ամէն գարունին Տափան Մարգար իր գոմէշներուն հետ դաշտ կ'ելլէր: Դաշտը, գարունին մէջ, գոմէշներն իրենց փնջածակերը կը լայնցնէին, թեթեւ փոթորիկի պէս անցնող հովերն ամբողջութեամբ կը շնչէին, եղջիւրներով թումբեր կը փորէին, հպարտ գլուխնին վեր բռնած, կը վազէին, կը հեւային, ինչպէս հսկայ շոգեմեքենաներ: Որքա՜ն մեծ հաճոյք էր Տափան Մարգարին համար:

Ան, հոն, արտերուն մէջ էր միշտ, քարերը կը հաւաքէր, նոյն իսկ կոշկոռ հողերը ձեռքով կը փշրէր, տեսակ մը փայփայանք արտերուն: Միշտ հոն, արտերուն մէջ: Քմայքոտ հովերը, փոքրիկ, չարաճճի մանուկներու նման, անոր հետ կը կատակէին ու սուլելով, քրքջալով ցորեաններուն մէջ կը պահուէին: Վերէն անցնող թռչուններ ուսերն ի վար կը ծրտէին: Երբ ջաղբէն վերջ մուկեր սպաննելու կ'երթար, հոն իրեն ընտանի արագիլներն սպիտակ՝ իր ոտքերուն քովէն չէին հեռանար:

Ամէն իրիկուն, երբ դաշտերէն տուն կը վերադառնար, տան խոնջան շտկած՝ իրեն կը սպասէին. տան միւս աշխատաւորները վաղուց վերադարձեր էին. ուշ մնացողը ինքն էր միայն:

Կերակուրէն վերջ Տափան Մարգար, *ճրղարան* կը փաթթէր ու պահ մը՝ բարձին կռթնած՝ հանգիստ կ'առնէր: Եւ ինչ հանգի՜ստ: Անոր մէջ դաշտի բովանդակ անհանգստութիւնը կար այնպէս, ինչպէս գիշերուայ լռութեան մէջ յորդ առու մը պիտի փլէր. խաղաղ ցորեաններուն մէջէն հովը պիտի անցնէր եւ կամ հերկուած արտին մէջ լծուորուկ մը պիտի շարժէր:

Տափան Մարգար այս անգամ վաղուայ հազար ու մէկ գործերու մասին կը մտածէր: Կը մտածէր, որ Ակերուն քովի արտին կաւառները պէտք է շտկել, որովհետեւ վաղը գիշեր ջուրին օրն է: Խրաճի առուն պէտք է



աւելի խորունկցնել: Տան ժմնած երկու կովերը այս տարի պէտք է լաւ ցուլի մը յանձնել: Յետոյ քաղաք երթալ պէտք կայ:

Ան կը մտածէր այս բոլորը, մինչ գունաւոր միջատ մը՝ թաղիքէ գլխարկին վրայ պպզած՝ իր բարակ ոտքերը կը խառնէր:

*Ճրղարան* դեռ չլմնցած՝ ծանր ծանր կ'ելլէր տեղէն, տան աշխատաւորներու ամէն մէկին վաղուայ գործերը կը բաժնէր ու կ'իջնէր վար, գոմէշներուն քով:

Օր մը, գարունի կապուտակ առաւօտ մը, Տափան Մարգար, ժամուն բակը, մէկ քանի ծունկ աղօթք ընելէ յետոյ, իր գոմէշներուն հետ դաշտ իջաւ: Է՜հ, ի՜նչ զարմանք. իրմէ կանուխ դաշտ իջնողներ եղած էին:

Արտոյտները, հոն, վեր կը թռվռային, վար կ'իջնէին, թէ իրենցմէ ո՞րը առաջին անգամ արեւուն առաջին ճառագայթը պիտի ողջունէ: Թուփին տակ շարժողը նապաստակ մըն էր: Ճամբու երկայնքին շարուող թթենիներուն վրայ իջնող ելլողը յոպոպ թռչունն էր. մինչ վերը երկնքին — աշխարհի կապտորակ ստուերին վրայ կը թափառէր մութ ամպի կտոր մը շուարուն:

Արեւն իր առէջները առաջին անգամ Տափան Մարգարի թաղիքէ գլխարկին նետեց: Արշալոյսի այլազան գոյները՝ գոմէշների փայլուն սեւութիւնով օծուն, լայն կռնակին վրայ սկսան փողփողիլ: Առաջին անգամ լեմոնագոյնը, յետոյ պղնձագոյնը, բաց նարնջագոյնն ու ոսկեգոյնը. արշալոյսը հետզհետէ կը ճերմկնար արծաթէ գոյնով, հեռո՜ւ, բլուրին վրայ ձեւելով Տափան Մարգարի ու գոմէշներու յաղթ ստուերները:

Երկնքի վրայ ամպի կտորները շատցան ու իրարու մօտ հսկայ փիղերու երամակ մը կազմեցին: Ամպերը, մուրճով զարնուած պղինձի պէս հնչեցին: Յետոյ ցանուեցան շատ խոշոր անձրեւի մի քանի կաթիլներ: Դաշտի բանուորներէն շատեր տուն շտապեցին: Թրթուրներ ճամբաներուն վրայ, որդեր հողերէն դուրս ելան: Յանկարծակի սկսաւ տարափ մը, յորդ ու միանուագ: Ամպերը կը դղրդային, կայծակը շեղբի պէս սուր, երկնքի կուրծքը կը պատռէր. դաշտերուն մէջ շփոթ, իրարանցում մը կար: Դաշտի անլեզու կենդանիները հոս հոն կը վազվզէին օտար ու աղաչաւոր բառաչներով:

Հորիզոնին մօտ նախիրը ահազարհուր գիւղ կը վազէր: Ծառերը ճեղքուեցան. տերեւներուն ներքեւ ապաստանող թռչունները հատիկ հատիկ վար թափեցան թալալգլոր: Այս սարսափը հազիւ կէս ժամ տեւեց: Ամպերը հանդարտեցան, տարափը դադարեցաւ յանկարծ: Ու նորէն արեւ, նորէն գարուն:

Գիւղացիներն իրենց ծածկուած տեղերէն դուրս ելան, իրարու ձայն տուին: Լուրը տարածուեցաւ գիւղին մէջ:

Թթենու ճամբուն վրայ Տափան Մարգար կայծակէն զարնուած էր: Թթենու ճամբուն վրայ, գոմէշները զոյգ, քարայրներու մութ բերաններու նման ահաւոր, ինկած էին անկենդան:

Մէկին եղջիւրը կոտրած էր, միւսինը՝ գետնին մէջ խրած: Անոնց ճիշդ մէջտեղ, կաղնիի մը պէս շրջուած էր Տափան Մարգարը:

Կայծակը շեշտ գոմէշներուն զարկած էր. Տափան Մարգար ծանր կերպով շանթուած՝ տակաւին կը շնչէր:

Գիւղացիները՝ սայլի մը վրայ դրած՝ զայն տուն տարին:

«Դըժար թէ ապրի»,— կ'ըսէին շատեր:

Մահիճին շուրջ հաւաքուած՝ դրացիները նկատեցին, որ մահամերձը իր կռնակին վրայ աւելի շտկուեցաւ: Իր այլանդակ ու այրուած դէմքի շարժումով մէկը կը փնտռէր: Ոմանք կարծեցին, որ վերջին անգամ իր կինը, Թամարը կը փնտռէ: Թամարն հոն էր, շատ մօտը, ամբողջ հասակը լացով փլած: Ա՜հ, եթէ վերջին անգամ միայն իր անունը տար, Թամար պիտի մոռնար, պիտի ներէր ամէն ինչ, որպէս թէ ոչինչ, ոչինչ պատահած ըլլար:

Տափան Մարգար իր փնտռտուքին մէջ էր: Իր ձեռքը անկողնէն դուրս հանեց, պիշ պիշ, ապակենման աչքերով իր շուրջ հաւաքուողները դիտեց:

«Ո՞վ կ'ուզես, Մարգար Աբար»,— հարցուց իր եղբայրը:

«Քուշնան մարագին քովն է, Մարտիկ, էսօր գոմէշներուն դուն նայիր: էդ արտը կիսատ մնաց, ես վաղը կերթըմ տէ կը թամամցնեմ»:

Խօսեցաւ Տափան Մարգար դողդոջ ու գրեթէ անհասկնալի բառերով:

Ան այլեւս իր կիսատ թողուցած արտը չպիտի կրնար լմնցնել: Ա՜խ, եթէ գիտնար թէ գոմէշները ի՞նչ եղած էին:

Այդ երեկոյ, Տափան Մարգարենց տան բակին պատն ի վեր, գիւղին ժամկոչը հսկայ դագաղ մը երկնցուցած էր:

Մեռելը եկեղեցի պիտի տանէին:



ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐ

## ՆԱՀԱՆՋԸ ԱՌԱՆՑ ԵՐԳԻ
**(հատուածներ)**

Ժամանակը զանոնք բաժնեց իրարմէ: Աղէտին առաջին ամիսները անսահման սէրով ու գորովով իրարու սեղմուած, իրարու կապուած էին Փարիզի մայթերը նետուած երիտասարդները, մեծ մասամբ տակաւին մանուկ: Ծննդավայրէ, ընտանիքէ, ապագայէ խլուած հայ տղաքը այդ օրերուն մէկզմէկու կառչեցան ուղեկորոյս, մինչեւ որ ատեն անցաւ, կրցին քայլ նետել, մինչեւ որ պեխեր բուսան: Թաւալող տարիները հետզհետէ բաժնեցին սակայն զանոնք իրարմէ: Կազմուող նկարագիրները հեռացան զատուող ճամբաներու հովահարով, եւ դժուարին կենսաշահութիւնը, կեանքի պահանջքները, մանաւանդ սա եռուզեռ կեանքը փչեցին այդ տկար խումբին վրայ ու ցրուեցին. փետուրներ թռան: Մառիանն իր անդիմադրելի հմայքով մօտեցաւ անոնցմէ իւրաքանչիւրին և քաշելով տարաւ հոն, տարաւ հոս: Յոն թէ հոս, յաղթականը միշտ նոյնը մնաց. միշտ նոյն Նէնէթը, Մանոններու, Նինոններու, Նանաներու թոռնուհին: Ոմանք ամուսնացան, շատեր ապրեցան բարեկամուհիներով, պարպուեցաւ Յայոց եկեղեցին, մեկնող նամակներուն թիւը նուազեցաւ եւ անշուշտ, հեռուն մայրեր լացին:

Յիմա կը մնան միայն պզտիկ խումբեր, կազմուած ճշմարիտ, անկեղծ բարեկամներէ, որոնց հոգիներու միացումին մէջ տակաւին կը պլպլայ հայութիւնը, շիջումի զառիթափին վրայ սա յորձանքէն տժգունած: Ան կը պլպլայ, մինչեւ որ մարի:

.................................................................................

«Որքան ալ տարօրինակ թուի ազգի մը տկարութեան պատճառները բացատրելու այս եղանակս, պէտք չէ ուրանալ հոն ծածկուած ճշմարտութիւնը: Նարեկացին սկզբնապատճառ նկատուի թէ ոչ, իրողութիւն է որ շատ մը բաներ կու գան լիովին կ'արդարացնեն իմ յախուռն մտածումս, որ իր ազգասէրի տառապանքին մէջ կ'ուզէ անպայման մէկը նե-

տել ամբաստանեալի աթոռին վրայ: Ամէն ազգ, ամէն դարու, ամէն ժամանակաշրջանի, գիւղացի, անտաշ եւ անգրագէտ ամբոխէն զատ ունեցած է «պզտիկ» մարդեր, «ընտրեալ» կոչուած դասակարգին մէջ իսկ: Սակայն Հայոց մօտ անոնց թիւը ջախջախիչ, գերապատիկ, յուսահատական համեմատութիւն կը ստանայ: Ահա թէ ինչու, ե՛ս, Սո՛ւրէն, կ’ուզեմ անգիտանալ փոքր խումբը բացառութիւններու, եւ ամբողջ հայութիւնը կը նկատեմ Նարեկով թունաւորուածներ, հաշմանդամներ: Եւ սակայն այո՛, կը բաւէ որ գիտնանք մեր շուրջը նայիլ, կը բաւէ որ նայինք ապրող սերունդին եւ անոր մէջ պիտի հանդիպինք ակնարկի մը որուն համարձակօրէն պիտի կարենանք պոռալ.— անհաւատ: Հաւատքը չունի ան. հաւատքը՝ կիրքին կարմիր մոլեգնութեամբը գրուած. հաւատքը՝ որ մեծ հոգիները կը կերտէ, որ բարձրագոյնին տենչանքը ունեցող ազգերէն կը ծնի: Այս Հայը բան մը իր իտէալը չըներ եւ չի պայքարիր անոր համար: Հոգւով մարմնով չի նուիրուիր գաղափարի մը իրագործման, աւելին տալու շտապին մէջ ինքզինքէն դուրս չելլեր խենդութեամբ եւ իր էութիւնը յարատեւ բարձրացումի մը չի հպատակիր: Աստուածային կիրքը բացակայ է իր մտածումներէն եւ զգացումներէն որոնք անվերջանալի միօրինակութեան մը մէջ կը մրափեն: Խելացի ուշիմ եւ գործունեայ ցեղի մը զաւակը ըլլալուն հակառակ, այդ յատկութիւնները ի սպաս կը դնէ միայն ի՛ր կաշիին շահերուն: Հաւաքականութեան հանդէպ պահած իր անտարբերութիւնը թանձր ու անթափանց կեղեւի մը պէս կու գայ իր հոգին կը չէզոքացնէ, կը բթացնէ: Ի՜նչ անհանդուրժելի նեխութիւն, երբ մանաւանդ զարգացում մըն է ստացած. դպրոցէն հեռանալուն պէս դասարանի ու փողոցի կեանքերը բաժնող մեծ անդունդը կը տեսնէ եւ իր առաջին հոգը կ’ըլլայ մոռնալ ինչ որ սորված էր, իբրեւ անտեղի, աւելորդ, անհեթեթ: Եթէ կրցաւ մոռնալ, անոր տեղ բան մի չի դներ բնաւ. միայն կը ջանայ իր պարապութիւնը ոսկեզօծել: Թողէ՜ք զայն, ոսկերիչ պիտի ըլլայ: Եթէ չմոռցաւ, դեռ պիտի շարունակէ կարդալ, հետաքրքրուիլ, առանց սակայն իր չէզոքի դերէն հրաժարելու: Թողէք ա՛յս ալ. նորէ՛ն խարդախ ոսկերիչ՝ այս անգամ բառի:

«Վհատ, թոյլ եւ ողողումէն առաջ իսկ կղզիացած սա հոգին, ամբողջ հայութիւնը հիմնովին սարսող դէպքերէ վերջ երկու գիծով միայն կը տարբերի նախորդ սերունդներէն: Աւելի քիչ կը հաւատայ անկախութեան, եւ նուազ կ’ատէ Թուրքը: Նուազ կ’ատէ, որովհետեւ կը ճանչնայ անոր յառաջադիմութիւնը, ինչպէս որ կը ճանչնայ մարդկային մտքին բոլոր կարեւոր արտայայտութիւնները, զանոնք միշտ դատելով իր մեկուսացած պզտիկութենէն, առանց ճիչի, առանց գիրկընդխառնումի, առանց ճակատագրական մեկնումի: Ինք կը ճանչնայ բոլոր իմաստասէրները եւ բոլոր վարդապետութիւնները. մէկ քանին կարդացած է: Սակայն անոնցմէ ոչ մէկուն առջեւ չէ ըսած. «ահա ե՛ս, ահա ա՛յսպէս»: Գիտէ թէ Աստուած եւ կրօնք ըմբռնումներ են, երբեմն սփոփարար ոյժեր են որոնք մարդկութեան հետ պիտի մեռնին: Գիտէ թէ հայրենիքը ներկայ օրերու միջազգայնական գաղափարներուն առջեւ գէշ արգելք մըն է, իսկ ի՛ր հայրենիքը՝ գորդեան հանգոյց մը անլուծելի: Գիտէ թէ բարի, չար, տգեղ, գեղեցիկ, բարոյական, անբարոյական բոլորն ալ յարաբերական բաներ են, թէ արուեստը միայն մեծ ազգերու առանձնաշնորհին է, քանի որ բարձր միջավայրի եւ երկար ժամանակի կը կարօտի: Վերջապէս գիտէ նաեւ թէ սէրը փորձանք մըն է, կինը դրամ է, իսկ դրամը ամէն ինչ է: Հիացում եւ առատ ներբող ունի օտարին բոլոր արժէքներուն, արժանիքներուն, մեծութիւններուն: Շատ անգամ կուրօրէն կը փառաբանէ զանոնք. սակայն երբոր հաճի ակնարկը դարձնել իր ազգին, անմիջապէս տարակոյսով եւ թերահաւատութեամբ լեցուն քննադատի մը կը ձեւափոխուի: Կը խորշի, կը սոսկայ հպատակութեան գաղափարէն. պզտիկութիւն կը համարէ ուրիշի մը մտածումը բաժնելով միաբանիլ ու գործակցիլ անոր, երբոր հրամայողը ինք չէ: Ինք ինք է եւ ինք բան մը չէ:

«Ի՞նչ պէտք, ի՞նչ պէտք սակայն ըսել այս բոլորը, որ արդէն իսկ այնքան անգամներ կրկնուած ըլլալու տժգունութիւնը ունի: Ի՞նչ պէտք մանաւանդ զբաղիլ պարագաներով, որոնց լաւագոյն դարմանը բառերուն եւ խօսքերուն ոյժը չի կրնար կազմել բնաւ: Այո՛, այս տիպարը պատահական չէ, միայն ժամանակի մը ծնունդ չէ. սակայն մինչդեռ անցեալի մէջ կարելի էր մասամբ զինքը անտեսել, իր վատառողջ մեղկացումը չէզոքացնել, թողլով որ ազգին թիւը բազմապատկելու իր միակ դերը կատարէ, հիմա անկարելի կը դառնայ իրեն հանդէպ անտարբեր մնալ: Ոչ թէ որովհետեւ այժմ պատերազմ կայ ու կռիւ, ոչ թէ որովհետեւ այժմ ճակատամարտ կայ ու կենսապայքար, այլ որովհետեւ կայ բան մը աւելի ճակատագրական, աւելի աններող, կայ բան մը ահեղ, անդիմադրելի որ իր անունը կ’ոռնայ բոլոր քառուղիներէն. Նահանջն է ան: Նահանջը, նահանջը Հայերուն: Կռիւը սրբազան բան է, ճակատամարտը երբեմն նոյն իսկ օգտակար. անոնցմէ ազգ մը դուրս կու գայ պարտուած կամ յաղթական, սակայն երկու պարագային ալ դուրս կու գայ: Բայց նահանջը հոգիներու, գլխի պտոյտ տուող զառիթափին վրայ սա նահանջը կը ջնջէ, կը ձուլէ, կ’անհետացնէ ամէն բան: Իրա՛ւ բազմաթիւ չեն այսպիսի զար-

գացած անտարբերներ, սակայն անդին կան ամբոխները անտաշ, անմիտ եւ ուծացած մարդոց որոնք կարծես բնազդաբար, կարծես արիւնով ու ծուծով ճիշդ նմանն են նախորդին: Անոր պէս առաջինը կ'ըլլան ընկրկող, մոռցող, ուրացող: Եւ կը կազմուի ահե՞ղ զանգուածը անոնց որոնք կը նահանջեն ու այդ մեծ հոսանքին մէջ կը քշեն կը տանին միւսներն ալ, ցանցառ բացառութիւններն ալ:

«Կը նահանջեն ծնողք, որդի, քեռի, փեսայ, կը նահանջեն բարք, ըմբռնում, բարոյական, սէր: Կը նահանջէ լեզուն, կը նահանջէ լեզուն, կը նահանջէ լեզուն: Եւ մենք դեռ կը նահանջենք բանիւ եւ գործով, կամայ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ, մեղա՜յ, մեղա՜յ Արարատին:

«Եղան Հայեր որոնք իրենց մորթը փրկելու համար վճարեցին ոսկի. եղան ուրիշներ որոնք տուին հաւատք, կուսութիւն. եղան անոնք որոնք լքեցին տուն, տեղ, երկինք. եղան դեռ վատեր՝ որ ուրացան ազգ ու լեզու, եւ հերոսներ՝ որ տուին արիւն, կեանք, օր ու արեւ: Իսկ մե՛նք, կը վճարենք իբրեւ վերջին փրկագին այն որ պիտի գայ: Իբրեւ վերջին փրկագին՝ մանուկներ, որոնք կրնային մեծնալ, ապագայի սերունդներ որոնք մեզմէ վերջ պիտի գային: Որովհետեւ այն որ պիտի գայ, պիտի ըլլայ օտար, բանիւ եւ գործով, կամայ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ, մեղա՜յ, մեղա՜յ Արարատին»:

..............................................................................................

Թելը կտրուեցաւ: Երիտասարդին խորհրդածութիւններուն շարքը կասեցաւ յանկարծ: Վիշտին սովորական աղմուկը լռեց, բարձրացող աւելի մեծ ձայնով մը խափանուած: Տղան ինքզինքը գտաւ առանձին, միս մինակ, օդին, պարապին, անեզրութեան մէջ:

Ամէն կին երբոր մայրանայ, կը բարձրանայ հողէն, կ'ելլէ վեր, շատ վեր, ու զաւակը կը ծնանի տեսողութիւններէ հեռու: Այդ պատճառաւ է որ կ'ըսեն.— աշխարհ եկաւ: Որովհետեւ մարդիկ կու գան վերէն վար, մարդիկ կ'իյնան բարձունքէ մը դէպի հողը, անյեղլի օրէնքի մը հպատակելով:

Այդ սրընթաց արշաւին մէջ շատեր կը մնան անբանացած, անգիտակից, անկարող տեսնելու, դիտելու, անդրադառնալու: Հողին քաշողութենէն տարուած եւ դիմադրելու ոյժէն զուրկ՝ կ'իյնան թաւալգլոր, իրենց անդամներն ու զգայարանքները սանձելու անընդունակ, եւ նշմարուած խաբուսիկ պատկերները կը մնան անճիշդ, մակերեսային, առարկայական: Այս անձերը երբոր հասնին երկիր, միայն հողակոյտ մը կրնան կազմել:



Կան սակայն ուրիշներ որոնք կը նմանին օդանաւորդներու: Անոնք ալ ունին իրենց անկումի պարտադիր շրջանը: Պէտք է որ բաւական մը ժամանակ թաւալին իրենց բնազդէն, իրենց կիրքերէն, իրենց զգայարանքներէն քաշուած: Արդար է որ գոնէ ատեն մը միայն բնութիւնը ըլլայ զիրենք վարող: Բայց ահա որ թաւալող օրերուն մէջ իր փրկարար տառապանքը կը բերէ դէպք մը, երբեմն աննշմարելի ըլլալու չափ պզտիկ, երբեմն ալ ահեղ, բայց միշտ ճակատագրական դէպք մը: Ստեղծուած ցաւը կ'ըլլայ յենակէտ, լծակը կը կազմուի, եւ այս ճամբորդէն, ինչպէս օդանաւորդէ մը, անկարգելը կը մեկնի: Անկարգելը կը մեկնի վեր, կը բարձրանայ, կը տարածուի, կ'ուռի: Անկէ կախուած էակը պիտի ցնցուի իր ֆիզիքական մարմնին ամէնայետին մասնիկներուն մէջն իսկ, բայց պիտի կազմուի երկրորդ մարմինը: Ճամբորդը ինքզինքը պիտի գտնէ իրեն բոլորովին անծանօթ բարձրութեան մը մէջ, պիտի հաւասարակշռուի եւ իր ակնարկը այս անգամ պիտի տարածուի հաստատ, խաղաղ, թափանցող:

Անշուշտ այս մէկն ալ պիտի երթայ հողին, ինչպէս ամէն բան կ'երթայ իր ճակատագրին. բայց այս անգամ այն պիտի երթայ հեշտութեամբ, քաղցրութեամբ, հրճուանքով, գիտակից իր ճանապարհին, գիտակից իր նպատակակէտին:

«Մեր մէջ իմացական անհատը եւ ֆիզիքական մարմինը կեցած են դէմ դէմի եւ կը կռուին: Երկուքն ալ ունին իրենց հրամայող ոյժերը եւ անյեղլի օրէնքները: Այդ կռիւն է որ պիտի արձանագրէ ճակատագիրը մարդոց, եւ այդ պայքարին վախճանն է որ անհատները պիտի ձգէ կամ բարձրացնէ: Կրնանք բարեկամական կամ սիրոյ կապերով միանալ ուրիշներու, բայց մէկ ենք մենք մեր անձին հետ: Եթէ այդ միութիւնը կը կրենք անգիտակցութեամբ, մեր մտածումները կու գան բնութենէն, միսին, այսինքն՝ զգայարանքներուն միջոցաւ: Այս պարագային երբեք չենք կրնար տէրը նկատուիլ կեանքին, քանի որ կը գործենք բնազդով, կը գոհանանք ներկայ ժամուն պատճառած հաճոյքով, կը ձգտինք օրուան ըղձանքին, կ'աշխատինք նշմարելի նպատակին: Պէտք է որ բնութեան ուժերուն, որոնց տիրապետութեան արդիւնքը ինքնալքում, մեղկացում, անասնացում է, հակազդուի իմացական անհատը: Պէտք է որ պայքարը սկսի այս երկու ոյժերուն միջեւ, որովհետեւ ան սահմանուած է մեր ճշմարիտ էութիւնը մէջտեղ հանելու, մեր մէջ մրափող իսկական անձը մեզ ծանօթացնելու: Պէտք է որ ըլլանք ինչ որ ենք:

«Բազմաթիւ պահանջներ մեզ կը կապտեն, կ'անշարժացնեն, կը գերեն: Բայց այդ պահանջներէն ոչ մէկը, ոչ իսկ բոլորը խմբովին, ըլլան

անոնք բառոյական, տրամաբանական թէ ֆիզիքական պահանջներ, ոյժը չպիտի ունենան մեր վրայ վերջնապէս տիրապետելու, եթէ մենք մեր եսասիրութեամբը ընդառաջ չերթանք անոնց: Մեր եսասիրութիւնն է որ զանոնք կ'օգտագործէ եւ դիւրին համակերպութեամբ մը կը յանձնուի անոնց տիրապետութեան, քանի որ հեշտ է ինքն իր մէջ փակուած մնալ ու լքուիլ հոսանքի մը քմահաճոյքներուն: Եւ քմահաճոյքները դիպուածին, եւ քմահաճոյքները պատահարներուն մեզ կը նետեն խարակէ խարակ ու կը տառապինք:

«Այս պարագային է որ իրապէս ըմբռնելի կը դառնայ ճշմարտութիւնը սա խօսքին. «մարդիկ չեն տառապիր, այլ իրենք զիրենք կը տառապեցնեն»: Իրենց անձը կը տառապեցնեն որովհետեւ չեն գիտեր թէ հակազդելու համար պէտք է տեսնալ, վայելելու համար պէտք է ճանչնալ, եւ տիրանալու համար պէտք է տալ:

«Մասնակի դէպքի մը հակազդելու համար պէտք է որ բարձրացուցած ըլլանք մեր ակնարկը, պէտք է որ զայն քննենք ոչ թէ առանձինն, այլ անոր ծնունդ տուող բոլոր պատճառներուն հետ, այսինքն՝ նախ մեր անձին հետ: Որովհետեւ մեզի պատահածներուն մեծագոյն մասը մենք է որ կը պատրաստենք, մեր բացայայտ թէ անանուն ըղձանքներն են որ զայն կը կանչեն եւ դէպքը կ'ըլլայ այնպէս ինչպէս որ մենք ենք: Ան կ'ունենայ մե՛ր բնութիւնը, կ'ունենայ մե՛ր մտածումներուն ընդարձակութիւնը եւ մե՛ր հոգիին գոյնը:

«Վայելելու համար պէտք է ճանչնալ պէտք է ճանչնալ ոչ թէ վայելքները, այլ նորէ՛ն մեր անձը: Մարդ էակը կարող է ոչ միայն իրարմէ զանազանել գեղեցիկ մարմին մը տգեղէն, բարի արարք մը չարէն, այլ նաեւ բնութիւնը ունի երեւակայելու բարին, գեղեցիկը, ազնուականը: Եւ բնականաբար, երբ կ'ուզէ գոհացում տալ իր ըղձանքներուն, լաւագոյնին է որ կը ձգտի, առանց գիտնալու թէ գեղեցիկ հոգի մը վայելելու համար պէտք է գեղեցկացած ըլլալ, ազնուական կեանք մը գնահատելու համար պէտք է նոյն բարձունքին հասած ըլլալ, եւ նոյն բարձունքին հասնելու համար պէտք է ճանչնալ ինքզինքը:

«Տիրանալու համար պէտք է տալ: Կ'ուզենք սիրուիլ բարձրագոյն սիրով մը, կ'ուզենք ունենալ անձնուէր եւ անշահախնդիր բարեկամներ, կ'ուզենք որ օրերը մեզ բարիք բերեն եւ ծախորդութեան առջեւ ճակատագիրը միայն կ'անիծենք: Իրականին մէջ մե՛նք է որ չենք գիտեր բարձրագոյն սիրով մը սիրել, անձնուէր եւ անշահախնդիր բարեկամ ըլլալ ու օրերուն բարութեանը ժպտիլ: Մեծագոյն ճշմարտութիւնը, գերագոյն



իրողութիւնը մեր անձն է. ամէն ինչ անկէ է որ կը սկսի: Նախ մե՛նք պէտք է որ ընդառաջ երթանք ամէն բանի, նախ մե՛նք պէտք է տանք, բայց տալու համար անհրաժեշտ է որ տէրը ըլլանք մեր հոգիին:

«Տէ՜րը ըլլալ հոգիին, պատռե՜լ միսը, ճեղքել նեղ պատեանը, մարմինը գերանցնել, ֆիզիքականին գործունէութեան դաշտը անդրանցնիլ, բարձրանալ վե՜ր, վե՜ր, որպէսզի մեր ակնարկը ըլլայ լայն, ընդարձակ, վճիտ, եւ որպէսզի դեռ ան ըլլայ երջանիկ, խայտացող, հրճուանքով լի:

«Ճշմարի՜տ հրճուանքով լի՝ քանի որ այս բարձունքին մէջ միայն կրնայ գիտակից հրճուանքը կազմուիլ. կրնայ ըլլալ տեւական, աննկուն ու բեղուն: Կենսատու հեղուկի մը պէս ան կը ծորի, իր բարձունքէն առատութեամբ կը տեղայ մեր մարմնին, մեզ կը պարուրէ, կը համակէ, կ'ընկղմէ իր մէջ եւ իրմով կը լեցուին մեր օրերը, արարքները, մտածումները: Մտածո՛ւմ. անոր անսխալականութեանը պէտք չունինք բնաւ այս բարձունքին հասնելու համար: Մեզ անհրաժեշտ չեն երբեք յստակ ու որոշ մտածումներ, բեռ գիտութիւններու: Կը բաւէ որ զգանք, ապրինք փրկութիւնը, նետուինք մեր պատեանէն դուրս, մենք մեզ յանձնենք բարձրացումին, եւ ակա՛նջ տանք երաժշտութեան որ կը սկսի:

«Որովհետեւ հո՛ս է որ մեր ձայնը կը լսենք: Հոս է որ կը սկսի ներքին նուագը, rythmeը, թրթռացումը: Ան մերն է, միմիայն մերը եւ միակը աշխարհի վրայ: Կը բաւէ որ մեր քայլերը հպատակին այդ չափականութեան, կը բաւէ որ մեր զգացումները պատշաճեցնենք այդ կշռոյթին, կը բաւէ որ մեր իմացականութիւնը յառաջանայ համաչափ ու անվախճան մեղեդիին հետ, եւ մենք մեր մտերմութեանը մէջ հասած ըլլանք երջանիկ խաղաղութեան մը, ու պիտի յաղթենք կռուելէ առաջ, լսելի պիտի ըլլանք խօսելէ առաջ եւ պիտի գեղեցկանանք սիրահարուելէ առաջ:

«Երակ մը մեր կեանքին յաջորդական փուլերը պիտի կտրէ անցնի ու մեր բոլոր ապրումները օղակներու շղթայ մը պիտի ձեւացնեն, նոյն ուղղութեամբ առաջնորդուած: Մինչ կ'ապրէինք անյօդ կեանք մը, մեր երջանկութիւնը փշրանքներու էր վերածուած օրերու բազմութեան մէջ եւ մեր առօրեայ նպատակները իտէալի մը պատառներուն կը նմանէին, այժմ գոյութեան միութիւնը կազմուելով ոչ միայն անհամեմատօրէն պիտի մեծնայ մեր ապրումը, մեր երջանկութիւնը եւ մեր իտէալը, ոչ միայն պիտի յառաջանանք լուսաւորուած ուղիէ մը հաստատ քայլերով, այլ եւ ապրելով պիտի ապրեցնենք ուրիշն ալ, բարձրանալով մեր հետ պիտի քաշենք մեր շուրջինն ալ:

«Այդ բարձունքին՝ ոչ մէկ սիրուհի պիտի կարենայ զինքը սիրողին ըսել. «իրաւունքը չունիմ քեզմէ աւելին պահանջելու»: Այո՛, չենք պահանջեր, երբ գիտենք թէ ստանալու կարելիութիւն չկայ, ինչպէս որ շատ անգամ հարցում կ'ուղղենք երբ պատասխանը արդէն ծանօթ է մեզի, եւ կամ թէ ականջ կու տանք երբ արդէն ձայնը կը լսուի: Բայց ան որ հոգիի կատարեալ գեղեցկութեան մէջ է, ան սէրը պիտի գործածէ եւ ոչ թէ օգտագործէ. անոր համար սիրելի էակը հայելի մը պիտի ըլլայ եւ ոչ թէ իր զգայարանքները, հպարտութիւնը, անձնասիրութիւնը շրջանակող զարդ մը: Սիրելի էակը պիտի մնայ միշտ նոյն Նէնէթը, ամէն բանէ վեր, այնպէս ինչպէս որ էր առաջ, եւ այնպէս ինչպէս որ պիտի ըլլայ վաղը: Այո՛, Նէնէթ, պիտի տեսնես թէ քու Փիէռդ ինչպէս իր ամբողջ հոգիովը, իր ամբողջ ամբողջութեամբը պիտի...»:

Փիէռ անգամ մը եւս իր մտածումը կոտրեց: Ամէն մէկ խորհրդածութենէ վերջ երիտասարդը կը թաւալէր նոյն զառիթափին վրայ, կը գերուէր իր մտալլկումէն, ինքզինքը կը գտնէր Նէնէթին առջեւ: Եւ երբոր խօսքը անոր ուղղելով կը տեսնէր թէ կը կորսուի յուզումին մէջ եւ ժամանակը անսահմանօրէն կ'երկարի, կը վերադառնար վերացեալին, կրկնելով սա տեսակ նախադասութիւն մը.— «Ընկերութիւնը կը կերտուի մեզմով, եւ այդ կառուցումը կը սկսի մե՛ր մէջէն: Որպէսզի կարենանք ազդել աշխարհի եւ որպէսզի այդ ներգործումին արդիւնքը դրական ըլլայ, պէտք է որ...»:

Փիէռ շատ հեռու էր ծանօթ վարդապետութիւն մը ընդգրկելէ: Ինք արդէն չէր խորհեր իսկ վարդապետութեան մը վրայ. մտածումները բնականաբար չունէին շարայարութիւն, մեծ մասը րոպէի տրամադրութեան արդիւնք էր, եւ գրեթէ միշտ սկսուած նախադասութիւն մը կը մնար կիսատ, հակասութեան մը պատճառաւ կամ ի չգոյէ բառի: Բայց ի՜նչ փոյթ. կը բաւէ որ ինք կ'ապրէր զարթում մը, համբարձում մը եւ հոգիին ամէնէն խորունկէն կը պոռար որ պահը անցաւոր չէ, այլ նախադուռը վաղուան կեանքի: Մտածումներ տարտամ, աղօտ, լոյծ, մտածումներ երկար ատենէ ի վեր իր մէջ համախառնուած, կուտակուած, որոնց շատերուն ձեւ չէր տուած երբեք, որովհետեւ զինքը տառապեցուցած էին, ահա ատոնք բոլորը կու գային զինքը բարձրացնել հանգրուանի մը:

Պետրոս շփոթեցաւ շատ անգամ, անոնցմէ շատեր չուզեց խորացնել եւ կառչեցաւ քանի մը նախադասութիւններու: «Սիրել եւ տառապիլ գիտնալ — չտարուիլ առօրեայ ճղճիմ պատահարներէ — ինքնագիտակցիլ եւ մնալ գլուխներէ բարձր»: Այս այնքան պարզ խօսքերը իրեն անսահման կը թուէին եւ չափազանց կը զարմանար թէ ինչպէս զանոնք մինչեւ այս օրը չէր ապրած, հասկնալ կարծելով հանդերձ:



Վակոնին պատուհաններէն դուրս կէս օրը կը տարածուէր դաշտերու, մարգագետիններու, առուակներու վրայ: Եղեւիններու խուրձ մը, սարահարթեր, քանի մը զանգակատուն: Ակօսի մը վրայ հակած պարտիզպան մը գիւղ մը անդին ոտքի ելաւ, յետոյ գլխարկը փոխեց ու կնոջ հագուստ հագաւ: Իր կովը, որ նախապէս սպիտակ էր, ագարակ մը անդին սեւցաւ եւ անմիջապէս ծագ մը ունեցաւ: «Ընկերութիւնը կը կերտուի մեզմով, եւ այդ կառուցումը կը սկսի մե՛ր մէջէն»: Տե՜ս, այսօր բարտիները տողանցք ունին, կարմիր կղմինտրները տանիք ունին, Ֆրանսայի ամպերը երկինք ունին, տե՛ս:

«Ընկերութիւնը կը կերտուի»ն այլեւս իր զօրութիւնը կորսնցուց, եւ Փիէռ տեղի տալով այն մեծ ալիքին որ կ'ուռէր իր մէջ, արտասանեց.

*«Ընկա՛լ քաղցրութեամբ տէր Աստուած հզօր...»*

Կեցաւ, սրբագրեց եւ սկսաւ աղօթել.

«Ընկալ քաղցրութեամբ Նէնէթդ իմ հզօր...»:

ՌՈՊԷՐ ՀԱՏՏԷՃԵԱՆ

## ԻՆՉՈ՞Ւ ԿԸ ԳՐԵՆՔ

Մարդիկ ընդհանրապէս գեղարուեստէն է, որ կը սպասեն այն, ինչ որ գիտեն, թէ պիտի չկարենան գտնել իրական կեանքի մէջ: Կեանքի մէջ ոչինչ, կամ գրեթէ ոչինչ այնպէս կը պատահի, այնպէս կը վերջանայ, ինչպէս պիտի փափաքէինք, որ պատահէր ու վերջանար: Շարժանկարը մեծ յաջողութիւն արձանագրեց՝ երկար տասնամեակներ ընդհանրապէս մարդոց տալով իրենց սպասածը: Հարիւր ժապաւէնի վրայ իննսունինինը կը վերջանար «երջանիկ վախճան»ով: Այդ ժապաւէններու մէջ սէրը կը սպասուէր յաղթանակով, սիրող զոյգերը իրարու կը միանային, անիրաւները ու յանցաւորները կը պատժուէին, առաքինիները կը վարձատրուէին, ոստիկանական ժապաւէններու մէջ խորհրդաւոր դէպքերը անպայման կը լուսաբանուէին, ոճրագործները երեւան կը հանուէին ու կը պատժուէին:

Այսօր ալ ընդհանրապէս այդպէս է: Վերջապէս արուեստի աշխարհին մէջ ամէն ինչ կը պատահի այնպէս, ինչպէս կը փափաքինք, որ պատահի եւ որ, սակայն, չի պատահիր իրական կեանքի մէջ: Այդ պատճառաւ է, որ երբեմն, եթէ բացառաբար ժապաւէնի մը վերջաւորութեան անակնկալ լուծում մը առաջարկուի, յուսախաբ կ'ըլլանք.

— Ասիկա այսպէս վերջանալու չէր,— կ'ըսենք:

Ճիշդ է, նոյն նախադասութիւնը կ'արտասանենք կեանքի յուսախաբութիւններու դիմաց: Իրական սրտաբեկութեան մը դիմաց ալ «Այս այսպէս վերջանալու չէր» կ'ըսենք, բայց ատիկա կ'ըսենք տեսակ մը համակերպումով, ճակատագիրը ընդունելու պատրաստակամութեամբ, որովհետեւ գիտենք, թէ մեր ձեռքէն չէր գար փոխել զայն: Մինչդեռ վէպի մը հեղինակը, ժապավէնի մը բեմադրիչը ազատ է իր ուզածին պէս ստեղծելու ամէն ինչ, նաեւ վախճանը: Բնութիւնը այդպէս չէ. ան երբեք նկատի չ'առներ մարդուն ակնկալութիւնը: Հեղինակ մը կրնայ: Ուրեմն, ինչո՞ւ չընէ այն, ինչ որ գոհացում պիտի պատճառէ բոլորին:

Բայց մօտաւորապէս նոյն մտահոգութիւնները ունի արուեստագէտը: Ան ալ արուեստի գործով մը կ'ուզէ մարդոց տալ այն, ինչ որ ինք չի կրնար գտնել իրական կեանքի մէջ: Ահա թէ ինչու ամէն արուեստագէտի մէջ արարիչ մը, Աստուած մը կայ, որ «եղիցի՛» կ'ըսէ ո՛չ թէ բնութեան ուզածին, այլ մարդուն կամքին: Արուեստագէտը, մանաւանդ գրագէտը, Աստուածն ալ կը գերազանցէ տեսակէտով մը: Աստուած մարդը կը ստեղծէ ու ապա ազատ կը թողու, մինչդեռ գրագէտը այդ մարդը կը ստեղծէ ու վերջն ալ զայն կը քալեցնէ ճիշտ իր ուզածին պէս: Իրական կեանքի մէջ մարդը ազատ է Աստուծոյ դիմաց, կրնայ նոյնիսկ հայհոյել Աստուծոյ: Վէպի մը հերոսը ո՛չ մէկ ազատութիւն ունի զինքը ստեղծող հեղինակին նկատմամբ: Այս վերջինն է, որ պիտի խօսեցնէ զինքը, պիտի քալեցնէ, պիտի շարժէ, պիտի յուզէ, պիտի բարկացնէ եւ պիտի սպաննէ:

Արուեստագէտին այս բացարձակ աստուածութիւնն է, որ անոր շուրջ կը հիւսէ ստեղծագործողի շողշողուն փառապսակ մը, բայց նաեւ ամենածանր պատասխանատուութիւնը: Արուեստագէտը իր խելապատակին բոլոր քմայքներուն ու ցուցմունքներուն ականջ տալով՝ պիտի ստեղծագործէ ազատօրէն. ատիկա մեծ հաճոյք է: Իր ստեղծագործութիւնով բան մը պիտի պարտադրէ, բան մը պիտի ուսուցանէ, բան մը պիտի քարոզէ ժողովուրդին. ատիկա մեծ առաքելութիւն է: Բայց եթէ իր ստեղծագործութիւններուն հետեւանքով երկու հոգի, տասը հոգի, հազար հոգի իրեն նման մտածել պիտի սկսին, ատիկա ալ պիտի ըլլայ իր մեծ պատասխանատուութիւնը:

Հաճոյք, վեհ առաքելութիւն ու բարձր պատասխանատուութիւն: Այս երեքին խառնուրդն է, որ ամէն ճիւղէ արուեստագէտին, բայց մանաւանդ գրագէտին կու տայ ստեղծագործելու ու հրատարակելու անօրինակ երջանկութիւնը:

## ԱՌԱՋԻՆ ԲԱԽՏԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Մարդիկ կան, որոնց հետ եթէ խօսիք, շուտով կ'անդրադառնաք, որ բաւական անհաւատ, նոյնիսկ անաստուած են: Բարի մարդիկ են թերեւս, ազնիւ մարդիկ, բայց Աստուծոյ չեն հաւատար, առիթ ալ չեն փախցներ ըսելու, որ Աստուծոյ չեն հաւատար: Բայց իրենց խանդավառ խօսակցութիւններուն մէջ յանկարծ կրնաք լսել, որ ըսեն.

— Աստուած վկայ, ես այդպիսի բան ըսել չուզեցի:

— Ա՜խ, Աստուածս, այդպիսի բա՞ն ալ պիտի լսէինք:

Նոյնը կը պատահի «բախտ» բառին հետ: Մարդ որքան չհաւատայ բախտին, որքան ալ դժէ բախտին գոյութիւնը, օր կու գայ որ բերնէն կը փախցնէ.

— Բախտը չօգնեց:

— Բախտ չունիմ:

— Վա՜յ անբախտ մարդ...

Բախտին հաւատանք կամ չհաւատանք, դիւրին չէ ապրիլ առանց յաճախ գործածելու այդ «բախտ» բառը:

Անհաւասարութիւններու այս աշխարհին մէջ ամէն բան մեզ կը ցնցէ ու կը յիշեցնէ բախտաւորութեան ու անբախտութեան գաղափարը: Մէկը ութսուն տարի կ'ապրի, միւսը քսան տարեկանին կը մեռնի: Մէկը ամբողջ կեանք մը առողջ կ'ապրի, միւսը՝ ամբողջ կեանք մը կ'անցընէ հիւանդութիւններու ու տառապանքի մէջ: Մէկը հինգ տարիէն կը հարստանայ, միւսը քառասուն տարի չքաւոր կը մնայ: Բոլոր այս երեւոյթները մեզի իրաւամբ ըսել կու տան, որ մարդոց մէկ մասը բախտաւոր ծնած են, մէկ մասն ալ՝ անբախտ:

Բայց երջանկութիւն մը կայ, որու տիրացած ըլլալու տեսակէտէ աշխարհի բոլոր մարդիկը հաւասարապէս բախտաւոր եղած են: Ատիկա աշխարհ եկած ըլլալու երջանկութիւնն է: Ինչ կեանք ալ վերապահուած ըլլար մարդուս, նախ պէտք էր, որ ան աշխարհ եկած ըլլար: Որովհետեւ, կրնար նաեւ աշխարհ եկած չըլլալ: Մենք, որ գոյութիւն ունեցած ենք, այսինքն՝ աշխարհ եկած ենք, շատ քիչ անգամ կը խորհինք, որ կրնայինք բնաւ գոյութիւն ունեցած չըլլալ: Գոյանալու, մօր մը արգանդին մէջ կազմաւորուելու համար բախտին դէմ մրցակցական ինչպիսի պայքար մը տուած ենք, գոյութեան չկանչուելու քանի միլիոն հաւանականութիւններ ինչպէս պարտութեան մատնած ենք, մինչեւ որ նախախնամութիւնը մեզ ընտրած է որպէս աշխարհ գալու թեկնածու: Ասիկա ահաւասիկ այն առաջին բախտաւորութիւնն է, զոր աշխարհ եկած ամէն մարդ վայելած է անխտիր:

Երբեք պէտք չէ մոռնալ սա կէտը. ինչպէս որ աշխարհ կու գանք՝ մեզ հետ բերելով սկզբնական մեղքը, այդպէս ալ աշխարհ կու գանք՝ մեզ հետ բերելով երկրագունտին վրայ գոյանալու առաջին ու ամենակարեւոր բախտաւորութիւնը: Այս տեսակէտով բնութեան ընտրեալ մէկ զաւա-



կը եղած ենք, անխտիր, ինչ ճակատագիր ալ վերապահուած ըլլայ մեզի: Աշխա՜րհ գալ, վայելե՜լ կեանքը, պահ մը աչք քթթել լինելութեան, լաւ կամ գէշ, առաւել կամ նուազ, անգամ մը գոնէ վայելե՜լ երկրագունտին վրայ գտնուած ըլլալու բոլոր բարիքները:

# ԲԱՌԱՑԱՆԿ

Բառացանկում հիմնականում ընդգրկված են արևելահայերենի համեմատությամբ իմաստային կամ ձևային և կամ ձևաիմաստային տարբերություն ունեցող բառեր և որոշ բառաձևեր, որոնք արևմտահայերենում հաճախակի գործածություն ունեն, ինչպես նաև բառեր ու դարձվածքային միավորներ, որոնք որպես օրինակներ բերված են արևմտահայերենի քերականության դասընթացի տեսական նյութի շարադրանքում (տե՛ս **Յու. Ավետիսյան**, «Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական քերականություն», Երևան, 2007), կա՛մ ներառված են այս գրքի վարժությունների բաժնում և կա՛մ հանդիպում են բնագրերի լեզվում:

**Գլխաբառերի** համար նշվում են գերազանցապես արևելահայերենից տարբերվող իմաստները, իսկ առանձին բառերի համար՝ միայն բնագրային իմաստները: Տարբերակված առանձին նշումները (**բրբռ**., **հնց**., **խսկց**. ևն) ունեն գործառական կամ նորմավորող նպատակ:

**Բառերի քերականական բնութագրությունն** արվում է խոսքիմասային պատկանելության նշումով և որոշ քերականական–ձևաբանական տեղեկատվությամբ. նշվում են բայերի սեռը, գոյականների սեռականի վերջավորությունը, հոգնակիի վերջավորությունը, եթե կա անկանոնություն, կամ եթե գոյականը միավանկ վերջնաբաղադրիչով է:

**Դարձվածքները** տրվում են կա՛մ բառահոդվածի վերջում՝ նոր տողից, գծիկով, կա՛մ նշվում են այբբենական ընդհանուր կարգով և գծիկով, եթե գլխաբառը չունի տարբերություններ արևելահայերենից: Եթե արևելահայերենում կա դարձվածքի տարբերակը, նշվում է. հակառակ դեպքում տրվում է դարձվածքի բացատրությունը:

Բառացանկը կազմելիս օգտվել ենք արևմտահայ հեղինակների երկերի և արևմտահայ գրականության ժողովածուների բառացանկերից, գրաբարի, միջին հայերենի և, իհարկե, նաև արևմտահայերենի բառարաններից՝ **Յ**. **Գայաեան**, «Բառարան–գանձարան հայոց լեզուի հոմանիշներու» (Գահիրէ, 1938), **Ա**. **Սարգսյան**, «Արևմտահայերենի բառարան» (Երևան, 1991), **Գնէլ արքեպս**. **Ճէրէճեան**, **Փարամազ Կ**. **Տօնիկեան**, «Հայոց լեզուի նոր բառարան», առաջին հատոր (Պէյրութ, 1992), **Արտաշէս Տէր Խաչատուրեան**, «Հայոց լեզուի նոր բառարան», երկրորդ հատոր (Պէյրութ, 1992), **Ռ**. **Սաքապետոյան**, «Արևմտահայերեն–արևելահայերեն ուղղախոսական–բացատրական բառարան» (Երևան, 2000) ևն:



## Ա

**Ալ**, 1. մկ. (շեշտով՝ **ա՛լ**) Այլևս: 2. շ. Նաև:
**Ալեհավաք**, ի, գ. Անտենա:
**Աղէկ**, ած., մկ. Լավ, ընտիր:
**Աղուոր**, ած. 1. Սիրուն, գեղեցիկ: 2. Լավ: 3. Քաղցր:
**Անատակ**, ած. Անկարող:
**Անբռնաբարելի**, ած. 1. Անձեռնմխելի: 2. Անվիճելի:
**Անգայթ**, ած. Անսայթաք, հաստատ, չսահող:
**Անգայտ**, ած. Նսոր, ցանցառ, նուրբ:
**Անգլիերէն** (**Անգլերէն**) ի, գ. Անգլերեն:
**Անդոհ**, ի, գ. Անձկություն, մտատանջություն, տագնապ, անդոհանք:
**Անդրադառնալ**, 1. չբ. Նորից դառնալ նույն տեղը՝ ինչ–որ գաղափարի, նյութի:
2. նբ. Խորհրդածել, մտածել: 3. Հասկանալ, գլխի ընկնել, ըմբռնել, հիշել:
**Անդրի** (**Անդրիանդ**, **Անդրիանտ**), ի, գ. Արձան:
**Անել**, 1. ած. Անելանելի: 2. ի, գ. Փակուղի:
**Աներեւոյթ**, 1. ած. Անտես, չերևացող: 2. ի, գ. Անորոշ դերբայ:
**Աներ–մայր** (հնց.), մօր, գ. Զոքանչ:
**Անթել**, ի, գ. 1. Անտենա: 2. Ռադիոկապ:
**Անթրոց**, ի, գ. Երկար ձող՝ կրակը խառնելու համար:
**Անիշխանութիւն**, թեան, գ. Անարխիա:
**Անկ**, ած. Հարմար, պատշաճ:
**Անկապաշտութիւն**, թեան, գ. Անկումայնություն (դեկադանս):
**Անկարգել**, ի, գ. Պարաշյուտ:
**Անկուտի**, ի, ած. գ. Աղքատ:
**Անհետիլ** (հնց.), չբ. Անհետանալ:
**Անձեռոց**, ի, գ. Երեսսրբիչ, սրբիչ:
**Անձնդիւր**, ած. Իր անձի հանգստության մասին մտածող, փափկակյաց:
**Անձնեայ**, ած. Փարթամ, թիկնեղ, խոշոր:
**Անճահ** (հնց.), մկ. Անհարմար, անվայել:
**Անճառ**, ած. Անպատմելի, անասելի:
**Անմարթ** (հնց.), մկ. Անկարելի:
**Անյեղլի**, ած. Հաստատուն, անփոփոխելի:
**Անյիշութիւն**, թեան, գ. Հիշողության թուլացում կամ կորուստ (ամնեզիա):
**Անողնայար**, ած. 1. Անողնաշար: 2. Կամազուրկ:
**Անուշ**, ի, գ. Քաղցրավենիք, մուրաբա:
**Անուշեղէն**, ի, գ. Քաղցրավենիք:

**Անջրպետ**, ի, ներ, գ. 1. Տիեզերք, տարածություն: 2. Խրամատ, անդունդ: 3. Պատնեշ: 4. Խոչընդոտ:
**Անսուաղ**, ած. Անօթի, քաղցած:
**Անցագիր**, գիրի, գիրեր, գ. Անձնագիր:
**Անցընել**, նբ. Անցկացնել:
**Անցնիլ**, չբ. Անցնել, գնալ մի տեղ:
**Անցք**, գ. 1. Դեպք, պատահար: 2. Ճեղք, ծակ:
**Անօթի**, ած. Սոված:
— **Անօթի ձգել** — Սոված թողնել:
**Աշխատանոց**, ի, գ. 1. Գործատուն, աշխատավայր: 2. Աշխատասենյակ, կաբինետ: 3. Լաբորատորիա:
**Աշխատասիրութիւն**, թեան, գ. 1. Երկ, ուսումնասիրություն: 2. Ջանասիրություն:
**Աշխատութիւն**, թեան, գ. 1. Բան, գործ, վաստակ: 2. Ուսումնասիրություն:
**Աշխարհամարտ**, ի, եր, գ. Համաշխարհային պատերազմ:
— **Աչք բանալ–գոցելու ժամանակ չունենալ** — Աչք բացել–փակելու ժամանակ չունենալ:
— **Աչք բռնել** — Հավանել:
— **Աչքէ անցընել** (Աչքէ անցունել) — Աչքի անցկացնել:
— **Աչքը խածնել** — 1. Աչքի ընկնել: 2. Հավանել:
— **Աչքը առնել** — Համարձակվել:
— **Աչքը գոց** — 1. Ոչ ճարպիկ: 2. Անվարան:
— **Աչքը գոցել** — Աչք փակել:
— **Աչքի զարնել** — Աչքի ընկնել:
**Աչքառու**, ած. Ակնառու:
**Ապագայապաշտութիւն**, թեան, գ. Ֆուտուրիզմ:
**Ապաժամ**, ած. մկ. Անժամանակ:
**Ապաստանարան**, ի, գ. Ապաստարան:
**Ապացուցանել** (հնց.), նբ. Ապացուցել:
**Ապաքէն**, վ. Իրոք, արդարև:
**Ապսպրել**, նբ. Հանձնարարել, պատվիրել:
— **Առ ի չգոյէ** — Չլինելու պատճառով:
— **Առ հարիւր** — Որոշակի տոկոս (10 առ հարիւր՝ 10%)
— **Առ ոչինչ** — Առանց կարևորություն տալու:
**Առանձնաբար**, մկ. Առանձնապես, հատկապես:
**Առանձնապէս**, 1. ած. մկ. Առանձին, մեկուսի: 2. վ. Հատկապես:
**Առաջադրութիւն**, թեան, գ. Մտադրություն, դիտավորություն:
**Առաջուընէ**, մկ. Սկզբից, նախապես:
**Առաջք**, ի, գ. 1. Առաջ, առջևի մաս: 2. Շենքի ճակատ:
**Առարկայական**, ած. 1. Անաչառ, անկողմնակալ, օբյեկտիվ: 2. Կոնկրետ:



**Առընթերադիր**, դիրի, գ. Կապ:
**Առթել**, նբ. Պատճառել, առիթ տալ:
— **Առնել քալել** — Նեղանալ, խռովել:
**Առջի**, ած. 1. Նախորդ, նախկին: 2. Առաջին:
— **Առջի հեղ** — Առաջին անգամ:
— **Առջի օր** — 1. Երեկ չէ առաջին օրը, եռանդ: 2. Վերջերս, մի քանի օր առաջ:
**Առտու**, տուան, գ. Առավոտ:
**Ապօրէն**, ած. Ապօրինի:
**Ասանկ** (խսկց.), դ. Այսպես, այս կերպ, այսպիսի (հմռ.՝ սանկ, բրբռ.):
**Ասդին**, մկ. Այս կողմը, այստեղ:
**Ասդին–անդին**, մկ. Այստեղ–այնտեղ, այս կողմ–այն կողմ:
**Ասիկա**, դ. Սա, այս:
**Ասկէ**, դ. Սրանից, այս բանից հետո:
**Ասկից**, մկ. Սրանից, այս բանից հետո, այս պահից սկսած:
**Ատակ**, ած. Կարող, ընդունակ, դիմացկուն:
**Ատանկ** (խսկց.), դ. Այդպես, այդ ձևով, այդպիսի:
**Ատեն**, ի, գ. Ժամանակ, միջոց, պահ:
**Ատենօք**, մկ. Ժամանակին, մի ժամանակ:
**Ատեն–ատեն**, մկ. Ժամանակ առ ժամանակ, երբեմն–երբեմն, պարբերաբար:
**Ատիկա**, դ. Այդ, դա:
**Ատոք**, ած. Լիքը, լեցուն, ճոխ:
**Արգիլել**, նբ. 1. Արգելել, զսպել: 2. Կալանավորել:
**Արեւելում**, ի, գ. 1. Կողմնորոշում, օրիենտացիա: 2. Դեպի արևելք շրջվելը:
**Արթննալ**, չբ. Արթնանալ:
**Արժենիշ**, նիշի, գ. Կրեդիտ:
**Արիւն**, իւնի, եան, գ. Արյուն:
— **Արիւն քալեցնել** — Արյունահեղություն տարածել:
— **Արիւնը գլուխը զարնել** — Արյունը գլուխը խփել:
**Արձագանգ**, ի, գներ, գ. Արձագանք:
**Արտաշխարհ**, հի, գ. Արտասահման:
— **Արտաքո կարգի** — Առանձնահատուկ, արտակարգ:
**Արտերկիր**, կրի, կիրի, գ. Արտասահման:
**Արտորալ**, չբ. Շտապել, աճապարել:
**Արտօսր**, ի, գ. Արցունք:
**Աւարտաճառ**, ի, գ. Շրջանավարտի գրած աշխատանք, ավարտագիր:
— **Աւուր հացի կարօտ** — Օրվա հացի կարոտ:
**Աւուրչէք**, ի, եր, գ. Օրավարձ:
**Աւրըշտկել**, նբ. Ավերել, քարուքանդ անել:

**Ափիբերան**, ած. մկ. Զարմացած, ապշահար:
**Աքասիա**, յի, գ. Ակացիա:

## Բ

**Բաբէ՚**, ձ. Ափսո՜ս, ավա՜ղ:
**Բաժնեթուղթ**, ի, թուղթեր, գ. Բաժնետոմս:
**Բախիլ**, չբ. 1. Բախվել, ընդհարվել: 2. Կռվել:
**Բամպակ**, ի, գ. Բամբակ:
**Բանախօս**, ի, ներ, գ. Զեկուցող, ճառախոս:
**Բանաւոր**, ած. 1. Բանական, տրամաբանական, ողջամիտ: 2. Խելացի:
**Բանդուլ**, ի, ներ, գ. Գործադուլ:
**Բանթող**, ի, ներ, գ. Գործադուլ:
**Բանիլ**, չբ. Բանել, աշխատել:
**Բանողչէք**, ի, եր, գ. Աշխատանքի դիմաց վճար, աշխատավարձ:
**Բառ(ա)գիրք**, գիրքի, գիրքեր, գ. Բառարան:
**Բասրել**, նբ. Չարախոսել, պարսավել:
**Բարակ**, ած. 1. Ոչ հաստ: 2. Նուրբ, մանրագնին:
**Բարակուկ**, ած. 1. Շատ բարակ: 2. Նիհար:
**Բարեկամ**, ած. 1. Բարի կամեցող, սրտակից: 2. Համակիր: 3. ած. գ. Ծանոթ:
**Բարեւտուք**, ի, եր, գ. Բարև տալ–առնելը:
**Բարկօղի**, ի, գ. Կոնյակ:
**Բարձրկեկ**, ած. Մի քիչ բարձր:
**Բարտի**, ի, գ. Բարդի:
**Բեկաբոյժ**, ի, ներ, գ. Վնասվածքաբան, ջարդվածքաբան (տրավմատոլոգ):
**Բեռնակառք**, ի, եր, գ. Բեռնատար ավտոմեքենա:
— **Բերանը աւրել** — Հայհոյել:
— **Բերանը գոցել** — Բերանը փակել:
— **Բերանը շտկել** — Խոսքը չափավորել:
— **Բերանը փոխել** — Խոսքը հետ առնել, խոսքը փոխել:
**Բերանացի**, ած. մկ. Բանավոր:
**Բզքտել (Բզկտել)**, նբ. Բզկտել:
**Բժշկարան**, ի, գ. 1. Բուժարան: 2. Բժշկության գիրք:
**Բճիճ (Բջիջ)**, բճիճի (բջիջի), գ. Բջիջ:
**Բնալոյծ**, ի, ներ, գ. Քիմիկոս:
**Բնապաշտութիւն**, թեան, գ. Բնության աստվածացում, համաստվածություն (պանթեիզմ):
**Բնութենապաշտութիւն**, թեան, գ. 1. Նույնն է՝ Բնապաշտություն: 2. Նատուրալիզմ:
**Բոլոր**, ած. Ամբողջ, ամեն, համայն:



**Բոլորակ**, ած. Կլոր:
**Բոլորշի**, ած. 1. Կլոր, շրջանաձև: 2. Չորս կողմը ընդգրկող:
**Բոլորտիք**, գ. Չորս կողմը, շուրջբոլորը:
**Բոմբիւն**, ի, գ. Ձայն:
**Բոպիկ**, ած. Բոբիկ:
**Բուխերիկ**, ի, գ. Վառարան (բուխարի):
**Բումբ**, ի, գ. Սրունքի մսոտ մասը:
**Բունձ**, ի, գ. Հողի կոշտ:
**Բուստ**, ի, գ. Մարջան:
**Բռնագաղթ**, ի, եր, գ. Տեղահանություն:

## Գ

**Գալ**, ած. Գալիք, եկող, առաջիկա:
**Գաղափարապաշտութիւն**, եան, գ. Իդեալիզմ:
**Գաղղիերէն**, ի, գ. Ֆրանսերեն:
**Գաղտ** (հնց.), մկ. Գաղտագողի:
**Գաղտուկ**, մկ. Ծածուկ:
**Գամ**, ի, գ. Մեխ, երկար, սեպ:
**Գան**, ի, գ. 1. Ծեծ, հարված: 2. Խոց, վերք:
**Գանիլ**, չբ. Խորշել, զզվել:
**Գանկ**, ի, գ. Գանգ:
**Գառագեղ**, ի, գ. Երկաթե խոշոր վանդակ, արգելոց:
**Գեղադիտակ**, ի, գ. Կալեյդոսկոպ:
**Գեղեցկագիտութիւն**, թեան, գ. Գեղագիտություն (էսթետիկա):
**Գեղօն**, ի, գ. Բալլադ, քնարական փոքրիկ վիպերգ:
**Գետին**, ինի, գ. 1. Ոտքի տակի հողը: 2. Հիմք, հենք: 3. Ասպարեզ: 4. Հիմունք:
— **Գետին ձգել** — Նետել, թողնել:
**Գետնախնձոր**, ի, գ. 1. Կարտոֆիլ: 2. Երիցուկ խոտը:
**Գերեզմաննոց**, ի, գ. Գերեզմանոց:
**Գերման**, ած. գ. Գերմանական:
**Գէջ**, ած. Թաց, խոնավ:
**Գէշ**, ած. 1. Վատ, բացասական: 2. Անախորժ, տհաճ: 3. Անբարո: 4. գ. Դիակ, լեշ:
— **Գէշ–աղեկ** — Լավ–վատ:
— **Գէշ աչքով նայիլ** — Վատ աչքով նայել:
— **Գէշ երթալ** — Անհաջող ընթացք ունենալ, գործերը վատ գնալ:
— **Գէշ ըլլալ** — Վատ զգալ:
— **Գէշութիւն գալ վրան** — Վատ զգալ, ուշաթափվել:
**Գինով**, ած. 1. Հարբած: 2. Գինեմոլ:
**Գիշերազգեստ**, ի, գ. Գիշերանոց:

**Գիշերերգ**, ի, եր, գ. 1. Գիշերը երգող: 2. Երաժշտական փոքրիկ ստեղծագործու-
թյուն, ցայգերգ (նոկտյուրն):
**Գլխագիր**, գիրի, գիրեր, գիրներ, գ. Մեծատառ:
**Գլուխ**, գլուխի, գլխի, գ. Գլուխ:
— **Գլուխ դարձնել** — Ուշադրություն դարձնել, գլուխ դնել:
— **Գլխուն պաղ ջուր զարնել** — Գլխին սառը ջուր լցնել:
**Գնացք**, ի, գ. 1. Գնալու գործողությունը: 2. Ընթացք, քայլք:
**Գողնալ**, նբ. Գողանալ:
**Գործատուն**, տունի, տան, տուներ, գ. Գործատեղ, ֆաբրիկա, գործարան:
**Գործաւոր**, ի, գ. Բանվոր, աշխատավոր:
**Գոց**, ած. 1. Փակ: 2. Անգիր: 3. Մուգ գույնի:
**Գոցել**, նբ. Փակել, ծածկել:
**Գուճ**, ի, գ. Ծունկ:
**Գունտ** (**Գունդ**), գունտի (գունդի), գ. Գունդ:
**Գուպար**, ի, գ. 1. Կռիվ, պայքար: 2. Պատերազմ:
**Գռեհ**, ի, գ. Փողոց:
**Գռուզ**, ած. Խուճուճ, գալարուն:
**Գրագէտ**, ի, ներ, գ. Գրող, գրական մշակ:
**Գրադատ**, ի, ներ, գ. Քննադատ:
**Գրատուն**, տունի, տան, տուներ, գ. Գրախանութ:
**Գրգարան**, ի, գ. Գուրգուրանքի տեղ:
**Գօս**, ած. Չոր, ցամաք, անպտուղ:

## Դ

**Դաբիր**, ի, ներ, գ. Տաճարի ներքին մասը, սրբարան:
**Դահամունք**, ի, գ. Նվեր, ընծա:
**Դահոյկ** (հնց.) ի, գ. Դահուկ:
**Դաշխուրան**, ի, գ. Կոնք, տաշտ, սափոր:
**Դաշնակ** (հնց.), 1. ի, գ. Դաշնամուր, նվագարան: 2. ած. Ներդաշնակ:
**Դասիչ**, իչի, գ. Թվային ցուցիչ որևէ համակարգում, (ինդեքս):
— **Դաս մը** — Մի խումբ:
**Դասապահ**, ի, եր, գ. Դասաժամ:
**Դասընթացք**, ի, գ. Դասընթաց:
**Դարմանատուն**, տունի, տան, տուներ, գ. Հիվանդանոց:
— **Դարպաս ընել** — Սիրահետել, դարպասել:
**Դգալ**, ի, գ. Գդալ:
**Դեդեւիլ**, չբ. 1. Օրորվել, ճոճվել: 2. Վարանել:
**Դելփին**, ի, գ. Դելֆին:
**Դեղագիր**, գիրի, գիրեր, գիրներ, գ. Դեղատոմս:



**Դեղահատ**, ի, եր, գ. Դեղահաբ:
**Դեղարան**, ի, գ. Դեղատուն:
**Դէտ**, 1. ած. Դիտող, հսկող: 2. գ. Պահակ, պահապան: 3. գ. Դիտանոց:
**Դիտումնաւոր**, մկ. Միտումնավոր:
**Դիւրաւ**, մկ. Դյուրությամբ, հոժարությամբ:
**Դնդեր**, ի, ներ, գ. 1. Փափուկ միս: 2. Մկան:
— **Դուրս իյնալ** — Դուրս ընկնել:
— **Դուրս դրուիլ** — Դուրս հանվել, հեռացվել:
**Դպչիլ** (**Դպիլ**, **Դպնալ** — հնց.), չբ. Դիպչել:
**Դրամաթուղթ**, թուղթի, թուղթեր, գ. 1. Դրամական արժեք ներկայացնող թուղթ:
2. Թղթադրամ:
**Դրամապահ**, ի, ներ, գ. Գանձապահ:
**Դրամատիրութիւն**, թեան, գ. Կապիտալիզմ:
**Դրամատուն**, տունի, տան, տուներ, գ. Բանկ:
**Դրամօժիտ**, ի, գ. Որպես օժիտ տրվող գումար:
**Դրութիւն**, թեան, գ. 1. Համակարգ: 2. Դիրք:

## Ե

**Եբենոս**, ի, գ. Սև տեսակի ամուր փայտ, էբենոս:
**Եզական**, ած. 1. Եզակի: 2. Աննման, յուրահատուկ:
**Եզուիտ**, ի, գ. 1. Ճիզվիտ: 2. ած. Կեղծավոր:
**Եզր**, ի, գ. Տերմին:
**Եզրաբանական**, ած. Տերմինաբանական:
**Եզրաբանութիւն**, թեան, գ. Տերմինաբանություն:
**Ելեկտրական**, ած. Էլեկտրական:
**Ելեւմուտք**, ի, եր, գ. 1. Ելումուտ: 2. Դրամական մուտք և ելք:
**Ելեւմտագէտ, Եկամտագէտ**, ի, ներ, գ. Ֆինանսիստ:
**Ելլել**, չբ, Ելնել:
**Եկամուտ**, մուտի, գ. 1. Հասույթ: 2. ած. Դրսից եկած, օտարամուտ:
**Եղեւին**, ի, գ. Եղևնի:
**Եղուկ**, ձ. Ափսո՜ս, ավա՜ղ:
**Ենթակայական**, ած. 1. Ստորադաս, բաղկացուցիչ: 2. Կողմնակալ, աչառու
(սուբյեկտիվ):
**Եսական**, ած. 1. Ես–ին հատուկ, անհատական: 2. Եսասեր (էգոիստ),
ինքնամփոփ:
**Ետք**, կ. Հետո:
**Երաժշտանոց**, ի, գ. Կոնսերվատորիա:
**Երախայ**, ի, գ. Նորածին, երեխա:
**Երբուընէ** (**Երբէն**), մկ. Երբվանից:

**Երգախաղ**, ի, եր, գ. Օպերա:
**Երգահան**, ի, ներ, գ. Կոմպոզիտոր:
— **Երեսէն ինկած** — Երեսից ընկած, արհամարհված:
— **Երեսը ճերմակ ծգել** — Պարզերես անել:
— **Երեսը ջուր չկա** — Անամոթ:
— **Երեսի վրա թողուլ** — Երեսի վրա թողնել, լքել:
**Երեւիլ**, չբ. 1. Երևալ: 2. Թվալ: 3. Ներկայանալ:
**Երեւնալ**, չբ. Երևալ:
**Երթալ**, չբ. 1. Գնալ, մեկնել: 2. Ընթանալ: 3. Հաճախել: 4. Վաճառվել: 5. Կորչել: 6. Դիմանալ:
**Երթեւեկ**, ի, գ. Երթևեկություն:
**Երկայն (Երկար)**, ած. Երկար, բարձրահասակ:
— **Երկայն ընել** — Երկարացնել, ձգձգել, անհարկի շատախոսել:
**Երկայնութիւն**, թեան, գ. Երկարություն:
**Երկարել**, նբ. 1. Երկարացնել: 2. Կարկառել, պարզել:
**Երկարիլ**, չբ. Երկար տևել:
**Երկ–երկու**, մկ. Երկու–երկու:
— **Երկինքը քար է կապած** — Անանձրև՝ չորային եղանակ:
**Երկնապող** (հնց.), ած. Երկնասլաց, երկնամուխ:
**Երկննալ**, չբ. 1. Երկարանալ: 2. Ամբողջ հասակով պառկել:
**Երկվայրկեան**, ի, 1. Վայրկյան: 2. Ակնթարթ:
**Երկրորդական**, 1. Ոչ էական: 2. Միջնակարգ:
**Եօթներորդ**, թ. Յոթերորդ:

## Զ

**Զամբուռ**, ի, գ. Իշամեղու:
**Զանակ**, ի, գ. Ոսկու, արծաթի կտորտանք:
**Զատ**, ած. մկ. Առանձին, տարբեր:
**Զատուիլ**, չբ. Զատվել:
**Զարնել**, չբ. Զարկել:
**Զբաղիլ**, չբ. Զբաղվել:
**Զբօսաշրջութիւն**, թեան, գ. Զբոսնելով շրջելը (տուրիզմ):
**Զգալաբար**, մկ. Զգալիորեն:
**Զգայապաշտութիւն**, թեան, գ. Սենսուալիզմ:
**Զգեստապահ**, ի, ներ, գ. Հանդերձապահ:
**Զերդ (Զերթ)**, շ. Ինչպես, ասես:
**Զերօ (Զէրօ)**, ոյի, գ. Զրո:
**Զուարթուն**, 1. ած. Զվարթ, ուրախ: 2. գ. Հրեշտակ:
**Զուարճատուն**, տունի, տան, տուներ, գ. Հասարակաց տուն:



## Է

**Էշայծեամ**, ի, գ. Եղջերուի տեսակ, իշայծյամ:
**Էրիկ**, էրկան, գ. 1. Տղամարդ: 2. Ամուսին:
**Էրիկմարդ**, ու, եր, գ. 1. Տղամարդ: 2. Ամուսնացած մարդ:
**Էֆենտի**, ի, գ. Դիմելաձև Թուրքիայում, պարոն:

## Ը

**Ըլլալ**, չբ. Լինել:
**Ըղձանոյշ**, ի, գ. Պարիկ, հավերժահարս:
**Ընդլայնիլ**, չբ. Ընդլայնվել:
**Ընդլայնուիլ**, կբ. Ընդլայնվել:
**Ընդունել**, նբ. Հաղթել:
**Ընել**, նբ. Անել:
**Ընթացաւարտ**, ի, գ. ած. Շրջանավարտ:
**Ընկերաբան**, ի, ներ, գ. Սոցիոլոգ:
**Ընկերաբանութիւն**, թեան, գ. Սոցիոլոգիա:
**Ընկերային**, ած. Սոցիալական, հանրային:
**Ընկերվար**, ի, ներ, գ. Սոցիալիստ:
**Ընկերվարական**, ած. Սոցիալիստական:
**Ընկերվարութիւն**, թեան, գ. Սոցիալիզմ:
**Ըսել**, նբ. Ասել:
**Ըսի–ըսաւ**, գ. Բամբասանք, ասեկոսե:

## Թ

**Թաթաղուն**, ած. Թաթախված:
**Թալլել**, նբ. Թալանել:
**Թանձրկեկ**, ած. Թանձրավուն:
**Թասուն**, ած. Հևացող, շնչահատ:
**Թատրերգութիւն**, թեան, գ. Թատերգություն:
**Թարթափ**, ի, գ. 1. Աչքը բացել–փակելու արագ գործողություն, ակնթարթ: 2. Փորձանք, պատուհաս:
**Թարշիշ**, ի, գ. Թանկագին քարի տեսակ՝ կանաչորակ դեղին գույնով, հակինթ:
**Թացիկ**, ած. Թեթևոտիկ, մեղկ, թույլ:
**Թաքթաքուր**, մկ. ած. Գաղտնաբար, թաքնվելով:
**Թաք–թաք**, ձ. Տուկ–տուկ:
**Թեթեւապէս**, մկ. Թեթևակի:
**Թեթեւնալ**, չբ. Թեթևանալ:
**Թելադրութիւն**, թեան, գ. Հորդոր, խորհուրդ, թելադրանք:

**Թեպուր**, ի, գ. Փետուր:
**Թեքնիք**, ի, գ. 1. Տեխնիկա: 2. ած. Տեխնիկական:
**Թիւնել** (օտք.), ի, գ. Փապուղի, թունել:
**Թնճուկ**, ի, գ. Թնջուկ:
**Թոռմիլ**, չբ. Թառամել, թոշնել:
**Թուիլ**, չբ. Թվալ:
**Թուխկեկ**, ած. Թխավուն:
**Թոքատապ**, ի, եր, գ. 1. Թոքաբորբ: 2. Թոքախտ:
**Թքնել** (**Թքել**), չբ. Թքել:
**Թօթուել**, նբ. 1. Թափ տալ, ցնցել: 2. Թոթափել:
**Թօթուիլ**, չբ. Ցնցվել, շարժվել:
**Թօնուտ**, ած. Թաց, խոնավ:
**Թօշմիլ** (**Թօշնիլ**) (հնց.), տե՛ս Թոռմիլ:

## Ժ

**Ժամաւոր**, ի, գ. Ժամ՝ եկեղեցի գնացող:
**Ժմնել**, չբ. 1. Մեծանալ: 2. Գլուխ հանել: 3. Ծիծաղել, խնդալ:
**Ժողվել**, նբ. Ժողովել, հավաքել:
**Ժողվռտել**, նբ. Հավաքել, հավաքռտել:
**Ժպտիլ**, չբ. Ժպտալ:
**Ժպրհիլ**, չբ. Համարձակվել:
**Ժուռ գալ**, չբ. 1. Շուռ գալ: 2. Շրջագայել:

## Ի

**Իմանալ**, նբ. 1. Գիտենալ: 2. Ճանաչել:
**Իմաստասիրութիւն**, թեան, գ. Փիլիսոփայություն:
**Իյնալ**, չբ. Ընկնել:
— **Ինծի կու գայ** — 1. Ինձ մոտ է գալիս: 2. Ինձ թվում է, ինձ այնպես է թվում:
**Ինքզինք(ը)**, դ. Ինքնիրեն:
— **Ինքզինք ուտել** — Ինքն իրեն ուտել:
— **Ինզինքէն դուրս գալ** — Ինքն իրենից դուրս գալ:
**Ինքնաշարժ**, ի, ներ, գ. Ավտոմեքենա:
**Ինքնեկ**, ած. Ինքնաբուխ, ավտոմատ:
**Իտէալ**, ի, գ. Իդեալ, գաղափարատիպ:
**Իրապաշտութիւն**, թեան, գ. Ռեալիզմ:
**Իրաւցնէ** (բրբռ.), մկ. Իսկապես, իրոք:
**Իցի՜ւ թէ**, վ. Երանի թե, ուր էր թե:



## Լ

**Լաբիւրինթոս**, ի, գ. Լաբիրինթոս, բավիղ:
**Լազուարթ**, 1. ած. Կապույտ: 2. ի, գ. Թանկարժեք երկնագույն քար:
**Լաճ**, ի, գ. 1. Երեխա: 2. Ստահակ: 3. Սպասավոր:
**Լամպար** (**Լամբար**), ի, գ. Ջահ, լապտեր:
**Լայնկէկ**, ած. Լայնավուն:
**Լայննալ**, չբ. Լայնանալ:
**Լայնշի**, ած. Լայնոտ:
**Լեարդ** (**Լերդ**), ի, գ. Լյարդ:
**Լեմոնագոյն**, ած. Լիմոնագույն:
**Լեցնել**, նբ. Լցնել:
— **Լեզու ելլալ** (**Լեզու ելնել**) — Խոսել սկսել:
— **Լեզուի իյնալ** — Բամբասանքի նյութ դառնալ:
— **Լեզուն խածնել** — Լեզուն կծել:
**Լեմոն** (**Լիմոն**), ի, գ. Լիմոն:
**Լինտ**, **լինտի**, գ. Լինդ:
**Լղրճուկ**, ած. Ողորմելի, կեղտոտ:
**Լման**, ած. մկ. (բրբռ.) Ամբողջ, լրիվ, լի:
**Լմննալ**, չբ. 1. Վերջանալ: 2. Լրանալ:
— **Լոգանք առնել** — Լոգանք ընդունել:
**Լոգնալ**, չբ. Լողանալ:
**Լոյծ**, ած. Հոսող, հոսանուտ, հեղուկ:
**Լուբիա**, յի, գ. Լոբի:
**Լուղորդ** (**Լողորդ**), ի, գ. Լողորդ:
— **Լուրջի առնել** — Լուրջ ընդունել:

## Խ

**Խածնել**, նբ. 1. Կծել: 2. Չարախոսել:
**Խաղք–խայտառակ**, գ. Ծաղրուծանակ, ծաղր ու խայտառակություն:
**Խաղքութիւն**, թեան, գ. Խայտառակություն:
**Խամաճիկ**, ի, գ. Խրտվիլակ:
**Խաչբուռ**, ի, եր, գ. Ցորենի հասկերից կազմված խաչաձև փունջ:
**Խարակ**, ի, գ. Խութ, արգելք, ջրից դուրս ցցված ժայռ:
**Խափանարարութիւն**, թեան, գ. Դիվերսիա:
**Խել**, ած. Բավական շատ, բավականաչափ (գործածվում է **մը**–ի հետ՝ **խել մը** = մի խումբ):
— **Խելքէ ելլել** — Ինքն իրեն կորցնել:
— **Խելքը գլուխը ժողվել** — Խելքը գլուխը հավաքել:
**Խելօք** (**Խելօքիկ**), ած. Հանդարտաբարո:

**խելօքնալ**, չբ. Խելոքանալ։
**խենդ** (**խենթ**), ած. Խենթ։
**խենթենալ**, չբ. Խենթանալ։
**խենէշ**, ած. 1. Լկտի, անպատկառ։ 2. Մեղկ։
**խժալուր**, ած. 1. Անախորժ։ 2. Խռպոտ։
**խմբագրապետ**, ի, եր, գ. Գլխավոր խմբագիր։
**խնդալ**, չբ. Ուրախանալ։
**խնձոյք**, ի, գ. Խնջույք։
**խոկ**, ի, գ. Խոհ, մտածմունք։
**խոկալ**, նբ. Մտածել, խորհել։
**խոնաւնալ**, չբ. Խոնավանալ։
**խոնջենալ**, չբ. Խոնջանալ, հոգնել։
**խոշորկեկ**, ած. Խոշորավուն։
**խոստմնալից**, ած. (հնց.) Խոստումնալից։
**խոտորիլ**, չբ. Խոտորվել, շեղվել։
**խորաթայ**, ի, գ. (բրբռ.) Զրույց, խոսակցություն։
**խորհիլ**, նբ. Խորհել։
**խորհրդապաշտութիւն**, թեան, գ. Սիմվոլիզմ։
**խորշոմիլ**, չբ. Կնճռոտվել։
**խորոտ**, ած. Գեղեցիկ, սիրուն։
**խորունկնալ**, չբ. Խորանալ։
**խպնիլ**, չբ. Ամաչել։
**խրամ**, ի, ներ, գ. Փոս, խրամատ։
**խրտչիլ**, չբ. Խրտնել։
**խօսիլ**, նբ. Խոսել։

— **խօսք է՞** — Ինչ խոսք, իհարկե, անշուշտ։
— **խօսք ընել** — Խոսք բացել։
— **խօսքը մտիկ ընել** — Խոսքին կարևորություն տալ։
— **խօսքը քալեցնել** — Խոսքը անցկացնել։

**խօլաբար**, մկ. Կատաղի, մոլեգին կերպով։

## Ծ

**Ծագիլ**, չբ. Ծագել։
**Ծաթել**, չբ. Լուսանալ։
**Ծախք** (հնց.), ի, գ. Ծախսելը, վաճառք։
**Ծածանիլ**, նբ. Ծածանել։
**Ծաղկեփոշի**, ի, գ. Ծաղկափոշի։
**Ծարաւնալ**, չբ. Ծարավել։
**Ծարիր**, ի, գ. Դիմաներկ, շպար, սուրմա։



**Ծարուրել**, նբ. Կոպերին, հոնքերին ծարիր քսել, սնգուրել։
**Ծթռած**, ած. Հնացած, փչացած։
**Ծիւրախտ**, ի, եր, գ. Թոքախտ։
**Ծիւրել**, նբ. Մաշել, հյուծել, նիհարեցնել։
**Ծիւրիլ**, չբ. Մաշվել, հյուծվել, նիհարանալ։
**Ծղխնի** (հնց.) (**Ծխնի**), ի, գ. Ծխնի (դարձահեղույս)։
**Ծղնի**, ի, գ. տե՛ս Ծխնի։
**Ծղրիթ**, ի, գ. Ծղրիդ։
**Ծնիլ**, 1. նբ. Ծնել, առաջացնել, ստեղծել։ 2. չբ. Սերել, ծագել, ծնվել։
**Ծնողք**, ի, գ. Ծնողներ։
**Ծովամոյն**, ած. Ծովում խեղդված, ջրահեղձ։
**Ծովխոզ**, ի, գ. Ծովախոզ։
**Ծռիլ**, 1. չբ. կբ. Ծռվել։ 2. չբ. Հակվել։
**Ծրար**, ի, գ. Կապոց, փաթեթ։
**Ծօ՛**, ձ. Տո՛, է՛յ, ա՛յ տղա։

## Կ

**կազ**, ի, գ. Գազ։
**կակղանալ** (**կակղիլ**, **կակուղնալ**), չբ. Փափկել, կակղել։
**կաղանդ**, ի, գ. Ամանոր, Նոր տարի, նավասարդ։
**կաղանդել**, նբ. 1. Նոր տարի նշել։ 2. Նոր տարվա առիթով քաղցրավենիք բաժանել։
**կաղանդչէք**, ի, եր, գ. Նոր տարվա նվերներ։
**կաճառ**, ի, գ. Ակադեմիա։
**կաճառական**, ած. 1. Ակադեմիային վերաբերող։ 2. ի, գ. Ակադեմիկոս։
**կաճառորդ**, տե՛ս Կաճառական (2)։
**կամշոտ**, ած. Քմահաճույքներ ունեցող, սեթևեթ։
**կայթել**, չբ. Պարել, ցատկոտել։
**կայլակ**, ի, գ. Փոքրիկ կաթիլ, շիթ։
**կայնիլ**, չբ. Կանգնել։
**կայսերապաշտութիւն**, թեան, գ. Իմպերիալիզմ։
**կանամբի**, ի, գ. Ամուսնացած տղամարդ։
**կանանչ** (հնց.) (**կանաչ**), ած. Կանաչ։
**կանանչկեկ**, ած. Կանաչավուն։
**կանանչապատ**, ած. Կանաչապատ։
**կանանչաւէտ**, ած. Կանաչավետ։
**կանանչեղէն** (**կանաչեղէն**), ի, գ. Կանաչեղեն։
**կանգնել** (հնց.), նբ. 1. Կանգնեցնել։ 2. Կառուցել։
**կանգնիլ**, 1. չբ. Կանգնել, ոտքի ելնել, բարձրանալ։ 2. կբ. Կառուցվել, շինվել։

**Կանխագուշակ**, ի, գ. Գուշակ:
**Կանոնագիր**, գիրի, գիրեր, գ. Կանոնադրություն:
**Կանուխ**, մկ. Վաղ, վաղ առավոտ, շուտ:
**Կանչվռտուք**, ի, գ. Գոռգոռոց:
**Կապելայ**, գ. Գինետուն:
**Կառախումբ**, խումբի, խումբեր, գ. Գնացք, շոգեքարշ:
**Կառատուն**, տունի, տան, տուներ, գ. Ավտոտնակ:
**Կառափ**, ի, գ. Գլուխ:
**Կառչիլ**, չբ. Կառչել:
**Կառք**, ի, գ. 1. Կառք, ֆայտոն: 2. Ավտոմեքենա:
**Կատղիլ** (**Կատաղիլ**), չբ. Կատաղել:
**Կարաւան**, ի, գ. Քարավան:
**Կարգ**, ի, գ. Հերթ:
— **Կարգ մը** — Ինչ–որ, որոշ, ինչ–ինչ, մի շարք:
— **Կարգի մտնել** — Կարգավորվել, կարգի ընկնել:
**Կարգախօս**, ի, գ. Լոզունգ:
**Կարգաւ**, մկ. Կարգով, հերթափոխությամբ:
**Կարգել**, նբ. 1. Կարգի դնել: 2. Գործի նշանակել, պաշտոնի ձեռնադրել: 3. Որոշել, սահմանել: 4. Ամուսնացնել:
**Կարգով**, մկ. Հերթով, հերթականությամբ:
**Կարդալ**, նբ. 1. Ընթերցել: 2. Կանչել, գոչել, հրավիրել:
**Կարկաջ** (հնց.), ի, գ. Կարկաչ:
**Կարկտել**, նբ. Կարկատել:
**Կարծնալ**, չբ. Կարծանալ:
**Կարմրիլ**, չբ. Կարմրել:
**Կարմրկեկ (Կարմիրկեկ)**, ած. Կարմրավուն:
**Կարշնեղ**, ած. Ջլապինդ, ուժեղ:
**Կարօտիլ**, չբ. Ուզել, պահանջել, պետք ունենալ:
**Կարօտնալ**, չբ. Անձկալ, ըղձալ, կարոտել:
**Կաւառ**, ի, գ. 1. Նեղ առու: 2. Ջրաբաժան:
**Կեդրոն**, ի, գ. Կենտրոն:
**Կեդրոնական**, ած. Կենտրոնական:
**Կեղծամաշկ**, ի, եր, գ. Դիֆտերիա:
**Կենդանագիր**, գիրի, գիրեր, գ. Լուսանկար:
**Կենեղուտ**, ած. Կենսունակ, կենսալից, առույգ:
**Կենսանիւթ**, ի, եր, գ. Վիտամին:
**Կեցնել**, նբ. Կանգնեցնել, սպասեցնել:
**Կը բաւէ**, վ. Բավ է, հերիք է:
**Կթոտիլ**, չբ. Տկարանալ, թուլանալ (ոտքը, ձեռքը):



**Կիկլոն**, ի, գ. Ցիկլոն:
**Կիսախաղ**, ի, եր, գ. Խաղակես:
**Կիրակմուտք**, ի, եր, գ. Շաբաթ իրիկվա ժամերգությունը:
**Կից**, ի, գ. Աքացի, ոտնահարված:
**Կլլել**, նբ. Կուլ տալ:
**Կլորկեկ**, ած. Կլորավուն:
**Կլորնալ**, չբ. Կլորանալ:
**Կղզեխումբ**, խումբի, խումբեր, գ. Կղզիախումբ:
**Կղկաթ**, ած. Կարոտագին, գորովագութ:
**Կղմինտր**, ի, գ. Կղմինդր:
**Կղպել**, նբ. Կողպել, փակել:
**Կմախ** (հնց.), ի, գ. Կմախք:
**Կմախաձեւ** (հնց.), ած. Կմախքաձև:
**Կնիկմարդ**, ու, եր, գ. Կին:
**Կնիւն**, ի, գ. Բույս:
**Կնքադրէք**, ի, գ. Կնունք:
**Կնքամայր**, մօր, եր, գ. Քավորկին:
**Կնքապապ**, ու, եր, գ. Կնքահոր հայրը:
**Կշռոյթ**, ի, գ. Ռիթմ:
**Կողմնագիծ**, գիծի, գիծեր, գ. Պրոֆիլ:
**Կողք**, ի, գ. Գրքի կազմ:
**Կոնտոլ**, ի, գ. Գոնդոլ (1. Վենետիկի երկար, հարթահատակ միաթի մակույկ: 2. Օդապարիկից կախված զամբյուղ–գետեղարան: 3. Բաց բեռնատար վագոն):
**Կոշարայ**, ի, գ. Խնկաման:
**Կոշկոճ**, 1. ած. Ծեծված, փչացած: 2. գ. Փչացած բան:
**Կոշկոռ**, 1. ի, գ. Շաքարի կամ աղի պինդ կտոր, հողակոշտ: 2. ած. Գուղձերով լեցուն:
**Կորդ**, ած. Խոպան, անմշակ:
**Կորիզ**, ի, գ. Ատոմի միջուկը:
**Կորիզաբան**, ի, ներ, գ. Ատոմագետ:
**Կորիզային**, ած. Ատոմային, միջուկային:
**Կորիլլա**, յի, գ. Գորիլլա:
**Կորսուիլ**, չբ. Կորչել, անհետանալ:
**Կութք**, ի, գ. Այգեկութ, այգեքաղ:
**Կուճ**, կուճի, գ. Մարմար:
**Կումբ**, կումբի, գ. Վահանի մեջտեղի ուռուցիկ մասը, պորտը:
**Կուշտ** (բրբռ.), կուշտի, 1. գ. Կողք: 2. կ. Մոտ:
**Կուրաղի**, ի, գ. Կույրաղի:

**Կուրնալ**, չբ. Կուրանալ:
**Կուսակցապետ**, ի, եր, գ. Կուսակցության ղեկավար:
**Կուսակցիլ**, չբ. Կուսակից լինել:
**Կպչիլ**, չբ. Կպչել:
**Կռթնիլ**, չբ. Կռթնել:
**Կռնակ**, ի, գ. 1. Մեջք, թիկունք, շալակ: 2. Թև–թիկունք, օգնական: 3. Գրքի ետին մասը:
— **Կռնակ դարձնել** — Խույս տալ, օգնելուց հրաժարվել:
— **Կռնակ առնել** — Օգնություն գտնել:
— **Կռնակ կռնակի տալ** — Մեջք մեջքի տալ:
— **Կռնակէն խօսիլ** — Հետևից խոսել:
— **Կռնակը գետին տալ** — Մեջքը գետին տալ:
— **Կռնակն անցընել** — Մեջքին զցել:
**Կռուըտիլ**, չբ. Կռվշտել, զզվռտվել:
**Կռուփ**, ի, գ. Բռունցք, մուրց:
**Կռփամարտ**, ի, եր, գ. Բռնցքամարտ:
**Կսմթել**, նբ. Կծմթել:
**Կրաղիւս**, ի, գ. Ցեմենտ:
**Կրանիթ**, ի, գ. Գրանիտ:
**Կրկներեւոյթ**, ի, գ. Տեսողական պատրանք (միրաժ):
**Կրնալ**, չբ. Կարողանալ:
**Կրողչէք**, ի, եր, գ. Փոխադրավարծ:
**Կօշկածիգ**, ի, գ. Կոշիկը հագնելու հարմարանք, եղջերիկ:

## Հ

**Հագնիլ (Հագուիլ)**, չբ. Հագնվել:
**Հակառակիլ**, չբ. Հակառակվել:
**Հակիլ**, չբ. Հակվել:
**Հակուրջի**, ի, գ. Ճոճք:
**Հաճիլ**, չբ. Հոժարել, գոհանալ, բարեհաճել:
**Հաճութիւն**, թեան, գ. Հավանություն:
**Համայնագիտարան**, ի, գ. Հանրագիտարան:
**Համայնավար**, 1. ի, գ. Կոմունիստ: 2. ած. Կոմունիստական:
**Համայնավարութիւն**, թեան, գ. Կոմունիզմ:
**Համանուագ**, ի, գ. Սիմֆոնիա:
**Համար**, ի, գ. Հաշիվ, հաշվետվություն:
**Համարկում**, ի, գ. Ներգրավում միջազգային (կամ այլ) կառույցների մեջ (ինտեգրում):
**Համացանց**, ի, եր, գ. Ինտերնետ:



**Համբուն**, ած. Համակ, ամբողջովին, բոլորովին:
**Համոզկեր**, ած. Համոզիչ:
**Համօրէն**, մկ. ած. Ամբողջապես, ընդհանուր, նման:
**Հայել**, չբ. Նայել:
**Հայկակ**, ի, գ. Հայ մանուկ:
**Հայհուչ**, ի, գ. Աղմուկ:
**Հանգանակ**, ի, գ. Սկզբունք, խորհրդանշան:
— **Հանգիստ ընել** — Հանգիստ առնել, հանգստանալ:
**Հանգիտանալ**, չբ. Հավասարվել, նույնանալ:
**Հանգիտօրէն**, մկ. Հավասարապես:
**Հանգոյն**, ած. Նման:
**Հանգչիլ**, չբ. Հանգստանալ:
**Հանգրուան**, ի, գ. Էտապ, փուլ:
**Հանդարտիկ**, մկ. ած. Հանդարտորեն, հանդարտ:
**Հանըմ** (թուրք.), ի, գ. Տիկին:
**Հանրակառք**, ի, գ. Ավտոբուս:
— **Հանրակառք առնել** — Ավտոբուս նստել:
**Հանրաքարշ**, ի, գ. Ավտոբուս:
**Հաշուակալ**, ի, գ. Հաշվապահ:
**Հաջել**, չբ. Հաչել:
**Հաջաղ**, ի, գ. Երեսի քող:
**Հասկնալ**, նբ. Հասկանալ:
**Հաստաբեստ**, ած. Ամուր կառուցված:
**Հաստատատիպ**, ի, գ. Ստերեոտիպ:
**Հասցեարան**, ի, գ. Հասցեագիրք:
**Հասուննալ**, չբ. Հասունանալ:
**Հատնիլ**, չբ. Վերջանալ, սպառվել:
**Հատուցանել**, նբ. (հնց.) Հատուցել:
**Հարկաւ**, վ. Անշուշտ:
**Հարկինք**, ի, գ. Խնջույք, մեծարանք:
**Հարսնիք**, ի, գ. Հարսանիք:
**Հարցարան**, ի, գ. Հարցաթերթիկ:
**Հացկատակ**, ած. Պնակալեզ, ծիրակեր:
**Հաւանիլ**, չբ. 1. Հավանություն տալ, համաձայնել: 2. նբ. Թույլատրել:
**Հաւկիթ**, կիթի, ներ, գ. Ձու:
**Հաւնիլ**, 1. նբ. Հավանել: 2. չբ. Համաձայնել:
**Հաւնոց**, ի, գ. Հավանոց:
**Հեծելանիւ**, անիւի, գ. Հեծանիվ:
**Հեծելանուորդ**, ի, գ. Հեծանվորդ:

**Հեծնալ**, նբ. Հեծնել:

**Հեղ**, ի, գ. Անգամ:

**Հեշտին**, ած. Անուշ, հաճելի:

**Հեռ**, 1. ի, գ. Գժտություն, անմիաբանություն: 2. ած. Ոխակալ, քինոտ:

**Հեռաձայն**, ի, եր, գ. Հեռախոս:

**Հեռաձայնել**, չբ. Զանգահարել:

**Հեռապատկեր**, ի, գ. Հեռանկար:

**Հեռատեսիլ** (**Հեռացոյլ**), ի, ներ, գ. Հեռուստացույց:

**Հեռացոյց**, ի, ներ, գ. 1. Հեռադիտակ: 2. Հեռուստացույց:

**Հեստ**, ած. Անհնազանդ, կոշտ:

**Հետաքրքիրներ**, ու, գ. Հետաքրքրասերներ:

**Հետեւիլ**, չբ. Հետևել:

**Հերակալ**, ի, ներ, գ. Ծամկալ:

**Հերատ**, ած. Մազաթափ, ճաղատ:

**Հէք**, ած. Հեգ:

**Հընհընուք**, ի, գ. Մտմտուք:

**Հիմակ**, մկ. Հիմա:

**Հիմակուան**, մկ. Ներկայիս:

**Հիմակուընէ**, մկ. Այժմվանից:

**Հիմակուհիմա**, մկ. Առայժմ, առժամանակ:

**Հինկեկ**, ած. Հնացած, բավականաչափ հին:

**Հիննալ**, չբ. Հնանալ:

**Հիւանդակառք**, ի, եր, գ. Շտապօգնության ավտոմեքենա:

**Հիւլէաբան** (**Հիւլէագէտ**), ի, ներ, գ. Ատոմագետ:

**Հիւլէակայան**, ի, գ. Ատոմակայան:

**Հիւծախտ**, ի, գ. Թոքախտ:

**Հնախօսական**, ած. Հնագիտական:

**Հնչեակ**, ի, գ. Սոնետ:

**Հոգ**, ի, գ. Հոգս:

— **Հոգ ընել** — Անհանգստանալ:

— **Հոգ չէ** — Ոչինչ:

**Հոգեյոյզ**, ած. 1. Հուզական (պաթետիկ): 2. Սրտառուչ:

**Հոդ**, դ. Այդտեղ:

**Հողմնավար**, ած. Հողմավար:

**Հոյլ**, ի, գ. Փունջ, խումբ:

**Հոյր**, ած. Գեր, պարարտ:

**Հոն**, դ. Այնտեղ:

**Հոնկէ**, դ. Այնտեղից:

**Հոնտեղ** (բրբռ.), դ. Այնտեղ:



**Հոսկէ**, դ. Այստեղից:

**Հոս–հոն**, մկ. Այստեղ–այնտեղ:

**Հոսհոս**, ած., Թեթևամիտ, թեթևսոլիկ:

**Հոստեղ** (բրբռ.), դ. Այստեղ:

**Հով**, ու, գ. Քամի, հողմ:

**Հովահար**, ի, գ. Հովհար:

**Հոտեւան**, ած. Հոտավետ:

**Հոտիլ**, չբ. 1. Հոտ արձակել: 2. Նեխել: 3. Դեմքը թթվեցնել: 4. (փխբ.) Նեղանալ:

**Հոտուըտալ**, նբ. Հոտոտել:

**Հունտ**, ի, գ. Հունդ:

**Հուռա՜**, ձ. Ուռա՜:

**Հուսկ**, մկ. Վերջում, հետո:

— **Հուսկ ապա** — Ամենավերջը:

— **Հուսկ բանք** — Վերջին խոսքեր, խրատական հորդոր, պատգամ:

**Հտպիտ**, ի, գ. Խեղկատակ:

**Հրապարակագիր**, գրի, գիրի, գիրներ, գ. Հրապարակախոս:

**Հրապարակագրութիւն**, թեան, գ. Հրապարակախոսություն:

**Հրասայլ**, ի, եր, գ. Տանկ:

**Հրասայլային**, ած. Տանկային:

**Հրասայլաւոր**, ի, գ. Տանկիստ:

**Հրաւիրագիր**, գիրի, գիրեր, գ. Հրավիրատոմս:

**Հրաւիրաթուղթ**, թուղթի, թուղթեր, գ. 1. Ծանուցագիր: 2. Հրավիրատոմս:

## Ձ

**Ձաբռտուք**, ի, գ. 1. Խզբզոց: 2. (փխբ.) Վայրիվերո գրված բան: 3. (փխբ.) Ցնդաբանություն:

**Ձախաւեր**, ած. 1. Անշնորհք, անճարակ: 2. Վատ կատարված: 3. Ձախողակ:

**Ձայնագիր**, գիրի, գիրներ, գ. Ձայնագրիչ:

**Ձայնասփիւռ**, ի, գ. Ռադիո:

**Ձայներիզ**, ի, գ. Կասետ:

**Ձանձրութիւն** (հնց.), թեան, գ. 1. Հոգնություն: 2. Վիշտ: 3. Թախիծ, տաղտկություն, ձանձրույթ:

— **Ձանձրութիւն առնել** (հնց.) — Ձանձրանալ:

**Ձգել**, նբ. Գցել, թողնել:

**Ձգտիլ**, չբ. նբ. Ձգտել:

**Ձեռնադաշնակ**, ի, գ. Ակորդեոն:

**Ձեռնակառք**, ի, եր, գ. Ձեռնասայլակ:

**Ձեռնարկ**, ի, գ. 1. Գործ, ձեռնարկություն, նախաձեռնություն: 2. Միջոցառում: 3. Ուսումնական օժանդակ գիրք:

— **Ձեռք անցընել** — Ձեռք բերել:
— **Ձեռք երկնցնել** — Ձեռք մեկնել, խնդրել:
— **Ձեռք զարնել** — Ձեռք զարկել:
— **Ձեռք հյնալ** — Ձեռք ընկնել:
— **Ձեռք ձգել** — Ձեռք բերել, ճարել:
— **Ձեռք վերցնել** — Ձեռք բարձրացնել:
— **Ձեռքէ ելլել** — Ձեռքից գնալ:
— **Ձեռքէ երթալ** — Ձեռքից գնալ:
— **Ձեռքէն խալսել** — Ձեռքից պրծնել:
— **Ձեռքը գոց** — Ձեռը պինդ, ժլատ:
— **Ձեռքը կարճ** — Աղքատ:
— **Ձեռքը նեղ ըլլալ** — Նեղ վիճակի մեջ լինել:
— **Ձեռքը պագնել** — Ձեռքը համբուրել:
— **Ձեռքը տաք** — Ունևոր:
**Ձմեռնային**, ած. Ձմեռային:
**Ձմերանոց**, ի, գ. Ձմեռանոց:
**Ձմերել**, չբ. Ձմեռել:

## Ղ

**Ղամբար** (**Ղամպար**) ի, գ. Լապտեր, տե՛ս Լամպար:
**Ղողել**, նբ. Յարթել, ողորկել:
**Ղրկել**, նբ. Ուղարկել:
**Ղրուշ** (**Ղուրուշ**) ի, գ. Տաճկական դրամական միավոր = 40 փարայի:
**Ղօղել**, նբ. 1. Թաքցնել: 2. Ծածկել:
**Ղօղիլ**, չբ. 1. Թաքնվել: 2. Ծածկվել:

## Ճ

**Ճաթ**, ի, գ. Կորեկհաց:
**Ճաթել** (**Ճաթիլ**), չբ. 1. Ճաքել: 2. (փխբ.) Բարկանալ: 3. (փխբ.) Սաստիկ ծիծաղել:
**Ճախճախուտ**, ի, գ. Ճահճուտ:
**Ճակատամուտք**, ի, եր, գ. Շքամուտք:
**Ճահ**, ած. Պատշաճ, հարմար:
**Ճահուկ**, ի, գ. Աղվեսների խումբ:
**Ճամբայ** (**Ճամփայ**), ի, գ. Ճամփա:
— **Ճամբայ առնել** — Ճամփա ընկնել:
**Ճանչնալ**, նբ. Ճանաչել:
**Ճապուկ**, ած. Ճարպիկ, ճկուն:
**Ճատրակ**, ի, գ. Շախմատ:



**Ճարակ**, ի, գ. Ուտելիք, անասնակեր:
**Ճարտարագէտ**, ի, ներ, գ. Ինժեներ:
**Ճեմարան**, ի, գ. Ակադեմիա, բարձրագույն ուսումնական հաստատություն:
**Ճենթլմէն**, ի, գ. Ջենտլմեն:
**Ճեպակառք** (հնց.), ի, եր, գ. Ճեպընթաց:
**Ճերմակ**, ած. Սպիտակ:
**Ճերմկիլ** (**Ճերմկնալ**), չբ. Սպիտակել:
**Ճիտ**, ճիտի, գ. Վիզ, պարանոց:
— **Ճիտին պարտք** — Նվիրական պարտք:
— **Ճիտը ծուռ** — Վիզը ծուռ:
**Ճկիլ**, չբ. Ճկվել:
**Ճկիկ**, ի, գ. Թակ, բակելու փոքրիկ հարմարանք:
**Ճնշակ**, ի, գ. Կոմպրեսոր:
**Ճչակ**, ի, գ. Ձայնային ազդանշան:
**Ճպլտուն**, ած. Խատուտիկ, փայլփլուն:
**Ճռզած**, ած. Վտիտ, նիհար:

## Մ

**Մաթեմաթիկ**, ի, գ. Մաթեմատիկա:
**Մախր**, ի, գ. Մարխ:
**Մականուն**, անունի, գ. Ազգանուն:
**Մակուկավար**, ի, գ. Մակույկավար:
**Մահակառք**, ի, եր, գ. Դիակառք:
**Մահօրէն**, մկ. Մահվան պես:
**Մամիկ**, ի, գ. Մեծ մայր, տատիկ:
**Մամուկ**, ի, գ. Սարդ:
**Մանիշակ**, ի, գ. Մանուշակ:
**Մանիշակագոյն**, ած. Մանուշակագույն:
**Մանկամարդ**, ած. Դեռատի:
**Մանկապարտիզպանուհի**, ի, գ. 1. Մանկապարտեզի տնօրենուհի: 2. Դաստիարակչուհի:
**Մանկուհի**, ի, գ. Մանուկ աղջիկ, աղջնակ:
**Մանկունի**, ի, գ. Մանուկների համար գրված չափածո գործերի ժողովածու:
**Մանչ**, ի, գ. 1. Արական սեռի երեխա: 2. Փոքրահասակ ծառա:
**Մանրագիր**, գիրի, գիրեր, գ. Փոքրատառ:
**Մանրադէպ**, ի, եր, գ. 1. Փոքր, աննշան դեպք, պատահար: 2. Անեկդոտ:
**Մանրալուր**, ի, եր, գ. Յակիրճ տեղեկություն (խրոնիկա):
**Մանրարոպէ**, ի, գ. Վայրկյան:
**Մանրերկրորդ**, ի, գ. Վայրկյան, երկվայրկյան:

**Մանրկեկ**, ած. Փոքրավուն:
**Մաշիլ**, չբ. Մաշվել:
**Մատենախօսութիւն**, թեան, գ. Գրախոսություն:
**Մատնիք**, ի, գ. Մատանի:
**Մարդամեքենայ**, ի, գ. Ռոբոտ:
**Մարել**, չբ. Ուշաթափվել, ծիծաղից թուլանալ:
**Մարթել**, նբ. 1. Ճարել: 2. Յնարել: 3. Կարենալ:
**Մարմաշ**, ի, գ. Նուրբ շղարշ:
**Մարմնակրթութիւն**, թեան, գ. 1. Մարմնամարզություն: 2. Ֆիզկուլտուրա:
**Մարտավարութիւն**, թեան, գ. Տակտիկա:
**Մաքման** (եբր.), ի, գ. Սավան, պաստառ:
— **Մաքուրի առնել** — Մաքրագրել:
**Մաքսարան** (հզվդ.), ի, գ. Մաքսատուն:
**Մեթոտ**, ի, գ. Մեթոդ:
**Մեթր**, ի, գ. Մետր:
**Մեթրօ**, ոյի, գ. Մետրո:
**Մելան**, ի, գ. Թանաք:
**Մեծ հայր**, հօր, գ. Պապ:
**Մեծ մայր**, մօր, գ. Տատ, մամիկ, նան:
**Մեծկակ** (**Մեծկեկ**), ած. Մեծավուն, բավականաչափ մեծ:
**Մեծղի**, ած. Խոշոր, վիթխարի:
**Մեծնալ**, չբ. Մեծանալ:
**Մեկնիլ**, չբ. Մեկնել:
**Մեղադրագիր**, գիրի, գիրեր, գ. Մեղադրական եզրակացություն:
**Մեղեսիկ**, ի, գ. Թանկագին քարի տեսակ՝ մանուշակագույն, ամեթիստ:
**Մեղմիւ**, մկ. Մեղմորեն:
**Մեղք**, վ. Ափսոս:
**Մեճիտիէ**, ի, գ. Մեջիդիե. քսան ղուրուշի արժողությամբ արծաթադրամ Թուրքիայում:
**Մենատուն**, տունի, տուներ, գ. Մենաստան:
**Մեռելական**, ած. Մեռելային:
**Մետալ**, ի, գ. Մեդալ, կրծքանշան:
**Մետասաներորդ**, 1. թ. Տասնմեկերորդ: 2. ած. Վերջին:
— **Մետասաներորդ ժամուն** — Վերջին պահին:
**Մեքենագէտ**, ի, ներ, գ. Մեխանիկ:
**Մեքենագիր**, 1. ած. Մեքենագրած: 2. գիրի, գիրներ, գ. Մեքենագրող:
**Մեքենական**, ած. Մեքենայական:
— **Մէկ աչքով լալ** — Յենց այնպես՝ կեղծ լաց լինել:
— **Մէկ կողմ ձգել** — Մի կողմ գցել, շպրտել:



— **Մէկ շապիկի մէջ քնանալ** — Մտերիմ լինել:
— **Մէկ օրէն միւսը** — Օրերից մի օր:
— **Մէկուն միտքը ջրել** — Մեկի կարծիքը հերքել:
— **Մէյ–մէկ** (բրբռ.) — Մեկ–մեկ, մեկական:
— **Մէյ մը** (բրբռ.) — 1. Մի անգամ: 2. Մեկ էլ:
— **Մէյ մըն ալ** (բրբռ.) — Մեկ էլ, հանկարծ:
**Մէկդի**, 1. մկ. Մի կողմ: 2. կ. Չհաշված, բացի:
**Մէկզմէկ**, դ. Մեկմեկու, միմյանց:
**Մէկէն**, մկ. Իսկույն, միանգամից:
**Մէկէնիմէկ**, մկ. Միանգամից:
**Մթննալ**, չբ. Մթնել:
**Միլիառ**, թ. Միլիարդ:
**Մինակուկ**, ած. Մենակ, միայնակ:
**Միջազգայնականութիւն**, թեան, գ. Ինտերնացիոնալիզմ:
**Միջնորդչէք**, ի, եր, գ. Միջնորդության վարձ:
**Միջօրէտք** (հնց.), ի, եր, գ. Յետմիջօրե:
**Միսթիք**, ած. Միստիկ, միստիկական:
**Միս–մինակ**, մկ. ած. Մեն–մենակ, միայնակ:
**Միսիոնար**, ի, գ. Միսիոներ:
**Միւսիւլման**, ի, գ. Մուսուլման:
**Մղեղ**, ի, գ. Յարդի փոշին, մանրուքը:
**Մնացորդաց**, ի, գ. 1. Մնացածներ: 2. (փխբ.) Բեկոր, փշրանք:
**Մողէզ**, ի, գ. Մողես:
**Մոմիա**, յի, գ. Մումիա:
**Մոյթ**, ի, գ. Պահող փայտ, նեցուկ, հենարան:
**Մոռնալ**, նբ. Մոռանալ:
**Մորթ**, ի, գ. 1. Մաշկ: 2. Մորթի: 3. Կեղև, արտաքին:
**Մորճ**, ի, ած. Դալար, կանաչ:
**Մուճակ**, ի, գ. Զարդարուն ոտնաման:
**Մսիլ**, չբ. Մրսել:
**Մտիկ ընել**, նբ. 1. Լսել, ականջ դնել: 2. Նայել, դիտել:
**Մրցանիշ**, ի, գ. Ռեկորդ:
**Մրցանք**, ի, գ. Մրցություն:
**Մրցատեան**, ի, գ. Ժյուրի:
**Մօտիկնալ**, չբ. Մոտենալ:

## Յ

**Յածել**, նբ. Պտտեցնել, դես ու դեն շրջել (հայացքը):
**Յածիլ**, չբ. Ման գալ, շրջել, թափառել:

**Յածում**, ի, գ. Հածելը:
**Յականէ–յանուանէ**, մկ. Անուն առ անուն, մեկ առ մեկ:
**Յաճախանք**, ի, գ. 1. Հաճախություն, հաճախանալը: 2. Հաճախելը:
**Յամենալ** (**Յամել**), չբ. Ուշանալ, հապաղել:
**Յամուրդ**, ի, գ. Համեցում, ուշացում, դանդաղում:
**Յամրաբար**, մկ. Սեղմորեն, համր կերպով:
**Յայնժամ**, մկ. Այնժամ:
**Յայտագիր**, գիրի, գիրեր, գ. Ծրագիր, հայտարարություն:
**Յայրատ**, ած. 1. Կրքոտ, վավաշոտ, ցանկասեր: 2. Անբարո, լիրբ:
**Յանգիլ**, չբ. Հանգել
**Յանկերգ**, ի, գ. Կրկներգ:
**Յանկուցիչ**, ած. Գրավիչ:
**Յանձնախումբ**, խումբի, խումբեր, գ. Հանձնաժողով:
**Յանուն**, կ. 1. Անունով, անունից: 2. Համար:
**Յաչաղկոտ**, ած. Խանդոտ, նախանձոտ:
**Յառաջագունէ**, մկ. Ի սկզբանէ, փորձից անկախ:
**Յառաջանալ**, չբ. 1. Առաջանալ, առաջ շարժվել: 2. Զարգանալ: 3. Ծագել:
**Յառաջուց**, մկ., Սկզբից:
**Յաւելուլ**, նբ. Հավելել, ավելացնել:
**Յափրանք**, ի, գ. 1. Հագուրդ, կշտացում: 2. Ձանձրույթ, տաղտուկ: 3. Շփացում: 4. Լրբություն:
**Յեղակարծ**, մկ. ած. Հանկարծակի, անսպասելի:
**Յեռ**, ած. Իրար ծուլված, իրար մոտ շարված, գամված:
**Յիմարաբոյժ**, ի, ներ, գ. Հոգեբույժ:
**Յիմարատուն** (**Յիմարանոց**), տունի, տան, տուներ, գ. Գժանոց:
**Յղանալ**, 1. չբ. Հղիանալ: 2. նբ. Հնարել, մտքով ստեղծել:
**Յղացք**, ի, գ. Հղացում:
**Յղութիւն**, թեան, գ. Հղիություն, հղի լինելը:
— **Յոգնութիւն առնել** — Հոգնել:
**Յոյլ**, ած. Ծույլ, դանդաղաշարժ:
**Յուլօրէն**, մկ. Ծուլորեն, մեղկորեն:
**Յօժարիլ**, չբ. Համաձայնել:
**Յօտել**, նբ. Ճյուղը կամ վազը կտրել:

## Ն

**Նախածին**, ած. Առաջնածին:
**Նամակատուն**, տունի, տուներ, գ. Փոստ:
**Նամէտ**, ած. Թաց:
**Նայ**, ած. Թոնուտ, անձրևային:



**Նայիլ**, չբ. Նայել:
**Նարտ**, ի, գ. Նարդի:
**Նարօտ**, ի, գ. 1. Գույն, ներկ: 2. Գունավոր հյուսվածք, գույնզգույն թել:
**Նաւակայք**, ի, գ. Բնական ծովախորշ:
**Նաւասարդ**, ի, գ. Ըստ հին հայկական տոմարի՝ տարվա առաջին ամիսը:
**Նեղենալ**, չբ. Նեղանալ, նեղսրտել:
**Նեղնալ**, չբ. 1. Նեղանալ: 2. Նեղ դառնալ:
**Ներկալել**, նբ. 1. Ներս ընդունել, 2. Շրջափակել:
**Ներհայեցողութիւն**, թեան, գ. Ինտուիցիա, ներըմբռնում:
**Ներոյժ**, ի, գ. Ներուժ, կարողականություն:
**Ներսիդին**, մկ. Ներսը, ներսի կողմը:
**Նիհարկեկ**, ած. Նիհարավուն:
**Նկան** (**Նկանակ**), ի, գ. Փոքրիկ հաց, բլիթ, ամբողջ կտոր:
— **Նկատողութեան առնել** — Նկատի ունենալ:
**Ննջազգեստ**, ի, գ. Գիշերազգեստ:
**Նշանտուք**, ի, եր, գ. Նշանդրեք:
**Նորէն**, մկ. Նորից, դարձյալ:
**Նուագահան**, ի, ներ, գ. Երաժիշտ, երգահան, կոմպոզիտոր:
**Նուագավար**, ի, ներ, գ. Դիրիժոր:
**Նուարտան**, ի, գ. Ծածկոց:
**Նուս**, ի, գ. Կռնակ, թիկնամեջ (եզան կամ ձիու):
**Նպարատուն**, տունի, տուներ, գ. Նպարեղենի խանութ, նպարախանութ:
**Նրբասրինգ**, սրինգի, գ. Կլառնետ:

## Շ

**Շաբաթագլուխ**, գլխու, գ. Շաբաթվա սկիզբը:
**Շաբաթավերջ**, ի, եր, գ. Շաբաթվա վերջ:
**Շահարիկ**, 1. ի, գ. Անտառային ոգի: 2. ած. Անտառային, անտառում բնակվող:
**Շառայլ**, ի, գ. Պայծառ լույս:
**Շատկեկ**, ած. Բավական շատ:
**Շատնալ**, չբ. Շատանալ:
**Շատոնց**, մկ. Վաղուց:
— **Շատ հեղ** — Շատ անգամ:
**Շարժակ**, 1. ի, գ. Շարժիչ, մոտոր: 2. ած. Որևէ բան շարժման մեջ դնող:
**Շարժանկար**, ի, գ. Շարժապատկեր, կինոնկար:
**Շարժիլ**, չբ. 1. Երերալ: 2. Տեղափոխվել:
**Շեշտ**, ած. Շեշտակի, կտրուկ, ուղիղ:
**Շերաս**, ի, գ. Շերամ:
**Շէննալ**, չբ. Շենանալ:

**Շիլլինկ**, ի, գ. Շիլլինգ:

— **Շին տառ** — Արաբական տառ, որի ձեռագիր տարբերակը նման է աղեղի:

**Շինութիւն**, թեան, գ. 1. Կառույց: 2. Արտադրություն:

**Շիտակ**, ած. Ճիշտ:

**Շլնիք (Շլինք)**, ի, գ. Շլինք, ծիտ, պարանոց:

**Շնական**, ած. 1. Շնային: 2. Ցինիկ:

**Շոգեկառք**, ի, եր, գ. Շոգեքարշ:

**Շողինք**, ի, գ. Շողիք:

**Շոքոլա (Տուրմ)**, յի, գ. Շոկոլադ:

**Շուարիլ**, չբ. Ապշել, զարմանալ:

**Շուլլուիլ**, չբ. Փաթաթվել մի բանի կամ մի բանի մեջ, մի բանով փաթաթվել:

**Շուկեւոր** (հզվդ.), ի, գ. Շուկայում առևտուր անող մարդ:

**Շտապով**, մկ. Արագ:

**Շտկել**, նբ. 1. Ուղղել: 2. Զարդարել: 3. Կարգի բերել, հարդարել: 4. Նորոգել:

**Շտկուիլ**, չբ. Ուղղվել:

**Շտկռտել**, նբ. Ուղղել, դզմզել:

**Շրջափակ**, ի, գ. Չորս կողմը կառուցված պատ՝ պատնեշ:

**Շրջափոխութիւն**, թեան, գ. Բարեշրջում (էվոլյուցիա):

**Շրջիլ**, չբ. Շրջել, զբոսնել:

## Ո

**Ոգեվար**, ած. 1. Հոգեվարքի մեջ գտնվող: 2. Մարող, անհետացող:

**Ոեւէ**, դ. Որևէ:

**Ողիմպիական**, ած. Օլիմպիական:

**Ողիմպոս**, ի, գ. Օլիմպոս:

**Ողնայար**, ի, գ. Ողնաշար:

**Ողորկաթուղթ**, թուղթի, թուղթեր, գ. Հղկաթուղթ:

**Ողորմահաց**, ի, գ. Հոգեհաց:

**Ոճրագէտ**, ի, ներ, գ. Քրեագետ:

**Ոճրագիտութիւն**, թեան, գ. Քրեագիտություն:

— **Ոչ ապաքէն** — Չէ՞ որ:

— **Ոչ եւս է** — Չկա, հանգուցյալ է:

**Ոչնչապաշտութիւն (Ոչնչականութիւն)**, թեան, գ. Նիհիլիզմ:

**Ովասիս**, ի, գ. Օազիս:

— **Ոտքը գետնին զարնել** — Ոտքը գետնին խփել:

— **Ոտքի անցընել** — Ոտքի տակ տալ:

— **Ոտքի ելլել** — Ոտքի ելնել:

— **Ոտքի տակ երթալ** — Ոտքի տակ գնալ:

**Որմանկար**, ի, գ. Որմնանկար:



**Որմաքանդակ**, ի, գ. Որմնաքանդակ:

**Որմէհետէ** (հնց.), մկ. Որից հետո, այնուհետև:

**Որոշապէս**, մկ. Որոշակիորեն:

**Ուժանակ**, ի, գ. Դինամիտ:

**Ուժով–ուժով**, ած. մկ. Բարձր–բարձր:

**Ուծանալ**, չբ. Զուլվել, ապազգայնանալ, այլասերվել:

**Ուղխ**, ի, գ. Առատ հոսող ջուր:

**Ուղխօրէն**, մկ. Առատորեն, հեղեղի նման:

**Ուռիլ**, չբ. Ուռչել:

**Ուսկից** (հնց.), դ. Որտեղից:

**Ուսուցչապետ**, ի, եր, գ. 1. Ավագ ուսուցիչ: 2. Ուսմասվար: 3. Պրոֆեսոր:

**Ուսուցչարան**, ի, գ. Ուսուցչանոց:

**Ոքոզ**, ի, գ. Մի տեսակ բույս՝ փշոտ գլխիկներով:

## Չ

**Չա՛ք**, ձ. Կոտրվելու ձայն, ճայթյուն:

**Չախել**, նբ. Հանդիմանել, սաստել:

**Չանչուլ**, ի, գ. Թաթ:

**Չարչրկել**, նբ. Անընդհատ չարչարել:

**Չարօրէն**, մկ. Չարաչար:

— **Չափ զարնել** — Չափ տալ:

— **Չափէ դուրս** — Չափից դուրս:

— **Չափը գիտնալ** — Չափն իմանալ:

— **Չափը ճանչնալ** — Չափը ճանաչել:

— **Չըլլայ որ** — Չլինի թե, չլինի այնպես, որ...

**Չորնալ**, չբ. Չորանալ:

## Պ

**Պագնել**, նբ. Համբուրել:

**Պակուցիչ**, ած. Սարսափելի:

**Պակուցում**, ումի, ման, գ. Սարսափ:

**Պակսիլ**, չբ. Պակասել:

**Պահ**, ու, գ. 1. Դասաժամ: 2. Կարճատև ժամանակ, ակնթարթ:

**Պահարան**, ի, գ. 1. Մի բան պահելու տեղ: 2. Նամակածրար: 3. Պայուսակ:

**Պահուըտիլ**, չբ. Թաքնվել:

**Պահուըտուք**, ի, գ. Պահմտոցի:

**Պաղ**, 1. ած. Սառը, ցուրտ: 2. ի, գ. Սառույց:

— **Պաղ աչքով նայիլ** — Համակրանք չունենալ:

— **Պաղած ապուր** — 1. Սառած, անդուրեկան: 2. Շշմած:

— **Պաղ առնել** — Մրսել, ցրտահարվել:
— **Պաղ երկաթ ծեծել** — Անիմաստ գործով զբաղվել:
— **Պաղ խոսք ըսել** — Հանդիմանել:
**Պաղարան**, ի, գ. Սառնարան:
**Պաղարիւն**, ած. Սառնարյուն:
**Պաղիլ**, չբ. Պաղել, սառչել:
**Պայ**, ի, գ. 1. Առասպելական կենդանի՝ մարդուց սերված: 2. Դիցանույշ:
**Պայթիլ**, չբ. Պայթել:
**Պայիկ** ի, գ. Առասպելական ոգի, ջրահարս, հավերժահարս:
**Պանան**, ի, գ. Բանան, ադամաթուզ:
**Պապա**, ած. Ավագ, մեծ, հասակավոր:
— **Պապա մարդ** (խսկց.) – Հարգարժան մարդ:
**Պապուկ**[1], ի, գ. 1. Խեղճ ծերուկ: 2. Ծեր մուրացկան: 3. Պապիկ:
**Պապուկ**[2], ի, գ. Խոնավ տեղեր ապրող գորշավուն միջատ:
**Պառաւիլ**, չբ. Ծերանալ:
**Պառկիլ**, չբ. Պառկել:
**Պասմա**, յի, գ. Չիթ:
**Պատան** (**Պատանք**), ի, գ. Պատանք:
**Պաստառ**, ի, գ. 1. էկրան: 2. (փխբ.) Երկինք:
**Պատարուն**, ած. Լեցուն:
**Պատիւ**, տիւի, գ. Պատիվ:
— **Պատիւ բռնել** — Պատվի կանգնել:
— **Պատիւէ ձգել** — Պատվից գցել:
— **Պատիւը ճանչնալ** — Պատիվը ճանաչել:
**Պատկառիլ**, չբ. Պատկառել:
**Պատկերահան**, ի, ներ, գ. Լուսանկարիչ:
**Պատկերասփիւռ**, ի, գ. Հեռուստացույց:
**Պատշգամ**, ի, գ. Պատշգամբ:
**Պարագնաց**, ած. Շրջմոլիկ, թափառական:
**Պարապ**, ած. 1. Դատարկ: 2. Անօգուտ, ավելորդ:
— **Պարապ աշխատանք** — Իզուր աշխատանք:
— **Պարապ տեղը** — Զուր տեղը, անտեղի:
— **Պարապի երթալ** — Իզուր անցնել:
— **Պարապի հոսիլ** — Զուր հոսել, իզուր անցնել:
**Պարապիլ**, չբ. Պարապել, զբաղվել, հետևել:
**Պարապնդել**, նբ. Համակել, պատել:
**Պարզկեկ**, ած. Պարզավուն:
**Պարզօրէն**, մկ. Պարզապես:
**Պարծիլ**, չբ. Պարծենալ:



**Պարոնուհի**, ի, գ. Տիրուհի, կին պարոն:
**Պարպել**, նբ. Դատարկել:
**Պարտասուն**, ած. Ուժասպառ, շատ հոգնած:
**Պարտիլ**, չբ. Պարտավոր լինել:
**Պզտիկ**, ած. Փոքրիկ, պստիկ:
**Պէ՜**, ձ. է՜, դե՜ (դժգոհություն արտահայտող բացականչություն):
**Պիշ**, մկ. Ուշադիր:
**Պիշ–պիշ**, մկ. Ուշադիր:
**Պիստակ**, ի, գ. Գետնանուշ:
**Պլլել**, նբ. 1. Պատռտել, փաթաթել: 2. Մխրճել: 3. Խորել:
**Պլլուիլ**, կբ. Պլլվել, փաթաթվել:
**Պճլտուն**, ած. Փայլփլուն:
**Պնդերակութիւն**, թեան, գ. Կարծրերակություն (աթերոսկլերոզ):
**Պողովատ** (հնց.), ի, գ. Պողպատ:
— **Պոչ բռնել** — Հերթ կանգնել:
— **Պոչը բաց ձգել** — Ձեռքից բաց թողնել:
— **Պոչին կապուիլ** — Ամեն ինչով հետևել մեկին:
**Պոչիւն**, ի, գ. Բառաչ:
**Պոռալ**, նբ. Գոռալ, բղավել:
**Պոռոչ**, ի, գ. Բառաչ:
**Պտըտիլ**, չբ. 1. Պտտվել: 2. Շրջագայել, զբոսնել, երթևեկել:
**Պտղիլ**, չբ. Պտղավորվել:
**Պտոյտ**, ի, գ. 1. Զբոսանք, շրջագայություն: 2. Պտտվելը:
**Պրոնզ**, ի, գ. Բրոնզ:

## Ջ

**Ջաղք**, ի, գ. Տեղատարափ կարճատև անձրև:
**Ջամբել**, նբ. 1. Կերակրել: 2. Մատակարարել: 3. (փխբ.) Ներշնչել:
**Ջայլ**, ի, գ. 1. Եղերամայրերի խումբ: 2. Սուգ, լաց:
**Ջեռիլ**, չբ. 1. Տաքանալ, 2. Բորբոքվել:
**Ջերմանոց**, ի, գ. Ջերմոց:
**Ջլախտաբոյժ**, ի, ներ, գ. Նյարդաբույժ (նևրոպաթոլոգ):
**Ջլեբաց**, ած. Սերկանդամ:
**Ջղաբանութիւն**, թեան, գ. Նյարդաբանություն:
**Ջոլիր**, ի, գ. Ոհմակ, խումբ:
**Ջոջ**, ած. Մեծ, մեծավոր:
— **Ջուր առնել** — Լոգանք ընդունել:
— **Ջուրը առուն ձգել** — Գործերը կարգի գցել:
— **Ջուրի մէջ (ըլլալ)** — Ընքացքի մեջ լինել:

— **Ջուրին երեսը ելլել** — Ջրի երես ելնել:
— **Ջուրն իյնալ** — Ջուրն ընկնել:
**Ջրաղացք**, ի, գ. Ջրաղաց:
**Ջրամոյն**, ած. Ջրախեղդ, ջրասույզ:
**Ջրել**, նբ. 1. Ջուր տալ: 2. Ջերքել, ջնջել:
**Ջրտուք**, ի, գ. Ջուր տալը, ջրելը:

## Ռ

**Ռազմավար**, ի, ներ, գ. Ստրատեգ:
**Ռազմավարութիւն**, թեան, գ. Ստրատեգիա:
**Ռատիօ**, ոյի, գ. Ռադիո, ձայնասփյուռ:
**Ռոմանթիզմ**, ի, գ. Ռոմանտիզմ, վիպապաշտություն:
**Ռոմանթիք**, գ. Ռոմանտիկ, վիպապաշտ:
**Ռոշնութիւն**, թեան, գ. 1. Լուսավորություն, պայծառություն: 2. Անկեղծություն:

## Ս

**Սադուռնական**, ի, գ. Ցոփ, սանձարձակ խրախճանքի օրեր հեթանոսական շրջանում՝ Սատուրնի (ժամանակի և պտղաբերության աստծու) անունով:
**Սակ**, ի, գ. Գին:
**Սակարան**, ի, գ. Բորսա, բիրժա:
**Սակր**, ի, գ. Տապար, կացին:
**Սանդուխ** (**Սանդուղ**), ի, գ. Սանդուղք:
**Սանկ** (բրբռ.), դ. Այսպես:
**Սանտալ**, ի, գ. Սանդալ, ոտնաման:
**Սանտր**, ի, գ. Սանր:
**Սառ**, ի, գ. 1. Սառույց: 2. Սառնամանիք:
**Սառնակոյտ**, ի, գ. Սառցակույտ:
**Սառնանոյշ** (**Սառնանուշ**) ի, գ. Պաղպաղակ:
**Սառուցեալ**, ած. Սառած:
**Սատափ**, ի, գ. Սադափ:
**Սարբինայ**, յի, գ. Խաղողի որթը, ծառերի ճյուղերը բարձրացնելու նեցուկ, փայտե ձող:
**Սափրատուն**, տունի, տուներ, գ. Վարսավիրանոց:
**Սենեկային**, ած. Կամերային:
**Սեպել**, նբ. 1. Համարել, հաշվի առնել: 2. Կարծել:
**Սեւնալ**, չբ. Սևանալ:
**Սէրով**, մկ. Սիրով:
**Սըկէ** (բրբռ.), դ. Այստեղից:
**Սթափիլ**, չբ. Սթափվել:



**Սիրաջեր**, ած. Սիրով ջերմացած, սիրավառ:
**Սիրահարիլ**, չբ. Սիրահարվել:
**Սիրտխառնուք**, ի, գ. Սրտխառնուք:
— **Սիրտը լայն բռնել** — Համբերատար լինել:
— **Սիրտ հատցնել** — 1. Սրտմաշուք ունենալ: 2. Եռանդով աշխատել:
— **Սիրտէն երթալ** — Արգահատել, խղճալ:
— **Սիրտը անցնիլ** — Նվաղել:
— **Սիրտը արիւն լալ** — Շատ ցավ զգալ:
— **Սիրտը փրթիլ** — Շատ վախ զգալ:
— **Սիրտի տէր ըլլալ** — 1. Սիրո զգացում ունենալ: 2. Քաջասիրտ ազնիվ մեկը լինել:
**Սլքտալ**, չբ. Դանդաղ քայլերով շրջել, թափառել:
**Սխալանք**, ի, գ. 1. Սխալմունք: 2. Թերություն:
**Սխալիլ**, չբ. Սխալվել:
**Սկսիլ**, նբ. Սկսել:
**Սղութիւն**, թեան, գ. Թանկություն:
**Սմսեղուկ**, ած. 1. Կեղծավոր, տակից գործող: 2. Կեղծիք պարունակող: 3. Նենգավոր: 4. Ողորմելի:
**Սնտուկ** (**Սնդուկ**), ի, գ. Սնդուկ:
**Սոթուըտիլ**, չբ. (բրբռ.) Փոքրանալ:
**Սոթտել**, նբ. Թևերը փեշերը և այլն, հավաքել, քշտել:
**Սորվիլ**, նբ. սովորել:
**Սուղ**, ած. 1. Քիչ: 2. Նեղ: 3. Թանկ:
— **Սուղ վանկ** — Գաղտնավանկ:
— **Սուղի նստիլ** — Թանկ նստել:
**Սպաննել**, նբ. Սպանել:
**Ստակ**, ի, գ. Փող, դրամ:
**Ստամբակ**, ած. Փողոցային, լակոտ:
**Ստեպղին**, ի, գ. Գազար:
**Ստերլին** (**Ստերլինկ**), ի, գ. Ստեռլինգ:
**Ստորագծել**, նբ. Ընդգծել:
**Ստորակայ**, ած. Ստորադաս:
**Ստորնանալ**, չբ. Ստորանալ:
**Ստորնացուցիչ**, ած. Ստորացուցիչ:
**Ստորնութիւն**, թեան, գ. Ստորություն:
**Ստուգանմոյշ**, ի, գ. Չափանմուշ (էտալոն):
**Սրտագրութիւն**, թեան, գ. Կարդիոգրամա:
**Սրտմտիլ**, չբ. Սրտմտել:
**Սրտնեղիլ**, չբ. Սրտնեղել:

**Սփիւռ**, 1. ի, գ. Տարածություն: 2. ած. Սփռված:
**Սփոր** (օտր.), ի, գ. Սպորտ:

## Վ

**Վազվռտուք**, ի, գ. Վազվզոց:
**Վախնալ**, չբ. Վախենալ:
**Վայլել**, չբ. Սազել, պատշաճել:
**Վայրաշարժ**, ի, ներ, գ. Շոգեքարշ, էլեկտրաքարշ, ջերմաքարշ (լոկոմոտիվ):
**Վայրափակ**, ած. Շրջափակված, սահմանափակված:
**Վայրկեան**, ի, գ. Րոպե:
**Վասնզի**, շ. 1. Որովհետև: 2. Որպեսզի:
**Վատ**, ած. Ստոր, անբարո, դավաճան:
**Վար**, 1. ած. Ցած, ստորին: 2. մկ. Դեպի, տակ, ներքևը: 3. ած. Ստոր:
— **Վար առնել** — Իջեցնել, գցել, կործանել:
— **Վար բռնել** — Նվազ հարգանք ցույց տալ:
— **Վար դնել** — Ցած դնել:
**Վարանք**, ի, գ. Երկընտրանք, անհամարձակություն:
**Վարդապետական**, ած. Դոգմատիկ:
**Վարդապետութիւն**, թեան, գ. Ուսմունք (համակարգ):
**Վարժատուն**, տունի, տուներ, գ. Վարժարան:
**Վարիչ**, ի, գ. Վարորդ:
**Վարձակառք**, ի, եր, գ. Տաքսի:
**Վարնոց**, ած. 1. Ստորին տեսակի, էժան: 2. Անկիրթ, գռեհիկ:
**Վեհաժողով**, ի, գ. Դատաստանական մարմին, կոնգրես:
**Վեստ**, ած. Ազատ, ազնվածին:
**Վերաբերիլ**, չբ. 1. Վերաբերել, վերաբերվել: 2. Պատկանել: 3. Պատշաճել:
**Վերամուտ**, ի, եր, գ. Ուսումնական տարվա սկիզբ:
**Վերացապաշտութիւն**, թեան, գ. Աբստրակցիոնիզմ:
**Վերաքաղ**, ի, եր, գ. Կրկնություն:
**Վերջնախաղ**, ի, եր, գ. Ավարտախաղ (ֆինալ):
**Վկայագիր**, գիրի, գիրներ, գ. Վկայական:
**Վռնտել**, նբ. Վռնդել:
**Վրայ**, կ. 1. Առարկայի վերևի կամ արտաքին կողմը: 2. Մասին, վերաբերյալ, նկատմամբ:
**Վրանբաց**, ած. Անհամեստ, անպարկեշտ:

## Տ

**Տագր**, ի, գ. Տեգր:
**Տակաւ**, ած. մկ. Կամաց–կամաց, աստիճանաբար:



**Տակաւ առ տակաւ**, մկ. Աստիճանաբար:
**Տապաստ**, ած. Փռված, ընկած, մեռած:
**Տապլտկիլ**, չբ. 1. Տանջվել, կոխկռտվել: 2. Թավալվել:
**Տարեւոր**, ած. գ. Տարիքն առած, ծերունի:
**Տարհամոզել**, նբ. Ետ համոզել, տեսակետը փոխել տալ:
**Տարուէ–տարի**, մկ. Տարեցտարի:
**Տարվիշ** (հնց.) (**Դերվիշ**), ի, գ. Դերվիշ:
**Տարօրէն**, մկ. Արտասովոր, տարօրինակ:
**Տարտղնել**, նբ. 1. Ցիրուցան անել: 2. Բաժանել: 3. Տարբեր տեղեր դնել, տեղավորել:
**Տարտղնիլ**, չբ. 1. Տարածվել, ցիրուցան լինել: 2. Բաժանվել:
**Տափան**, ի, գ. Գյուղատնտեսական գործիք՝ արտի երեսը հարթեցնելու համար:
**Տափնել**, նբ. Տափանել, տրորել:
**Տաքնալ**, չբ. Տաքանալ:
**Տեղիք**, ի, ներ, գ. 1. Տեղեր: 2. Պատճառ, շարժառիթ:
**Տեսլական**, 1. ած. Երևակայական: 2. ի, գ. Երևութական պատկեր, մտատիպար:
**Տեսլապաշտ**, ի, ներ, գ. ած. Գաղափարապաշտ:
**Տէր բայի**, ի, գ. Ենթակա:
**Տէր պապա**, յի, գ. 1. Տերտեր: 2. (փխբ.) Միջնորդ, կավատ:
**Տժգոյն**, ած. Դժգույն:
**Տիար**, Տեր, տյար, պարոն (հարգական դիմելաձև):
**Տինճ** (բրբռ.), ած. Հանդարտ, հանգիստ, դինջ:
**Տխրունի**, ի, գ. Մահախոսական:
**Տղաբերք**, ի, եր, գ. Երկունք, երեխա բերելը:
**Տղայ**, ի, գ. 1. Արական սեռի երեխա, մանչ: 2. Ընդհանրապես երեխա:
**Տղայութիւն**, թեան, գ. Երեխայություն, մանկամտություն:
**Տղեկ**, գ. Փոքրիկ տղա, մանչուկ:
**Տմոյն**, ած. 1. Գունատ, աղոտ: 2. Մռայլ: 3. Տգեղ:
**Տնտնալ**, չբ. 1. Ծանր շարժվել: 2. Դանդաղ մտածել: 3. Հապաղել, վարանել:
**Տնօրէնուհի**, ի, գ. Կին տնօրեն:
**Տոլար**, ի, գ. Դոլար:
**Տոռն**, ի, գ. 1. Չվան, պարան, թոկ: 2. Կապանք, շղթա:
**Տուրեւառ**, ի, եր, գ. Առևտուր:
**Տուրմ**, ի, եր, գ. Շոկոլադ:
**Տոքթոր**, ի, գ. 1. Բժիշկ: 2. Գիտական աստիճան՝ դոկտոր: 3. Այդ աստիճանն ունեցող անձ:
**Տպաւորապաշտութիւն**, թեան, գ. Իմպրեսիոնիզմ:
**Տռամ**, ի, գ. Դրամա:

**Տոնացույց**, ի, ներ, գ. Տոների, եկեղեցական արարողությունների ցանկը պարունակող գիրք:
**Տոներգ**, ի, եր, գ. Որևէ տոնի նվիրված հոգևոր երգ:

### Ր

**Րոտին**, ած. 1. Նվաստ, խղճուկ: 2. Ստոր, վատատոհմիկ:
**Րուպլի** (**Րուբլի**, **Ռուբլի**), ի, գ. Ռուբլի:

### Ց

**Ցաթիլ**, չբ. 1. Ծագել: 2. Ցայտել:
**Ցածնալ**, չբ. Ցածրանալ:
**Ցածրակ**, ած. Ցածրորակ:
**Ցամքիլ**, չբ. Ցամաքել:
**Ցայգաբաց**, ի, եր, գ., մկ. Մինչև այգաբացի ժամանակը, ցայգալույս:
**Ցանցառ**, 1. ած. Սակավ, քիչ, փոքրաթիվ: 2. ած., մկ. Սակավադեպ, ոչ հաճախակի:
**Ցաւորդ**, ի, գ. 1. Երկրպագու: 2. Սրտակից մարդ:
**Ցլակռիւ**, կռիւի, գ. Ցլամարտ:
**Ցու**, ի, գ. Տանիք, ծեղուն:
**Ցուինք**, ի, գ. 1. Տան կտուրի՝ պատից դուրս եկած մասը: 2. Տանիքի՝ դեպի բակի կողմի մասը:
**Ցուցնել**, նբ. Ցույց տալ:

### Փ

**Փաթթել**, նբ. Փաթաթել:
**Փալփլալ**, չբ. Փայլփլել:
**Փախչիլ**, չբ. Փախչել:
**Փաղփիլ**, չբ. Ցոլալ, փայլփլել:
**Փաղփուն**, ած. Փայլփլուն:
**Փայլիլ**, չբ. Փայլել:
**Փապուղի**, ի, գ. 1. Թունել, ստորգետնյա ճանապարհ: 2. Մետրոպոլիտեն:
**Փարա** (թուրք.), յի, գ. Դրամ, փող:
**Փափար**, ի, գ. Փափագ:
**Փարտ**, ած. Անզույգ, կոճատ, թաք:
**Փետտել**, նբ. Փետել:
**Փթթիլ**, չբ. Փթթել:
**Փճացնել**, նբ. Փչացնել:
**Փնտռտուք**, ի, գ. Փնտրտուք:
**Փոլիս** (ստբ.), ի, գ. Ոստիկան:



**Փոխան** (**Փոխարեն**), կ. Փոխարեն:
**Փոխանուն**, անունի, ներ, գ. Դերանուն:
**Փողպատ**, ի, ներ, գ. 1. Օձիք, վիզը փակող շալ (շարֆ): 2. Փողկապ:
**Փոստալ**, ի, գ. Վատ վարքի տեր կին, անբարոյական:
**Փոսուռայ**, ի, գ. Լուսատտիկ, կայծոռիկ:
**Փոքրագիր**, գիրի, գիրեր, գ. Փոքրատառ:
**Փտիլ**, չբ. Փտել, նեխել:
**Փրթիլ**, չբ. Պոկվել:
**Փցուն**, ած. Վատ, տգեղ:

### Ք

**Քա՛**, ձ. Կոչական, որով սովորաբար կանայք են իրար դիմում:
**Քալել**, չբ. Քայլել:
**Քակել**, նբ. Քանդել, անջատել:
**Քաղաքավար**, ած. Քաղաքավարի:
**Քայռ**, ի, գ. Մանյակ:
**Քանակ**, ի, գ. Քանոն:
**Քառեակ**, ի, գ. 1. Վանդակ: 2. Չորս տողանոց բանաստեղծություն:
**Քարափ**, ի, եր, գ. 1. Քարաժայռից բաղկացած ափ: 2. Կառամատույց, նավամատույց:
**Քարիւղ**, ի, գ. Նավթ:
**Քարտէս**, ի, գ. Քարտեզ:
**Քենակալ**, ի, ներ, գ. Բաջանաղ:
**Քենտեր** (թուրք.), ի, ներ, գ. Թել, պարան:
**Քեռայր**, ի, եր, գ. Քրոջ ամուսին:
**Քերական**, ի, գ. Քերականության դասագիրք:
**Քերել**, նբ. Քորել:
**Քերթող**, ի, գ. Բանաստեղծ:
**Քիթ**, քիթի, գ. (դարձ.)
— **Քիթին դնել** — Հավանել:
— **Քիթին խնդալ** — Քթին ծիծաղել, ծաղրել:
— **Քիթին չտանիլ** — Չհավանել:
— **Քիթէն բռնել** — Ստիպել:
— **Քիթ-բերան ծռել** — Քիթ-բերանը թթվեցնել:
— **Քիթէն ինկած** — Քթից ընկած, իրար շատ նման:
— **Քիթովը տալ** — Քթին տալ:
**Քիլօ** (**Քիլօկրամ**) ի, գ. Կիլոգրամ:
**Քիլօմեթր**, ի, գ. Կիլոմետր:
— **Քիչ ետք** — Քիչ հետո:

— **Քիչ մը** — Մի քիչ:
— **Քիչէն–շատէն** — Քչից–շատից:
**Քիչիկ**, ած. Շատ քիչ, մի փոքր:
**Քիրտ**, ի, գ. Քրտինք:
**Քիւրտ**, ի, գ. Քուրդ:
**Քլունկ**, ի, գ. Քլունգ:
**Քնանալ**, չբ. Քնել:
**Քոլերա**, յի, գ. Խոլերա:
**Քով**, 1. ի, գ. Կողքը, մոտը: 2. կ. Մոտ, կից:
— **Քով քովի** — Կողք կողքի:
— **Քովէ քով** — Իրար մոտ, կողք կողքի:
**Քուշնայ**, ի, գ. 1. Գարնանային քիսամ (կաքիկ): 2. Ուտելի բույս: 3. Գարնանային տափոլոռ:
**Քոքոա**, յի, գ. Կակաո:
**Քրեմ**, ի, գ. Կրեմ:
**Քօղէք**, ի, գ. Ապարանջան, որ կրում էին թևի վրա՝ արմունկից վեր:

## Օ

**Օգտապաշտութիւն**, թեան, գ. Ուտիլիտարիզմ:
— **Օդ կլլել** — Օդով սնվել:
— **Օդին խօսիլ** — Իզուր խոսել, իզուր խրատել:
— **Օդէն բռնել** — Ձեռք բերել:
**Օդակայան**, ի, գ. Օդանավակայան:
**Օդաքար**, ի, եր, գ. Երկնաքար:
**Օդուժ**, ի, եր, գ. Օդային ուժ:
**Օթեկ**, ի, գ. 1. Չորացած հաց: 2. ած. Հնացած:
**Օթոպիւս**, ի, գ. Ավտոբուս:
**Օթօ**, ոյի, գ. Ավտոմեքենա:
**Օճախ**, ի, գ. Օջախ:
**Օ՜ն**, ձ. Հրամայական, հորդորական բացականչություն:
**Օ՜շ–օ՜շ**, ձ. Շուն կանչելու բացականչություն:
**Օ՛շտ**, ձ. Կենդանի քշելու բացականչություն:
— **Օր մը օրանց** — Օրերից մի օր:
— **Օրը օր ընել** — Երջանիկ ապրել:
**Օրագրող**, ի, գ. Լրագրող:
**Օրագրութիւն**, թեան, գ. Լրագրություն:
— **Օրինակ առնել** — Օրինակ վերցնել:
**Օրիորդ**, ի, գ. 1. Կույս աղջիկ: 2. Դիմելու ձև: 3. Վարժուհի, ուսուցչուհի:
**Օրկան**, ի, գ. Օրգան (մամուլի):



## Ֆ

**Ֆաբրիկ**, ի, գ. Ֆաբրիկա:
**Ֆետայի**, ի, գ. Ֆիդայի:
**Ֆիզիքական**, ած. Ֆիզիկական:
**Ֆութպոլ**, ի, գ. Ֆուտբոլ:
**Ֆրանք**, ի, գ. Ֆրանկ, դրամական միավոր:

## ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**ած.** — ածական
**բրբռ.** — բարբառային
**գ.** — գոյական
**դ.** — դերանուն
**եբր.** — եբրայերեն
**թուրք.** — թուրքերեն
**խսկց.** — խոսակցական
**կ.** — կապ
**կբ.** — կրավորական բայ
**հզվդ.** — հազվադեպ
**հնց.** — հնացած
**ձ.** — ձայնարկություն
**մկ.** — մակբայ
**նբ.** — ներգործական բայ
**շ.** — շաղկապ
**չբ.** — չեզոք բայ
**վ.** — վերաբերական
**օտրբ.** — օտարաբանություն



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


**ԵՐԿՈՒ ԽՈՍՔ** . . . . . . . . . . 3

**ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

Ներածական մաս . . . . . . . . . . 5
Գոյական անուն . . . . . . . . . . 9
Ածական, թվական և դերանուն . . . . . . . . . . 19
Բայ . . . . . . . . . . 24
Մակբայ, կապ, շաղկապ, վերաբերական, ձայնարկություն . . . . . . . . . . 40

**ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ** . . . . . . . . . . 43

**ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ**
ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻՑ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ
ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻՑ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆ . . . . . . . . . . 45

**ԲՆԱԳՐԵՐ**
ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ . . . . . . . . . . 54

**ԲԱՌԱՑԱՆԿ** . . . . . . . . . . 174

**ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** . . . . . . . . . . 212

Յուրի Սրապիոնի Ավետիսյան

# ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԲՆԱԳՐԵՐ, ԲԱՌԱՑԱՆԿ


| | |
|---|---|
| Հրատարակչության տնօրեն՝ | Է.Ս. Մկրտչյան |
| Գեղարվեստական խմբագիր՝ | Ա.Ա. Բաղդասարյան |
| Սրբագրիչ՝ | Ս.Մ. Մելքումյան |
| Համակարգչային ձևավորումը՝ | Գ.Ա. Հարությունյանի |

ISBN 978–99941–1–866–3

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84 1/16: Թուղթը՝ օֆսեթ:
Ծավալը՝ 13.5 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 500 օրինակ:

«ԶԱՆԳԱԿ–97» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23–25–28
Հեռապատճեն՝ (+37410) 23–25–95, էլ. փոստ՝ info@zangak.am
էլ. կայք՝ www.zangak.am, www.book.am